Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1
197

243
9-61
1 OCT 2009

ԳԻՐՔ

ՍԱՂՄՈՍԱՑ

ԴԱՒԹԻ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱղԷՄԻ

Տ. Տ. ԽՄԱՅԵԱՆՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԷՓ ԳԱՎԱՖԵԱՆ

— 1872 —

ԳՐԱԴԱՐԱՆ

26 JUL 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

(17362-58)
1-197ть

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна



Զեռք իմ արարին զաղղոսարան,
և ահաւուրք իմ կազմեցին
զգործի օրինուրեան:

ԳԻՐՔ
ՍԱՂՄՈՍԱՑ
ԴԱՒԹԻ

ՍԱՂՄՈՍ Ա.

Բանեալ է այր՝ որ ոչ գընաց ՚ի խորհուրդս ամբարչիցն. ՚ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթոռ ոգբա ժանտից ոչ նստաւ:

Այլ յօրէնս տեառն են կամք նորա, և յօրէնս նորա խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի. և եղիցի նա որպէս ծառ, որ տնկեալ է ՚ի գնացս ջուց:

Որ զպտուղ իւր ՚ի ժամու տացէ, և տերեւ նորա մի՛ թափեսցի. և զամենայն զոր ինչ արասցէ, յաջողեսցի նմա։ Ոչ այսպէս են ամբարիշտք, և ոչ այնպէս. այլ որպէս զփոշի, զոր հոսէ հողմ ՚ի վերայ երեսաց երկրի։ Վասն այսորիկ ոչ յարիցեն ամբարիշտք ՚ի դատաստան, և ոչ մեղաւորք ՚ի խորհուրդս արդարոց։ Քանզի ճանաչէ տէր զճանապարհս արդարոց. ճանապարհք ամբարիշտ տացի կորիցեն։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ Բ.

Անվերնագիր ՚ի յերբայեցւոցն. արկոքին տուրա ընդ մի հարևար են։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս։ Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ՚ի միասին վասն տեառն և վասն օծելոյ նորա։ Խզեսցո՛ւք զկապանս նոցա, և ընկեսցուք ՚ի մէնջ զլուծ նոցա։

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք, և տէր արհամարհեսցէ զնոսա։ Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով, և սրտմտութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա։ Ես կացի թագաւոր ՚ի նմանէ, ՚ի վերայ լերին սիօնի սրբոյ նորա՝ ՚ի պատմել զհրամանս տեառն։ Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ։ Խնդրեա յինէն, և տացի քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութիւն, և ի սահմանս երկրի զքեզ ընդ ամենայն ծագս երկրի։ Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեայ, և որպէս զանօթ բրուտի փշրեսցես զնոսա։ Արդ թագաւորք՝ զայս ՚ի մի՛ տաւնէք. եւ խրատեցարուք ամենեքեան, որք դատէք զերկիր։ Ծառայեցէք տեառն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նորա դողութեամբ։ Ընկալարուք զխրատ նորա, զի մի՛ բարկասցի տէր, և կորնչիցիք ՚ի ճա-

Նահատհացն արդարութեան :
Ի ժամանակի՝ յորժամ բորբոքեցի
բարկութիւն նորա :
Երանի՛ ամենեցուն՝ որք յուսացեալ
եալ են ՚ի տէր :

Տունք ժդ :

ՍԱՂՄՈՍ Գ.

Սաղմոս դաւթի. ՚ի ժառանգակի՝ զի փախուցեալ էր նա յերեսաց աբիսողոմայ որդւոյ իւրոյ:

Տէր՝ զի բազում եղեն նեղիչք իմ,
և բազումք յարեան ՚ի վերայ իմ :
Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ
չիք փրկութիւն սորա առ աստուած իւր :
Այլդու տէր՝ օգնական իմ ես, փառք
իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ :
Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի,
և լուաւ ինձ ՚ի լեռնէ սրբոյ իւրմէ :
Ես ննջեցի և ՚ի քուն եղէ, զարթեայ՝ և տէր ընդունելի իմ է :
Ոչ երկեայց ես ՚ի բիւրաւոր զօրաց
նոցա, որք շուրջանակի պատեալ
պաշարեալ պահէին զիս :

Արի տէր՝ և փրկեա զիս աստուած
իմ. զի դու հարեր զամենեսեան,
որք էին ընդ իս թշնամութեամբ
՚ի տարապարտուց. և զատամունս
մեղաւորաց փշրեացես :
Տեառնդ է փրկութիւն. ՚ի վերայ
ժողովրդեան քո օրհնութիւն քո :

Տունք ը : Գոբզայս իբ :

ՍԱՂՄՈՍ Դ.

Ի կատարած օրինուշեան. Սաղմոսերգուիւն դաւթի:

Ի կարդալ իմում լուար ինձ աստուած ըստ արդարութեան. ՚ի նեղութեանն ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց :
Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք
խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն :
Ծանեարուք զի սքանչելեաց արար տէր
սրբոյ իւրում. և տէր լսիցէ ինձ ՚ի
կարդալ իմում առ նա :
Բարկանայք՝ և մի մեղանչէք. զոր

ինչ ասէք ՚ի սիրտս ձեր յանկողինս
ձեր զղջացարուք։
Մատուցէք պատարագս արդարու-
թեան, և յուսացարուք ՚ի տէր։
Բազումք ասեն թէ, ո՞ ցուցցէ մեզ
զբարութիւն տեառն. Նշանեցաւ
առ մեզ լոյս երեսաց քոց. և եառուր
ուրախութիւն սրտից մերոց։
Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ
իւրեանց լցուցեր զնոսա։
Խաղաղութեամբ յայս և ՚ի սոյն նիրհ
ջեսցուք և զարթիցուք. զի դու տէր
միայն առանձին յուսով քո բնա-
կեցուցեր զմեզ։

Տունք ը՝

ՍԱՂՄՈՍ Ե՝

Ի կատարած վասն վիճակեղոցն. Սաղմոս դաւթի։

Բանից իմոց ունկնդիր տէր, և ՚ի
միտ առ զաղաղակ իմ։
Նայեա ՚ի ձայն աղօթից իմոց, թա-
գաւոր իմ և աստուած իմ։
Ես զքեզ աղաչեմ տէր ընդ առա-
ւօտս լսիցես ձայնի իմում. ընդ ա-

ռաւօտս պատրաստ եղէց յանդիման
լինել առ քեզ։
Ոչ թէ դու աստուած կամիս զանօ-
րէնութիւն. և ոչ բնակիսի առ քեզ
չարք. և անօրէնք մի՛ բնակեսցին ա-
ռաջի աչաց քոց։
Ատեցեր զայնոսիկ որք գործեն զա-
նօրէնութիւն. կորուսանես զամե-
նեսեան որք խօսին զսուտ։
Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ
առնես դու տէր. այլ ես ըստ բա-
զում ողորմութեան քում մտից ՚ի
տուն քո, և երկիրպագից ՚ի տաճար
սուրբ քո երկիւղիւ քո։
Տէր՝ առաջնորդեա ինձ յարդարու-
թեան քում. վասն թշնամեաց իմոց
ուղիղ արա առաջի իմ զճանապարհ
հըս քո։
Զի ոչ գոյ ՚ի բերանս նոցա ճշմարտու-
թիւն. և սիրտք նոցա նանրեալք են։
Որպէս դերեզմանք բաց են կոկորդք
նոցա. և լեզուօք իւրեանց նենգա-
ւորք եղեն։
Դատեա զնոսա աստուած՝ զի անկցին

’ի խորհրդոց սրտից իւրեանց. ըստ բա-
զում ամբարշտութեան նոցա մեր-
ժեա զնոսա, զի դառնացուցին զքեզ։
Ոբան լեցին ամենեքեան՝ ոչք յոս-
ացեալ են ’ի քեզ. յաւիտեան ցըն-
ծասցեն. և բնակեսցես դու ’ի նոսա։
Պարծեսցին ’ի քեզ սիրելիք անուան
քո, զի օրհնեսցես դու զարդարն.
տէր որպէս զվնաս հաճութեամբ քո
պատակեցեր զնոսա։

Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ Զ.

Ի կատարած ընդ օրինաւորեան վասն ութերորդաց. Սաղմոս դաւթի։

Տէր, մի՛ սրտմտութեամբ քով յան-
դիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս։
Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռովե-
ցան ոսկերք իմ։
Անձն իմ յոյժ խռովեցաւ՝ և դու
տէր մինչեւ յե՞րբ։
Դարձ տէր և փրկեա զանձն իմ. կե-

ցո զիս տէր ըստ ողորմութեան քում։
Զի ոչ ոք է որ ’ի մահու յիշէ զքեզ.
կամ ’ի դժոխս խոստովանի
սո քեզ։
Վատակեցայ ես ’ի հեծութեան իմ.
մում. լուացի զամենայն գիշեր զմա-
հիճս իմ, և սրտաստօք իմովք զան-
կողինս իմ թացի։
Խռովեցաւ ’ի սրտմտութենէ ակն իմ.
և մաշեցայ ես ’ի վերայ ամենայն թըշ-
նամեաց իմոց։
Ի բաց կացէք յինէն ամենեքեան,
որք գործէք զանօրէնութիւն։
Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ
տէր աղօթից իմոց. և տէր զԱնդ-
տուածս իմ ընկալաւ։
Ամաչեսցին և խռովեսցին յոյժ ա-
մենայն թշնամիք իմ. դարձցին յետս
և ամաչեսցեն յոյժ վազվազակի և
խռովեսցին։

Տունք ժ։ Գորգոյս Զ՝

տէր. և տէր դատէ զժողովուրդս իւր:
Դատ արա ինձ տէր ըստ արդարու-
թեան իմում, և ըստ ամբծուն թեան
իմում՝ որ յիս:
Կատարեցին չարիք՝ ի վերայ մեղաւո-
րաց, և յաջողեսցես դու արդարոյ:
Որ քննէ զսիրտս և զերիկամունս աստ-
ուած արդար. յիրաւի է ինձ օգնու-
թիւն յաստուծոյ՝ որ ապրեցուցա-
նէ զայնոսիկ, որք ուղիղ են սրտիւք:
Աստուած դատաւոր արդար՝ հզօր
և երկայնամիտ, որ ոչ ածէ զբար-
կութիւն իւր զօրհանապազ:
Ապա թէ ոչ դառնայք առնա, զը-
սուր իւր սրեալ է և զաղեղն իւր
լարեալ. և ՚ի նմա պատրաստեալ է
զանօթս մահու, և զնետս իւր այ-
րեցելովք է գործեալ:
Ահաւասիկ երկնեաց զանօրէնու-
թիւն. յղացաւ զցաւս, և ծնաւ զա-
նիրաւութիւն:
Գուբն՝ զոր փորեաց և պեղեաց, ՚ի
նոյն անկաւ ՚ի խորխորատ՝ զոր և գոր-
ծեաց:

ՍԱՂՄՈՍ Է·

*Պաղտոս դաւթի· զոր ասաց տեառն վասն բա-
նիւն քուշեայ որդւոյ յիմեւնայ:*

Տէր աստուած իմ ՚ի քեզ յուսացայ,
փրկեա զիս, և յամենայն հալածչաց
իմոց ապրեցո զիս:
Գուցէ երբեք յափշտակիցէ որպէս
առիւծ զանձն իմ. ոչ ոք իցէ որ փրկի-
ցէ, և ոչ այն՝ որ ապրեցուցանիցէ:
Տէր աստուած իմ թէ արարի զայս. և
թէ իցեն անօրէնութիւնք՚ի ձեռս իմ:
Թէ հատուցի երբեք այնոցիկ, որք
հատուցին ինձ չար. անկեայց և ես
՚ի թշնամեաց իմոց ընդունայն:
Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ.
հասցէ և կոխեսցէ յերկիր զկեանս իմ,
և զփառս իմ՚ի հող բնակեցուսցէ:
Արի տէր բարկութեամբ քով, և
բարձր լեր՚ի սպառիլ թշնամեաց իմոց:
Զարթիր տէր աստուած իմ՚ի հրա-
մանս քո՝ զոր պատուիրեցեր. և ժո-
ղովք ժողովրդոց շուրջ եղիցին գքեզ:
Վասն այսորիկ՚ի բարձունս դարձ

Գարձցին ցաւք ի գլուխ նորա. և ի վերայ գագաթան նորա անօրէնու-
թիւնք իւր իջցեն։
Խոստովան եղէց տեառն ըստ արդա-
րութեան նորա. և սաղմոս ասացից
անուան տեառն բարձրելոյ։

Տունք ժէ։

ՍԱՂՄՈՍ Ը.

Ի կատարած ի վերայ հինգհարիւրից.
Սաղմոս դաւթի։

Տէր տէր մեր, զի սքանչելի է ա-
նուն քո ի վերայ ամենայն երկրի։
Համբարձաւ մեծվայելչութիւն քո
ի վերոյ քան զերկինս. ի բերանոց
մանկանց տղայոց և ծծկեցելոց հաս-
տատեցեր զօրհնութիւն։
Վասն թշնամեաց քոց տէր, զի եղծ-
ցի թշնամին և հակառակորդն։
Տեսից զերկինս զգործս մատանց քոց,
զլուսին և զաստեղս՝ զորս դու հաս-
տատեցեր։
Ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա. կամ
որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես

դու նմա։
Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան
զհրեշտակս քո. փառօք և պատուով
պսակեցեր զնա, և կացուցեր զնա
ի վերայ ամենայն ձեռագործոց քոց։
Զամենայն ինչ հնազանդ արարեր ի
ներքոյ ոտից նորա, զխաշն և զար-
ջառ՝ և զամենայն ինչ։
Եւս և զերէց վայրի, զթռչուն երկ-
նից, և զձկունս ծովու՝ որք շրջին
ընդ շաւիղս ծովու։
Տէր տէր մեր, զի սքանչելի է անուն
քո ի վերոյ ամենայն երկրի։

Տունք թ։ Գոլղոյս եղ։

ՍԱՂՄՈՍ Թ.

Ի կատարած վասն գաղտնեացն որդւոյ.
Սաղմոս դաւթի։

Գոհացայց զքեզ տէր բոլորով սրտի
ի վերա իմով. պատմեցից զամենայն ա-
քանչելիս քո։
Ուրախ եղէց և ցնծացայց ի քեզ.
սաղմոս ասացից անուան տեառնդ

I-19644 / 14362-58

ՀՍՍՌ Գրքային Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР

բարձրելոյ։

Իդառնալ յետս Թշնամեաց իմոց, տկարասցին և կորիցեն յերեսաց քոց։ Աչարեր զդատաստանս իմ և զերկա՜ տունս. նստար յաթոռ՝ դատաւոր արդարութեան։

Սատեցեր՛ի հեթանոս, և կորեաւ ամբարիշան. զանուանս նոցա ջնջե՜ ցեր յաւիտեանս յաւիտենից, և Թըշ՜ նամեացն պակասեաց մինչ իսպառ։ Զքաղաքս աւերեցեր, և կորեաւ յիշատակ նոցա ազազակաւ։

Աստուած կայ՝ և ճնշէ յաւիտեան. պատրաստ արար զաթոռ իւր՝ ի դա՜ տաստանի։

Ինքն դատէ զաշխարհս արդարու՜ թեամբ, և զժողովուրդս իւր ուղ՜ ղութեամբ։

Եղեւ տէր ապաւէն անանկի, օգնա՜ կան՝ի նեղութեան՝ի դէպ ժամանակի։ Յուսացին՝ի քեզ ամենեքեան՝ որք գիտեն զանուն քո. զի ոչ Թողցես զայնոսիկ, որք խնդրեն զքեզ տէր։ Սաղմոս ասացէք տեառն՝ որ բնա՜

կեալն է՝ի սիօն. պատմեցէք՝ի հե՜ թանոս զգործս նորա։

Ի խնդրել զարիւն նոցա՝ յիշեաց. և ոչ մոռացաւ տէր զաղաղակս տնանկ՜ կաց։

Ողորմեա ինձ տէր՝ և տես զխոնար՜ հութիւն իմ՝ի Թշնամեաց իմոց. ո՛ բարձր արարեր զիս՝ի դրանց մահու։ Որպէս պատմեցից զամենայն օրհնու՜ Թիւնս քո՝ի դրունս դստերս սիօնի, և ցնծացայց՝ի փրկու՜Թեան քում։ Ընկղան հեթանոսք յապականու՜ Թեան իւրեանց՝ զոր արարին, և ո՜ րոգայթ՝ զոր Թագուցին, առցէ զո՜ տքս նոցա։

Ճանաչի տէր յատնել զդատաստանս իւր. և՝ի գործս ձեռաց իւրեանց կապեացին մեղաւորքն։

Դարձցին մեղաւորք անդրէն՝ի դը՜ ժոխս, և ամենայն հեթանոսք որք մոռացան զաստուած։

Ոչ իսպառ մոռանայ տէր զաղքատն. համբերու՜Թիւն տնանկաց մի՛ կորն՜ ցէ իսպառ։

Աբի տէր՝ և մի զօրասցի մարդ. դա-
տեսցին հեթանոսք առաջի քո:
Կացո տէր օրէնադիր ի վերայ նոցա, և
ծանիցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են:
Ընդէ՞ր տէր՝ կացեր ի հեռաստանէ.
անտես արարեր ի դէպ նեղութեան
ժամանակի:
Յամբարտաւանիլ ամբարշտին, այրի
ազքատն. արդելցին ի խորհուրդս
խրեանց, զոր և խորհեցան:
Զի գովի մեղաւորն ի ցանկութիւն
անձին իւրոյ. որ զրկէն, և նա գովի:
Իսկ ընդէ՞ր բարկացոյց մեղաւորն
զաստուած, ասա բազում բարկու-
թեան իւրում, թէ ոչ խնդրի:
Ոչ է աստուած առաջի աչաց նորա.
պիղծ են ճանապարհք նորա յամե-
նայն ժամ:
Բարձրեալ են իրաւունք յերեսաց
նորա. ի վերայ ամենայն թշնամեաց
իւրոց տիրեացէ:
Ասաց ի սրտի իւրում, թէ ոչ սա-
ասնեցայց ազգէ յազգ առանց չարի:
Անիծից և դառնութեամբ և նենգ-

դութեամբ լի է բերան նորա, և ի
ներքոյ լեզուի նորա յատք և վաս-
տակ:
Նստի դարանեալ ընդ ամեծամեծս ի
գաղանիս՝ սպանանել զանբիծն:
Աչք նորա ի տնանկս հայեին. դարա-
նի ի գաղանիս, որպէս զառիւծ ի մո-
ւոզ իւրում:
Դարանի յափշտակել զազքատն. յա-
փշտակել զազքատն, և ձգել զնա:
Յորոգայթ իւր խոնարհեցուսցէ զը-
նա. խոնարհեցի և անկցի ի տիրել
իւրում ի վերայ տնանկաց:
Զի ասաց ի սրտի իւրում՝ թէ մո-
ռացաւ աստուած. դարձոյց զերեսս
իւր, զի մի տեսցէ յատակ:
Աբի տէր աստուած իմ. բարձր եղիցի
ձեռն քո, և մի մոռանայր զտնանկս:
Իսկ ընդէ՞ր բարկացոյց ամբարիշտն
զաստուած. զի ասաց ի սրտի իւրում
թէ ոչ քննի:
Տեսանես դու զնա ի ցաւս, և ի սրտմ-
տութիւնս հայիս. ի քեզ թողեալ է
ազքատն, և որբոյն դու ես օգնական:

Խորտակեսցի բազուկ մեղաւորի և չարի. խնդրեսցին մեղք նորա, և նա մի՛ գտցի։

Տէր թագաւոր յաւիտեան յաւիտենից. կորիցեն հեթանոսք յերկրէ նորա։

Զցանկութիւն տնանկաց լուաւ տէր. ի պատրաստութիւն սրտից նոցա հաւկեցաւ ակն քո։

Դատ առնել որբոյն և տնանկի. զի մի՛ եւս յաւելցի մարդ ի մեծաբանել իւրում ի վերայ երեսաց երկրի։

Տունք խ։

ՍԱՂՄՈՍ Ժ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Ի տէր յուսացայ. որպէս ասիցէք ցանձն իմ, փոխոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ։

Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղն նա իւրեանց. պատրաստ արարին զնետս ի կապարճս, ձգել ընդ խաւար այնոցիկ՝ որք ուղիղ են սրտիւք։

Զի զոր դու շինեցեր, նոքա աւերե-

ցին. իսկ արդարն զի՞ արար։

Տէր ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում։

Աչք նորա ի տնանկս հայեին, և արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան։

Տէր քննէ զարդարն և զամբարիշտն. որ սիրէ զմեղս, ատէ զանձն իւր։

Տեղասցի ի վերայ մեղաւորաց որոգայթ՝ հուր և ծծումբ. այս մրրիկ՝ բաժին բաժակի նոցա։

Արդար է տէր՝ և զարդարութիւն սիրէ. և զուղղութիւն տեսանեն երեսք նորա։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ԺԱ.

Ի կատարած՝ ի վերայ ութերորդին. Սաղմոս դաւթի։

Ապրեցո զիս տէր, զի նուաղեաց սուրբ. նուազեցան ճշմարտութիւնք յորդւոց՝ ի մարդկանէ։

Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում. շրթամբք նենգաւորօք սրտի՝ ի սիրտ խօսեցաւ։

Աստակէ տէր զամենայն հրամուն
նենգաւորս և զչեզոս մեծարանս։
Ոյք ասացին. զչեզոս մեր մեծս ա-
րասցուք, հրամունք մեր առ մեզ են,
և արդ մեր ձիլ է տէր։
Վասն տառապանաց աղքատին և հե-
ծութեան անանկին, այժմ յարեայց
ասէ տէր. եղից զփրկութիւն իմ,
և համարձակեցայց ի նոսա։
Բանք տեառն են բանք սուրբ, որպէս
զարծաթ քնարեալ և փորձեալ յերկ-
րէ, սրբեալ և պարզեալ եօթնապա-
տիկ ի հոգոյ։
Դու տէր պահեցես զմեզ, և սպրե-
ցուցես զմեզ յազգէ յայսմանէ մին-
չեւ յաւիտեան։
Շուրջանակի ամբարիշտք շրջին, ըստ
բարձրութեան քումմ մեծս արասցես
դու զորդիս մարդկան։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ԺԲ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Մինչեւ յերբ տէր՝ մոռանաս զիս խա-

պաւ, մինչեւ յերբ դարձուցանես
զերեսս քո յիս։
Մինչեւ յերբ դնեմ զխորհուրդս յան-
ձին իմ. և ցաւք սրտի իմոյ զաւուրս։
Մինչեւ յերբ բարձրանայ թշնամին
ի վերայ իմ. հայեա և լուր ինձ տէր
աստուած իմ։
Լոյս տուր աչաց իմոց, զի մի
երբեք ննջեցից ի մահ։
Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ յաղթե-
ցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն,
թէ ես սասանեցայց։
Ես յոյսս առի քո տէր յուսա-
ցայ, ցնծասցուս սիրտ իմ ի փրկու-
թեան քումմ. օրհնեցից զտէր զաս-
տեղծող իմ։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ ԺԳ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ
ոչ գոյ աստուած։
Ապականեցան և պղծեցան յանօրէ-
նութեան իւրեանց. և ոչ ոք է՝ որ

առնէ զբաղցրութիւն։

Տէր յերկինից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք խնամատուն, որ խնդրիցէ զաստուած։

Ամենեքեան խոտորեցան՝ ի միասին եւ անպիտանացան։

Ոչ ոք է որ առնէ զբարի. եւ չէ ոք մինչեւ՝ ի մի։

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն։

Որք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի, եւ աստ տէր ոչ կարգացին։

Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ իցէ երկիւղ. զի տէր է յազգս արդարոց։

Զխորհուրդ աղքատին յամօթ արարբին, զի տէր է յոյս նորա։

Ո՞տացէ՝ ի սիօնէ զփրկութիւն իսրայէլի. ի դարձուցանել տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ, ցնծասցէ յակոբ՝ եւ ուրախ եղիցի իսրայէլ։

Տունք ժ։ Գոբղայս լբ։

ՍԱՂՄՈՍ ԺԴ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Տէր ո՞վ կացցէ՝ ի խորանի քումմ, կամ ո՞վ բնակեսցէ՝ ի լեառն սուրբ քո։

Որ գնայ անբիծ՝ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն՝ ի սրտի իւրում։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում ոչ արար։ Նախատինս՝ ի մերձաւորացն նա ոչ առնու, արհամարհեալ է առաջի նորա չարագործն։

Զերկիւղածս տեառն վառաւոր առնէ. որ երդնու ընդ ընկերի իւրում, և ոչ ստէ։

Զարծաթ իւր՝ ի վարձու ոչ տայ, և կաշառս՝ ի վերայ իրաւանցն ոչ առնու. որ զայս արասցէ, նա մի սասանեսցի յաւիտեան։

Տունք ղ՝

ՍԱՂՄՈՍ ԺԵ.

Յարձանագիր. Սաղմոս դաւթի։

Պահեա զիս աստուած իմ զի ես՝ ի

քեզ յուսացայ. ասացի տեառն, տէր իմ ես դու, և բարիք իմ ինձ ՚ի քէն են։

Սրբոց քոց՝ որք են յերկրի քում. սքանչելի արարեր զամենայն կամս իմ ՚ի նոսա։

Յաճախեացին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ ապա վազվազեացին։

Ոչ ժողովեցայց ՚ի ժողովս նոցա յարեանց. և ոչ յիշեցից զանուանս նոցա ՚ի շրթունս իմ։

Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝ և բաժակի իմոյ դու ես, որ այսպէն դարձուցանես զժառանգութիւն իմ ինձ։

Վիճակք եղեն ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղեւ ինձ։

Օրհնեցից զտէր՝ որ խրատուն արար ինձ, մինչ ՚ի գիշերի եւս խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յամենայն ժամ. զի է ընդ աջմէ իմում, զի մի սասանեցայց։

Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, եւս և

մարմին իմ բնակեսցի յուսով։

Զի ոչ լծողես զանձն իմ ՚ի գժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։

Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ՚ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քոյ միշտ իսպառ։

Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ ԺԶ.

Աղօթք. Սաղմոս դաւթի։

Լուր տէր արդարութեան, և նայեաց ՚ի խնդրուածս իմ. ունկնդիր լիր աղօթից իմոց, զի ոչ շրթամբք նենգաւորաց։

Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն։

Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր ՚ի գիշերի. փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն։

Ամ իսօսեցի բերան իմ զգործս մարդկան, վասն բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս։

Հաստատեա զշաւիղս իմ ՚ի ճանա-

պարհի քոմ, զի մի գայթակղեսցին
դնացք իմ։
Ես առ քեզ տէր կարդացի՝ զի լսեալ
ինձ աստուած. խոնարհեցո առ իս
զունկն քո և լսել բանից իմոց։
Սքանչելի արարեր զողորմութիւնս
քո. ո՛ փրկես զյոյսոսիկ ոյք յուսա-
ցեալ են ի քեզ, յայնցանէ ոյք հա-
կառակ կան աջոյ քո։
Պահեա զիս որպէս բիբ ականի. ընդ
հովանեաւ թեւոց քոց ծածկեսցես
զիս յերեսաց ամբարշտաց, ոյք տա-
ռապեցուցին զիս։
Թշնամիք զանձն իմ պաշարեցին, և
ի ճարպս իւրեանց արգելին. և բե-
րանք նոցա խօսեցան զամբարտաւա-
նութիւն։
Մերժեցին զիս, և այժմ դարձեալ
պատեցան զինեւ. ուշ եդին խոնար-
հեցուցանել զիս յերկիր։
Համարեցան ինձ որպէս առիւծ զի
պատրաստի յոտն, և որպէս կորիւն
առիւծու զի նստի դարանեալ։
Արի տէր՝ ժամանեա նոցա և խափա-

նեա զնոսա. փրկեա զանձն իմ յամ
բարշտացն ի սրոյ՝ և ի ձեռաց թըշ-
նամեացն։
Տէր կոտո զնոսա յերկիր. բաժանեա
և խափանեա զնոսա ի կեանս իւրեանց։
Գաղանեօք քովք լցան որովայնք նո-
ցա. յագեցան կերակրովք, և թո-
ղին զմնացուածս տղայոց իւրեանց։
Ես արդարութեամբ երեւեցայց ե-
րեսաց քոց. և յագեցայց յերեւիլ
փառաց քոց

Տունք ԺԷ։ Գոբղայս ԱՔ։

ՍԱՂՄՈՍ ԺԷ.

Ի կատարած ի վերայ պատերազմող նահատակի
Դաւթի տեառն Գաւթի. զոր խօսեցաւ ընդ
տեառն զբանս օրհնութեան, յաւուր յորում
փրկեաց զնա տէր ի ձեռաց ամենայն թշնամե-
աց, և ի ձեռաց սաւուղայ. և ասէ։

Սիրեցից զքեզ՝ տէր զօրութիւն իմ,
տէր հաստատուիչ իմ, ապաւէն իմ և
փրկիչ իմ։
Աստուած օգնական իմ և ես յու-
սամ ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկ-
ութեան իմոյ ընդունելի իմ է։

Օրհնելով կարդացից առ տէր, և ի
Թշնամեաց իմոց ապրեցայց։
Շուրջ եղեն զինեւ երկունք մահու.
և ուղիք անօրէնութեան խառնե-
ցուցին զիս։
Վիշտք դժոխոց պատարեցին զիս. և
ժամանեցին ինձ որոգայթք մահու։
Ի նեղութեան իմում ես առ տէր
կարդացի, և առ աստուած իմ աղ-
աղակեցի։
Լուաւ ինձ ի տաճարէ սրբոյ իւրմէ
ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ
առաջի նորա, մտցէ յականջս նորա։
Խռովեցաւ և դողացաւ երկիր, և հիմ-
նունք լերանց սասանեցան և խռովե-
ցան, զի բարկացաւ ի վերայ նոցա
աստուած։
Ել ծուխ ի բարկութենէ նորա, և
հուր յերեսաց նորա բորբոքեցաւ,
և փայլատակունք հատան ի նմանէ։
Խոնարհեցոյց զերկինս և էջ. և մէգ
ի ներքոյ ոտից նորա։
Եւ ի քերովբէս և թռեաւ. սլացաւ
նա ի թեւս հողմոց։

Եդ զխաւար ի ծածկոյթ իւր, և շուրջ
զնովաւ են յարկք իւր, և խաւարա-
յին ջուրք մինչեւ յամպս օդոց։
Ի փայլատակել նորա առաջի նոցա,
ամպք անցուցին զկարկուտ, և զկայ-
ծակունս հուր։
Որոտաց տէր յերկնից, և բարձրեաւն
ետ զձայն իւր ի կարկուտ և ի կայ-
ծակունս հուր։
Առաքեաց զնետս իւր և ցրուեաց
զնոսա. յաճախեաց զփայլատակունս
իւր, և խռովեցոյց զնոսա։
Երեւեցան ապերք ջուրց, և յայտ-
նեցան հիմունք աշխարհի։
Ի սաստէ քումմէ տէր, և ի շնչել
հոգւոյ բարկութեան քո։
Առաքեաց ի բարձանց և ընկալաւ
զիս. ընկալաւ զիս ի ջուրց բազմաց։
Փրկեաց զիս տէր ի թշնամեաց իմոց
հզօրաց, և յատելեաց իմոց՝ զի հզօրք
եղեն քան զիս։
Ժամանեցին ինձ աւուրք չարչա-
րանաց իմոց. եղեւ տէր հզօրիչ իմ,
և եհան զիս յանդորր. և փրկեաց

զնս տէր՝ զի կամեցաւ զնս։
Հաստատեսցէ ինձ տէր ըստ արդարու-
թեան իմում. ըստ ամբծութեան ի-
մում հաստատեսցէ ինձ։
Ես պահեցից զճանապարհս տեառն,
և ոչ ամբարշտեցայց յաստուծոյ իմմէ։
Ամենայն իրաւունք նորա առաջի իմ
են. և զարդարութիւն իւր ոչ՝ ի
բացեայ արար յինէն։
Եղէց և ես ամբիծ ընդ նմա. և զգու-
շացայց յանօրէնութենէ իմմէ։
Հաստատեսցէ ինձ տէր ըստ արդարու-
թեան իմում, ըստ սրբութեան ձե-
ռաց իմոց առաջի աչաց իմոց։
Ընդ սրբոյն սուրբ եղիցիս, ընդ առն
ամբծի ամբիծ եղիցիս, ընդ ընտրեալ
սրն ընտրեալ եղիցիս, և զիմաբան
կործանեսցես։
Դու զժողովուրդս խոնարհս կեցու-
ցանես. և զաչս ամբարտաւանից
դու խոնարհեցուցանես։
Դու լուսաւորառնես զճրագ իմ տէր,
աստուած իմ, լոյս արա ինձ՝ի խաւարի։
Քեզ վրկեցայց՝ի մարձութենէ. աս-

տուծով իմով անցից ընդ պարիսպս։
Աստուած իմ, ամբիծ են ճանա-
պարհք քո և բանք տեառն ընտրեալ
են, և ապաւէն ամենեցուն որք
յուսան՝ի նա։
Վասն զի ո՞վ է աստուած բայ՝ի
տեառնէ, կամ ո՞վ է աստուած բայ
յաստուծոյ մերմէ։
Աստուած, որ զգեցուցեալ ինձ զո-
րութիւն, և եդեալ յամբծութեան
զճանապարհս իմ։
Հաստատեցեալ զոտս իմ որպէս զեղջե-
րուի. և՝ի վերայ բարձանց կացու-
ցեալ զիս։
Ուսուցեալ զձեռս իմ՝ի պատերազմ,
և արարեալ զբազուկ իմ որպէս զա-
ղեղն հաստ. և ետուր ինձ զպաշտ-
պանութիւն փրկութեան քոյ։
Աջ քոյ ընկալաւ զիս, և խրատ քո
կանգնեաց զիս խաղաղ, և խրատ քո
ուսուսցէ զիս։
Ընդարձակեցեալ զդնացս իմ՝ի ստորէ
իմմէ. և ոչ սկարացան շարժիլ ք իմ։
Հալածեցից զթշնամիս իմ և հասից

նոցա. և ոչ դարձայց 'ի նոցանէ՝ մինչեւ սպառեցից զնոսա։
Սրեղեցից զնոսա, և այլ մի՛ կարասցեն կեալ. և անկցին 'ի ներքոյ ոտից իմոց։
Զգեցուցեր ինձ զօրութիւն 'ի պատերազմի. և զյարուցեալսն 'ի վերայ իմ՝ ներքոյ իմ արարեր։
Զթշնամիս իմ հալածականս արարեր, և զատելիս իմ սատակեցեր։
Աղաղակեցին, և ոչ ոք էր որ փրկեր զնոսա. կարդացին առ աէր՝ և ոչ լուաւ նոցա։
Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ. և որպէս կաւ գռեհաց կոխեցից զնոսա։
Փրկեսցէ զիս տէր 'ի հակառակութենէ ժողովրդոց, և կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց։
Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի, ծառայեաց ինձ, և 'ի լուր ականջաց լուաւ ինձ։
Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք օտարաց մաշեցան, և կաղացան 'ի շաւղաց իւրեանց։
Կենդանի է տէր և օրհնեալ է աստուած. և բարձր եղիցի աստուած փրկութեան իմոյ։

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ, և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ։
Փրկիչ իմ 'ի թշնամեաց իմոց բարձրացուցանես զիս. յայնցանէ որք յարուցեալ են 'ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս, և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս։
Վասն այսորիկ խոստովանեցայց քեզ 'ի հեթանոսս, և անուանի քում սաղմոս ասացից։
Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա. առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա դաւթի, և ընդ զաւակի նորա ազգէ մինչեւ յաղգ։

Տունք ծ։
Կանոնս գոբզայս է։ Սաղմոս ժէ։
Տունք մկը։

Եւթն ժե։

Օրհնեսցուք զտէր, զի փառաւոր է փառաւորեալ։

Զհեծեալս և զերիվարս ընկէց ի ծով. օգնական ընդունելի իմ եղեր, և եղեւ ինձ ի փրկութիւն:

Սա է իմ աստուած, և փառաւորեսցեն զսա. աստուած հօր իմոյ, և բարձր արարից զսա:

Տէր խորտակէ զպատերազմունս, և տէր է անուն նորա:

Զընտիրս արանց և զընտիրս սպառազինեաց, զկառս և զերիվարս և զամենայն զօրութիւնս փարաւոնի ընկէց ի ծով:

Ծով ծածկեաց զնոսա. ընկղմեան յանդունդս խորոց իբրեւ զվէմս:

Աչք քո տեր՝ փառաւորեալ է զօրութեամբ իւրով. և աչք քո տեր՝ խորտակեաց զթշնամիս քո:

Եւ մեծութեամբ փառաց քոյ մանրեցեր զհակառակորդս քո. առաքեցեր զբարկութիւն սրտմտութեան քոյ, և եկեր զնոսա որպէս զեղէգն:

Հոգւով զօրութեան սրտմտութեան քո պատատեցան ջուրք. դիզան՝ կացին որպէս պարիսպ քարեայ ջուրք

ծովուն. և պաղեցան դիզան ալիք ջուրցն ի մէջ ծովուն:

Ասաց թշնամին. ասէ, հալածեցից՝ հասից՝ հարից, բաժանեցից զաւարն, և լցուցից ի նոցանէ զանձն իմ:

Ի սուր իմ արկից զնոսա. տիրեսցէ և բարձրասցի ի վերայ նոցա աչք իմ:

Առաքեցեր զհողմն քո, և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան, և իջին որպէս կապար ի ջուրս սաստիկս:

Ո՞ նմանի քեզ յաստուածս տէր, կամ՞ նմանիցի քեզ՝ փառաւորեալդ ի սուրբս:

Սքանչելի փառաւորեալ՝ որ առնես զնշանս և զարուեստս, ձգեցեր զձեռն քո, և եկուլ զնոսա երկիր:

Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քո այսմ, զոր և փրկեցեր:

Մխիթարեցեր զնոսա զօրութեամբ քով ի բանակեալ սրբութեան քո. լսեան ազգք և բարկացան, և երկունք կալան զբնակիչսն փղշտացւոց:

Յայնժամ փութացան դատաւորք եդոմայ, և իշխանք մոաբացւոց:

Կալաւ զնոսա դողումն. հալեցան ամենայն բնակիչք քանանացւոց։
Անկի՛ւ ի վերայ նոցա ահ և դողումն. և ի զօրութենէ բազկի քո քարացին։
Մինչեւ անցցէ ժողովուրդ քո տէր. մինչեւ անցցէ ժողովուրդ քո այս՝ զոր ստացար։
Տարեալ տնկեացես զնոսա ի լերին ժառանգութեան քոյ, ի պատրաստութիւն բնակութեան ժառանգութեան քոյ։
Զոր ստացար՝ի սկզբանէ տէր, ստացար սրբութեամբ՝ զոր պատրաստեցին ձեռք քո. տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից, և եւս։
Զի եմուտ փարաւոն կառօք և երիվարօք և բնաւիր սպառազինօք ի մէջ ծովուն։
Եւ էած ի վերայ նոցա տէր զջուրս ծովուն. և որդիքն իսրայէլ գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն։

Փառք Հօր և որդւոյ և։

Քրիստոս է իմ աստուած, և փառաւորեմ զնա. աստուած հօր իմոյ, և բարձր արարից զնա։
Մարգասէր տէր, վասն սրբութեանդ անարատի մօր քոյ և կուսի, և վասն խաչի քո պատուականի, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

Քարոզ եւ աղօթք եբանելւ և իբրեւ կանոնացն։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեաս։
Վասն լսելի լինելոյ տեառն աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զտէր աղ։
Վասն քաւիչ և ներող լինելոյ աստուծոյ ի վերայ մեզաց մերոց, զտէր աղ։
Վասն Թողոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամաց և զակամայ, զտէր աղ։
Վասն զի մի ընդ խոտանան դատիլ ցիմք յաւուրն պատասխանատուութեան, զտէր աղաչեսցուք։
Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ ուղիղ հաւատով՝ի քրիստոս ննջեցին, զտէր աղաչեսցուք։

Եւ եւս՝ միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զոհ եր աղա։ Զանձինս մեր և զմիմեանս տեառն աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։ Ողորմեաց մեզ տէր աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քումմ. աստուածութեան ամենեքեան միաբանութեամբ։ Տէր ողորմեա. տէր ողոր. տէր ողոր։

ԱՂՕԹՔ

Տէր տուընջեան՝ և գոյացուցիչ գիշերոյ որ արարեր զոհս՝ ի զբօսանս բանականութեան՝ ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր՝ ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեան մերոյ։ Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբանս մեր յօրհնաբանութիւն՝ ահաւոր և փառաւորեալ անուանդ քումմ որբոյ։ Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա մեզ ուղիղ հաւատով և առաքինութեամբ վարուք՝ ի նոյն պահոն քո կանխել միշտ, և նովին կանոնիս անպատճառ փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգիդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկրպագեսցուք։

Զքեզ, որ յամենայնի գթած և մարդասէր տէրդ ես, աղաչեմք հանապազ, զի զօրացուսցես զմեզ օր ըստ օրէ կալ՝ ի կարդի կրօնաւորութեան մերում։ Թեթեւացո տէր՝ զբաղցուծ քո՝ զոր եդեր՝ ի վերայ մեր. զի կարասցուք կալ՝ ի պատուիրանիդ քում, և զհաճոյսն առնել առաջի քո յամենայն ժամ՝ ի տուէ և՝ ի գիշերի։ Հրեշտակային եղբակցութեամբ զքեզ օրհնել, զքեզ գովել, և քեզ գոհութիւն և փառս մատուցանել յամենազօր տէրութեանդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգեւորօք անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս։



Լուր դուստր և տես. խոնարհեցո զուշիկն քո։

ՍԱՂՄՈՍ ԺԵ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

ԵՐԿԻՆՔ պատմեն զփառս աստուածոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատուԹիւն։
Օր աւուր բղխէ զբան, և գիշեր գիշերի ցուցանէ զգիտուԹիւն։
Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։
Յարեւուս եհար զխորան իւր. և ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառագաստէ իւրմէ. և ցնծայ նա որպէս հզօր կայ յընթանալ զճանապարհս իւր։
Ի ծագաց երկնից են ելք նորա. և հանդիպատ նորա մինչեւ ի ծագս նո-

րուն. և ոչ ոք կայ, որ թագիցէ ի տապոյ նորա։

Օրինք տեառն ամբիծ են, և դարձուցանեն զհոգիս. վկայութիւն տեառն հաւատարիմ է, և իմաստուն առնէ զտղայս։

Արդարութիւն տեառն ուղիղ է, և ուրախ առնէ զսիրտս. պատուիրանք տեառն լոյս են, և լոյս տան աչաց. երկիւղ տեառն սուրբ է, և մնայ յաւիտեան։

Դատաստան տեառն ճշմարիտ է, և արդար է ի նոյն

Ցանկալի է նա քան զոսկի և քան զանհանս պատուականս բազումս. քաղցր է նա քան զմեղս խորիսխ։

Գանգի ծառայ քո պահեսցէ զայս. ի պահել նմա վճառութիւն բազում։

Զ յանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ ի միտ. ի գաղտնեացս իմոց սուրբ արա զիս տէր, և յօտարէն պահեա զծառայս քո։

Ապա թէ ոչ տիրեսցեն ինձ, յայնժամ ամբիծ եղէց, և սուրբ եղէց

ի մեղաց մեծաց։

Եղիցին քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ. տէր օգնական իմ և փրկիչ իմ։

Տունք ԺԹ.

ՍԱՂՄՈՍ ԺԹ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Լուիցէ քեզ տէր յաւուր անձկութեան. օգնական եղիցի քեզ անուն աստուծոյ յակոբայ։

Առաքեսցէ քեզ տէր օգնութիւն ի սրբութենէ իւրմէ, և ի սիոնէ ընկալցի զքեզ։

Յիշեսցէ տէր զամենայն պատարագս քո, և զուխտս քո ընդունելի արասցէ։

Տացէ քեզ տէր ըստ սրտի քում. և զամենայն խորհուրդս քո նա կատարեսցէ։

Ցնծասցուք մեք ի փրկութեան քում. յանուն աստուծոյ մերոյ մեք մեծք եղիցուք։

Լցուսցէ տէր զամենայն խնդրուածս

քո. այժմ ծանեաք, զի կեցցէ տէր զօծեալ իւր։

Լուաւ սմա յերկինից ի սրբութենէ իւմէ, ի զօրութիւն փրկութեան աջոյ իւրոյ։

Սոքա կառօք և սոքա երիվարօք. այլ մեք զանուն տեառն աստուծոյ մերոյ կարդասցուք։

Սոքա խափանեցան և անկան. մեք յարեաք և ուղիղք եղաք։

Տէր կեցո զքաղաւորն, և լուր մեզ յաւուր յորում կարդասցուք առ քեզ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ Ի.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի քաղաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա, և զկամս շրթանց նորա ոչ արգելեր ի նմանէ։

Ժամն արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քոյ, և եդեր ի գլխ

լուխ նորա պսակ ի քարէ պատուականէ։

Կեանս խնդրեաց ի քէն, և ետուր նմա ընդ երկայն աւուրս՝ յաւիտեանս յաւիտենից։

Մեծ են փառք նորա ի փրկութեան քում. զփառս մեծվայելչութեան քո դիցես ի վերայ նորա։

Տայցես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից, և ուրախ արասցես զնա յուրախութեան երեսաց քոց։

Թաղաւորս յուսացաւ ի տէր. յողորմութենէ բարձրելոյն նա մի՛ սասանեսցի։

Գտցի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց, և աջ քո գտցէ զամենայն ատելիս քո։

Դիցես զնոսա որպէս հնոց ի հուր՝ ի ժամանակի երեսաց քոց։

Տէր բարկութեամբ խրտով խռովեցուսցէ զնոսա. և հուր կերիցէ զնոսա։

Պտուղ նոցա յերկրէ կորնչեսցէ, և զաւակ նոցա յորդւոց ի մարդկանէ։

Խոտորեցան ի քէն չարութեամբ.

խորհեցան զխորհուրդ. զոր ոչ կա-
րացին հաստատել:
Արարեաս զնոսա հալածեալս. ՚ի մըթ-
նացուածս քո պատրաստեացես զե-
րեսս նոցա:
Բարձր լեր տէր ՚ի զօրութեան քում.
օրհնեսցուք, և սաղմոս ասասցուք
՚ի զօրութեան քում:

Ցունք ժդ. Գորգոյս լբ:

ՍԱՂՄՈՍ ԻԱ.

Ի կատարած վասն առաջոտին օգնականութեանց.
Սաղմոս դաւթի:

Աստուած աստուած իմ՝ նայեաց
առ իս. ընդէ՞ր լքուղեր զիս. հեռի
եղեր ՚ի փրկութենէ իմմէ վասն բա-
նից յանցանաց իմոց:
Աստուած իմ, ՚ի տուէ կարգացի առ
քեզ, և ինձ ոչ լուար. ՚ի գիշերի,
և ինձ ոչ անսացեր:
Դու ՚ի սուրբս բնակեալ ես. և գովք
եղիր իսրայէլի:
Ի քեզ յուսացան հարքն մեր. յու-

սացան ՚ի քեզ, և փրկեցեր զնոսա:
Առ քեզ աղաղակեցին և կեցին, ՚ի
քեզ յուսացան, և ոչ ամաչեցին:
Այլ ես որդն եմ. և ոչ եմ մարդ.
նախատինք մարդկան, և արհամար-
հանք ժողովրդոց:
Ամենեքեան որք տեսանէին զիս, ար-
համարհէին զինեւ. խօսէին շրթամբք
և շարժէին զգլուխս իւրեանց:
Յուսացաւ ՚ի տէր, և փրկեսցէ զնա.
կեցուսցէ զնա, զի կամի զնա:
Դու ես՝ որ հաներ զիս յարգանդէ.
յոյս իմ ՚ի տեառնէ մօր իմոյ:
Ի քեզ անկայ ես յարգանդէ, յորո-
վայնէ մօր իմոյ դու ես աստուած իմ:
Մի՛ ՚ի բացեայ առնիր յինէն՝ զի նե-
ղութիւնք մերձեալ են, և ոչ ոք է՝
որ օգնէ ինձ:
Շուրջ եղեն զինեւ զուարակք բա-
զումք. և ցուլք գետնոյ պաշարեցին զիս:
Բացին ՚ի վերայ իմ զբերանս իւրեանց,
որպէս առիւծ՝ զի մռնչէ և յափշտակէ:
Ես որպէս զջուր հեղայ, և ցրուե-
ցան ամենայն ոսկերք իմ, և եղեւ

սիրտ իմ որպէս մոմ հալեալ ՚ի մէջ
որովայնի իմոյ :
Զօրացաւ որպէս խեցի զօրութիւն
իմ. լեզու իմ ՚ի քիմս իմ կցեցաւ,
և ՚ի հող մահու իջուցին զիս :
Շուրջ եղեն զինեաւ շունք բազումք,
և ժողովք չարաց պաշարեցին զիս :
Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և
թուեցին զամենայն ոսկերս իմ. նո-
քա հայեցան և տեսին զիս :
Բաժանեցին զհանդերձս իմ ՚ի մէջ
իւրեանց, և ՚ի վերայ պատմուճանի
իմոյ վիճակս արկանէին :
Դու տէր մի՛ հեռի առներ զօգնու-
թիւն քո յինէն. և տէր յօգնել ինձ
նայեաց :
Փրկեա ՚ի սրոյ զանձն իմ, և ՚ի ձե-
ռաց շանց զմիամօրսութիւն իմ :
Փրկեա զիս ՚ի բերանոյ առիւծու,
յեղջերւոց վիհոցերուն զխոնարհու-
թիւն իմ :
Պատմեցից զանուն քո եղբարց իմոց.
և ՚ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ :
Երկիւղածք տեառն օրհնեցէք զտէր.

և ամենայն զաւակն յակոբեան փա-
ռաւորեսցեն զնա :
Երկիւղ ՚ի տեառնէ ամենայն զաւակն
իսրայելի, զի ոչ արհամարհեաց և ոչ
անարգեաց տէր զաղօթս աղքատի, և
ոչ դարձոյց զերեսս իւր յինէն. այլ ՚ի
կարդալ իմում առնա՝ լուաւ ինձ :
Ի քէն է գովութիւն իմ տէր, յեկե-
ղեցիս մեծս օրհնեցից զքեզ :
Զուխտս իմ կատարեցից առաջի ա-
մենայն երկիւղածաց նորա :
Կերիցեն տնանկք և յագեսցին. օրհ-
նեսցեն զտէր՝ որք խնդրեն զնա :
Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յա-
ւիտենից. յիշեսցեն, և դարձցին առ
տէր ամենայն ծագք երկրի :
Երկրպագեն նմա ամենայն տոհմք
ազանց. զի տեառնէ աթոռն է, և նա տիրէ ՚ի վերայ ամենայն հե-
թանոսաց :
Կերին և երկրպագին նմա ամենայն
պարարտք երկրի. առաջի նորա անկ-
ցին ամենեքեան՝ որք իջանեն ՚ի հող :
Անձն իմ նմա կեաց, և զաւակ իմ

ծառայեսցէ նմա ։

Պատմեցի տեառն ազգ՝ որ գալոցն է. պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան, որ ծնանելոցն է՝ զոր արար տէր ։

Տունք լ ։

ՍԱՂՄՈՍ ԻԲ.

Ի կատարած. Ցաղմոս դաւթի։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի ։

Ի վայրի դալարոջ՝անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս ։

Դարձոյց զանձն իմ առիս, և առաջ նորոգեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ ։

Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ, զի դու տէր ընդ իս ես ։

Յուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս ։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ առն յանդիման նեղչաց իմոց ։

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո

որպէս անապակ արբեցոյց զիս ։

Ողորմութիւն քո տէր զկեաս իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ի տան տեառն ընդ երկայն աւուրս ։

Տունք լ ։

ՍԱՂՄՈՍ ԻԳ.

Ցաղմոս դաւթի. միաշաբաթուն։

Տեառն է երկիր լիս իւրով. աշխարհ և ամենայն բնակիչք նորա ։

Նա ինքն ի վերայ ծովու հիմնաւնէարկ նմա. ի վերայ գետոց պատրաստեաց զնա ։

Ո՞վ ելցէ ի լեառն տեառն, կամ ո՞վ կացցէ ի տեղւոջ սրբութեան նորա ։

Որ սուրբ է ձեռօք և ամբիծ սրտիւ, որ ոչ էառ զնանպատութիւն յանձն իւր, և ոչ երդուաւ ընդ ընկերի իւրում նենգութեամբ ։

Սա առցէ զօգնութիւն ի տեառնէ, զողորմութիւն յաստուծոյ փրկչէ իւրմէ ։

Այս ազգ է՝ որ խնդրէ զտէր. խնդրէ տեսանել զերեսս աստուծոյ յակոբայ ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց։
Ո՞վ է սա թագաւոր փառաց, տէր հզօր զօրութեամբ իւրով, տէր հզօր զօրու ի պատերազմի։
Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց։
Ո՞վ է սա թագաւոր փառաց, տէր զօրութեանց, սա ինքն է թագաւոր փառաց։

Ցունք ժ։ Գորգեայս ծ։

ՍԱՂՄՈՍ ԻԴ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Առ քեզ տէր համբարձի զանձն իմ. աստուած իմ ի քեզ յուսացայ, մի՛ ամաչեցից. և մի՛ ծիծաղեսցին զիս նեւ թշնամիք իմ։
Ամենեքեան որք համբերեն քեզ, մի՛ ամաչեսցեն, այլ ամաչեսցեն ա նօրէնք յուսնայնութեան իւրեանց։

Զճանապարհս քո տէր ցոյց ինձ, և զշաւիղս քո ուս ինձ։
Առաջնորդեա ինձ ի ճշմարտութեան քում և ուս զիս, զի դու ես աստուած փրկիչ իմ. և ես քեզ համբերի զօրհանապազ։
Յիշեա տէր զողորմութիւնս քո և զողորմութիւնս քո, որք են յաւիտենից։
Զմեղս մանկութեան իմոյ և զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս տէր ըստ ողորմութեան քում վասն քաղցրութեան քո, զի քաղցր և ուղիղ ես։
Վասն այսորիկ օրէնսդիր առնես զմեզաւորս ի ճանապարհի. առաջնորդես հեզոց ի դատաստանի, և ուսուցանես հեզոց զճանապարհս քո։
Ամենայն ճանապարհք տեառն ողորմութեամբ և ճշմարտութեամբ են այնոցիկ, որք խնդրեն զուխտ և զվկայութիւն նորա։
Վասն անուան քո տէր քաւեա զմեղս իմ, զի բազում եղեն. ո՞վ է մարդ որ երկնչի ի տեառնէ. օրէնսդիր առնէ

գնա՛ ի ճանապարհի՝ յոր և հաճեցար։
Անձն նոցա՛ ի բարութեան հանգիցէ.
և զառակ նոցա ժառանգեացէ զերկիր։
Զօրութիւնէ տէր երկիւղածացն իւրոց, և գիտակարանայ իւրում առնել նոցա։
Աչք իմ յամենայն ժամ առ տէր են.
և նա հանէ յորոգայթէ զոտս իմ։
Նայեա առ իս և ողորմեա ինձ, զի միամօր և աղքատ եմ ես։
Նեղութիւնք սրտի իմոյ բազումացեղեն յոյժ, և՛ ի վշտաց իմոց հան զիս։
Տես զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ, և թող ինձ զամենայն մեղս իմ։
Տես զթշնամիան իմ, զի բազում են, ատելութեամբ՝ որք՛ ի նանիր ատեցին զիս։
Պահեա զանձն իմ և փրկեա զիս. և մի՛ յամօթ եղէց, զի յուսացայ՛ ի քեզ։
Ամբիծք և ուղիղ կցորդք եղեն ինձ.
և ես քեզ համբերի. փրկեա աստուած զիսրայէլ յամենայն նեղութեանց նոցա։

ՍԱՂՄՈՍ ԻԹ·

Ի կատարած Սաղմոս դաւթի։

Դատ արա ինձ տէր՝ զի ես յամբարծութեան իմում գնացի, և՛ տէր յուսացայ՝ զի մի՛ եղէց հիւանդ։
Փորձեա զիս տէր և քննեա զիս. փորձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ։
Ողորմութիւնք քո տէր առաջի աչաց իմոց. և հաճոյ եղէց ճշմարտութեան քում։
Ոչ նստայց ես յամբոխս նանրայց, և ընդ անօրէնս ես ոչ մտից։
Ատեցի ես զժողովս չարաց, և ընդ ամբարիշտս ես ոչ նստայց։
Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով տէր։
Լսել ինձ զձայն օրհնութեան քո և պատմել զամենայն սքանչելիս քո։
Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։
Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ, և մի՛ ընդ արս արիւնաց հեղս զկեանս իմ։

Որոց ձեռք իւրեանց յանօրէնու-
թեան են. և աչ նոցա լի է կաշառօք:
Ես յամբծու-թեամբ իմում գնացի.
փրկեա զիս տէր և ողորմեա ինձ:
Ոտն իմ կացցէ յուղղութեան, յե-
կեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:

Տունք ժբ:

ՍԱՂՄՈՍ ԻԶ·

Ցաղմոս դաւթի· մինչդեռ օծեալ էր:

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ ես յումմէ՞
երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց՝
ես յումմէ՞ դողայց:
Ի մերձենալ առնս չարաց ուտել զգ-
մարմին իմ. նեղիչք իմ և թշնամիք
իմ՝ նոքա տկարացան և անկան:
Թէ պատրաստեցի՛ ի վերայ իմ պատե-
րազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. և թէ
յարիցէ՛ ի վերայ իմ ձակատամարտ,
սակայն և այսուհետև ի քեզ տէր յու-
սացայ:
Զմի խնդրեցի՛ ի տեառնէ՝ և զայն ա-
զաչեմ, բնակիլ ինձ՛ ի տան տեառն
զամենայն աւուրս կենաց իմոց:

Տեսանել ինձ զվայելչութիւն տեա-
ռըն, և հրամանատալ՛ ի տաճարին նորա:
Ծածկեաց զիս՛ ի խորանի իւրում
յաւուր չարի. ընդ յարկաւ սրտի
զիս՛ ի ծածկոյթ խորանի իւրում:
Ի վեմ բարձր սրտիդ զիս, և այժմ
բարձր սրտ զղջութիւն իմ՛ ի վերայ
թշնամեաց իմոց:
Եւ եղէց՝ և մատուցից՛ ի խորանի
նորա պատարագ օրհնութեան. օրհ-
նեցից և սաղմոս ասացից տեառն:
Լսո տէր ձայնի իմում, զի կարդացի
առ քեզ. ողորմեա ինձ և լսո ինձ, զի
քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին
երեսք իմ, զերեսս քո տէր խնդրեցին:
Մի դարձուցաներ զերեսս քո յի-
նէն, և մի խոտորիր բարկութեամբ
՛ի ծառայէ քումմէ:
Օգնական իմ լեր տէր, մի՛ անարգեր
զիս, և մի՛ թողուր զիս աստուած
փրկիչ իմ:
Հայր իմ և մայր իմ թողին զիս, և
տէր իմ ընկալաւ զիս:
Օրէնագէտ սրա զիս տէր՛ ի ճանա-

պարհի քոմ, և առաջնորդեա ինձ
'ի շաւիղս քո ուղիղս։
Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ
զիս 'ի ձեռս նեղչաց իմոց։
Յարեան 'ի վերայ իմ վկայք մեղաց,
և ստեցին ինձ յանօրէնութեան իւր
եանց։
Հաւատացի տեսանել զբարութիւն
տեառն յերկրին կենդանեաց. համ
բեր տեառն և քաջալերեաց. զօրաց
ցի սիրտ քո և համբեր տեառն։

Տունք ժզ։ Գոբզայս խզ։

ՍԱՂՄՈՍ ԻԷ.

Սաղոմոս դաւթի։

Աւ քեզ տէր կարդացի աստուած
իմ, մի՛ լռեր յինէն, մի՛ երբէք լռե
ասցես յինէն. նմանիցիմ այնոցիկ
ոյք իջանեն 'ի գուբ։
Լուր տէր ձայնի խնդրուածոց իմոց
յաղաչել ինձ առ քեզ, 'ի համբառ
նալ ձեռաց իմոց 'ի տաճար սուրբ քո։
Մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն
իմ. և մի՛ ընդ այնոսիկ՝ ոյք գործեն

զանօրէնութիւն, կորուսաներ զիս։
Ոյք խօսեին զխաղաղութիւն ընդ
ընկերս իւրեանց, և չարութիւն է
'ի սիրտս նոցա։
Տուր նոցա ստէր ըստ գործոց նոցա.
և ըստ անօրէնութեան դնացից նո
ցա հատո նոցա։
Ըստ գործոց ձեռաց նոցա հատո նո
ցա՝ զհատուցումն նոցա նոցին։
Ոչ իմացան նոքա զգործս տեառն, և ոչ
'ի գործս ձեռաց նորա հայեցան. կոր
ծանեսցես զնոսա, և այլ մի՛ շինեսցին։
Օրհնեալ է տէր՝ զի լուաւ ձայնի
աղօթից իմոց. տէր օգնական իմ և
պաշտպան իմ։
Ի նա յուսացաւ սիրտ իմ. օգտեցաւ
և զուարճացաւ մարմին իմ. և ես
կամօք իմով խոստովան եղէց նմա։
Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ,
ապաւէն փրկութեան օծելոյ իւրոյ։
Փրկեա զժողովուրդս քո, և օրհնեա
զժառանգութիւնս քո. հովուեա և
բարձրացո զնոսա մինչեւ յաւիտեան։

Տունք ժո։

ՍԱՂՄՈՍ ԻԸ.

Սաղմոս դաւթի. օրհնութեանց նաւակատեաց տաճարին:

Մատուցէք տեառն որդիք աստուծոյ, մատուցէք տեառն զորդիս խոյոց:
Մատուցէք տեառն զփառս և զպատիս. մատուցէք տեառն զփառս անուան նորա. և երկիրպագէք տեառն ի սրահ սրբութեան նորա:
Ձայն տեառն ի վերոյ ջուրց՝ և աստուած փառաց որոտաց. և տէր ինքն ի վերոյ ջուրց բազմաց:
Ձայն տեառն զօրութեանց, և ձայն տեառն մեծվայելչութեանց:
Ձայն տեառն փշրէ զմայրս, և մանրէ տէր զմայրան լիբանանոս:
Մանրեսցէ զնոսա որպէս զմատաղաստունկն լիբանանոս. որ սիրելին է որպէս զորդիս միեղջերուի:
Ձայն տեառն հատանէ զբոց ի հրոյ. ձայն տեառն շարժէ զանապատն, և խռովեցուցանէ տէր զանապատն կադէս:
Ձայն տեառն հատուցանէ զեղջերուս.

և յայտնի առնէ զանտառս:
Ի տաճարի նորա ամենեքեան ասացեն զփառս նորա:
Տէր զջրհեղեղս նստուցանէ և յաժողացանէ. թագաւորեսցէ տէր յաւիտեան:
Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութիւն:

Տունք ժա:

ՍԱՂՄՈՍ ԻԹ.

Սաղմոս դաւթի. ի հոգի:

Բարձր առնեմ զքեզ տէր, զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:
Տէր աստուած իմ՝ կարդացի առ քեզ, և բժշկեցեր զիս. տէր հաներ ի դժոխոց զանձն իմ և փրկեցեր զիս յայնցանէ՝ որք իջանեն ի գուբ:
Սաղմոս ասացէք տեառն սուրբք նորա, և խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա:
Սրտմտութիւն է ի բարկութեան նորա. և կեանք են ի կամաց նորա:

Ընդ երեկոյս հանդիպեն լալիք. ա-
ռաւօտու եղիցի ուրախութիւն:
Ես ասացի՝ իբարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան:
Տէր՝ ի կամս քո եառուր զեղջ իմոյ զօրութիւն. դարձուցեր զերեսս քո յինէն, և ես եղէ խռովեալ:
Առ քեզ տէր կարդացի, և առ աստուած իմ աղաչակեցի. զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն:
Միթէ հող խոստովանի առնիցի առ քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո:
Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ, և տէր եղեւ ինձ օգնական:
Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, եղերգ յինէն զգեցար, և ինձ զգեցուցեր զուրախութիւն:
Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, և այլ մի՛ եւս զղջացայց. տէր աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ:

ՍԱՂՄՈՍ Լ:

Ի կատարած. Աւանդատուրբիւն գովութեան. Ցաղմոս դաւթի:

Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փրկեա և ապրեցո զիս:
Խոնարհեցո առ իս զականջն քո. վաղվաղեա կեցուցանել զիս:
Լեր իմ աստուած պաշտպան և տուն ապաւինի ապրեցուցանել զիս. զի հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես:
Վասն անուան քո տէր առաջնորդեցեր ինձ, և սնուցեր զիս. և հանցես զիս յորոգայթէ յայսմանէ՝ որ թագուցան ինձ:
Դու ես պաշտպան իմ տէր, և՝ ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:
Փրկեցեր զիս տէր աստուած ճշմարտութեամբ քով. առեցեր զայնոսիկ՝ որք պահեն զերկիւղ՝ ի սնոտիս:
Ես՝ ի տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց՝ ի փրկութեան քում:
Զի հայեցար՝ ի խոնարհութիւն իմ, և

փրկեցեր ի վշտաց զանձն իմ, և ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղչաց իմոց. և կացուցեր յանդիպուս զոտս իմ։
Ողորմեա ինձ տէր, զի նեղեալ եմ ես. խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, անձն իմ և փոր իմ։
Պակասեցան ի ցաւոց կեանք իմ, և ամք իմ յօդուածոց ելանելոյ։
Աղքատացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ. և ոսկերք իմ խռովեցան։
Քան զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց, յոյժ ահ և երկիւղ ծանօթից իմոց։
Ամենեքեան որ տեսանէին զիս, արտաքս փախչէին ինէն։
Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ. և եղէ ես որպէս զանօթ կորուսեալ։
Զի լսայ ես զբամբասանս բազմաց՝ որք շուրջ էին զինեւ. ի ժողովել նոցա ի միասին, առնուլ զանձն իմ խորհեցան. այլ ես ի քեզ տէր յուսացայ։
Ասացի՝ դու ես աստուած իմ, և ի

ձեռս քո է ժառանգութիւն իմ։
Փրկեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց, և ի հալածչաց իմոց։
Երեւեցո զերեսս քո ի ծառայս քո. ապրեցո զիս տէր ըստ ողորմութեան քումմ. տէր՝ մի՛ յամօթ եղէց, զի կարդացի առ քեզ։
Ամօչեսցեն ամբարիշտք, և իջցեն ի դժոխս. համր եղիցին շրթունք նենգաւորք՝ որք խօսէին զարդարոյ զանիրաւութիւն, յամբարտաւանիլ և յանդգնանել խրթանց։
Որպէս զի բազում է ողորմութիւն քաղցրութեան քոյ տէր, զոր պահեցեր երկիւղածից քոց։
Արարեր դու այնոցիկ՝ որք յուսացեալ են ի քեզ, առաջի որդւոց մարդկան։
Ամրացուցեր զնոսա ի ծածկոյթ երեսաց քոց, ի խռովութենէ մարդկան։
Ծածկեցեր զնոսա ի խորանի քումմ, ի հակառակութենէ լեզուաց։
Օրհնեալ է տէր, զի սքանչելիս արար ողորմութիւն իւր ի քաղաք ամուր։
Ես ասացի ի զարմանալ իմում, թէ

ընկեցայ ուրուն յերեսաց աչաց քոց։
Վասն այսորիկ լուար ձայնի աղօթից
իմոց, յարուցանիցես իմոյ քեզ։
Սիրեցէք զտէր ամենայն սուրբք նո-
րա, զի ստուգութիւն խնդրէ տէր,
և հատուցանէ այնոցիկ՝ որք առա-
ւել առնեն զամբարտաւանութիւն։
Գաղջութիւն, և զօրացին սիրտք
ձեր, ամենեքեան՝ որք յուսացեալ
էք ի տէր։

Տունք իբ։

ՍԱՂՄՈՍ ԼԱ։

Խնամատրիւն. Յաղնոս դաւթի։

Երանի, ում թողութիւն եղեւ ան-
զից, և ծածկեցան ամենայն յան-
ցանք նորա։
Երանի առն՝ որում՝ ոչ համարի տէր
զմեղս նորա, և ոչ գոյ նենգութիւն
ի բերան նորա։
Լռեցի ես՝ և մաշեցան ամենայն ոս-
կերք իմ, առ աղաղակել ինձ առ տէր
զօրհնութիւնս ի տուէ և ի գիշերի։
Ծանրացաւ ձեռն քո ի վերայ իմ.

դարձայ ի թշուառութիւն՝ զի հան-
ցան յիս փուշք։
Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէ-
նութիւնս իմ ոչ ծածկեցից ի քէն։
Ասացի՝ թէ պատմեցից ինձէն զմեղս
իմ, և դու թողցես զամենայն ամ
բարշտութիւնս մեղաց իմոց։
Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ
քեզ ամենայն սուրբք ի ժամ ըն-
դունելի։
Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բազ-
մաց, որք առնոսա ինչ ոչ մերձեսցին։
Դու ես ապաւէն իմ՝ ի նեղութենէ
յայսմանէ, որ շուրջ եղեն զինեւ։
Ցնծութիւն իմ, փրկեա զիս յայնցա-
նէ՝ որք պաշարեցին զիս։
Իմաստուն արարից զքեզ՝ և խելա-
մուտ ի ճանապարհ՝ յոր և գնասցես.
և հաստատեցից ի վերայ քո զաչս իմ։
Մի լինիք որպէս զձիս և զջորիս, զի
ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի
սանձս և ի դանդանաւս ճմլեա-
ցես զկզակս նոցա՝ որք առ քեզ ինչ
ոչ մերձեսցին։

Բաղում տանջանք են մեզ առաւօրայ. բայց այք չեն տան ի տէր, ողորմութիմն տեառն շուրջ եղիցի զնոքօք: Ուրախ եղերուք և ցնծացեք արդարք. ի տէր պարծեցարուք ամենեքեան՝ այք ուղիղ են սրտիւք:

Տունք ԺԲ: Դարձեալ խր:

ՍԱՂՄՈՍ ԼԲ.

Սաղմոս դաւթի:

Ցնծացեք արդարք ի տէր. ուղղոց վայելէ օրհնութիմն. խոստովան եղերուք տեառն օրհնութիմեամբ. տաղնապաւոր սաղմոսաբանութիւն սաղմոս ասացէք նմա:

Օրհնեցեք զտէր յօրհնութիմն նոր՝ զի բարի է. սաղմոս ասացէք նմա օրհնութիմեամբ:

Ուղիղ են պատգամք տեառն, և ամենայն գործք նորա հաւատովք են. և սիրէ զողորմութիմն և զիրաւունս տէր:

Ողորմութիմամբ տեառն լի եղեւ երկիր, և բանիւ տեառն երկինք հաս-

տատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիմնք նոցա:

Ժողովեաց որպէս ի տիկ զջուրս ծովու. և դնէ ի խորս զդանձս խոր:

Երկիւղ ի տեառնէ ամենայն երկիր. և ի նմանէ դողացին ամենայն բնակիչք աշխարհի:

Զի նա ասաց՝ և եղեն. ինքն հրամայեաց՝ և հաստատեցան:

Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց. անարգէ տէր զխորհուրդս ժողովրդոց. և արհամարհէ տէր զխորհուրդս իշխանաց:

Խորհուրդ տեառն յաւիտեան մնայ, և խորհուրդ սրտի նորա ազգէ մինչ ազգ:

Երանի ազգի՝ որոյ տէր աստուածն օգնական է նմա. ժողովուրդ զոր ընտրեաց ի ժառանգութիմն իւր:

Յերկնից նայեցաւ տէր յամենայն որդիս մարդկան, ի պատրաստ բնակութիմենէ իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի:

Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա, ի

միտ առնու զամենայն գործս նոցա։
Ոչ լեր ի բազում զօրս իւր ապրես-
ցի Մատաւոր, և ոչ հսկայ ի բա-
զում զօրութեան իւրում։
Սուտ է ձի ի փրկութեան իւրում.
ի բազում զօրութեան իւրում ոչ
ապրեցուցանէ զՀեծեալն։
Աչք տեառն ի վերայ երկիւղածից
իւրոց. և որք յուսան յողորմու-
թիւն նորա։
Փրկել ի մահուանէ զանձինս նոցա,
և կեցուցանել զնոսա ի սովու։
Անձինք մեր համբերեսցեն տեառն,
զի օգնական և պաշտպան մեր է։
Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, և
յանուն սուրբ նորա յուսացաք։
Եղիցի ողորմութիւն քո տէր ի վե-
րայ մեր, որպէս յուսացաք ի քեզ։

Տունք ԺԲ։

ՍԱՂՄՈՍ ԼԴ.

Սաղմոս դաւթի. ի ժառանգութիւն զի այրագունեաց գերեցաւ իւր առաջի աբիմելեքայ. եւ ապա արձակեաց զնա, եւ գնաց։

Օրհնեցից զտէր յամենայն ժամ, յա-

մենայն ժամ օրհնութիւն նորա ի
բերան իմ։
Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն
հեզք, և ուրախ եղիցին։
Մեծ արարէք զտէր ինձեւ. և բարձր
արասցուք զանուն նորա ի միասին։
Խնդրեցի ի տեառնէ և լուաւ ինձ.
յամենայն նեղութենէ իմմէ փրկե-
կեաց զիս։
Մատիք առ տէր՝ և առէք զլոյս. և
երեսք ձեր մի՛ամաչեսցեն։
Այս աղքատ կարդաց առ տէր, և
տէր լուաւ սմա. յամենայն նեղու-
թենէ սորա փրկեաց զսա։
Բանակ հրեշտակաց տեառն շուրջ
են զերկիւղածսն իւրոյ, և պա-
հեն զնոսա։
Ճաշակեցէք և տեսէք՝ զի քաղցր է
տէր. երանելի այր՝ որ յուսայ ի նա։
Երկերուք ի տեառնէ ամենայն սուրբք
նորա. զի ոչինչ է պակասութիւն
երկիւղածից նորա։
Մեծամեծք աղքատացան և քաղցեան.
բայց որք խնդրեն զտէր՝ մի՛ պակասիս

ցի ՚ի նոցանէ ամենայն բարեմիտն։
Եկայք որդեակք իմ լուարուք ինձ,
և զերկիւղ տեառն ուսուցից ձեզ։
Ո՞վ է մարդ՝ որ կամի կեանս. սիրէ
զաւուրս իւր տեսանել ՚ի բարե-
միտս։
Լռեցո զլեզուս քո ՚ի չարեմիտնէ, և
շրթունք քո մի խօսեսցին զնենգու-
միտն։
Խոտորեա ՚ի չարէ և արա զբարի,
հանդրեա զխաղաղութիւն և երթ
զհետ նորա։
Աչք տեառն ՚ի վերայ արդարոց, և ա-
կանջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա։
Երեսք տեառն ՚ի վերայ չարագործաց,
ամայեալ յերկրէ զյիշատակս նոցա։
Կարդացին արդարքն առ տէր, և
տէր լուաւ նոցա. յամենայն նեղու-
միտս նոցա փրկեաց զնոսա։
Մերձ է տէր առ այնոսիկ՝ որք մաշ-
եալ են սրտիւք. և զխոնարհս հոգ-
ւով կեցուցանէ։
Բազում՝ նեղութիւնք են արդարոց.
յամենայնէ փրկէ զնոսա տէր. և

պահէ զամենայն ոսկերս նոցա, և մի
՚ի նոցանէ մի փշրեսցի։
Մահ մեղաւորին չար է. բայց որ
ատէ զարդարն, դղջասցի։
Փրկէ տէր զանձինս ծառայից իւ-
րոց, մի դղջասցին ամենեքեան՝ որք
յուսացեալ են ՚ի նա։

Տունք իա։ Գոբզայա խ։

ՍԱՂՄՈՍ ԼԴ.

Ի կատարած Սաղմոս դաւթի։

Դատեա տէր զայնոսիկ՝ որք դա-
տեն զիս. մարտիր ընդ այնոսիկ՝ որք
մարտնչին ընդ իս։
Առ զդէն և զասպար քո, և արի յօգ-
նել ինձ. հան զսուր քո ընդդէմ հա-
լածչաց իմոց, արդել զնոսա. և ասա
դու ցանձն իմ՝ թէ փրկութիւն քո
ես եմ։
Ամաչեսցեն և յամօթ լինիցին՝ որք
խնդրեն զանձն իմ. դարձցին յետս և
ամաչեսցեն, որք խորհեին ինձ չար։
Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հող-

մոյ, և հրեշտակ տեառն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի գայթակղութիւն, և հրեշտակ աստուծոյ հալածեսցէ զնոսա։

Ի նանիր թաղուցին ինձ որոգայթ յատականութեան իւրեանց, և ի նանիր նախատեցին զանձն իմ։

Հասցէ ի վերայ նոցա որոգայթ՝ զոր ոչ գիտացին, և որան՝ զոր թաղուցին, առցէ զոտս նոցա, և յորոգայթ ի նոյն անկցին։

Ա՛յլ անձն իմ ցնծասցէ ի տէր, ուրախ եղիցի ի փրկութեան նորա. և ամենայն ոսկերք իմ ասասցեն, տէր՝ ո՞ նման է քեզ։

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկն յայնցանէ՝ որք յափշտակեն զնա։

Յարեան ի վերայ իմ վկայք չարաց. և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս։

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. անժառանգել զանձն իմ խորհեցան յօրդւոց ի մարդկանէ։

Եա՛ ի նեղել նոցա քուրձ զգենուի, խոնարհ առնէի պահօք զանձն իմ. և աղօթք իմ ի ծոց իմ դարձցին։

Որպէս զեղբօր և զընկեր՝ այսպէս հաճոյ լինէի. որպէս զսգաստար և զտրտում, այնպէս խոնարհ առնէի։

Ի վերայ իմ ուրախ եղեն՝ և ժողովեցան. ժողովեցան չիս տանջանք, և ես ոչ ծանեայ. ցրուեցան, և ոչ դղջացան։

Փորձեցին զիս՝ և արհամարհեցին արհամարհանօք. կրճտեցին ի վերայ իմ զատամունս իւրեանց. տէր ե՞րբ տեսցես։

Ի բաց արա զանձն իմ ի խորամանկութեանց նոցա, և յառիւծուց ըղձումարօրութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ տէր՝ յեկեղեցիս մեծ, և ի ժողովս բազմացս օրհնեցից զքեզ։

Մի՛ ուրախ եղիցին չիս թշնամիք իմ, որք ատելին զիս ի տարապարտուց, ակնարկիւ առնէին չիս աչօք իւրեանց։

Ընդ իս զհատաղուԹիւն իսօսէին. և
ինքեանք բարկուԹեամբ զնենգուԹիւն
Ժիւն խորհէին։
Բացին՝ի վերայ իմ զբերանս իւրեանց
և ասացին՝ այո այո տեսին աչք մեր։
Տեսեր տէր՝ և մի՛ լռեր. տէր՝ մի՛՝ի
բացեայ առնիր յինէն։
ԶարԹիր և հայեաց տէր՝ յիրաւունս
իմ. աստուած իմ և տէր իմ՝ի դա-
տաստանս իմ. և իրաւ արա ինձ ըստ
արդարուԹեան քումմ, տէր աստ-
ուած իմ։
Մի՛ ուրախ եղիցին յիս Ժշնամիք իմ,
և մի՛ ասասցեն՝ի սիրտս իւրեանց՝
Ժէ վաշ վաշ անձանց մերոց, զի կլուն
լուզաք զնա։
Ամաչեսցեն և յամօԹ լիցին՝ ոյք
խնդան ընդ չար իմ. զգեցցին զամօԹ
և զանարգանս՝ ոյք մեծաբանեն՝ի
վերայ իմ։
Ցնծասցեն և ուրախ լիցին՝ի քեզ ա-
մենեքեան. ոյք կամին ընդ արդա-
րուԹիւն իմ։
Ասասցեն յամենայն ժամ, մեծ է

աստուած. և ոյք կամին զհատաղուԹ-
Ժիւն ծառայի քո։
Լեզու իմ խոսեսցի զարդարուԹիւն
նա քո, զօրհնաբանուԹիւն զո-
նա քո։
Տաւնք իմ։

ՍԱՂՄՈՍ ԼԸ.

Ի կատարած, Տառոյի տեառն. Սաղմոս դաւթի։

Ասէ անօրէնն՝ի մեզանչել ընդ միտս
իւր, Ժէ չկայ երկիւղ աստուծոյ ա-
ռաջի աչաց նորա։
Նենգեաց առաջի նորա, գտանել զա-
նօրէնուԹիւն, և ատել զնա։
Բանք բերանոյ նորա անօրէնուԹիւն
և նենգուԹիւն են։
Ոչ կամեցաւ նա իմանալ զբարի. զա-
նօրէնուԹիւն խորհեցաւ յանկողնի
իւրում։
Եկաց նա յամենայն ճանապարհ, որ
ոչ է բարի. և՝ի չարէ նա ոչ ձանձ-
րացաւ։
Տէր՝ յերկինս է ողորմուԹիւն քո.
ճշմարտուԹիւն քո մինչեւ յամպս։

Արդարութիւն քո որպէս լերինք
աստուած, իրաւունք քո որպէս խոր-
բազում, զմարդիկ և զանասուն կե-
ցուցանես դու տէր:
Որպէս զի բազում ողորմու-
թիւն քո աստուած, այլ որդիք մարդ-
կան՝ ի հովանի թեւուց քոց յուսացին:
Արբեսցին նոքա՝ ի պարարտու թենէ
տան քո, և զուղիս փափկու թեան
քո տացես ըմպել նոցա:
Ի քէնէ աղբիւր կենաց, և լու-
սով երեսաց քոց տեսանեմք զլոյս:
Ծագեա ողորմու թիւնս քո՝ ոյք ճա-
նաչեն զքեզ, զարդարու թիւնս քո՝
ոյք ուղիղ են սրտիւք:
Մի՛ եկեսցեն՝ ի վերայ մեր ոտք ամ-
բարտաւանից, և ձեռք մեղաւորաց
մի՛ դողացուսցեն զմեզ:
Անդ անկցին ամենեքեան՝ ոյք գոր-
ծեն զանօրէնու թիւն, մերժեսցին և
այլ մի՛ կարասցեն հաստատել:

Տունք ժդ: Գոբզայս խ:

Կանոնս Գոբզայս է: Սաղմոս ժբ: Տունք ժդ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՄՈՎՍԷՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՏԵՍ
ՄԱՐԳԱՐԷԻ:

Բ· Օրինաց լբ:

Նայեցարուք երկինք և խօսեցայց· լը-
սիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ:
Ընդունելի լիցի որպէս անձրեւ բար-
բառ իմ, և իջցեն որպէս ցօղ պատ-
գամք իմ:
Որպէս անձրեւ՝ ի վերայ սիզոյ, որպէս
տարափ՝ ի վերայ խոտոյ· զի զանուն
տեառն կարդասցուք, և տուք օրհ-
նու թիւն տեառն աստուծոյ մերոյ:
Աստուած՝ որոյ ճշմարտու թեամբ են
դործք նորա, և ամենայն ճանա-
պարհք նորա իրաւամբք են:
Աստուած հաւատարիմ է, և ոչ գոյ
՝ի նմա անիրաւու թիւն· արդար և
ճշմարիտ է տէր:
Մեղան՝ և ոչ նմա՝ որդիքն արատոյ,
ծնունդք խոտորեալք և թիւրեալք:
Ո՞չ այդ այն է՝ զոր տեառն հատու-
ցանէիք դուք՝ ժողովուրդք յիմարք

և ոչ խմաստուն՝ ։

Ո՞չ սա ինքն է Հայր քո՝ որ ստացաւ
զքեզ, արար զքեզ, և ստեղծ զքեզ ։
Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտե-
նից. խնացարուք զամս ազգաց ամն
ից եւ յազգս ։

Հարցջիր զոմ ցհայր քո, և պատմեսցէ
ցձեզ քեզ ցծերս քո, և ասասցեն քեզ ։
Ի ժամանակի՝ յորժամ բաժանեաց
բարձրեալն զազգս ամենայն. որպէս
սփռեաց նա զորդիան ադամայ ։
Կացոյց սահմանս հեղմանաստց ըստ
թուոյ հրեշտակաց աստուծոյ ։
Եղեւ բաժին տեառն ժողովուրդ
իւր յակոբ, և վիճակ ժառանգու-
թեան իւրոյ իսրայէլ ։
Բաւական եղեւ նմա յանապատի, ի
ծարաւ աւթոյ յանջրդուզ պաշտպա-
նեաց զնա ։
Թրատեաց զնա, և պահեաց որպէս
բիբ ականի. որպէս զարծուի ի թեւս
իւր ընկալաւ զնա, և որպէս ի վե-
րայ ձագուց իւրոց դիցաւոյ ։
Տարածեաց զթեւս իւր, և ընկալաւ

զնա. և բարձեալ բերբէր զնա ի վե-
րայ միջնոցաց իւրոց ։
Տէր միայն ածէր զնոսա, և ոչ դոյր
ընդ նոսա աստուած օտար ։
Էած եհան զնոսա ի զօրութիւնս
երկրի, և կերակրեաց զնոսա արգեամբ
անդաստանաց ։
Դիեցոյց նոցա մեղր ի վիմէ, և խող
յապառաժ վիմէ ։
Իւղ կովուց և կաթն մաքեաց,
ճարպով հանդերձ խոցոց որմուց՝
ցորուց և նոխազաց ։
Զպարարուրիւն երիկամանց ցորե-
նոյ, և զարիւն խաղողոյ եարբ գինի ։
Եկեր յակոբ և յագեցաւ, և ան-
դուրեաց զսիրելին ։
Գիրացաւ աստուածացաւ լայնացաւ.
եթող զտէր աստուածն զարարիչ իւր,
և յետս եկաց յաւիտենից փրկիչ
իւրմէ ։
Բարկացուցին զնա օտարոտիւք իւր
եանց, և կռոիւք իւրեանց դառնա-
ցուցին զնա ։
Զոհեցին դիւաց՝ և ոչ աստուծոյ.

գիցն՝ զորս ոչ գիտեին, նոքք և առ-
ժամայնք, զորս բնաւ ոչ ճանաչէին
հարք նոցա։
Թողին զտէր՝ որ ծնաւ զնոսա. մոռա-
ցան զաստուածն՝ որ կերակրեաց զնոսա։
Եառս տէր և նախանձեցաւ, և սըրտ-
մըտեցաւ ՚ի վերայ ուսաերայց և դըս-
տերայց նոցա, և ասէ։
Դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ, և
ցուցից նոցա զինչ լինելոց իցէ յա-
պայ ժամանակի։
Զի ազգ մի հիւր են նոքա՝ և որդիք
անհաւանք. նոքա նախանձեցուցին
զիս ՚ի չաստուածս իւրեանց, և դառ-
նացուցին զիս ՚ի կուռս իւրեանց։
Արդ և ես նախանձեցուցից զնոսա
յազգ անպիտան. և անմիտ ազգաւ
գրգռեցուցից զնոսա։
Փառք Հօր և որդւոյ և։

ՄԱՂԹԱՆԻ

Տուք փառս աստուծոյ, տուք օրհ-
նութիւն մարգարէին Իսրայէլի
յաւիտենից, որ վրկէ զծառայս իւր

և կեցուցանէ։
Մարդասէր տէր, վասն սքանչելոյ
անապատի մօր քոյ և կուսի, և վասն
խաչի քոյ պատուականի, ընկալ զա-
ղաչանս մեր և կեցո զմեզ։

Քարոզ եւ աղօթք երէից պապին և տէր պապին
հանուցանն։

Վասն՚ի գիշերի և՚ի տուընջեան և յա-
ւուրս ամենայն ժամու խաւսիլ մեզ զբան տեառն
զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։
Վասն չանկանելոյ մեզ ՚ի փորձու-
թիւն, որում մի կարեմք հանդուր-
ժել, զտէր աղաչեսցուք։
Վասն ամբիծ և անդատապարտ կալ
մեզ առաջի ահեղ ատենին քրիստո-
սի, զտէր աղաչեսցուք։
Վասն առաջնորդելոյ մեզ ՚ի նաւա-
հանգիստն կենաց անվախճանից, զը-
տէր աղաչեսցուք։
Վասն արժանի լինելոյ մեզ վերին
իշխանին և երկնից արքայութեանն,
զտէր աղաչեսցուք։
Վասն Հոգւոյն Հան։ Եւ եւս միա-
բան։ Զանձինս։ Ողորմեայ։

ՍԱՂՄՔԻ

Ի գիշերի և ի տուընջեան և յամենայն ժամու զքեզ աղաչեմք, և ի քէն խնդրեմք մարդասէր տէր։ Լուր մեզ աստուած փրկիչ մեր. խոնարհեացի ունկն քո ի խնդրուածս մեր, զի մի ունայն լիցին վաստակք ծառայից քոց. այլ համարեա զաշխատութիւնս մեր ի գործ արդարութեան և ի պատուղ աստուածպաշտութեան։ Ընկալ տէր զաղօթս և զերկրպագութիւնս մեր, և հաստ մեզ զողորմութիւն քո ա ուստուածս, ծածկեա զմեզ ընդ հովանեաւ ամենազօր ոյժդ քո. զօրացո զմեզ տէր՝ զօրութեամբ սուրբ հոգւոյդ. պահեա զմեզ որպէս բիբ աչկան, և ապա առ մեզ նշան բարի ի գովեստն և ի վաստաբանութիւնս անուանդ քոմէ սրբոյ։ Զի ի քո փառս կատարի ամենայն արարածոց մանկեցեալ որ վաստաբանութիւն ի բարձունս, հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկրպագեցուք։

Հովիւ քաջ՝ հովիւ բարի և յաւիտենական, նայեաց և այց զայս բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ զթութեամբ քով։ Զի քո առաջի կամք տէր, և առ ի քէն ողորմութիւնդ և զթութիւնդ ակն ունիմք։ Զամենեսեան օրհնեա, զամենեսեան խնամատարացո, զամենեսեան լուսաւորեա, և ամենեցուն պարգեւեա զերկնից ալքայութիւնդ։ Վասն զի դու ես տէր կենաց և աստուած ողորմութեանց. և քեզ վայելէ փառք խնամատարութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Ի գիշերի և ի տուընջեան և յամենայն ժամու անդադար փառաւորեմք զՀայր և զորդի և զսուրբ հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր Յիսուս քրիստոս։
Հայր մեր որ յերկինս։



Ծագեցի յաւուր նորա արդարութիւն. բազում խաղաղութիւն մինչեւ կատարելոցի լուսին։

ՍԱՂՄՈՍ Լ.

Սաղմոս դաւթի։

Ա՛ն նախանձիր ընդ չարս, և մի՛ ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն։

Զի որպէս խոտ վազվազակի ցամաքեսցին, որպէս դդալարի խոտոյ վազվազակի անցցեն։

Յուսա՛ ի տէր, և արա զբարութիւն. բնակեա յերկրի, և հովուեսցիս ի մեծութեան նորա։

Ծանեա՛ ի տեառնէ, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո։ յայտնեա առաջի տեառն զճանապարհս քո, և յուսա՛ ի նա։

Նա արասցէ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, և զիրաւունս քո որպէս զկէսօրեակ։

Հնազանդ լեր տեառն՝ և ծառայեա նմա. և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝

որոց առակեալ իցեն ճանապարհք իւրեանց ընդ մարդոյ՝ որ գործէ զանօրինութիւն։

Լռեա՛ ի բարկութենէ, և հանդիր ի սրտմտութենէ, և մի՛ նախանձիր ընդ չարս։

Զի չարք վաղվաղակի սատակեսցին. բայց որք համբերեն տեառն, նոքա ժառանգեսցեն զերկիր։

Փոքր մի և այլ ոչ եւս իցէ ամբարիշտն. խնդրեսցես զտեղի նորա, և ոչ գտցես։

Այլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր, և փափկասցին ի բազում խաղաղութենէ իւրեանց։

Սպասէ մեզաւորն արդարոյ, և կրճտէ ի վերայ նորա զառաքինութիւն իւր. այլ տէր ծիծաղեսցի զնովաւ։

Զանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նորա։

Սուր հանին մեզաւորք, և լարեցին զաղեղունս իւրեանց՝ հարկանել զաղքատն և զտնանկն, սպանանել զանձն՝ որ խոնարհն է սրտիւ։

Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին։

Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ, քան զբազում մեծութիւն մեզաւորաց. և բազուկք ամբարշտաց խորտակեսցին։

Հաստատէ տէր զարդարս, և ճանաչէ զառաւելս ամբծից, ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի։

Մի՛ ամաչեսցեն նոքա ի ժամանակս չարութեան. այլ յաւուրս սովու յագեսցին։

Ահա՛ մեզաւորք կորիցեն. այլ թշնամիք տեառն ի փառաւորիլ և ի բարձրանալ իւրեանց պակասեսցին որպէս ծուխ՝ ղի պակասի։

Փոխառնու մեզաւորն, և ոչ հատուցանէ. այլ որ արդարն է, ողորմի և տայ։

Ոյք օրհնեն զտէր, ժառանգեսցեն զերկիր. և որք անիծանեն, սատակեսցին ի նմանէ։

Ի տեառնէ ուղղին գնացք առն. ըզճանապարհս նորա նա կամի յոյժ։

Թէպէտ և դայթակղեսցի, նա մի՛ կործանեսցի, զի տէր ձեռնկալու է նորա։

զու զնա ՚ի ձեռս նորա, և ոչ դատա-
պարտէ զնա յորժամ դատէ զնա:
Համբեր տեառն և պահեա զճանա-
պարհս նորա. և բարձր արասցէ զը-
քեզ ՚ի ժառանգել զերկիր, և զա-
տակուծն մեղաւորաց տեսցես:
Տեսի զամբարիշտն վերացեալ և բարձ-
րացեալ որպէս զմայրսն լիբանանու:
Անցի և ահա ոչ էր. խնդրեցի, և
ոչ գտաւ տեղի նորա:
Պահեա զամբծութիւն, և տես զուղ-
զութիւն. զի գոն մնացուածք առն
խաղաղարարի:
Անօրէնք հալածեսցին ՚ի միասին. և
զաւակք ամբարշտաց կորնչեն:
Փրկութիւն արդարոց ՚ի տեառնէ է.
վերակացու է նոցա ՚ի ժամանակս
նեղութեան:
Օգնեսցէ նոցա տէր, և փրկեսցէ զնո-
սա. ապրեցուսցէ ՚ի մեղաւորաց, և
կեցուսցէ զնոսա զի յուսացան ՚ի նա:

Տունք լբ:

Մանուկ եի ես և ծերացայ, և ոչ տե-
սի զարդարն արհամարհեալ, և ոչ
զաւակ նորա՝ լմե մուրանայ հաց:
Զօրհանապազ ողորմի և տայ փոխ. զա-
ւակն նորա օրհնեալ եղիցի յաւիտեան:
Խոտորեա ՚ի չարէ և արա զբարի. և
բնակեսցես յաւիտեանս յաւիտե-
նից ՚ի նմա:
Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ վայր
հարկանէ զսուրբս իւր. այլ յաւի-
տեան պահէ զնոսա:
Անօրէնք հալածեսցին ՚ի միասին, և
զաւակք ամբարշտաց սատակեսցին:
Արդարք ժառանգեսցեն զեր-
կիր, և բնակեսցին յաւիտեանս յա-
ւիտենից ՚ի նմա:
Բերան արդարոյ խորհի զիմաստու-
թիւն. և լեզու նորա խօսեսցի զի-
րաւունս:
Օրէնք աստուծոյ իւրոյ են ՚ի սրտի
իւրում, և մի գայթակղեսցին գը-
նացք նորա:
Հայի մեղաւորն ընդ արդար, և խընդ-
րե սպանանել զնա. այլ տէր ոչ թո-

ՍԱՂՄՈՍ ԼԷ

Սաղմոս դաւթի. առ ՚ի յիշատակ շաբաթուն:

Տէր մի՛ սրտմտութեամբ քոյ յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քոյ խրատեր զիս:

Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցար ձեռն քո:

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քոյ:

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ:

Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ:

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչեւ յոյժ, զօրհանապազ սգաւոր գնայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչեւ յոյժ, մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ:

Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ:

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եմոյզ զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց, և այս ոչ եղեւ ընդ իս:

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին, և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն:

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ. որք խորհէին չար ՚ի վերայ իմ, խորհեցան զանօրէնութիւն, և զնենդութիւն զօրհանապազ խորհեցան:

Ես իբրեւ որպէս խուլ՝ զի ոչ լսէ, որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր:

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք ՚ի բերան նորա:

Ես ՚ի քեզ տէր յուսացայ, և դու լուիցես ինձ տէր աստուած իմ:

Ասացի՝ թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ՚ի սասանիլ ոտից իմոց՝ ՚ի վերայ իմ մեծամեծս խօսեցան:

Ես ՚ի տանջանս պատրաստեմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Զանօրէնութիւնս իմ պատմեցից,
և հոգացայց վասն մեղաց իմոց:
Իսկ արդ թշնամիք իմ կենդանի են, և
զօրացեալք են քան զիս. և բազումք
էին՝ որք ատէին զիս՝ ի տարապարտուց:
Որ հատուցին ինձ չար փոխանակ
ընդ բարւոյ. չարախօսէին զինէն, զի
ես երթայի զհետ արդարութեան:
Մի՛ թողուր զիս տէր աստուած իմ,
և մի՛ ի բացեայ առնիր յինէն. հայեաց
յօգնել ինձ՝ տէր փրկութեան իմոյ:

Տունք իա:

ՍԱՂՄՈՍ ԼԸ.

ի կատարած. յիդիթովնայ օրհնութիւն.
Սաղմոս դաւթի:

Ասացի՝ թէ պահեցից զճանապարհս
իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով:
Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ի հա-
կառակիլ մեղաւորին առաջի իմ:
Լուռ եղէ և խոնարհեցայ. լռեցի՝ ի
բարութենէ, և ցաւք իմ նորոգե-
ցան յիս:
Ջեռաւ սիրտ իմ ի ներքին իմում, և
՝ի խորհուրդս իմ վառեցաւ հուր:

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի. ցո՛յց
ինձ տէր վկատարած իմ, և զթիւ աւ-
ուրց իմոց՝ քանի՞օն է, զի գիտացից
թէ ո՞րչափ ինչ պակասեալ է յինէն:
Ահա չափով եդեր զաւուրս իմ, և
կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է
առաջի իմ. սակայն ամենեւին ըն-
դունայն է ամենայն մարդ մեղի:
Ապաքէն որպէս ՝ի պատկերի շրջի
մարդ, սակայն ՝ի զուր խռովի. դան-
ձէ՝ և ոչ գիտէ ո՛ւմ ժողովէ:
Իսկ արդ ո՞վ է համբերութիւն իմ,
թէ ոչ դու տէր. կամ կար զօրու-
թեան իմոյ, թէ ոչ ՝ի քէն:
Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկ-
կեցեր զիս, և նախատինս անզգամաց
արարեր զիս:
Լուռ եղէ և ոչ բացի զբերան իմ,
զի դու արարեր:
Ի բաց արա յինէն զսանջանս իմ, զի ՝ի
զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ:
Կշտամբութեամբ վասն մեղաց խրա-
տեցեր զմարդ, մաշեցեր որպէս սար-
դի ոստայն զանձն նորա. սակայն ըն-

դուռնայն է ամենայն մարդ։
Լուր տեր աղօթից իմոց, ունկն դիր
խնդրուածոց իմոց, արտասուաց իմոց
մի՛ լռեր։
Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ
և անցաւոր որպէս ամենայն հարք իմ։
Թոյլ արա ինձ զի հանգիստ ինչ ունիցիմ
երթեալ յերես, և այլ ոչ ևս գտանիցիմ։

Տունք ժե։

ՍԱՂՄՈՍ Լ Թ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Համբերելով համբերի տեառն, և նա
յետաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց։
Եհան զիս ի գուբէ տառապանաց, ի
կաւոյ և ի տղմոյ։
Հաստատեաց ի վէմի զոտս իմ,
և ուղղեաց զգնացս իմ։
Էարկ ի բերան իմ օրհնութիւն նոր,
զօրհնութիւն տեառն աստուծոյ մե-
րոյ։
Տեսցին բազումք և երկիցեն, և յու-
սացին ի տէր. երանելի է այր՝ որոյ
անուն տեառն յոյս է նորա։
Ոչ հայեցաւ նա ի նանրութիւն, և

ոչ ի մոլութիւն սուտ։
Բազում արարեր դու տէր աստուած
իմ զքաւանչելիս քո. և խորհուրդոց քոց՝
ոչ ոք է որ նմանիցի քեզ։
Պատմեցի և խօսեցայ, և բազմաք
եղեն քան զթիւս. ընդ զոհս և ընդ
պատարագս ոչ հաճեցար, լսելիս հաս-
տատեցեր ինձ. ողջակէզս և զվասն
մեղացն ոչ խնդրեցեր։
Յայնժամ ասացի՝ ահա եկաւ ասիկ գամ
ես. ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ։
Առնել զկամս քո աստուած իմ կամե-
ցայ, և զօրէնս քո ի մէջ որովայնի իմոյ։
Աւետարանեցից զարդարութիւնս
քո յեկեղեցիս մեծս. ահա զչրթունս
իմ ոչ արգելից ի քէն։
Տէր դու գիտացեր՝ զի զարդարու-
թիւնս քո ոչ ծածկեցի ի սրտի իմում,
զճշմարտութիւնս քո և զփրկու-
թիւնս քո։
Ասացի և. ոչ թագուցի զողորմու-
թիւնս քո, և զճշմարտութիւնս քո
ի ժողովրդենէ մեծէ։
Այլ դու տէր մի՛ հեռի առներ զգը-

թուլթիւնս քո յինէն. զի ողորմութիւն քո և ճշմարտութիւն քո յաւէտ միշտ ժամ ընկալցի զիս։

Շուրջ եղեն զիս չարք՝ որոց ոչ գոյր երկիւղ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել։

Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ, և սիրտ իմ եթող զիս։

Կամեաց աէր՝ փրկել զիս, և տէր յօգնել ինձ նայեաց։

Ամաչեսցեն և յամօթ լինիցին՝ որք խնդրեն զանձն իմ բառնալ զաս. դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք խորհին ինձ չար։

Կրեսցեն զամօթ առժամայն վաղվաղակի, որք ասեն ինձ վաշ վաշ։

Ցնծասցեն և ուրախ լինիցին ի քեզ ամենեքեան, որք խնդրեն զքեզ տէր։

Ասասցեն յաւէտ միշտ՝ մեծ է աստուած, և որք սիրեն զփրկութիւնս քո։

Ես աղքատ և տնանկ եմ, աստուած խորհեա զիս. օգնական և պաշտպան իմ ես, և դու աստուած իմ մի՛ յամենայն։

ՍԱՂՄՈՍ Խ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Երանի որ խորհի զաղքատն և զլընանկն. յաւուր չարի փրկէ զնա տէր։

Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութեանէ նորա։

Ես ասացի տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։

Թշնամիք իմ ասացին ինձ չար. ե՞րբ իցէ զի մեռցի, և կորիցէ անուն նորա։

Մտանէր տեսանել զնանրութիւն. խօսէր ի սրտի իւրում, և ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր։

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զինէն չընջէին ամենայն թշնամիք իմ։

Խորհեցան չար ի վերայ իմ. բան անօրէնութեան եդին ի վերայ իմ։

Միթէ որ ննջիցէ, այլո՞չ եւս յաւելցի

յառնել. քանզի և այրն խաղաղու-
թեան իմոյ, յոր և եան յուսացեալ:
Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առ-
նել ինձ խաբեութիւն:
Ա՛լ դու տէր ողորմեա ինձ և կանգ-
նեա զիս, և ես հատուցից նոցա:
Յայմ ծանեայ՝ թէ հաճեցար ընդիս,
զի մի՛ ուրախ եղիցին իմ թշնամիք իմ:
Ա՛լ զիս յամբծութեան իմում ըն-
կալար, և հաստատեցեր զիս առաջի
քո յաւիտեան:
Օրհնեալ տէր աստուած իսրայէլի յա-
ւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի:

Տունք ԺԴ:

ՍԱՂՄՈՍ ԽՍ.

ի կատարած. իմաստութիւն որդւոցն կորխայ.
Սաղմոս դաւթի:

Որպէս վաւաքէ եղջերու յաղբերս
ջուրց, այնպէս վաւաքէ անձն իմ
առ քեզ աստուած:
Ծարաւի է անձն իմ առ քեզ աստ-
ուած, հզօր և կենդանի. երբ եկից
երեւեցայց երեսացդ աստուծոյ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր՝ ի
տուէ և՝ի գիշերի, և այն զի ասէին ցիս
զօրհանապազ՝ Թէ ո՞ւր է աստուած քո:
Զայս որպէս յիշէի, տառապէր յիս
անձն իմ. քանզի երկի, զի մտից ընդ յար-
կաւ սքանչելեաց տանն աստուծոյ:
Ի ձայն ցնծութեան խոստովանութ-
եան և՝ի ձայն բարեկենդանութեան:
Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ,
կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ
աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ
երեսաց իմոց աստուած է:
Անձն իմ յոյժ խռովեցաւ. վասն այ-
սորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդա-
նանէ, և՝ի հերմոնէ լերանէ փոքրուէ:
Խոր խորոց կարդացին առ քեզ, և՝ի
ձայն սահանաց քոց:
Ամենայն զլօսանք քո, և ալիք քո
անցին՝ ի վերայ իմ:
Ի տուէ պատուիրեաց տէր զողոր-
մութիւն իւր, և՝ի գիշերի զօրհնու-
թիւն նոր. և աղօթք իմ առ աստ-
ուած վասն կենաց իմոց:
Ասացի աստուծոյ՝ ընդունող իմ ես.

ընդէր մերժեցեր զիս. ընդէր տրտում գնամ ես ՚ի նեղել Թշնամւոյ իմոյ։ Ի վշտիլ ոսկերաց իմոց նախատեցին զիս Թշնամիք իմ, յասել ցիս զօրհասնապազ, Թէ ո՞ւր է աստուած քո։ Այդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ երեսաց իմոց աստուած է։

Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ ԽԲ.

Յաղնս դաւթի։

Դատ արա ինձ աստուած, և խրատ արա ինձ ՚ի գատաստանի իմում։ Յազգէ որ ոչ է սուրբ, ՚ի մարդոյ մեղաւորէ և նենգաւորէ փրկեա զիս։ Դու աստուած հզօրիչ իմ ես. ընդէր մոռացար զիս, ընդէր տրտում գնամ ես ՚ի նեղել Թշնամւոյ իմոյ։ Առաքեա տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո։

Մտից առ սեղանոյ աստուծոյ առ աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։ Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ աստուած աստուած իմ։ Այդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ երեսաց իմոց աստուած է։

Տունք է։ Գորգայս լդ։

ՍԱՂՄՈՍ ԽԳ.

Ի կատարած. իմաստուրեան որդւոցն կորխայ։ Յաղնս դաւթի։

Աստուած՝ ականջօք մերովք լուաք, զոր հարքն մեր պատմեցին մեզ։ Զգործն զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս։ Զեռն քո խլեաց զհեթանոսս՝ և զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս քո, և հաներ զնոսա։ Զի ոչ Թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր, և ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա։

Ա՛յլ աչք քո և բազուկ քո և լոյս երե-
սաց քոց, զի հաճեցար դու ընդ նոսա:
Դու ինքն ես՝ Թագաւոր իմ և աստ-
ուած իմ, որ հրամայեցեր փրկու-
թիւնն յակոբայ:
Քեզ՝ զԹշնամիս մեր հարցուք, և ան-
ուամբ քով արհամարհեսցուք զյա-
րուցեալսն ՚ի վերայ մեր:
Ոչ Թէ յաղեղն իմ յուսացեալ եմ,
և ոչ սուր իմ կեցուցանէ զիս:
Ա՛յլ դու փրկեցեր զմեզ ՚ի Թշնամ-
եաց մերոց և զատելիս մեր յամօթ
արարեր:
Աստուծով պարծեսցուք զօրհանա-
պազ, և անուան նորա խոստովան
եղիցուք յաւիտեան:
Բայց արդ մերժեցեր և անարգեցեր
զմեզ, և ոչ ելեր աստուած ընդ զօրս
մեր:
Դարձուցեր զմեզ յետս քան զԹըշ-
նամիս մեր, և ատելիք մեր յափշտա-
կեցին զմեզ:
Ետուր զմեզ որպէս զոչխար ՚ի կե-
նուին, և ընդ հեթանոսս ցրուեցեր

զմեզ:
Վաճառեցեր զժողովուրդս քո ա-
ռանց գնոյ, և ոչ գոյ Թիւ ազգաց
կալ մերոյ:
Արարեր զմեզ նախատինս դրացեաց
մերոց. ծաղր և այպն կատականաց
այնոցիկ՝ որք շուրջ էին զմեօք:
Արարեր զմեզ յառակս հեթանոսաց
՚ի շարժել գլուխ ժողովրդոց:
Զօր ամենայն նախատինք իմ առաջի
իմ են, և ամօթ երեսաց իմոց ծած-
կեաց զիս:
Ի ձայնէ նախատողին և չարախօսի,
յերեսաց Թշնամւոյն և հալածչի:
Ա՛յս ամենայն եկին ՚ի վերայ մեր, և
մեք զքեզ ոչ մոռացաք, և ոչ ստե-
ցաք ուխտի քում, և ոչ դարձաք
յետս սրտից մերոցք:
Դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանա-
պարհաց քոց, խոնարհ արարեր զմեզ
՚ի տեղի չարչարանաց, և ծածկեցին
զմեզ ստուերք մահու:
Թէ մոռացեալ լեալ մեր զանուն աս-
տուածոյ մերոյ, կամ ձգեալ լեալ զձե-

ըրս մեր յաստուածս օտարս։
Սակայն աստուած խնդրէ զայս. զի
նա քննէ զդատնխս սրտից մերոց։
Վասն քո մեռանիմք զօրհանապազ.
համարեցաք որպէս զոչխար ՚ի զե-
նումն։
Զարթիր ընդէր ննջես տէր. արի և
մի՛ մերժեր զմեզ իսպառ։
Զմի՞ դարձուցանես զերեսս քո ՚ի
մէնջ, մոռանաս զաղքատութիւն և
զնեղութիւնս մեր։
Խոնարհ եղեն մինչեւ ՚ի հող անձինք
մեր, և յերկիր կցեցան մէջք մեր։
Արի տէր օգնեա մեզ, և փրկեա
զմեզ վասն անուան քո։

Տունք իէ։

ՍԱՂՄՈՍ ԽԶ.

Ի կատարած. զառաւելգնոց ժառանգաւորաց,
որդւոցն Կորխայ իմաստուրեան. Սաղմոս
օրհնութեան վասն սիրելոյն։

Բղխեսցէ սիրտ իմ զպատգամն քո
բարի, և ասացից զգործս իմ թա-
գաւորի։
Լեզու իմ որպէս գրիչ արագագիր

գոյր, գեղեցիկ տեսլեամբ քան զա-
մենայն որդիսն մարդկան։
Սփռեցան շնորհք ՚ի շրթանց քոց.
վասն այսորիկ օրհնեաց զքեզ աստ-
ուած յաւիտեան։
Արդ զսուր ընդ մէջ քո հզօր, վայել
չութեան և գեղոյ քոյ։
Լարեա ուղղեա և թագաւորեա վա-
սն ճշմարտութեան հեզութեան
և արդարութեան, և առաջնորդես-
ցէ քեզ սքանչելապէս աջ քո։
Նետք քո սրեալ են հզօր, և ժողո-
վուրդք ՚ինեղբոյ քո անկցին, ՚ի սիրտս
թշնամեաց թագաւորի։
Աթոռ քո աստուած յաւիտեանս
յաւիտենից, գաւազան ուղղու-
թեան գաւազան արքայութեան քո։
Սիրեցեր զարդարութիւն, և ատե-
ցեր զանօրէնութիւն։
Վասն այսորիկ եօծ զքեզ աստուած
աստուած քո իւղով ուրախութեան,
առաւել քան զընկերս քո։
Զմուռս և ստաշեան և կասիայ ՚ի լըզ-
գեստէ քումմէ, ՚ի տաճարաց փղոս-

կրեխց, ուստի ուրախ արարին զքեզ
դստերք Թագաւորաց ՚ի պատիւ։
Կացցե դշխոյ ընդ աջմէ քումմէ, ՚ի
հանդերձս ոսկեհուռս զարդարեալ
և պաճուճեալ։
Լուր դուստր և տես, խոնարհեցո
զունկն քո. մոռա զժողովուրդ քո և
զտուն հօր քո. զի ցանկացաւ Թա-
գաւոր գեղոյ քո։
Սա ինքն է տէր քո՝ երկիրպագես
սմա, և դուստր Ծուրոյ երկիրպագ-
ցէ սմա. և պատարագօք զերեսս
սորա պաշտեսցեն մեծամեծք ՚ի ժո-
ղովրդոց։
Ամենայն փառք դստեր Թագաւորի
՚ի ներքոյ, ՚ի վերջաւորս ոսկեհուռս
զարդարեալ և պաճուճեալ։
Տարցին Թագաւորի կուսանք զհետ
նորա, և զընկերս նորա տարցին նմա։
Ածցեն ցնծութեամբ և ուրախու-
թեամբ, և տարցին ՚ի տաճար Թա-
գաւորի, և վոխանակ հարց քոց ե-
զիցին որդիք քո։
Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամե-

նայն երկիր, և յիշեսցի անուն քո
ընդ ամենայն ազգս ազգաց։
Վասն այսորիկ ժողովուրդք խոստո-
վան եղիցին առ քեզ յաւիտեան, և
յաւիտեանս յաւիտենից։

Տունք ԺԵ։

ՍԱՂՄՈՍ ԽԵ.

ի կատարած. որդւոցն Կորխայ ՚ի վերայ գաղտ-
նեաց. Սաղմոս դաւթի։

Ածուած մեր ապաւէն և զօրու-
թիւն. օգնական ՚ի վերայ նեղու-
թեանց, որք գտին զմեզ յոյժ։
Վասն այսորիկ ոչ կերկիցուք մեք ՚ի
խռովիլ երկրի, ՚ի փոփոխիլ լերանց ՚ի
սիրտս ծովու։
Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա.
խռովեցան լերինք ՚ի զօրութենէ նորա։
Գնաց ք գետոց ուրախ առնեն զքա-
ղաքն աստուծոյ. և սուրբ արար զբ-
նակարկս իւր բարձրեալն։
Ածուած ՚ի մէջ նոցա, և նոքա մի՛ սա-
սանեսցին. օգնեսցէ նոցա աստուած
՚ի վաղորդայնէ մինչեւ ՚ի վաղորդայն։

Խոովեցան հեթանոսք, և խոնարհեցան թագաւորութիւնք. եւ զձայն իւր բարձրեալն, և խոովեցաւ երկիր։
Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր աստուած յակոբայ։
Եկայք և տեսէք զգործս աստուծոյ, որ արար զնշանս և զարուեստս ի վերայ երկրի։
Եհար զպատերազմ ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի. զաղեղունս փշրեաց, զրնխ խորտակեաց, և զասպարս այրեաց հրով։
Կանխեցէք և ծաներուք, զի ես եմ աստուած. բարձր եղէց ի հեթանոսս, և բարձրացայց ի վերայ երկրի։
Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի է մեր աստուած յակոբայ։

Տունք ժա։ Գորգոյս ծղ։

ՍԱՂՄՈՍ ԽԶ.

Ի կատարած. վասն որդւոցն կորխայ. Սաղմոս դաւթի։

Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ աստուած ի ձայն

ցնծութեան։
Տէր բարձրեալ և ահարկու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։
Հնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ, և զհեթանոսս ի ներքոյ ոտից մերոց։
Ընտրեաց զմեզ իւր ի ժառանգութիւն, զպերծութիւն յակոբայ զոր և սիրեաց։
Համբարձաւ աստուած օրհնութեամբ, և տէր մեր ձայնիւ փողոյ։
Սաղմոս ասացէք աստուծոյ մերում. սաղմոս ասացէք թագաւորին մերում, սաղմոս ասացէք։
Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի աստուած է, սաղմոս ասացէք նմա խմաստութեամբ։
Թագաւորեաց աստուած ի վերայ հեթանոսաց. աստուած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ։
Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ աստուած աբրահամու. զի աստուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան։

Տունք թ։

ՍԱՄԱՍԽ.

Սաղմոս օրհնութեան որդւոցն Կորհայ. երկրորդ շաբաթու։

Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ ի քաղաք աստուծոյ մերոյ, ի լեառն սուրբ նորա։

Հաստատեաւ ցնծասցէ ցնծութեամբ ամենայն երկիր. լերինք սիոնի, կողմանք հիւսիսոյ՝ քաղաք թագաւորին մեծի։

Աստուած ի տաճարի իւրում յայտնի, ի ժամանակի օգնական լինել նոցա։

Ահաւասիկ թագաւորութիւնք երկրի ժողովեցան, և անցին ի միասին։

Ինքեանք տեսին այսպէս և զարմացան. խռովեցան աստանեցան, և դողումն կալաւ զնոսա։

Անդ երկունք որպէս ի ծննդեան, և հողմն սաստիկ փշրեսցէ զնաւս ի Թարսիս։

Որպէս լուաք, սոյնպէս և տեսաք ի քաղաք տեառն զօրութեանց՝ ի քաղաք աստուծոյ մերոյ։

Աստուած հիմնեաց զայն յաւիտեան։ ընկալաք աստուած զողորմութիւն քո՛ի միջ ժողովրդեան քոյ։ Ըստ անուան քում աստուած, այնպէս և օրհնութիւն քո ընդ ամենայն տիեզերս, և արդարութեամբ լի է աջ քո։

Ուրախ եղիցի լեառն սիոն, և ցնծասցեն դստերք յուդայ վասն իրաւանց քոց տէր։

Շրջեցարուք զսիոնիս, պաշարեցէք զնա և պատեցէք զաշտարակս նորա։

Դիք զսիրտս ձեր ի վերայ զօրութեանց նորա. բաժանեցէք զամուրս նորա, զի պատմել կարասջիք յազգ յազգ։

Սա է աստուած, աստուած մեր յաւիտեանս յաւիտենից. և սա հովիւ ոչխարի զմեզ մինչեւ յաւիտեան։

Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ ԽԶ.

Ի կատարած որդւոցն Կորհայ. Սաղմոս օրհնութեան դաւթի։

Լուարուք զայս ամենայն ազգք. ունկնդրեցէք ամենայն բնակիչք յաշխարհի։

Եւ ի հողոյ եւ ի որդւոց մարդկան, հարուստ եւ աղքատ միանգամայն։

Բերան իմ խօսեսցի իմաստութիւն, եւ խորհուրդ սրտի իմոյ հանճար։

Ականջս իմ ածցեն առակ, բանամ ի քնարի զխնդիրս իմ։

Ընդէ՞ր երկնչիմ յաւուրս չարութեան, զանօրէնութիւն գարշապարացս իմոց պատեսցէ զիս։

Որոց յուսան ի զաւրութեան իւրեանց, եւ ի բազմութեան մեծութեան իւրեանց պարծին։

Եղբայր ոչ փրկէ զոք, փրկեսցէ՞ մարդ։ ոչ տացէ ընդդէմ քաւութիւն իւր, եւ ոչ տացէ զարժան փրկութեան անձին իւրոյ։

Եւ ապրեսցի յաւիտեան, եւ ոչ տեսցէ զապականութիւն։

Զի տեսանէ իմաստունս մեռանել, ամենայն անմիտ եւ յիմար կորնչի, եւ թողուցուն զգոյքս իւրեանց օտարաց։

Եւ գերեզմանք նոցա տունք նոցա յաւիտեան, բնակութիւնք նոցա յազգս եւ յազգս, կոչեցին զանուանս իւրեանց յերկիրս։

Եւ մարդ պատուոյ ոչ հանճարեցաւ, նմանեցաւ անասնոց անմտաց, եւ նմանեցան նոցա։

Սա է ճանապարհ նոցա, սա է յոյս նոցա, եւ զայս ամենայն ազգք հաճեցան։

Որպէս ոչխարք դիցին ի դժոխս, մահ արածցէ զնոսա, եւ հովիտք տիրեսցեն նոցա առաւօտուն, եւ օգնական նոցա հատցի ի դժոխս ի փառաց իւրեանց։

Բայց Աստուած փրկեսցէ զանձն իմ ի ձեռաց դժոխոց, յորժամ առնուցուն զիս։

Մի երկնչիր յորժամ մարդ մեծանայ, եւ յորժամ բազմանայ փառք տանն նորա։

Զի ոչ ինչ առնուցուն ի մահուանէ նորա, եւ ոչ իջցէ ընդ նմա փառք նորա։

Զի զանձն իւր կենդանի օրհնեսցէ, եւ խոստովանեսցի քեզ, յորժամ բարի լիցի քեզ։

Մտցէ՞ ընդ ազգս հարցն իւրոց, մինչեւ յաւիտեան ոչ տեսցէ զլոյս։

Մարդ պատուոյ ոչ հանճարեցաւ, նմանեցաւ անասնոց անմտաց, եւ նմանեցան նոցա։

կընդիր լերսոք սահնեքեան՝ ոչ քը-
նակեալ էք յաշխարհի։
Ծնունդք երկրի և օրդիք մարդկան,
՚ի միասին մեծամեծք և տեառնիկք։
Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն,
և խորհուրդ սրտի իմոյ զգանձաք։
Խոնարհեցու՚ցից յառակուսին զունկն
իմ, բացից առակս զլերան իմ, և
խօսեցայց զառակս՚ի սկզբանէ։
Ընդէր բնաւ երկնչիմ ես յաւուր
չարի, զի անօրէնութիւնք գնացից
իմոց շուրջ եղեն զիս։
Յուսացեալք՚ի զօրութիւնէ իւրեանց,
՚ի բազում մեծութեան իւրեանց
պարծեցան։
Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ,
և ոչ տայ աստուծոյ զփրկանս իւր։
և ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ։
Վասնզի կեաց յաւիտեան, և կեցցէ
մինչ իսպառ, և ոչ տեսցէ զապա-
կանութիւն։
Յորժամ տեսցէ՝ թէ իմաստուն մե-
ռանին, ՚ի միասին անզգամք և ան-
միտք կորնչեն, և թողցեն օտարաց

զմեծութիւն իւրեանց։
Գերեզմանք նոցա տունք նոցա եղե-
ցին յաւիտեան, և յարկք նոցա ազ-
գէ մինչեւ յազգ, և կարդացին ան-
ուանք նոցա՚ի հողս իւրեանց։
Մարդ՚ի պատուի էր և ոչ իմացաւ,
հաւասարեցաւ անասնոց անբանից
և նմանեցաւ նոցա։
Այս ճանապարհ է գայթակղու-
թեան նոցա նոցին. յետ այսորիկ բե-
րանօք իւրեանց հաճեսցին։
Որպէս խաշն՚ի դժոխս մատնեսցին,
և մահ հովուեսցէ զնոսա, և տիրե-
ցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս։
Օգնութիւնք նոցա մաշեսցին՚ի դը-
ժոխս, և՚ի փառաց իւրեանց անկցին։
Բայց սակայն աստուած փրկեսցէ
զանձն իմ՚ի ձեռաց դժոխոց, յորժ
ամ ընդունիցի զիս։
Մի երկնչիր յորժամ մեծանայ մարդ,
և յորժամ բազում լինին փառք տան
նորա։
Զի ոչ մեռանիցի խլուրդ ամե-
նայն, և ոչ մէկ՚ի մեռանիցն

վասը տան Նորա ընդ նմա։

Այլ անձն Նորա ի կեանս խոտոր
օրհնեցի, և խոստովան եղիցի քեզ
յորժամ բարի արասցես դու Նմա։
Մոլե նա մինչեւ յոտդ հարց խոտոր.
մինչեւ յաւիտեան զոյս մի տեսցէ։
Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ,
Համասարեցաւ անասնոց անբանից
և նմանեցաւ Նոցա։

Տունք ի Գոբզայ խե։

ՍԱՂՄՈՍ ԽԹ.

Յաղմոս դաւթի։

Ասաւած աստուծոց մեր խօսեցաւ
ցաւ, և կոչեաց զերկիր յարեւելից
մինչեւ ի մտաս արեւու։
Ի սիօնէ մեծավայելչութիւն փիլոս
Թեան գեզոյ Նորա։
Ասաւած մեր յայտնապէս եկեսցէ,
և աստուած մեր մի դադարեսցէ։
Հուր առաջի Նորա բորբոքեսցի, և
շուրջ զնովաւ մրրիկ յոյժ։
Կոչեսցէ զերկինս ի վերուստ և զեր

Նոր Թեան, կատարեա բարձրելոյն
Ամաս աստուծոյ պատարագ օրհ
և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ։
Ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց,
զի իմ է աշխարհ լերս խոտով։
Թէ քաղցեալ, քեզ ինչ ոչ ասացից.
Թէ քաղցեսցէ, քեզ ինչ ոչ ասացից.
Գիտեմ ես զամենայն թռչունս երկ
լերանց և զամենայն անասուն։
նից. զեղեցկութիւն վայրի ընդ իս է։
Իմ է ամենայն գազան անտառ, երե
զի ամենայն անասուն։
Ոչ ընդունիմ ի տանէ քոմէ զուա
րակս, և ոչ ի հօտից քոց նոխազս։
Ոչ ուտեմ զքեզ. զի ողջակէզք քո ա
ռաջի իմ են յամենայն ժամ։
Ոչ Թէ վասն պատարագաց քոց կըշ
տամբեմ զքեզ. զի ողջակէզք քո ա
ստուածա աստուած քո ես եմ։
Ընդ քեզ, և խորհէ՞ք քեզ վկայեցից.
Լու ժողովուրդ իմ և խօսեցայց
և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ։
զի աստուածա աստուած քո ես եմ։
Պատմեսցեն երկինք զարդարութիւն
Նորա. զի աստուածա դատաւոր է։
սեզանոյ Նորա։
գնեն զպատարագս ոսխից՝ ի վերայ
զոմեղ առ ինքն զտուրբս իւր, և ցք
կիր՝ ի դատել ժողովուրդ իւր, ժո

զուխաս քո։
Կարդացեա առ իս յաւուր նեղու-
թեան քո, ես փրկեցից զքեզ՝ և դու
վառաւոր արասցես զիս։
Սակայն մեղաւորին ասէ աստուած.
իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես զար-
դարութիւն իմ, կամ առնուս զուխաս
իմ՝ ի բերան քո։
Զի դու ատեցեր զխրատ իմ՝ մերժե-
ցեր և յետս ընկեցեր զամենայն բանս
բերանոյ իմոյ։
Թէ տեսանէիր զողն՝ ընդհանապիրընդ
նոսա, և ընդ շունս դնէիր զբաժին քո։
Բերան քո յաճախեր զչարութիւն,
և լեզու քո նիւթէր զնենգութիւն։
Նստեալ դեղս օրէն քումմէ չարախօ-
սէիր, և՛ ի վերայ որդւոյ մօր քո դնէ
նեխի զդայթակղութիւն։
Զայս ամենայն տարար, և լուեայ
քեզ, կարծեցեր թէ անօրէնք՝ ի մոլ
քում, ելի և ես քեզ նմանիցեմ։
Այլ յանդիմանեցից և ի պատուհաս
զայս ամենայն առաջի քո. իմացէք
զայս ամենեքեան՝ որոց մոռացեալ

իցէ զաստուած։
Գուցէ երբէք յափշտակիցիք, և ոչ
ոք իցէ՝ որ փրկիցէ։
Պատարագ օրհնութեան փառաւոր
արասցէ զիս, և անդ է ճանապարհ,
ուր ցուցից նմա զփրկութիւն աս-
տուծոյ։

Տունք իւր։

ՍԱՂՄՈՍ Ծ.

Ի կատարած Պաղնոս դաւթի. ՚ի ժամանակի
զի եկն առ նա Նաթան մարգարէ, իբրեւ
զի մտեալ էր նա առ Բերսաբէէ։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի
ողորմութեան քումմ. ըստ բազում
գթութեան քումմ ջնջեա զանօրէ-
նութիւնս իմ։
Առաւել լուա զիս յանօրէնութենէ
իմմէ, և՛ ի մեղացս իմոց սրբեա զիս։
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գի-
տեմ և մեղք իմ առաջի իմ են յա-
ւիտեան։
Քեզ միայնոյ մեղայ առի, և չար առա-
ջի քո արարի։
Որպէս արդար եղիցիս՝ ի բանս քո,

և յաղթող՝ ի փառսն երկնից։

Անօրէնութեամբ յղացայ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տեր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալսն իմաստութեանդ քումմէ յայտնեցեր ինձ։ Ցօղեա յիս մշակաւ, և սուրբ եղէց. լուա և քան զձիւն սպիտակ եղէց։ Լսել արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տապալեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա։

Արա ի մէնջ սիրտ մաքուր, ո՛վ Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի ընկենուր զիս առ յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարեանց արտաւանդ աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քումմէ։

Տէր բաց զշրթունս իմ բանաս, և բերան իմ եղիցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ եղէր, պատարագս մատուցանէի՛ր. բայց դու ընդ ողջակէզս ոչ հաճեցար։

Պատարագ աստուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք սիօնի. և շինեսցին պարիսպք երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. յորժամ ուխտիցեն պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Տունք ի։

ՍԱՂՄՈՍ ԾԱ.

ի կատարած խնամատարութեան. Սաղմոս դաւթի. ի ժամանակի զի եկն դովիկ եդոմիտն, պատմեաց առաջնոյն. թէ պիտի դաւիթ ի տանն ախիմելեքայ։

ւռւթիւն խորհեցաւ՝ ի լեզուի իւրում։
Որպէս զածելի սուր՝ սրեաց զնեն
զութիւն, սրեաց զչարութիւն քան
զբարութիւն, զանօրէնութիւն քան
զիօսս արդարութեան։
Սիրեաց նա զամենայն խօսս կործան-
ման, և զլեզուս նենգաւորս։
Վասն այսորիկ աստուած կործանեսց-
ցէ զնա յապառ. խլեսցէ և հանցէ
զնա յարկաց իւրոց, և զարմատս նո-
ցա յերկրէն կենդանեաց։
Տեսցեն արդարք և երկիցեն. զնո-
ցաւ ծիծաղեսցին և ասասցեն։
Ահա այր է, որ ոչ արար զաստուած
իւր օգնական. այլ յուսացաւ սա՝ի
բազում մեծութիւն իւր, և զօրա-
ցաւ՝ի նանրութեան իւրում։
Ահա ես որպէս ձիթենի պտղալից՝ի
տան աստուծոյ. յուսացայ յողորմու-
թիւն աստուծոյ յաւիտեան՝ և յա-
ւիտեանս յաւիտենից։
Խոստովան եղէց քեզ տէր յաւիտեան,
զի արարեր. և համբերից անուան
քում, զի քաղցր ես առաջի սրբոց քոց։

ՍԱՂՄՈՍ ԾԲ.

Ի կատարած. վասն մատաղեալ. խնամատոչիւն դաւթի։

Ասաց անզգամն՝ի սրտի իւրում թէ
ոչ գոյ աստուած. ապականեցան և
պղծեցան յանօրէնուԹեան իւրեանց.
և ոչ ոք է որ առնէ զբարեզործուԹիւն։
Աստուած յերկնից նայեցաւ յամե-
նայն որդիս մարդկան, տեսանել Թէ
իցէ՞ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ զաս-
տուած։
Ամենեքեան խոտորեցան՝ի միասին,
և անպիտանացան։
Ոչ ոք է որ առնէ զբարի, և չէ ոք
մինչեւ՝ի մի։
Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որք
գործեն զանօրէնուԹիւն։
Որք ուտեին զժողովուրդ իմ որպէս
կերակուր հացի, և աստ աստուած
ոչ կարդացին։
Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ իցէ
երկիւղ. զի աստուած ցրուեսցէ զոս-
կերս մարդահաճոյից։

Ամաչեսցեն և յամօթ լինիցին, զի ա՞տ
ուած անարգեաց զնոսա։
Ո՞ տացէ ՚ի սիօնէ զփրկութիւնն իս
րայէլի. ՚ի դարձուցանել տեառն զգե
րութիւն ժողովրդեան իւրոյ, ցնծա
ցէ յակոբ, և ուրախ եղիցի իսրայէլ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ԾԶ.

*Ի կատարած. ընդ օրհնութիւնս իսահատութեան
դաւթի ՚ի ժամանակի զի եկին զիփացիքն,
և առին զսաւուղ, անհաւասիկ դաւիթ
թագուցեալ ևստի առ մեզ։*

Առաւած յանուն քում կեցո զիս,
և ՚ի զօրութեան քում իրաւ արա ինձ։
Առաւած լուր աղօթից իմոց, ունկն
դիր բանից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան ՚ի վերայ իմ, և հզօրք
խնդրեցին զանձն իմ, և ոչ համարե
ցան զքեզ առաւած առաջի իւրեանց։
Ահա առաւած օգնական իմ, և տէր
ընդունող հոգւոց իմոց։
Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիս
իմ, ճշմարտութեամբ քում սատակեա
զնոսա։

Եւ կամօք իմովք պատարագս մա
տուցից քեզ. և խոստովան եղէց ան
ուան քում տէր, զի բարի է։
Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր
զիս. և ՚ի թշնամիս իմ եւեթ ակն իմ։

Տունք է։

ՍԱՂՄՈՍ ԾԶ.

*Ի կատարած. ընդ օրհնութիւնս իսահատութեան.
Ցաղնոս դաւթի։*

Ունկն դիր աստուած աղօթից իմոց,
և ՚ի՛ անտես առներ զինդ բուածս իմ։
Նայեա առիս և լուր ինձ զի տրտմե
մեցայ ես ՚ի ձանձրանալ իմոմ. և
խռովեցայ։
Ի ձայնէ թշնամւոյն և ՚ի նեղել մե
ղաւորին խոտորեցան յիս անիրա
ւութեամբ, բարկութեամբ ոխա
պահէին ինձ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ
մահու անկաւ ՚ի վերայ իմ։
Ահ և դողութիւն եկին ՚ի վերայ իմ, և
ծածկեաց զիս խաւար։
Ասացի տայր օք ինձ զվիեաս որպէս

զաղաւնոյ. զի թռչէի վերանայի,
և հեռացեալ դադարէի յանապատի։
Ակն ունէի ապաւոյ՝ որ փրկէր զիս
ի կարճմտութենէ, ի զայրանալոյ,
և ի մրրկեալ նեղսրտութենէ։
Ընկլը տէր և բաժանեա զլեզուս նո-
ցա. զի տեսի զանօրէնութիւն և
զհակառակութիւն ի քաղաքի։
Ի տուէ և ի դիշերի չուրջ եղէն
զպարսպօք նորա անօրէնութիւնք.
չարիք և մեղք են ի մէջ նոցա. և ոչ
պակասեաց ի հրապարակաց նոցա
վաշխ և նենգութիւն։
Զի թէ թշնամին նախատեալ էր,
համբերէի արդեօք. կամ ատելոյն
մեծաբանեալ էր ի վերայ իմ, թագ-
չէի արդեօք ի նմանէ։
Իսկ դու մարդ հաւասար իմ, առաջ-
նորդ իմ և ծանօթ իմ։
Ապաքէն ի նոյն քաղցրացուցեր լինէ
և քեզ կերակուր. զի գնայաք միա-
բանութեամբ ի տան աստուծոյ։
Եկեսցէ մահ ի վերայ նոցա, և կեն-
դանին իջցեն ի դժոխս. զի չարու-

թիւն է ի բնակութեան նոցա և ի
մէջ նոցա։
Եւ աւ աստուած կարդայի, և նա
լուաւ լինէ յերեկոյս, ի վաղորդայն
և ի հասարակ աւուր։
Պատմեցի և ասացի, լուիցէ ձայնի
իմում. փրկեսցէ խաղաղութեամբ
զանձն իմ ի մերձաւորաց իմոց, զի
կարի օք հասին ի վերայ իմ։
Լուիցէ աստուած և խոնարհ արասցէ
զնոսա, որ յառաջն է քան զդ-
յաւիտեանս։
Զի ոչ գոյր նոցա փոխանակ, և ոչ
երկեան յաստուծոյ։
Զդեաց զձեռն իւր ի հատուցանել
նոցա. և նոքա պղծեցին զօրէնս նորա։
Բաժանեցան ի սրտմտութենէ երե-
սաց նորա. և եհաս ի սիրտս նոցա։
Կակուղ էին բանք նոցա քան զձէթ,
և ինքեանք ոտակս սլաք։
Ընկեաց ի տէր զհոգս քո, և նա կե-
րակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան
սասանութիւն արդարոյ։
Դու աստուած իջուսցես զնոսա ի

պուբ սպականու-Թեան, արք արիու-
նահեղք և նենգաւորք մի հասա-
րակեսցեն զաւուրս իւրեանց. այլ
ես ի քեզ տէր յուսացայ։

Տունք իբ։ Գոլղայս լբ։
Կանոնս Գոբգայս է։ Սաղմոս ժթ։ Տունք յի։



ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՄՈՎՍԷՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՏԵՍ
ՄԱՐԳԱՐԷԻ

Բ. Օրինաց լբ։

Չի հուր բորբոքեցաւ ի բարկու-
Թենէ իմմէ. այրեսցէ և լլջցէ մինչ
ի դժոխս ներքինս։

Կերիցէ զերկիր և զամենայն բոյս
երկրի նոցա. վառեսցին հրով, և բոլ-
բոքեսցին հիմունք լերանց նոցա։
Կուտեցից զչարիս ամենայն ի վերայ
նոցա, և նետիւք իմովք սպառեցից
զնոսա։

Մաշեալք և հիւծեալք ի սովոյ,
դազանաբեկ դէշ անկեալ ամենայն
Թռչնոց երկնից։

Լարս առանց բժշկու-Թեան արձակե-

ցից ի վերայ նոցա՝ զզաղանս անա-
պատի, որք սոսր և անդր քարշեա-
ցեն զնոսա բնդ երկիր։

Աբատաքուստ մանկամուտս սրսպանէ
զնոսա սուր, և ի ներքուստ չտեմա-
րանաց նոցա անտի սարհաւիրք ահից։
Զերիտասարդս նոցա կուսանաւք հան-
դերձ, և զտղայս հասուտեալովք ծե-
րովք հանդերձ։

Ասացի Թէ ցրեցից զնոսա. և դադա-
րեցուցից զյիշատակս նոցա յայդպայ։
Թէ ոչ վասն բարկու-Թեան սրտմուտ-
Թեան թշնամւոյն, զի մի երկայնա-
կեացք եղիցին, և մի բարձրասցին
պարտացեալ թշնամիքն, և ասասցեն։
Թէ ձեռն մեր բարձր է, և բազուկ
մեր հզօր, և ոչ տէր առաւած ա-
յսր զայս ամենայն։

Զի ազգ մի խորհրդակորոյսք են նո-
քա, և ոչ գոյ ի նոսա խմաստու-Թիւն,
և ոչ խորհեցան ի միտ առնուլ զայս
ամենայն. և արդ ընկալցին զառօ-
յանձինս իւրեանց։

Զարմանք մի մեծ այս են. զիարդ մին

զհազարս հալածեսցէ, կամ երկուք
զբիւրս շարժեսցեն։
Թէ ոչ տեառն աստուածոյ մատնեալ
էր զնոսա, և տուեալ էին զնոսա՝ ի
ձեռս թշնամեաց նոցա։
Զի ոչ են դիւք նոցա որպէս զաստուած
մեր. այլ թշնամիք մեր վատախոտ
հուրդք։
Յայդմ օրէ սոդոմայ էր որթ նոցա, և
տունկ նոցա՝ ի գոմորայ։
Խաղող նոցա խազող դառնութեան,
և ողկոյզ նոցա՝ ի դառնութեան լեղ
ւոյ։
Սրտմտութիւն բարկութեան վիշա
պաց դիւել նոցա. սրտմտութիւն իժից՝
անհնարին առանց բժշկութեան։
Ոչ այս ամենայն ժողովեալ է առ իս,
և կնքեալ պահի՝ ի գանձի իմում։
Յաւուր վրիժուց հատուցման հա
տուցից նոցա, ի ժամանակի յորում
հարցի զքարի ոտն նոցա։
Մերձ է օր կորստեան նոցա. հասեալ
է պատրաստութեամբ տէր՝ ի վերայ
նոցա։

Դատէ տէր զժողովուրդ իւր, և՝ ի
ծառայս իւր միխիթարի։
Զի հասեալ զնոսա յբեւեռս, լուծեալս
և մատնեալս՝ ի գերութիւն։
Եւ ասիցէ տէր, ո՞ւր են դիւքն ձեր՝
յորս յուսացեալ էիք դուք՝ ի նոսա,
զորոց զճարպս սպանդիցն ուտէիք,
և ըմպէիք զգինի զոհիցն։
Արդ յարիցեն օգնեսցեն, և եղիցին
ձեզ թիկունք։

ՆՈՐՆ ՄՈՎՍԷՍԻ

Ծաներ ուք և տեսէք՝ զի ես եմ, և
ոչ գոյ այլ աստուած բայց յինէն։
Ես սպանանեմ, և ես կեցուցանեմ.
հարկանեմ, և ես բժշկեմ. և ոչ ոք
իցէ՝ որ հանիցէ զձեզ՝ ի ձեռաց իմոց։
Համբարձի յերկինս զձեռս իմ. երդ
ուայ աջով իմով և ասացի՝ թէ կեաց
դանի եմ ես յաւիտեան։
Սրեցից որպէս փայլակն զսուսեր իմ,
և՝ ի խնդիր վրիժուց արձակեցից
զաջ իմ։
Հատուցից՝ զհատուցումն թշնամեաց
իմոց. և ատելեաց իմոց հատուցից

զՀատուցումն նոցա նոցին։

Աւրհնեցուցից զնեռս իմ յաւելնել նոցա, և տուր իմ կերիցէ մին՝ յաւելնել վի-
րաւորելոց զերեսից զվնաց խշխանաց՝
ի շինամեաց նոցա։

Ողորմեա եղիցին երկինք նովաւ, և երկիր վիրապացեն նմա ամենայն արդիք աս-
տուածոյ։

Ողորմեա եղեալ ի հեթանոսաց ընդ ժո-
ղովեան նորա, և զօրացուսցեն զնա ամենայն հրեշտակք աստուածոյ։
Խնդրեալով խնդրեցաւ վասն արեան արդարոյ նոցա, և հատուցումն ի ըն-
նամեաց նոցա հատուցաւ նոցա։
Հատուցումն ասելեաց նոցա հատուցաւ նոցա։ և սրբեսցէ տէր զերկիր ժողովրդեան իւրոյ։

Փառք Հօր և որդւոյ և։

ՄԱՂԹՈՆ

Զոր եթ տէր մեր, զոր էթ քրիստոս վերկիչ մեր, զքեզ օրհնեն անձինք մեր։
Պարզասէր տէր, վասն արբուհոյ ամարատոն մօր քոյ և կուսի, և վասն

խաչի քո պատուականի, տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

Գարոզ և ալօթք՝ Մէ նախանձէ և խոստովան կանոնացն։

Վասն ուղղելոյ զդնացս մեր ՚ի ճա-
նապարհս խաղաղութեան, զտէր ա-
ղաչեսցուք։ Տէր ողորմեա։
Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամենայն խոր-
հուրդս չարին, զտէր աղաչեսցուք։
Վասն պատպեելոյ մեզ առողջ խոր-
հուրդս և առաքինի վարս, զտէր ա։
Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ
ամենազօր աջոյն իւրոյ, զտէր աղա։
Վասն խորտակելոյ զՀակառակորդն
վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, զտէր։
Վասն հոգւոցն հանգուցելոյ՝ որք
ճչմարիտ և ուղիղ հաւատով ՚ի քր-
իստոս ննջեցին, զտէր աղաչեսցուք։
Եւ եւս մնացեալ վասն ճչմարիտ և։

Ձանձինս մեր։ Ողորմեաց։

ԱՂՕԹՔ

Տէր երկնի և երկրի՝ ապարիչ ամե-
նայն արարածոց երեւելեաց և անե-
րեւութից։ Ա՛ր քեզ կապեցաք յա-

մենայն ժամ. զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն քո, և սրբայութիւն քո ամենեցուն տիրէ: Շնորհեա մեզ երկիւղիւ՝ի պաշտօն քո կանխել հանապազ, սիրել զքեզ՝ի բոլոր սրտէ և՝ի բովանդակ մտաց, և յամենայն ըօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո: Համբառնալ առ քեզ զձեռս մեր՝ի սրբութիւն առանց բարկութեան և երկմտութեան, և գտանել՝ի քէն զշնորհս և զողորմութիւն, և զառաքինասէր գործոցն յաջողութիւն: Վասն զի դու ես տէր կենաց և աստուած ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն,
Աստուծոյ երկիրպագեալք:

Ջուխտ ամենազօր և յաղթող տէրութեանդ կրկնի ամենայն ծունր երկրպագութիւն, և փառաւորի յամենեցունց Թագաւորութիւն քո: Նայեա յերկրպագութենիս մեր, և ուսո-

մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան: Վասն զի դու ես աստուած խաղաղութեան, որ բարձեր զհշնամութիւն՝ի միջոյ, և արարեր զխաղաղութիւն յերկինս և յերկրի. հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեացդ: Որոյ և զմեզ մեծի շընորհացդ արժանաւորս արասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո, աստուած մեր և տէր մեր և փրկիչ Յիսուս քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄԱՂԹԱՆՔ

Յերդս օրհնութեան և՝ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք զՀայր և զորդի և զսուրբ հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր:
Հայր մեր որ յերկինս:



Զայն առեալն ի վերայ չուրց և. առա-
ուտամ փառաց պրտոց և տէր ինքն
ի վերայ չուրց բազմեաց։

ՍԱՂՄՈՍ Ծ Ե·

Ի կատարած. վասն ժողովրդեանն, որ ի սրբոյն հնազանդեալ էին. ի ժամանակի գի կարան գնա այլազգիքն ի գէր։ Բարձանագիր· Սաղմոս դաւթի։

ՈՂՈՐՄԵԱ. ինձ աստուած, զի կոխեաց զիս մարդ· զօրհանապատ պատերազմունք նեղեցին զիս։
Կոխեցին զիս թշնամիք իմ զօրհանապատ· բազումք էին՝ որք մարտնչէին ընդիս ի բարձանց։
Ի տուէ ես ոչ երկեայց, զի ի տէր յուսացայ· աստուծով գովեցից բանս իմ՝ յաստուած յուսացայ՝ և ոչ երկեայց· զի՞ արասցէ ինձ մարդ։
Զօրհանապատ զբանս իմ անարգեցին. զինեն էին խորհուրդք նոցա ի չարութեան։
Պանդուխտք եղիցին, և թաքթաքուք շրջեսցին· նոքա գարշապարիւ

իմոմ սպասեացեն, որպէս և սպա-
սէին անձին իմոյ։
Որպէս առ ոչինչէ մերժեացես զնոսա,
բարկութեամբ զժողովուրդս հնա-
զանդեցուսցես։
Աստուած զկեանս իմ պատմեցից
քեզ. եղից զպատասուս իմ առաջի
քո, որպէս խոստացար դու ինձ։
Դարձցին թշնամիք իմ յետս իւրեանց,
յաւուր յորում կարդացից առ քեզ։
Ահա ծանեայ զի աստուած իմ ես
դու. զաստուած օրհնեցից ՚ի բանս
իմ, և զտէր գովեցից ՚ի խօսս իմ.
յաստուած յուսացայ և ոչ երկ-
եայց, զի՞ արասցէ ինձ մարդ։
Յինէն են ուխտք իմ, զոր տացից քեզ օրհ-
նութեամբ աստուած աստուած իմ։
Փրկեցեր զանձն իմ ՚ի մահուանէ,
զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ՚ի
դայթակղութենէ. հաճոյ եղէց ա-
ռաջի տեառն յերկրին կենդանեաց։

Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ ԾԶ։

Ի կառավարած մի ապսիաձներ. Սաղմոս դաւթի յարձանագիր. ՚ի ժամանակի զի փախուցեալ և թագուցեալ էր նա յերեսաց սաւուղայ յայրի անդ։

Ողորմեա ինձ աստուած՝ ողորմեա
ինձ, զի ՚ի քեզ յուսացաւ անձն իմ,
Ի հովանի թեւոց քոց յուսացայց,
մինչեւ անցցէ անօրէնութիւն։
Աղաղակեցի առ աստուած բարձ-
րեալ, առ աստուած բարերար իմ։
Առաքեաց յերկնից և կեցոյց զիս.
եդ ՚ի նախատինս, որք կոխէին զիս։
Առաքեաց աստուած զողորմութիւն
և զճշմարտութիւն իւր, և փրկեաց
զանձն իմ ՚ի միջոց դազանաց, զի նըն-
ջէի ես խռովեալ։
Որդւոց մարդկան ատամունք իւր
հանց զէն և նետք են, և լեզուք
նոցա որպէս զսուր սուսերի։
Բարձրեալ ես դու յերկինս աստուած
և յամենայն երկրի են փառք քո։
Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց,
խոնարհ արարին զանձն իմ. փորե-

ցին առաջի իմ խորխորատ, և անկան ինքեանք ի նոյն։

Պատրաստ է սիրտ իմ աստուած, պատրաստ է սիրտ իմ օրհնել և սաղմոս ասել քեզ փառօք իմովք։

Զարթիր փառք իմ, զարթիր սաղմոս և օրհնութեամբ, և ես զարթեայց առաւօտուց։

Խոստովան եղէց քեզ ի ժողովուրդս աերբ, և սաղմոս ասացից քեզ յազինս։

Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն քո, մինչեւ յամպս ճշմարտութիւն քո։

Բարձրեալ ես դու յերկինս աստուած և յամենայն երկրի են փառք քո։

Տունք ժդ։

ՍԱՂՄՈՍ ԾԷ։

Ի կատարած. Մի ապականիր. յաւրնանագիր. Սաղմոս դաւթի։

Թէ արդարեւ զարդարութիւն խօսէք, և ուղիղս դատէք որդիք մարդկան։ Քանզի և արդ խակ ի սրտի ձերում գործէք անօրէնութիւն գործէք յերկրի. զանիրաւութիւն ձեռք ձեր նիւթեն։

Օտար եղեն մեղաւորք ի մօրէ. խաբեցան յարդանդէ, և խօսեցան զսուտ։

Սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան օձի. որպէս իժի և քարբի, որ խցեալ է զականջս իւր։

Զի մի լուիցէ նա ձայն թովչի ճարտարի, և մի առցէ զդեղ ի դեղատուէ իմաստնոյ։

Աստուած փշրեսցէ զատամունս նոցա ի բերանս իւրեանց, և զժանիս առիւծուց խորտակեաց տէր։

Անարգ եղիցին նոքա որպէս ջուր՝ զի հեղանի. ի լարել աղեղան նոցա տկարասցին որպէս մոմ զի հալի, և սպառեսցին։

Անկաւ հուր՝ և ոչ տեսին զարեւ, մինչեւ ի միտ առեալ էր զվուշս իւրեանց. որպէս դժնիկ բարկութեամբ կենդանւոյն կիզցէ զնոսա։

Ուրախ եղիցի արդարն՝ յորժամ տեսցէ զհատուցումն. և զձեռս իւր լուասցէ յարեան մեղաւորի։

Եւ ասասցէ մարդ. Թէ արդարեւ

գուցէ պատուղ արդարոյ, և է աստուած որ դատի զնոսա յերկրի։

Տունք ժ։ Գոբզայս լդ։

ՍԱՂՄՈՍ ԾԵ.

Ի կատարած. մի՛ ապականիներ. յաղթանուագիր. Յաղմոս դաւթի. ՚ի ժառանգակի զի առաքեաց առաւոտ, եւ պայծառեաց զտուն նորա, զի ապանցէ զնա։

Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց աստուած, յայնցանէ որք յարուցեալ են ՚ի վերայ իմ, ապրեցո զիս։

Փրկեա զիս յայնցանէ, որք գործեն զանօրէնութիւն. յարանց արիւնահեղաց ապրեցո զիս։

Որսալ զանձն իմ կամեցան, և հասին ՚ի վերայ իմ հզօրք։

Ոչ մեղք իմ և ոչ յանցանք. առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ։

Զարթիր ընդ առաջ իմ, և տես դու տէր զօրութեանց աստուած իսրայէլի։

Նայեաց և այց արա ամենայն հեթանոսաց. մի՛ ողորմիր ամենեցուն, որք գործեն զանօրէնութիւն։

Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին որպէս շուն, և շրջեսցին զքաղաքաւ։

Ընդ զօրանջեսցեն բերանօք իւրեանց, և սուր է ՚ի շրթունս նոցա։

Իսկ արդ ո՞վ լսաւ զայս. զի դու տէր ծիծաղեսցիս զնոքօք, և արհամարհեսցես զամենայն հեթանոսս։

Զզօրութիւն իմ առ քեզ պահեցից, զի աստուած օգնական իմ է։

Աստուած իմ, ողորմութիւն նորա կանխեսցէ առաւ. և աստուած իմ ցուցցէ ինձ ՚ի թշնամիս իմ։

Մի՛ սպանանէր զնոսա, զի մի՛ մոռասցին զժողովուրդս քո։

Ցրուեա զնոսա զօրութեամբ քով, և ընկճեա զնոսա, զի դու ես պաշտպան իմ տէր։

Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց նոցա, ընկալցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց։

Յանէծս և ՚ի ստութիւնս մատնեսցին. ՚ի կատարածի բարկութեան՝ բնաւեսցին, և մի՛ գտցին։

Գիտասցեն՝ զի աստուած տիրէ յա-

կոբայ և ամենայն ծագաց երկրի։
Դարձցին ընդ երեկոյս, սովեսցին որ-
պես շունք, և շրջեսցին գքաղաքաս։
Նոքա սկսեսցին յօտել. ապա թէ
ոչ յագեսցին, տրտնջեսցեն։
Ես օրհնեցից զօրհնութիւնս տեա-
ռըն, և ցնծացայց առաւօտուց յո-
ղորմութեան քումմ։
Զի եղեր իմ պաշտպան և տուն ա-
պաւինի, յաւուր նեղութեան իմոյ
օգնական իմ։
Քեզ սաղմոսասացից՝ աստուած ապա-
ւէն իմ, աստուած ողորմութեան իմոյ։

Տունք իա։

ՍԱՂՄՈՍ ԾԹ.

*Սաղմոս դաւթի. արձանագիր. ՚ի կատարած՝ զա-
ռանցելոց ժառանգակաց առ ոչնաւնէ. ՚ի ժառա-
նգակի զի հրձիգ արար նա զմիջագետս եւ զա-
սորեստանեն ափոդայ, և ՚ի դարձին հարկանէր
յովաբ զձորն աղտից յերկոտասան հազարս։*

Աստուած մերժեցեր և աւերեցեր
զմեզ. բարկացար, և դթացիս ՚ի մեզ։
Շարժեցեր զերկիր, և խռովեցու-
ցեր զսա. բժշկեա զհարուածս սո-

րա, զի սասանեցաւ։
Ցուցեր ժողովրդեան քումմ խստու-
թիւն. և եմուր ըմպել մեզ գինի
յիմարութեան։
Եմուր երկիւղածաց քոց նշան, զի
ապրեսցին յերեսաց աղեղան։
Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո
աջով քովք, և լուր մեզ։
Աստուած խօսեցաւ ՚ի սրբութենէ
իւրմէ. ցնծացայց՝ բարձր եղէց, բա-
ժանեցից զսիւքէմ, և հովիտսն յար-
կաց չափեցից։
Իմ է գաղաադ, և իմ է մանասէ.
եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։
Յուդա թագաւոր իմ. մովաբ աւա-
զան յոյսոյ իմոյ։
Յեդովմէ ուղղեցից զդնացս իմ, և
ինձ այլազգիք հնազանդ եղեն։
Ո՞ տացէ զիս ՚ի քաղաք ամուր, կամ
ո՞վ առաջնորդեսցէ ինձ մինչեւ ցեդոմ։
Եթէ ոչ դու աստուած, որ մերժե-
ցեր զմեզ, և ոչ ելեր աստուած
ընդ զօրս մեր։
Տուր մեզ օգնութիւն ՚ի նեղութենէ,

զի ընդունայն է փրկութիւն մարդոյ։
Աստուծով արասցուք զօրութիւն,
և նա արհամարհեսցէ զայնոսիկ՝ որք
նեղեն զմեզ։

Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ Կ.

ի կատարած. ընդ օրինուռիւն. Սաղմոս դաւթի։

Լուր աստուած աղօթից իմոց, և
նայեա տէր յաղօթս իմ։
Ի ծագս երկրի կարդացի զառ քեզ,
մինչ՝ ի վաստակիլ սրտի իմոյ։
Ի վիմէ բարձր արարեր զիս. առաջ
նորդեցեր ինձ, և իմ եղեր յոյս, և
աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց
թշնամւոյն։
Բնակեցայց ես՝ ի յարկս քո յաւիտեան, և ծածկեցայց ընդ հովանեաւ
թեւոց քոց։
Դու աստուած լուար աղօթից իմոց.
ետուր ժառանգութիւն, որք երկնչին
ձին յանուանէ քումմէ։
Աւուրս յաւուրս յաւելեր թագաւորի ամս նորա, աւուրս աղ-

գաց մինչեւ յազգս։
Կայ և մնայ յաւիտեան առաջի աստուծոյ ողորմութիւն և ճշմարտութիւն, որք խնդրեն՝ ի նմանէ։
Այսպէս սաղմոս ասացից անուան քումմ յաւիտենից, և տացք քեզ զաղօթս իմ օր ըստ օրէ։

Տունք ը։ Գ օրգաց խբ։

ՍԱՂՄՈՍ ԿԱ.

ի կատարած. ՚ի վերայ հղիդովմայ.
Սաղմոս դաւթի։

Բայց միայն աստուծոյ հնազանդ լեր
անձն իմ, զի՝ ի նմանէ է հնձ փրկութիւն։
Նա է աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ՝ զի մի՛ սասանեցայց առաւել։
Մինչեւ յե՞րբ յառնէք՝ ի վերայ մարդոյ՝ սպանանել ամենեքեան, որպէս
յորմոյ թիւրեալ և՝ ի ցանկոյ մերժելոյ։
Բայց միայն զպատիւ իմ խորհեցան
մերժել յինէն, և ընթացան՝ ի ծաղս իւրեանց։
Բերանօք իւրեանց օրհնէին, և սրբ-

տիւք անիծանէ ին ։
Բայց սակայն աստուծոյ հնազանդ
լեր անձն իմ, զի ի նմանէ է ինձ համ
բերութիւն ։
Նա է աստուած իմ և փրկիչ իմ,
ապաւէն իմ. զի մի սասանեցայց ։
Յաստուծոյ է զօրութիւն իմ և փառք
իմ. աստուած օգնութեան իմոյ,
յոյս իմ առ աստուած է ։
Յուսացարուք ի նա ամենայն ժողովք
ժողովրդոց . սփռեցէք առաջի նորա
զսիրտս ձեր, զի աստուած օգնական
է մեր յաւիտեանս ժամանակաց ։
Սակայն ընդունայն են որդիք մարդ-
կան, սուտ են որդիք մարդկան . ի
կշիռս իւրեանց մեղանչեն, և ինք-
եանք յունայնութեան են ի միասին ։
Մի՛ յուսայք յանիրաւութիւն,
յափշտակութեան մի՛ ցանկայք , և
մեծութիւն թէ առնիս դայցէ , մի՛
յօժարեսցին սիրտք ձեր ։
Միանգամ խօսեցաւ աստուած , և
երկուս զայս լուաք ։
Յաստուծոյ է զօրութիւն , և քո տէր

ողորմութիւն . և դու հատուցանես
իւրաքանչիւր ըստ գործոց նոցա ։
Տունք ԺԶ ։

ՍԱՂՄՈՍ ԿԲ.

Սաղմոս դաւթի. միւնդեռ նստէր նա յանապա-
տի անդ հրէաստանի:

Աստուած աստուած իմ, ես առ
քեզ առաւօտ առնեմ. ծարաւեաց
առ քեզ հոգի իմ, քանի՞ պատիկ եւս
և մարմին իմ ։
Որպէս երկիր անապատ և անջուր ,
ուր ոչ գոյ ի նմա ճանապարհ ։
Այսպէս ի սուրբս երեւեցայց քեզ,
տեսանել ինձ զզօրութիւն քո և զը-
փառս քո ։
Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն
քո քան զկեանս իմ. և շրթունք իմ
գովեսցեն զքեզ ։
Այսպէս օրհնեցից զքեզ ի կեանս իմ,
և յանուն քո համբարձից զձեռս իմ ։
Որպէս ի ճարպոյ պարարտութենէ
լցցի անձն իմ, շրթամբք ցնծութեան
օրհնեսցէ զքեզ բերան իմ ։
Զի թէ յիշէի զքեզ յանկողնի և

մում, ընդ առաւօտս կանխեալ խօսել ընդ քեզ։
Զի եղեր իմ օգնական, ՚ի հովանի թեւոց քոց ցնծացայց։
Եկն զկնի քո անձն իմ, և զիս ընկալաւ աջ քո. և նոքա ՚ի նանիր խնդրեցին զանձն իմ։
Մտցեն ՚ի ներքոյ անդնդոց երկրի. մատնեսցին ՚ի ձեռս սրոյ, և բաժինք աղուէսաց եղիցին։
Թագաւոր յուսասցաւ ՚ի տէր. գովեսցին ամենեքեան՝ որ երդնուն նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝ որք խօսէին զանիրաւութիւն։

Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ ԿԹ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի։

Լուր աստուած աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ. յերկիւղէ թըշնամւոյն փրկեա զանձն իմ։
Ծածկեսցես զիս ՚ի ժողովոց չարաց, ՚ի բազմութենէ՝ որք գործեն զանօրէնութիւն։
Որք սրեցին որպէս սուսեր զլեզուս

իւրեանց. լարեցին զաղեղունս իւրեանց յիւրս դառնութեան։
Զգել ՚ի դաղտնիս այնոցիկ՝ որք ուղիղ են սրտիւք. յանկարծակի ձգեսցեն ՚ի նոսա, և մի՛ երկիցեն։
Որք զօրացուցին յանձինս իւրեանց զբանս չարութեան. խորհեցան թաղուցանել ինձ որոգայթ, և ասացին ոչ տեսանէ զայս տէր։
Քննեցին զանօրէնութիւն, պատրաստեցան ՚ի քննել զքննութիւն։
Մատիցէ այր ՚ի խորութիւն սրտի իւրոյ, և բարձր եղիցի աստուած։
Նետք տղայոց եղեն վէրք նոցա. տկարացան ՚ի նոսա լեզուք նոցա, և խռովեցան ամենեքեան՝ որք հայէին ընդ նոսա։
Երկեաւ ամենայն մարդ ՚ի պատմել զգործս աստուծոյ. և զարարածս նորա ՚ի միտ առին։
Արդար եղիցի արդար ՚ի տէր, և յուսասցի ՚ի նա. նովաւ գովեսցին ամենեքեան, որք ուղիղ են սրտիւք։

Տունք ժ։ Գործոյս լգ։

ՍԱՂՄՈՍ ԿԴ.

*Ի կատարած Սաղմոս դաւթի: Օրհնութիւն և-
րեմիայի՝ եզեկիէլի և ժողովրդեանն, յորժամ՝ի
սրանդիստուրենէն կաւիլն եղանել:*

Քեզ վայելէ օրհնութիւն աստուած
՝ի սիօն, և քեզ տացին աղօթք յե-
րուսաղէմ:
Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ա-
մենայն մարմին եկեսցէ:
Բանք անօրինաց զօրացան ՝ի վերայ
մեր, եւ զամբարշտութիւնն մեր
դու քաւեսցես:
Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և
բնակեսցին ՝ի դաւիթ քո:
Լցցուք մեք ՝ի բարութենէ տան
քո, սուրբ է տաճար քո սքանչելի
արդարութեամբ:
Լուր մեզ աստուած փրկիչ մեր, յոյս
ամենայն ծագաց երկրի, և որ ՝ի ծով
հեռի:
Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ
իւրով, և զգեցեալ է զօրութիւն:
Ո խառնեցուցանէ զմեծութիւն ծո-
վոյ, և զձայն ալեաց նորա ցածուցանէ:

Խռովեսցին հեթանոսք, և երկիցեն
բնակիչք երկրի ՝ի նշանաց քոց:
Յելս առաւօտու և ընդ երեկոյս
զուարճացուցին. հայեցար յերկիր՝ ար-
բեցուցեր զնա, և բազում արարեր
զմեծութիւն նորա:
Գետն աստուծոյ լի եղեւ ջրովք.
պատրաստ արարեր զկերակուր նո-
ցա, զի այսպէս է պարարտութիւն:
Զակօս նորա արբեցուցեր, և բա-
զում արարեր զարմտիս նորա:
Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս
նորա. օրհնեսցի պսակ տարւոյ քաղց-
րութեան քոյ:
Դաշտք քո լցցին պարարտութեամբ,
պարարտասցին գեղեցկութիւնք՝ ա-
նապատի:
Բլուրք զցնծութիւն զգեցցին, և
զգեցցին խոյք մաքեաց:
Հովիտք բազում արասցեն զցորեան,
աղաղակեսցեն և օրհնեսցեն:

ՍԱՂՄՈՍ ԿԵ

Ի կատարած. Սաղմոս դաւթի, յարուչեան:

Աղաղակեցէք առ աստուած ամենայն երկիր, սաղմոս ասացէք անուան նորա, և տուք զփառս օրհնութեան նորա:

Ասացէք աստուծոյ, որպէս զի ահեղ են գործք քո. ի բազում զօրութեան քում սաեցին քեզ թշնամիք քո:

Ամենայն երկիր երկիրպագցեն քեզ սաղմոս ասասցեն քեզ, և սաղմոս ասասցեն անուան քում:

Եկայք և տեսէք զգործս աստուծոյ. որպէս զի ահեղ են խորհրդով քան զամենայն որդւոց մարդկան:

Ո դարձոյց զծովն ի ցամաք, և ընդ գետս անցին ոտանաւորք:

Անդ ուրախ եղիցուք մեք ի նա, որ տիրէն զօրութեամբ իւրով յաւիտենից:

Աչք նորա ի հեթանոսս հայեին. որք դառնացուցին զնա, մի՛ բարձրասցին յանձինս իւրեանց:

Օրհնեցէք հեթանոսք զաստուած մեր, լսելի արարէք զձայն օրհնութեան նորա:

Այն որ եդ զանձն իմ ի կեանս, և ոչ եթող զոտս իմ շարժել:

Փորձեցեր զմեզ աստուած և քննեցեր զմեզ, որպէս և քննի արծաթ:

Ի կապեր զմեզ յորոգայթ, եդեր զնեղութիւն ի թիկունս մեր. և անցուցեր զմարդիկ ի վերայ գլխոց մերոց:

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ ի հանգիստ:

Մտից ի տունն քոյ պատարագօք. տացից քեզ զուխտս իմ, զոր խոստացան քեզ շրթունք իմ, զոր բերան իմ խօսեցաւ ի նեղութեան:

Զողջակէզս ուղղելիս մատուցից քեզ խոյովք և խնկովք, և քեզ մատուցից զուարակս և նոխազս:

Եկայք լսարուք ինձ՝ և պատմեցից ձեզ ամենեքեան՝ որ երկնչիք յաստուծոյ, զոր ինչ արար անձին իմոյ:

Առ նա բերանով իմով կարդացի, և բարձր արարի զնա լեզուաւ իմով:

Զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում,

մինչ լսէր ինձ տէր։
Վասն այսորիկ լուաւ ինձ աստուած և նայեցաւ ի ձայն խնդրուածոց իմոց։ Օրհնեալ է աստուած՝ որ ոչ ի բաց եայ արար զաղօթս իմ, և ոչ զողորմութիւն իւր յինէն։

Տունք ԺԲ։

ՍԱՂՄՈՍ ԿԶ.

ի կատարած. ընդ օրհնութիւնս. Սաղմոս երգոց։

Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ, և ողորմեա մեզ։
Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգին ամենայն զփրկութիւնս քո։
Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։
Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք, զի դու դատես զժողովուրդս ուղղութեամբ, և ազգաց երկրի դու առաջնորդես։
Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք աստուած, դոհասցին զքէն

ժողովուրդք ամենայն։
Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ աստուած աստուած մեր։
Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, և ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

Տունք է։ Գորգոյս խբ։

ՍԱՂՄՈՍ ԿԷ.

ի կատարած. Սաղմոս դաւթի

Յարիցէ աստուած՝ և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։
Որպէս պակասի ծուխ՝ պակասեսցին. որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց աստուծոյ։
Արդարք ուրախ եղիցին և ցնծասցեն առաջի նորա, և զուարճասցին յուրախութեան իւրեանց։
Օրհնեցէք զաստուած մեր և սաղմոս ասացէք անուան նորա. ճանապարհ արարէք այնմիկ՝ որ նստի ընդ արեւ-

մուտս, և տէր է անուն նորա։
Յնծասցեն առաջի նորա, և խռովեսցին յերեսաց նորա։
Որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց, աստուած ՚ի տեղւոջ սրբութեան իւրոյ։
Աստուած բնակեցուցանէ զմիակրօնս ՚ի տան, և հանէ զկապեալս քաջութեամբ իւրով, սոյնպէս և զդառնացողս՝ որք բնակեալ են ՚ի գերեզմանս։
Աստուած ընդ ելանելն քո առաջի ժողովրդեան քո, ընդ անցանելն քո ընդ անապատ՝ երկիր շարժեցաւ։
Քանզի և երկինք ցօղեսցին յերեսաց աստուծոյ ՚ի սինայէ առաջի աստուծոյ իսրայելի։
Անձրեւ կամաց պատրաստեցեր աստուած ժառանգութեան քում, թէպէտ և հիւանդացաւ, սակայն դու հաստատեցեր զնա, և գազանք քո բնակեսցին ՚ի նմա։
Պատրաստ արարեր քաղցրութեամբ քով աղքատի աստուած, տէր տաճկէ զբան, որք աւետարանեն զօրութեամբ բազմաց։

Թագաւոր զօրութեանց սիրելոյ, գեղեցկութիւն տան քո բաժանեալ յաւարի, թէպէտ և ննջեսջիք ՚ի մէջ վիճակաց։
Թեւք աղաւնւոյ արծաթամատաղ, և թիկնամէջ նորա ՚ի գոյն ոսկւոյ։
Ի գումարել երկնաւորին զթագաւորս ՚ի վերայ նորա, ձիւնասցին ՚ի սալմոն։
Լեառն աստուծոյ լեառն պարարտ, լեառն մածեալ՝ լեառն պարարտ, և զի՞նչ կարծէք լերինք հպարտացեալք։
Լեառն, ընդ որ հաճեցաւ աստուած բնակել ՚ի նմա. քանզի և տէր իսկ բնակեսցի ՚ի նմա յաւար։
Կառք աստուծոյ բիւրապատիկք, հազարք ուղղիչք, և տէր ՚ի նոսա ՚ի սինէ սրբութեան իւրոյ։
Եւ ՚ի բարձունս և գերեաց զգերութիւն. էառ ասաւ՝ բաշխեաց պարգեւս և ետ որդւոց մարդկան. քանզի թերահաւատից եւս բնակել եղիցին ՚ի նմա։
Տէր աստուած օրհնեալ՝ օրհնեալ

տէր զօրհանապազ, առաջնորդեսցէ
մեզ աստուած փրկիչ մեր։
Աստուած մեր աստուած կենարար,
և ՚ի տեառնէ են ելք մահու։
Բայց սակայն աստուած փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց, և զհերն
կարճնալին, զոք գնան յանօրէնութեան իւրեանց։
Ասաց տէր՝ ՚ի խորոց անդնդոց դարձուցից, և ՚ի միջոց ծանեաց զայն ՚ի
դուրս կորզեցից։
Որպէս թացցի ոտն քո յարեան, և լեզուք շանցդ քոց յարենէ թշնամեացդ։
Երեւեցան գնացք քո աստուած,
գնացք աստուծոյ թագաւորին մերոյ սրբոյ։
Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն ՚ի մէջ կուսանաց և գուսլաց։
Յեկեղեցիս օրհնեցէք զաստուած,
և զտէր յաղբերացն իսրայէլի։
Անդ բենիամին ՚ի տպայութեան զարմանալի, իշխանք յուդայ առաջնորդք
նորա՝ իշխանք զաբուզոնի, և իշխանք
նեփթաղիմայ։

Հրամայեա աստուած զօրութեամբ
քով. զօրացո զայս, զոր հաստատեցեր ՚ի մեզ։
Ի տաճարէ քումմէ յերուսաղեմ
քեզ մատուսցեն թագաւորք պատարագս։
Սաստեա ՚ի գազան եղեգան, ՚ի ժողովս զուարակաց և ՚ի դաս երինջոց։
Խոտեսցին այնոքիկ՝ զոք ընտրեալ են
արծաթով. ցրուեա զհեթանոսս,
զոք կամին ընդ պատերազմս։
Եկեսցեն հրեշտակք յեգիպտոսէ,
հնդիկք յառաջագոյն ձեռնտու լինին առ աստուած։
Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք
զաստուած, և սաղմոս ասացէք
տեառն։
Ճանապարհ արարէք այնմիկ, որ ելանէ յերկինս երկինից ընդ արեւելս։
Ահա տացէ ձայն իւր ՚ի ձայն զօրութեան, և տուք զփառս աստուծոյ։
Ի վերայ իսրայէլի մեծավայելչութիւն նորա, և զօրութիւն նորա ամենայն
յամպս երկնից։

Աքանչելի է աստուած ի վերայ սրբոց իւրոց, աստուած իսրայէլի։ Նա տացէ զօրութիւն հաստատութեան ժողովրդեան իւրոյ. օրհնեալ է աստուած։

Տունք լբ։

ՍԱՂՄՈՍ ԿԵ.

Ի կատարած. Սաղմոս դաւթի. վասն զառանցելոցն։

Կեցո զիս աստուած, զի հասին ջուրք յանձն իմ, ընկղայ ես ի խորս անդընդոց, ուր ոչ գոյ հինձ հանգիստ։ Եկի ես ի խորս ծովու, և շրջանք ընկղմեցին զիս։ Վաստակեցայ ես առ աղաղակել, և կերկերեցաւ կոկորդ իմ։ Նուաղեցան աչք իմ առ յուսալ հինձ առ տէր աստուած իմ։ Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ, որ ատէին զիս ի տարապարտուց։ Զօրացան յիս թշնամիք իմ և ատելիք իմ ի նանիր. հինչ զոր ոչ յափշտակեալ էի, տուժէի նոցա։ Աստուած դու ծանեար զանզգա-

մութիւն իմ, և յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան։ Մի ամաչեցուցեն վասն իմ, որ համբերեն քեզ տէր տէր զօրութեանց. մի պատկառեսցին վասն իմ, որ խնդրեն զքեզ աստուած իսրայէլի։ Վասն քո համբերի նախատանաց, և ծածկեաց ամօթ զերեսս իմ։ Օտար եղէ ես յեղբարց իմոց, և հիւր որդւոց մօր իմոյ։ Նախանձ տան քո եկեր զիս, և նախատինք նախատչաց քոց անկան ի վերայ իմ։ Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և եղեն ինձ այս նախատինք. արարի զհանդերձս իմ քուրձ, և եղէ առակ նոցա։ Զինէն խորհէին, որ նստէին առ դրունս. զիս այսն առնէին, որ ըմպէին զգինի։ Ես յաղօթս կայի առ քեզ տէր ի ժամանակ ընդունելի։ Աստուած ի բազում ողորմութեան քում լուր ինձ, ի ճշմարտութիւն փրկութեան քո։

Ասպետս զիս ի կաւոյ, զի մի՛ ընկ-
լայց. ասպետայց ես յատելեաց իմոց,
և ի խորոց ջուրց բազմաց։
Մի՛ ընկղցեն զիս պոյտք ջուրց, և մի՛
ընկղմեսցեն զիս անդունդ խորոց. և
ջրհոր մի՛ կափուսցէ զբերան իւր ի
վերայ իմ։
Լուր ինձ տէր, զի քաղցր է ողորմու-
թիւն քո. ըստ բազում գթութեան
քում հայեա յիս, և մի՛ դարձուցա-
ներ զերեսս քո ի ծառայ քումմէ. զի
նեղեալ եմ ես, վաղվաղակի լուր ինձ։
Հայեա յանձն իմ և փրկեա զիս, և
վասն թշնամեաց իմոց ապրեցո զիս։
Զի դու գիտես զնախատինս իմ, զա-
մօթ իմ և զպատկառանս իմ։
Առաջի քո են ամենայն նեղիչք անձ-
ին իմոց. նախատանաց համբեր
սիրտ իմ և թշուառութեան։
Սկսայ ունել՝ թէ ոք տրտմեսցի ընդ
իս, և ոչ ոք էր, և մխիթարիչ ինձ
ոք ոչ գտաւ։
Եւտուն ի կերակուր ինձ լեզու, և ի
ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա
յորդոյթ, ի հատուցումն և ի
գայթակղութիւն։
Խաւարեսցին աչք նոցա, զի մի՛ տես-
ցեն. և զմիջոսնա նոցա հանապատ
կատարեա։
Արկցես ի վերայ նոցա զբարկութիւն
քո. և սրտմտութիւն բարկութեան
քոյ հասցէ ի վերայ նոցա։
Եղիցին բնակութիւնք նոցա աւե-
րակ. և ի հարիս նոցա մի՛ ոք լիցէ՝
որ բնակիցէ։
Զի զոր դու հարեր՝ հալածեցին, և
ի վերս ցաւոց իմոց յաւելին։
Դիր զմեղս ի վերայ մեղաց նոցա, զի
մի՛ մտցեն յարդարութիւն քո։
Ջնջեսցին նոքա ի գրութենէ քումմէ
կենաց, և ընդ արդարս քո մի՛ գրեսցին։
Աղքատ և ցաւած եմ ես, փրկու-
թիւն քո աստուած ընկալցի զիս։
Օրհնեցից զանուն աստուծոյ իմոյ
օրհնութեամբ, և բարձր արարից
զնա գովութեամբ։
Հաճոյ եղիցի աստուծոյ քան զերկն մա-

տաղ, որ բերէ զեղջիւրս և զկճղակս։
Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին.
խնդրեցէք զաստուած, և կեցցեն
անձինք ձեր։
Զի լուաւ տէր տնանկաց, և զկապեալս իւր ոչ արհամարհեաց։
Օրհնեսցեն զնա երկինք և երկիր,
ծով և ամենայն որ գեւսայ ՚ի նոսա։
Աստուած փրկէ զսիօն. և շինեսցին
քաղաքք Հրէաստանի. շինեսցեն բըլ
նակեսցեն և ժառանգեսցեն ՚ի նմա։
Զաւակ ծառայից քոց հաստատեսցի
անդ. և սյք սիրեն զանուն քո. բըլ
նակեսցեն ՚ի նմա։

Տունք լբ։

ՍԱՂՄՈՍ ԿԹ.

ի կատարած. Սաղմոս դաւթի. առ ՚ի յիշատակ
փրկելոյ զնա տեառն։

Աստուած յօգնել ինձ նայեաց, և
տէր յընկերել ինձ վտ[illegible]թայ։
Ամաչեսցեն՝ և յամօթ լինին՝ սյք
խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և
ամաչեսցեն՝ սյք խորհէին ինձ չար։
Դարձցին առ ժամայն ամաչեցեալք,

սյք ասէին ինձ վաշ վաշ։
Ցնծասցեն և ուրախ լինին ՚ի քեզ
ամենեքեան, սյք խնդրեն զքեզ տէր։
Ասասցեն ամենայն ժամ մեծ է աստուած, և սյք սիրեն զփրկութիւն քո։
Ես աղքատ և տնանկ եմ, աստուած
օգնեա ինձ. օգնական և փրկիչ իմ
ես, և դու տէր իմ՝ մի յամենար։

Տունք ղ։ Գորգեայս խդ։

ՍԱՂՄՈՍ Հ.

ի կատարած. որդւոցն յովնադաբայ, յետ առաջնոյ գերութեանն. Սաղմոս դաւթի.

Ի քեզ տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան, յարդարութեան
քում փրկեա և ապրեցո զիս։
Խոնարհեցո առիս զունկն քո և կեցո զիս։
Լեր իմ աստուած ապաւէն, և տեղի
ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես։
Աստուած իմ, փրկեա զիս ՚ի ձեռաց
մեղաւորի, ՚ի ձեռաց անօրինի և ա
նիրաւի։

Դու ես համբերութիւն իմ տէր, տէր յոյս իմ՝ ի մանկութենէ իմմէ։ Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ։

Որպէս զի նշաւակ եղէ ես բազմաց. և դու օգնական իմ և հզօրիչ իմ։ Լցցի բերան իմ գովութեամբ. որպէս օրհնեցից զփառս քո, զօրհանապազ զմեծվայելչութիւնս քո։

Մի՛ ընկենուր զիս տէր՝ ի ժամանակս ծերութեան. ՝ի պակասիլ զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս։

Ասացին թշնամիք իմ ինձ, և որք պահպանեցին զանձն իմ, խորհեցան՝ ի միասին և ասացին։

Աստուած եմոզ զնա, հալածեցուք և հասցուք նմա. զի ոչ ոք է որ փրկէ զնա։

Աստուած իմ, մի հեռի առնիր յինէն, և աստուած յօգնել ինձ նայեաց։

Ամաչեսցեն և պակասեսցին՝ որք չարախօս կային զանձնէ իմմէ. զգեցցին ամօթ և ջպատկառանս՝ որք խնդրէին ինձ չար։

Ես յամենայն ժամ յուսացայց, և յաւելից յօրհնութիւնս քո։

Բերան իմ պատմեսցէ զարդարութիւնս քո, զօրհանապազ զգութիւնս քո։

Որպէս ոչ գէ խարդախութիւն ինչ գիտէի դպրութեան. այլ մտից՝ ի զօրութիւնս տեառն. և տէր յիշեցի զարդարութիւնս քո միայն։

Աստուած իմ ուսուցեր զիս՝ ի մանկութենէ իմմէ. և ցարդ եւս պատմեցից զարդարութիւնս քո։

Մինչեւ յալեւորիլ և՝ ի ծերանալ, աստուած իմ մի՛ թողուր զիս։

Մինչեւ պատմեսցի բազուկ քո ազգի ամենայնի որ գալոցն է։

Զօրութիւնս քո և զարդարութիւնս քո մինչեւ՝ ի բարձունս զոր արարեր մեծամեծս. աստուած ո՞ նմանի է քեզ։

Որչափ ցուցեր ինձ նեղութիւն բազում և չարչարանս, դարձեալ միւս

թաբեցեր զիս, և 'ի խորոց անդընդոց երկրի հաներ զիս:

Յաճախեցեր զշնորհս քո, զարձար և մխիթարեցեր զիս, և 'ի խորոց երկրի միւսանգամ հաներ զիս:

Աղդ և ես խոստովան եղէց քեզ 'ի պատրաստութիւն սաղմոսաց ճշմարիտ աստուած, սաղմոս ասացից քեզ օրհնութեամբ սուրբդ իսրայէլի:

Ցնծասցեն շրթունք իմ յորժամ սաղմոս ասիցեմ քեզ, և անձն իմ զոր փրկեցեր:

Եւս և լեզու իմ զօրհանութիւն քո:

Ի ժամանակի որպէս յամօթ լինին և ամաչեսցեն, որք խնդրեին ինձ չար:

Տունք իզ:

ՍԱՂՄՈՍ ՀԱ:

Ի Տողումն սաղմոս:

Աստուած զնշխարունս քո աւքայի տուր, և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի:

Դատել զժողովուրդս քո արդարութեամբ, և զաղքատս քո իրաւամբք:

Առցեն լերինք զխաղաղութիւն ժողովրդեան, և բլուրք զարդարութիւն:

Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, և կեցուսցէ զորդիս տանն կաց, և խոնարհեցուսցէ զամբարտաւանս:

Կացցէ և մնասցէ ընդ արեւու յառաջ քան զլուսին ազգէ ազգ:

Իջցէ որպէս զանձրեւ 'ի վերայ դեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր:

Ծաղեսցի յաւուրս նորա արդարութիւն, բազում խաղաղութիւն՝ մինչեւ չեւ կատարեսցի լուսին:

Տիրեսցէ նա 'ի ծովէ մինչեւ 'ի ծով, 'ի գետոց մինչեւ 'ի ծագս աշխարհի:

Առաջի նորա նախ հնդիկք անկցին, և թշնամիք նորա հող կերիցեն:

Թագաւորք թարշիշ և կղզեաց պատարագս մատուսցեն նմա, թագաւորք արաբացւոց և սաբայ պատարագս բերցեն նմա:

Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա:

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատ և զտնանկն, որոյ ոչ է իւր օգնական։

Անհայեսցէ նա յաղքատն և ի տնանկն, և զանձինս տնանկաց կեցուսցէ. ի վաշխոյ չարաց փրկեսցէ զանձինս նոցա։

Պատուական է անուն նորա առաջի նոցա. կեցցէ, և տացի նմա յոսկւոյն արաբացւոց։

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, և զօրհանապազ օրհնեսցեն զնա։

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, և ի վերայ գլխոց լերանց։

Բարձրասցի քան զլիբանան պտուղ նորա. և ծաղկեսցի ի քաղաքի տեառն որպէս խոտ երկրի։

Եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարեւ է անուն նորա։

Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանիցեն նմա։

Օրհնեալ տէր աստուած իսրայէլի որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է

անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի։

Տունք ի։ Գորգայս խզ։

Կանոնս Գորգայս է։ Սաղմոս ժէ։ Տունք մՃ։

ԱՂՕԹՔ ԱՆՆԱՑԻ ՄՕՐՆ ՍԱՄՈՒԷԼԻ

Ա. Թագ. բ.

Հաստատեցաւ սիրտ իմ ի տէր, և բարձրացաւ եղջիւր իմ յաստուած փրկիչ իմ։

Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց. ուրախ եղէց ի փրկութեան քում։

Զի ոչ գոյ սուրբ որպէս զտէր, և ոչ արդար որպէս զաստուած մեր, և չիք սուրբ բաց յաստուծոյ մերմէ։

Մի պարծիք և մի խօսիք զամբարտաւանս, և մի ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան։

Աստուած գիտութեանց՝ տէր աստ

ուած պատրաստէ իւրով իմաստու-
թեամբ զդիտութիւնն յարարածս իւր։
Հզօրաց հաստ աղեղունք թուլացան,
և տկարք վառեցան զօրութեամբ։
Յադք և լնք հացիւ նուաղեցան, և
քաղցեալք լցին զերկիր։
Ամուլն ծնաւ եօթն, և բազմածի-
նըն նուաղեցաւ ի ծննդոց։
Տէր մեռուցանէ և տէր կեցուցա-
նէ, իջուցանէ ի դժոխս և հանէ։
Տէր աղքատացուցանէ և տէր մեծա-
ցուցանէ. խոնարհ առնէ զամբար-
տաւանս մինչեւ յերկիր, և բարձր
առնէ զտառապեալս յաղբեւաց։
Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշ-
խանս ժողովրդեան, և զաթոռ փա-
ռաց ժառանգեցուցանէ նոցա։
Կատարէ զուխտս ուխտաւորաց, և
օրհնեաց զամս արդարոց։
Զի ոչ թէ իւրով զօրութեամբ զօ-
րանայ հզօր. այլ տէր տկար առնէ
զհակառակորդս իւր, տէր սուրբ է։
Մի պարծեսցի խորհրդականն ի խոր-
հուրդս իւր. և մի պարծեսցի հզօրն

ի զօրութիւն իւր. և մի պարծե-
ցի մեծն ի մեծութեան իւրում։
Այլ որ պարծին՝ ի տէր պարծեսցին.
ի խորհուրդս գիտութեան զտէր
ճանաչել։
Առնել զիրաւունս և գործել զարդա-
րութիւն ի վերայ երեսաց երկրի։
Տէր եւ յերկինս և որոտաց. և ինքն
գատէ առանց բարբառելոյ։
Տայ զօրութիւն թագաւորաց մերոց.
և բարձր առնէ զեղջիւր օծելոյ
իւրոյ։

Փառք հօր և որդւոյ և։

ՄԱՂԹԱՆԻ

Բարձրացաւ եղջիւր իմ յաստուած
փրկիչ իմ. հաստատեցաւ սիրտ իմ
ի տէր տերամբ և հաւատով։
Մարդասէր տէր, վասն սրբութեանդ
նարատի մօր քոյ և կուսի, և վասն
խաչի քո պատուականի, տէր ընկալ
զաղաչանս մեր և կեցո զմեզ։

Վասն գտանելոյ մեզ զՀնորհս և
զողջմտութիւն՝ ի բարերար տեառնէ
մերմէ, զտէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։
Վասն փրկելոյ զմեզ՝ ի զրպարտու-
թենէ մարդկան և յորոգայթից սա-
տանայի, զտէր աղա։
Վասն ամենայն անձանց քրիստոնէից
և տանց հաւատացելոց, զտէր աղա։
Վասն որք՝ ի լերինս յայրս և՝ ի վա-
պարս բնակեալ են սուրբք հարքն մեր,
զտէր աղա։
Վասն որք սաղմոսիւք և օրհնու-
թեամբ կատարեն զամենայն ժամա-
նակս կենաց իւրեանց, զտէր աղա։
Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք
ճշմարիտ և ուղիղ հաւատով՝ ի քրի-
ստոս ննջեցին, զտէր աղա։
Եւ եւս՝ միաբան վասն։ Ձանճինս։
Ողորմեաց։

ԱՂՕԹՔ

Գոհանամք զքէն տէր աստուած մեր,

որ զարթուցեր զմեզ՝ ի հանգստենէ
քնոյ չնորհիւ ողորմութեան քո։
Զարթո զմիտս մեր արդարութեամբ
առ քեզ տէր աստուած մեր, զի տես-
ցեն աչք մեր զփրկութիւն քո։ Ե-
կեսցէ և բնակեսցէ առ մեզ աստ-
ուածութիւն քո, և ողորմութիւն
քո հովանի և պահապան լիցի՝ ի վե-
րայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծա-
ռայքս քո արժանի արա՝ ի տուէ և
՝ի գիշերի և յամենայն ժամու միշտ
խորհիլ՝ ի սէր պատուիրանաց քոց։
Եւ գոհանալով փառաւորել զՀայր
և զորդի և զսուրբ հոգիդ այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից,
ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիրպագեսցուք։

Կենդանարար զօրութիւն և աղբիւր
անմահութեան, դու ես քրիստոս
աստուած փրկիչ մեր։ Որ չնորհեցեր
մեզ՝ ի մէջ գիշերի յառնել և խոստո-
վան լինիլ առ քեզ վասն իրաւանց և


արդարութեան քո: Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր աստուած մեր, արա զմեզ արժանս և պատրաստս ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո: Եւ ընդ նոսին դոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄԱՂԹԱՆԻ

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգի այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր:

Հայր մեր որ յերկինս:



Թակեցին զձեռս իմ և զոտս իմ. և բոշեցին զաւեւնայն ոսկերս իմ. նորա հայեցան և տեսին զիս:

ՍԱՂՄՈՍ ՀԲ.

Պաղտոս յասարի · օրհնուբեան :

Ի բերե զի բարի է իսրայէլի աստուած , և ոչ ուղիղ են սրտիւք :
Բայց զի իմ փոքր մի եւս սասանեալ էին ոտք . սակաւիկ մի և գայթակղեալ էին գնացք իմ :
Նախանձեցայ ես ընդ անօրէնս . զխաղաղութիւն մեղաւորաց որպէս տեսանէի , զի ոչ գոյր վրէպ մահու նոցա :
Հաստատուն են տանջանք նոցա . ՚ի վաստակս մարդկան չեն նոքա , և ըստ մարդկան ոչ տանջեսցին :
Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտաւանութիւն . արկին զիւրեամբք զամբարշտութիւն և զանիրաւութիւն իւրեանց :
Ելիցէ որպէս ՚ի ճարպոյ անիրաւութիւն նոցա . զի գնացին նոքա ըստ

խորհրդոց սրտից իւրեանց։
Խորհեցան և խօսեցան չարութեամբ.
և զապիրատութիւն ՚ի բարձունս
խորհեցան։
Եդին յերկինս զբերանս իւրեանց, և
լեզու իւրեանց ածէին ի վերկրաս։
Վասն այսորիկ ժողովուրդ իմ դարձ-
ցի այսրէն. և աւուրք իմ լի կա-
տարեալ գտցին ՚ի նոսա։
Ասացին զիա՞րդ գիտաց աստուած.
կամ գուցէ արդեօք գիտութիւն
առ ՚ի բարձրելոյն։
Ահա մեղաւորք են և յաջողեալ է
նոցա. կան և ունին զմեծութիւն
աշխարհի։
Ասացի՝ ՚ի զուր ուրեմն արդարա-
ցուցի զսիրտ իմ, լուացից սրբու-
թեամբ զձեռս իմ. և եղէ ես խոշ-
տանկեալ զօրհասապատ. և կշտամբ
բանք իմ ընդ առաւօտս։
Թէպէտ և ասէի՝ Թէ այսպէս պատ-
մեցից՝ ահաւասիկ յազգ որդւոց
քոց՝ որոց և ուխտեցից։
Իմաւ եղէ, Թէ սակայն և այս ջան

է առաջի իմ, մինչեւ մտից ՚ի սրբու-
թիւնն աստուծոյ և ՚ի միտ առից
վախճան նոցա։
Սակայն վասն նենգութեան նոցա
տապազիր արասցես զնոսա, և կոր-
ծանեսցես զնոսա յամբարտաւանու-
թեան իւրեանց։
Իսկ զիա՞րդ եղեն յաւեր յանկարծա-
կի. սատակեցան պակասեցան կորեան
վասն անօրէնութեան իւրեանց, և ե-
ղեն որպէս երազ զարթուցելոյ։
Տէր ՚ի քաղաքի քում զպատկերս նո-
ցա անարգեսցես, զի հուր բորբո-
քեցաւ ՚ի սրտի իմում, և երիկամունք իմ այլազունեցան։
Եւ արհամարհեալ եղէ, և ոչ գի-
տացի. որպէս զանասուն համարե-
ցայ առաջի քո, և ես յամենայն ժամ
ընդ քեզ եմ։
Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ՚ի խոր-
հուրդս քո առաջնորդեցեր ինձ, և
փառօք ընկալար զիս։
Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ՚ի
քեն զի՞նչ եւս խնդրեցից յերկրի։

Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ. աստուած սրտի իմոյ, բաժին իմ աստուած յաւիտեան:

Ահաւասիկ որք հեռի արարին զանձինս իւրեանց ի քէն՝ կորիցեն. սատակեցեր զամենեսեան՝ որք սպրդոտամբ եղեն ի քէն:

Ինձ մերձենալ առ աստուած բարի է, և դնել առ տէր զյոյս իմ:

Պատմել զամենայն օրհնութիւնս քո, ի դրունս դստերը սիովնի:

Տունք խդ:

ՍԱՂՄՈՍ ՀԴ.

Խնամատոքիւն յաստուած:

Ընդէր մերժեցեր աստուած յապաւա. բարկացաւ սրտմտութիւն քո ի վերայ խաշինն արօտի քո:

Յիշեա զժողովուրդ քո՝ զոր ստացար ի սկզբանէ. փրկեցեր գվիճակ ժառանգութեան քո:

Լեառն սիօն այս՝ ուր բնակեցար դու ի սմա. համբարձ զձեռն քո ի վերայ ամբարտաւանութեան նոցա յապաւա:

Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ի սրբութեան քում. պարծեցան ատելիք քո ի մէջ բարեկենդանութեան իւրեանց:

Եդին զնշանս իւրեանց ի նշանս, և ինքեանք ոչ ծանեան զելս ի վերուստ:

Որպէս յանտառի փայտատօք կոտորեցին զդրունս նորա, ի միասին փայտատօք և մրճօք կործանեցին զնա:

Այրեցին ի հուր զսրբութիւն քո յերկրի. պղծեցին զխորան անուան քո:

Ասացին ի սիրտս իւրեանց ազգք նոցա ի միասին, եկայք լռեցուսցուք զամենայն տօնս աստուծոյ յերկրէ:

Նշանս մեք ինչ ոչ տեսաք, և ոչ եւս գոյցէ մարգարէ, և զմեզ ոք ոչ ճանաչիցէ:

Մինչեւ յե՞րբ աստուած՝ նախատէ թշնամին, բարկացուցանէ հակառակորդն զանուն սուրբ քո:

Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո, և զաջ քո ի միջոյ ծոցոյ քումմէ խապաւ:

Աստուած թագաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս, որ արարեր զփրկու-

Թիւն ’ի մէջ երկրի։

Դու հաստատեցեր զօրութեամբ քով զծով, դու խորտակեցեր զգլուխ վիշապին ’ի վերայ ջուրց։

Դու փշրեցեր զգլուխ վիշապին, և ետուր զնա կերակուր զօրացն հընդկաց։

Դու բղխեցուցեր զաղբիւրս և զվտակս. դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս։

Քո է տիւ և քո է գիշեր. զլոյս և զարեւ դու արարեր. և դու հաստատեցեր զամենայն սահմանս երկրի. զդարուն և զամառն դու ստեղծեր։

Ա՛յս յուշ լեսի քեզ՝ զի թշնամին նախատեաց զտէրդ. ժողովուրդ անզգամ բարկացոյց զանուն սուրբ քո։

Մի մատներ գազանաց զանձն՝ որ խոստովան առնի առ քեզ. և զանձինս տկնա անանկաց քոց մի մոռանար խռսաո։

Հայեաց յուխտ քո, զի լցան տունք ապիրատ երկրի անիրաւութեամբ։

Մի դարձցի տնանկն ամաչեցեալ.

այլ աղքատք և տնանկք օրհնեսցեն զանուն սուրբ քո։

Արի աստուած և դատեա զդատաստանս քո. յիշեա զնախատինս՝ որ յանդգնէն զօրհասն քեզ։

Մի մոռանար զձայն պաշտօնէից քոց. ամբարտաւանութիւն ատելեաց քոց վերացեալ հանապազ։

Տունք իբ։ Գոբզայս խզ։

ՍԱՂՄՈՍ ՀԴ.

Ի կատարած. մի՛ ապականիր. ընդ օրհնութիւն։ Սաղմոս շարական. երգ առ առաքեստաւնեայս։

Խոստովան եղիցուք առ քեզ աստուած, խոստովան եղիցուք և կարդասցուք զանուն սուրբ քո։

Պատմեցից զամենայն սքանչելիս քո. յորժամ ժամ առից, ես ուղիղ դատեցից։

Մաշեցան երկիր և ամենայն բնակիչք նորա, ես հաստատեցի զսիւնս նորա։

Ասացի անօրինաց, մի՛ անօրինիք. և մեղաւորաց, մի՛ բարձրացու-

ցանէք զեղջիւրս ձեր։

Մի՛ համբառնայք՝ի բարձունս զեղջիւրս ձեր, և մի՛ խօսիք զաստուածոյ անիրաւութիւն։

Զի ոչ յարեւելից և ոչ յարեւմտից և ոչ յանապատէ լերանց. այլ աստուած դատաւոր է։

Զայս խոնարհ առնէ, և զայն բարձրացուցանէ. բաժակ՝ի ձեռին տեառն գինի լի անապակ արկեալ. և խոնարհեցուցանէ յայսմանէ յայս։

Սակայն մրուր նորա ոչ սպառեսցի. և արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի։

Ես ցնծացայց յաւիտեան. սաղմոս ասացից աստուածոյ յակոբայ։

Զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես. և բարձր եղիցի եղջիւր արդարոյ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՀԵ.

Ի կատարած, ընդ օրհնութիւն. մի՛ ապականիր։ Սաղմոս յասափ. երգ առ ասորեստանեայս։

Յայտնի է՝ի հրէաստանի աստուած.

և յիսրայէլ մեծ է անուն նորա։

Եղեւ՝ի խաղաղութեան տեղի նորա. և բնակութիւն նորա՝ի սիօն։

Անդ խորտակեաց տէր զզօրութիւն աղեղան, զվէն զսուր և զճակատամարտ։

Լուսաւոր ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից. խռովեցան ամենեքեան որք անմիտք են սրտիւք. ննջեցին զքունս իւրեանց, և ինչ ոչ գտին։

Ամենայն արք՝ի մեծութեան ձեռաց իւրեանց՝ի սաստէքդ քումմէ աստուած յակոբայ ննջեցին, և այք հեծեալ էին՝ի ձիս։

Դու ահաւոր ես, և ո՞վ կարէ կալ առաջի քո. որպէս երեւեցար դու յերկնից, յայտնի եղեւ բարկութիւն քո։

Երկիր երկեաւ և ապրեցաւ ընդ յառնելն աստուծոյ՝ի դատաստան, ընդ ապրեցուցանել զամենայն հեզս երկրի։

Խորհուրդ մարդկան խոստովան առնին առ քեզ. և ծածկեալք խմաստութեամբ օրհնեսցեն զքեզ։

Ուխտս դիք՝ և կատարեցեք տեառն աստուածոյ մերոյ, ամենեքեան որք շուրջ էք զնովաւ։

Մատուցէք պատարագս ահաւորին. ո՛ք քաղէ զհոգիս իշխանաց, ահաւոր է նա քան զամենայն թագաւորս երկրի։

Տուն ք ։

ՍԱՂՄՈՍ ՀԶ։

Ի կատարած. վասն Իդիթումայ. Սաղմոս յասաւի։

Զայնիւ իմով ես առ տէր կարդացի. ձայնիւ իմով առ աստուած, և նա յեցաւ առ իս։

Յաւուր նեղութեան իմոյ զաստուած խնդրեցի ձեռօք իմովք. և՝ ի գիշերի առաջի նորա ոչ խաբեցայ։

Ոչ կամեր մխիթարել անձն իմ. յիշեցի զաստուած՝ և ուրախ եղէ. հոգայի, և նուաղիւր յիս հոգի իմ։

Ժամանեցին պահուց աչք իմ. խռովեցայ և ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն զառաջինս, և զամսն յաւիտենից յիշեցի։

Խօսեցայ՝ ի գիշերի ընդ սրտի իմում. հոգայի՝ և տառապեր յիս հոգի իմ։

Մինչե՞ յաւիտենից մերժեսցէ՞ զիս տէր, և ո՞չ ևս յաւելցի՝ ի հաճիլ և ևս։

Կամ իսպառ արգելցի՞ զողորմութիւն իւր յինէն. կամ կատարեա՞ց զբան իւր ազգէ մինչեւ՝ յազգ։

Կամ մոռասցի՞ զթալ աստուած իմ և եւս. կամ արգելցի՞ զգթութիւն իւր բարկութեամբ իւրով։

Ասացի՝ թէ այժմ սկսայ. այս է նոր փոփոխմն աջոյն բարձրելոյն։

Յիշեցի զգործս տեառն՝ ի սկզբանէ. յիշեցի՝ զսքանչելիս նորա։

Խորհեցայ յամենայն գործս քո, և՝ ի ձեռագործս քո խորհեցան։

Աստուած՝ ի սրբութեան են ճանապարհք քո. ո՞վ է աստուած մեծ՝ որպէս զաստուած մեր. դու ես աստուած, որ առնես զսքանչելիս։

Յուցեր ժողովրդեան քում զզօրութիւն քո. փրկեցեր բազկաւ քով զժողովուրդս քո, զորդիսն յակոբայ և յովսեփու։

Տեսին զքեզ Ջուրք աստուած, տեսին զքեզ Ջուրք՝ և երկեան. խորք խառ-
վեցան ՚ի ձայնէ Ջուրց բազմաց։
Զայն եւս ունամբք. քանզի և նետք քո դնան ՚ի ձայնէ որոտալոյ քո անուն։
Երևեցան փայլատակունք քո տիեզերասյ. խառնվեցաւ և դողաց երկիր։
Ի ծովու են ճանապարհք քո, և շաւիղք քո ՚ի Ջուրս բազումս. և հետք քո ոչ երեւին։
Առաջնորդեցեր որպես խաշինն ժողովրդեան քո, ՚ի ձեռն Մովսէսի և Ահարոնի։

Տունք ժբ։ Գոքզայս լբ։

ՍԱՂՄՈՍ ՀԵ.

Խնամատոքիւն յաստի։

Ականջալուր եղիցիս ժողովրդիդ իմ. խոնարհեցուսցէ զունկն ձեր ՚ի բանս բերանոյ իմոյ։
Բացից առակաւ զբերան իմ, և խօսեցայց զառակս ՚ի սկզբանէ։
Որպէս լուաք՝ և ծանեաք զայս, և

հարքն մեր պատմեցին մեզ։
Ոչինչ ծածկեցաւ յորդւոց նոցա յաղդ յաղդ, պատմել զօրհնութիւնս տեառն, զզօրութիւն և զսքանչելիս իւր զոր արար։
Հաստատեաց վկայութիւն ի Յակոբ, և օրէնս եդ ՚ի վերայ Իսրայէլի։
Որ ինչ միանգամ պատուիրեաց հարցն մերոց, ցուցանել զայս որդւոց իւրեանց, զի ծանիցեն յազդ յազդ։
Որդիք որք ծնանին յարիցեն, և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց։ զի դիցեն առ աստուած զյոյս իւրեանց և մի՛ մոռասցին զգործս աստուծոյ։
Զպատուիրանս նորա խնդրելով խնդրեսցեն. և մի՛ եղիցին օրպէս և հարքն իւրեանց։
Ազգ չար և դառնացող, ազգ որ ոչ ուղեաց զսիրտ իւր, և ոչ հաստատեաց առ աստուած զհոգի իւր։
Որդիք Եփրեմի լինաչիգք և պնդաձիգք, յաւուր պատերազմի կապարձըս դարձուցին։
Ոչ կացին նոքա յուխտի տեառն, և

ըստ իրաւանց նորա ոչ կամեցան գնալ։
Մոռացան զերախտիս նորա, և զըս-
քանչելիսն՝ զոր եցոյց նոցա։
Առաջի հարց նոցա զոր արար զեքան-
չելս իւր, յերկրին եգիպտացւոց և
՚ի դաշտին տայանու։
Էհերձ զծովն՝ և անցոյց զնոսա. և
կացոյց զջուրսն որպէս ՚ի տիկս։
Առաջնորդեաց նոցա ամպով՚ի տուէ,
և զամենայն գիշեր ՚ի լոյս հրոյ։
Էհերձ զվէմն յանապատին, և եղմ
պել նոցա որպէս ՚ի խորոյ մեծի։
Եհան զջուրսն ՚ի վիմէն. և հոսեաց
որպէս զգետս զջուրսն։
Սակայն յաւելին ՚ի մեղանչել, և եւս
բարկացուցին զբարձրեալն յանջրդի։
Փորձեցին զաստուած ՚ի սիրտս իւր-
եանց, ՚ի խնդրել զկերակուր անձանց
իւրեանց։
Տրտնջեցին զաստուածոյ և ասացին.
միթէ կարո՞ղ իցէ աստուած պատ-
րաստել սեղան յանապատի։
Քանզի հարկանէր զվէմն՝ և հոսէին
ջուրք, և վտակք խաղային ՚ի նմանէ։

Աղէ՝ հաց եւս կարասցէ տալ նա
մեզ. կամ պատրաստեսցէ սեղան ժո-
ղովրդեան իւրոյ։
Վասն այսորիկ լուաւ զայս տէր և
յատաղեաց. հուր բորբոքեցաւ ՚ի
յակովբ, և բարկութիւն ել ՚ի վե-
րայ իսրայէլի։
Զի ոչ հաւատացին յաստուած, և
ոչ յուսացան ՚ի փրկութիւն նորա։
Հրամայեաց ետ ամպոց ՚ի վերուստ, և
զդրունս երկնից եբաց, և տեղեաց
՚ի նոսա զմանանայ ՚ի կերակուր։
Զհաց երկնից ետ նոցա, զհաց հր-
բեշտակաց կերան մարդիկ, և իջոյց
՚ի նոսա զկերակուր ՚ի լիութիւն։
Եհան զհողմն հարաւոյ, և էած զո-
րութեամբ իւրով զհիւսիսեայս։
Տեղեաց ՚ի նոսա միս որպէս զհող.
որպէս զաւազ ծովու զթռչունս թե-
ւաւորս։
Էարկ ՚ի մէջ բանակի նոցա, և շուրջ
զվրանօք նոցա։
Կերան և յագեցան յոյժ. և զցանկու-
թիւն նոցա ետ նոցա. և ոչինչ կարօտ

եղեն ի ցանկութենէ իւրեանց։
Մինչդեռ կերակուրք ի բերանս իւր
եանց էին, բարկութիւն յաստուծոյ
ել ի վերայ նոցա։
Սպան զբազումս ի նոցանէ, և զընտ
րիս ըմբիրս իսրայէլի սատակեաց։
Յայսմ ամենայնի մեղան և եւս. և ոչ
հաւատացին սքանչելեացդ նորա։
Պակասեցան յուսոյնութեան աւուրք
նոցա, և ամք նոցա փութապէս անցին։
Յորժամ սպանանէր զնոսա՝ խնդրէին
զնա. դառնային և առաւօտ առնէ
ին առ աստուած։
Յիշէին՝ զի աստուած օգնական էր
նոցա. աստուած բարձրեալ փրկիչ
էր նոցա։
Սիրեցին զնա բերանօք իւրեանց, և
լեզուօք իւրեանց ստեցին նմա. և
սիրտք նոցա ոչ էին ուղիղք ընդ նմա,
և ոչ հաւատացին ուխտի նորա։
Ա՛յլ նա ինքն գթած էր. քաւէր ըն
դ մեզս նոցա, և ոչ սպանանէր։
Յաճախէր դարձուցանել զբարկու
թիւն իւր. և ոչ բորբոքէր զամենայն

սրտմտութիւն իւր։
Յիշեաց՝ թէ մարմին են նոքա. հոգի
որ երանէ, այլ ոչ եւս դառնայ։
Քանիցս անգամ դառնացուցին զնա
յանապատի. և բարկացուցին զբարձ
րեալն յանջրդի։
Դարձան և փորձեցին զաստուած,
և զսուրբն իսրայէլի զայրացուցին։
Ոչ յիշեցին զձեռն նորա, յաւուր
յորում փրկեաց զնոսա ի ձեռաց
նեղչաց նոցա։
Որպէս արար զնշանս և զարուեստս
իւր յերկրին եգիպտացւոց. և ի
դաշտին տայանու։
Դարձոյց յարիւն զգետս նոցա, և
զանձրեւս նոցա՝ զի մի արբցեն։
Առաքեաց ի նոսա շանաճանճ և ե
կեր զնոսա. և գորտիս ապական
եաց զնոսա։
Եւ ժանկոյ զպտուղս նոցա, և զվաս
տակս նոցա մարախոյ։
Եհար կարկտիւ զայգիս նոցա, և
զթզենիս նոցա եղեմամբ։
Մատնեաց ի կարկուտ զանասունս

նոցա. և զստացուածս նոցա հրով
դատեաց:
Առաքեաց ՚ի նոսա զբռնամոլութիւն
բարկութեան իւրոյ, զբռնամոլութիւն
զբարկութիւն և զնեղութիւն:
Առաքեաց ՚ի նոսա տանջանս ՚ի ձեռն
հրեշտակի չարի. և գիմեցոյց ՚ի նոսա
զբռնամոլութիւն բարկութեան իւրոյ:
Ոչ անխայեաց ՚ի մահ ածանէ զանձինս
նոցա. և զանասունս նոցա ՚ի մահ
մատնեաց:
Եհար զամենայն անդրանիկս եգիպ-
տացւոց, զսկիզբն ամենայն վաստա-
կոց նոցա ՚ի յարկս քամայ:
Հոդան եւս որպէս խաչին ժողովրդ-
դեան իւրոյ. և եհան զնոսա որպէս
զՀօտ յանապատ:
Առաջնորդեաց նոցա յուսով, և ոչ
երկեան, և զթշնամիս նոցա ծով
ծածկեաց:
Եհան զնոսա ՚ի լեառն սրբութեան
իւրոյ, ՚ի լեառն այն՝ զոր ստացաւ աջ
նորա:
Մերժեաց յերեսաց նոցա զհեթանո-

սս, և վիճակեցոյց ՚ի նոսա զվիճակ
ժառանգութեան իւրոյ, և բնակե-
ցոյց ՚ի յարկս նոցա զազգն իսրայէլ:
Փորձեցին զառնացուցին զաստուած
բարձրեալն, և զվկայութիւն նորա
ոչ պահեցին:
Դարձան խոտորեցան որպէս և հարք
քըն իւրեանց. դարձան և եղեն որ-
պէս զաղեղն թիւր:
Դարձեալ բարկացուցին զնա ՚ի բա-
գինս իւրեանց, և դիւոչխրովք իւր-
եանց նախանձ արկին նմա:
Լուաւ աստուած, և արհամարհեաց
զնոսա, և անարգեաց յոյժ զնոսրայէլ:
Մերժեաց յիւրմէ զնորան ՚ի սելովմ,
զնորանն՝ զոր բնակեցոյց ՚ի մէջ մարդ-
կան:
Մատնեաց ՚ի գերութիւն զզօրու-
թիւնս նոցա, և զգեղս նոցա ՚ի ձեռս
թշնամեաց նոցա:
Արգել ՚ի սուր զժողովուրդ իւր. և
զժառանգութիւն իւր անտես արար:
Զերիտասարդս նոցա եկեր հուր. և
վանն կուսանաց նոցա ոչ ոք սգացաւ:

Գահանայք նոցա անկան ի տուր. և զայրիս նոցա ոչ ոք էր որ լայր։
Զարհեաւ որպէս ի քնոյ տէր, որպէս հզօր զի Թաւիլ զդինի։
Եհար յետս զթշնամիս իւր, և նախատինս յաւիտենից արար զնոսա։
Մերժեաց նա զխորանն յովսեփու, և զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց։
Այլ ընտրեաց նա զազգն յուդայ. զլեառն սիօն, զոր և սիրեաց։
Շինեաց որպէս միեղջերուի զբրբուքիւն նորա, յերկրի հաստատեաց զնա յաւիտեան։
Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր, և ընկալաւ զնա ի հօտէ խաշանց. ի վերջին ծնելոցն ընկալաւ զնա։
Հովուել զյակոբ ծառայ իւր, և զիսրայէլ ժառանգութիւն իւր։
Արածէր զնոսա իմաստութեամբ սրտի իւրոյ. յանմեղութիւն ձեռայ իւրոյ առաջնորդէր նոցա։

Ցունք հգ։

ՍԱՂՄՈՍ ՀԵ։

Սաղմոս յաստափ։

Աստուած մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո. պղծեցին զտաճար սուրբ քո։
Արարին զերուսաղէմ որպէս զհիւղս մրգատահաց. արկին զդիակունս ծառայից քոց պետ Թռչնոց երկնից, և զմարմին սրբոց քոց զազանաց երկրի։
Հեղին զարիւն նոցա որպէս ջուր շուրջ զերուսաղէմաւ. և ոչ ոք էր որ Թաղէր զնոսա։
Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր և այպան կատականաց այնոցիկ, որ շուրջ էին զմեօք։
Մինչեւ յե՞րբ տէր՝ բարկանաս դու յապառ. բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։
Հեղ զբարկութիւն քո ի վերայ ազգացն՝ որք զքեզ ոչ ճանաչեցին. ի վերայ Թագաւորացն՝ որք զանուն քո ոչ կարդացին. զի կերին զյակոբ և զտեղի նորա աւերեցին։

Մի՛ յիշեր զմեզս մեր զառաջինս. վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւնն քո տէր, զի աղքատացաք յոյժ։
Օգնեա մեզ աստուած փրկիչ մեր վասն փառաց անուան քո։
Տէր փրկեա՛ զմեզ և քաւեա՛ զմեզս մեր վասն անուան քոյ։
Մի՛ երբէք ասասցեն ՚ի հեթանոսս, թէ ո՛ւր է աստուած նոցա։
Այլ յայտնի լինի ՚ի վերայ հեթանոսաց առաջի աչաց մերոց, առ ՚ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց՝ որ և հեղաւ։
Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց. ըստ մեծութեան բազկի քո հանեա դու զորդիս սպանելոց։
Հատո դրացեաց մերոց եօթնապատիկ ՚ի ծոց նոցա, զնախատինս իւրեանց զոր նախատեցին զքեզ տէր։
Մեք ժողովուրդք և խաշն արօտի քոյ՝ խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան. ազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո։

ՍԱՂՄՈՍ ՀԹ.

ի կատարած. ՚ի վերայ զառանցելոցն վկայութիւն, Սաղմոս յաւուրհայ. ՚ի վերայ երովպագչոցն։

Որ հովուեսդ իսրայէլի՝ նայեաց, որ առաջնորդես որպէս խաշին յովսեփոս։
Որ նստիս ՚ի քրովբէս՝ յայտնեաց առաջի եփրեմի, բենիամինի և մանասէի։
Զարթո զզօրութիւնս քո, և եկ ՚ի կեցուցանել զմեզ։
Աստուած զօրութեանց դարձո զմեզ, երեւեցո զերեսս քո ՚ի մեզ, և կեցցուք։
Տէր աստուած զօրութեանց, մինչեւ յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց։
Ջամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով։
Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց, այսն կատականայ թշնամեաց մերոց։

Աստուած զօրութեանց դարձո զմեզ,
երեւեցո զերեսս քո՝ի մեզ և կեցցուք։
Այդի յեդիպտոսէ փոխեցեր. հա-
ներ զհեթանոսս՝ և զնոսա տնկե-
ցեր, և առաջնորդեցեր նմա։
Հաստատեցեր զարմատս նորա՝ և ե-
լից զերկիր. ծածկեաց զլերինս հո-
վանի նորա, և բարուենակ նորա զե-
մայրս աստուծոյ։
Զգեաց զորթ իւր մինչեւ՝ի ծով,
մինչեւ՝ի գետս են շառաւիղք նորա։
Ընդէր քակեցեր զցանկ նորա, և կո-
ղեն զնա անցաւորք ճանապարհի։
Ապականեաց զնա խոզ անտառի, և
երեվելոյն արածեցաւ՝ի նմա։
Աստուած զօրութեանց, դարձ հայ-
եաց յերկնից և տես. այց արա այդ-
ոյս այգւոյ, և դարման տար ամե՝
զոր տնկեաց աջ քո։
Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացու-
ցեր զնա՝ի քեզ. այրեցեալ՝ի հուր և
տաբեալ, ՚ի սատակ քո եմիկ կորնչիցէ։
Եղիցի ձեռն քո՝ի վերայ առն, աջ
քո՝ի վերայ որդւոյ մարդոյ, զոր զօ-

րացուցեր զնա՝ի քեզ։
Ոչ եւս՝ի բացեայ եղիցուք մեք՝ի
քէն. կեցուսցես զոս զմեզ, և զա-
նուն քո տէր կարդասցուք։
Աստուած զօրութեանց, դարձ զզ-
մեզ. երեւեցո զերեսս քո՝ի մեզ, և
կեցցուք։

Տունք ԺԸ։

ՍԱՂՄՈՍ Զ.

ի կատարած. վասն հինաւնաց։ Սաղմոս յատուկ հիւգերորդ շաբաթուց։

Ցնծացէք առ աստուած, օգնական է
մեր. աղաղակեցէք առ աստուած
յակոբայ։
Առէք սաղմոս, և տուք օրհնութիւն.
սաղմոս ասացէք նմա՝ի ձայն քաղց-
րութեան։
Փող հարէք՝ի գլուխս ամսոյ, յաւուր
նշանաւորի տաբեկանաց մերոց։
Հրաման է այս իսրայէլի, և իրա-
ւունք են աստուծոյ յակոբայ։
Վկայութիւնն յուսեփուս՝ զոր ելն ընդ
նմա, որպէս ելանէր նա յերկրէն եգիպ-

տացուց, լեզու զոր ոչ գիտեր՝ լսաւ։
Իբաց աստ՚ի բեռանց զքիւրնա
նորա, և զձեռս նորա յորմէ և՚ի
լծի ծառայելոյ։
Ի նեղութեան կարգացեր առ իս՝ և
փրկեցի զքեզ. լսայ քեզ՚ի գաղտ
նութենէ մրրկին, և փորձեցի զքեզ
՚ի վերայ ջուրցն հակառակութեան։
Լուր ժողովուրդ իմ՝ և վկայեմ քեզ,
և իսրայէլ՝ թէ լսելիս լինիս։
Մի եւս եղիցին քեզ աստուածք առ
ժամայնք, և մի երկիրպագանիցես
դու աստուծոյ օտարի։
Ես եմ տէր աստուած քո՝ որ հանի
զքեզ յերկրէն եգիպտացւոց. բաց
զբերան քո՝ և լցից զդա։
Ժողովուրդ իմ ոչ լսաւ ձայնի իմում,
և իսրայէլ ոչ նայեցաւ։
Բարձի թողի զնոսա ելիթալ ըստ կա
մաց սրտից իւրեանց, զի դնացին նո
քա ըստ կամս անձանց իւրեանց։
Զի թէ ժողովրդեան իմոյ լսեալ էր
լինէր, կամ իսրայէլի զճանապարհս իմ
դնացեալ էր։

Որպէս ոչինչ խոնարհ արարեալ էր
իմ զթշնամիս նորա, և՚ի վերայ նեղ
չացս նորա արկեալ էր զձեռն իմ։
Թշնամիք տեառն ստեցին նմա, և ե
ղիցին ժամանակք նոցա յաւիտեան։
Կերակրեաց զնոսա՚ի պարարտու թե
նէ ցորենոյ, և՚ի վիմէ մեղր յագե
ցոյց նոցա։

Տունք ԺԷ։

ՍԱՂՄՈՍ ՁԱ։

Սաղմոս յաւուրս։

Աստուած եկաց՚ի ժողովս աստու
ծոց, և՚ի միջի նոցա դատէր զնոսա։
Մինչեւ յե՞րբ դատէք անիրաւու
թեամբ, և ակն առնուք մեղաւորաց։
Դատ արարէք որբոյն և այրուց. իրա
ւունս արարէք տնանկին և խոնարհի։
Ապրեցուցէք զազքատն և զանանկն,
՚ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա։
Ոչ իմացան և ոչ՚ի միտ առին, ՚ի խա
ւարի գնացին, և շարժեցան ամե
նայն հիմունք երկրի։
Ես ասացի՝ թէ աստուածք իցէք, կամ

որդիք բարձրելոյն ամենեքեան ։
Դուք ահաւադիկ որպէս զմարդիկ մեռանիք, և որպէս զմի յիշխանաց անկանիք ։
Արի աստուած, և դատեա զերկիր, զի դու ժառանգեսցես զամենայն հեթանոս ։

Տունք ը։ Գոբղայս ծբ ։

ՍԱՂՄՈՍ ՁԲ·

Օրհնութիւն · Սաղմոս յաւուրս ։

Աստուած ո՞ քեզ նմանիցի. մի՛ լռեր և մի՛ դադարիր աստուած ։
Զի ահա թշնամիք քո գոչեցին, և ատելիք քո համբարձին զգլուխ իւրեանց ։
Ի վերայ ժողովրդեան քո խորամանկեցին զդիտութիւն, խորհեցան ՚ի վերայ սրբոց քոց և ասացին ։
Եկայք սատակեսցուք զնոսա յազգաց, և մի՛ յիշեսցին անուն իսրայէլի և եւս։
Խորհեցան միաբանութեամբ ՚ի միասին, և վասն քո ուխտ արարին ։
Բանակք եդոմայեցւոց և իսմայելացիք, մովաբ և հագարացիք ։
Գեբաղ՝ ամօն՝ ամաղէկ, և այլազգիքն ամենայն բնակիչքն հանդերձ ծուրայ ։
Նա և ասուր եկեալ էր ընդ նոսա. ամենեքեան սոքա զօրավիգն էին որդւոցն ղովտայ ։
Արա զնոսա որպէս զմադիամ, որպէս զսիսարայ, և որպէս զաբին ՚ի ծովն կիսոնի ։
Սատակեցան նոքա յականս դովրայ, և եղեն որպէս զաղբ երկրի ։
Արա զնիշխանս նոցա որպէս զօրէբն, զեբն, զզէբէէ, և զսաղմանա, և զամենայն իշխանս նոցա ։
Որ՛ք ասացին՝ ժառանգեսցուք ՚ի մեզ զսրբութիւն աստուծոյ ։
Աստուած իմ՝ արա զնոսա որպէս զանիւ, և որպէս զեղէգն առաջի հողմոյ ։
Որպէս հուր՝ զի այրէ զանտառս. որպէս բոց՝ զի կիզուս զլերինս ։
Այսպէս հալածեսցես զնոսա մրրկաւ քով, և բարկութեամբ քով խռովեցուսցես զնոսա ։
Լիո զերեսս նոցա անարգանօք, և

խնդրեսցեն զանուն քո տէր ։
Ամաչեսցեն և խռովեսցին յաւիտեա՝
նըա յաւիտենից, և ամօթալից կո՛
րիցեն ։
Ծանիցեն զի անուն քո տէր է, և
դու միայն բարձրեալ ես ՚ի վերայ
ամենայն երկրի ։
Տունք ժը ։

ՍԱՂՄՈՍ ՁԳ.

Ի կատարած : վասն հնձանացն · որդւոցն Կորհայ · Սաղմոս դաշտի :

Ո՛րպէս սիրելիք են յարկք քո տէր
զօրութեանց, ցանկայ և վհատի
անձն իմ ՚ի դաւիթս քո ։
Սիրտ իմ և մարմին իմ ցնծացեն առ
աստուած կենդանի ։
Քանզի ճնճղուկ եդիտ իւր տուն, և
տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր ։
Սեղան քո տէր զօրութեանց, թա՛
գաւոր իմ և աստուած իմ ։
Երանի ամենեցուն՝ որ բնակեալ են
՚ի տան տեառն, յաւիտեանս յաւի՛
տենից օրհնեսցեն զքեզ ։
Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն

իւր ՚ի քէն է · ելս եդ ՚ի մտի իւրում
՚ի հովտէս տրտմութեան ՚ի տեղւոջ՝
յորում ոչխարաց ։
Զօրհնութիւն առասցի՝ որ զօրէն
դնէ, գնասցէ նա ՚ի զօրութենէ ՚ի
զօրութիւն, և երեւեսցի աստուած
հրեշտակաց ՚ի սիօն ։
Տէր աստուած զօրութեանց՝ լուր
աղօթից իմոց · ունկն դիր աստուած
յակոբայ ։
Ընդունող ես դու մեր, տես աստ՛
ուած և նայեաց յերեսս օծելոյ քո ։
Վասն զի լաւ է ինձ մի օր ՚ի գաւի՛
թս քո, քան զհազարս ։
Ընտրեցի ես ընդ աղբ գալ ՚ի տան
աստուծոյ առաւել, քան բնակա՛
նալ ՚ի յարկս մեղաւորաց ։
Զողորմութիւն և զճշմարտութիւն
սիրէ տէր աստուած մեր, զշնորհս
և զփառս տացէ ։
Տէր ոչ պակաս առնէ զողորմութիւն
իւրոյ յանցանէ, որ գնան յամբծու՛թեան ։
Տէր աստուած զօրութեանց, երան՛
եալ է այր՝ որ յուսայ ՚ի քեզ ։
Տունք ժդ ։

ՍԱՂՄՈՍ ՁԴ.

Ի կատարած · որդւոցն կորխայ · Սաղմոս դաւթի:

Հաճեցար տէր բնդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն յակոբայ:
Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քոյ, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա:
Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, և դարձար 'ի բարկութենէ սրտմտութեան քո:
Դարձ առ մեզ աստուած փրկիչ մեր, և դարձո զբրտմտութիւնս քո 'ի մէնջ:
Մի՛ յաւիտեան բարկանար մեզ տէր, և մի՛ ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչեւ յազգ:
Աստուած դու դարձեալ կեցուսցես զմեզ, և ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ:
Ցոյց մեզ տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ:
Լուաք զի՛նչ խօսի տէր աստուած մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր, և

առ այնոսիկ՝ որք դարձեալ են առ նա սրտիւք:
Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. բնակիլ փառաց նորա յերկրի մերում:
Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին. արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին:
Ճշմարտութիւն յերկրէ բուսցաւ, արդարութիւն յերկնից երեւեցաւ:
Տէր տացէ զքաղցրութիւն, և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ 'ի ճանապարհի զգնացս իւր:

Տունք ժբ: Գոբզայս խղ:

ՍԱՂՄՈՍ ՁԵ.

Սաղմոս դաւթի. աղօթք երկոյի:

Խոնարհեցո տէր զունկն քո և լուր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես:
Պահեա զանձն իմ սուրբ տէր. և փրկեա զծառայս քո աստուած իմ, որ 'ի քեզ յուսացեալ:

Ողորմեա՛ ինձ տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանեսպաղ. ուրախ առ քո զանձն ծառայի քո; զի առ քեզ տէր Համբարձի զանձն իմ։

Զի դու տէր քաղցր և ուղիղ ես. բազումողորմ առ ամենեսեան, որք կարդան առ քեզ։

Ունկնդիր տէր աղօթից իմոց, և նայեա՛ ի ձայն խնդրուածոց իմոց։

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ։

Ոչ ոք է նման քեզ յաստուածս տէր, և ոչ ոք է որպէս զդործս քո։

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցե՛ն և երկիրպադցեն առաջի քո, և փառաւորս արասցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու տէր, և առնես սքանչելիս, և դու միայն ես աստուած։

Առաջնորդեա՛ ինձ ի ճանապարհի քում, և դնացից ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ յերկնչիլ յանուանէ քումմէ։

Խոստովան եղէց առ քեզ տէր աստուած իմ բոլորով սրտիւ իմով. փառաւորեցից զանուն քո յաւիտեան։

Մեծ ես ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքինոց։

Աստուած՝ անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ աստուած առաջի իւրեանց։

Այլ դու տէր աստուած իմ՝ դթած ես և ողորմած, երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ, նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ։

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան։

Տեսցենատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Տունք ժդ։

ՍԱՂՄՈՍ ՁՁ.

Սաղմոս օրհնութեան. որդւոցն Կորխայ:

Հիմունք նորա ՚ի լեառն սուրբ նորա.
սիրէ տէր զդրունս սիոնի առաւել
քան զամենայն յարկան յակոբայ:
Փառաւորեալն խօսեցաւ վասն քո, ա-
հաւադիկ քաղաքդ աստուծոյ:
Յիշեցի զրահաբ և զբաբիլովն՝ ոյք ճա-
նաչեն զիս. ահա այլազգիք և ծուր և
ժողովուրդք հնդկաց, սոքա եղեն անդ:
Սիոնի ասի մայր, և մարդ ծնաւ ՚ինքն-
մա. և ինքն հիմունս էարկ ՚ինմա
բարձրեալն:
Տէր պատմեսցէ գրովք ժողովրդեան,
իշխանացս այսոցիկ՝ ոյք եղեն անդ:
Որպէս զի ուրախ լինիցին ՚ի քեզ ամե-
նեքեան, որոց բնակութիւն ՚ի քէն է:

Տուն ՁՂ:

ՍԱՂՄՈՍ ՁԷ.

Ի կատարած. վասն սպասաւորեալ իսրաստոյիւն. զի եւս պատասխանի եւնաւ իսրաստոյ բեամբ իսրայէլի:

Տէր աստուած փրկութեան իմոյ, ՚ի
տուէ կարդացի և գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, խո-
նարհեսցի ունկն քո ՚ի խնդրուածս իմ:
Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք
իմ՚ի դժոխս մերձեցաւ, և համարեցայ
ես ընդ այնոսիկ, որք իջանեն ՚ի գուբ:
Եղէ ես որպէս մարդ առանց օգնա-
կանի, և ՚ի մեռեալս ազատ:
Որպէս զվիրաւորս, որք ննջեն ՚ի գե-
րեզմանս:
Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ՚ի ձե-
ռանէ քումմէ մերժեցան:
Եդին զիս ՚ի գբի ներքնում՝ ՚ի խա-
ւարի և ՚ի ստուերս մահու:
Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո,
զամենայն զբօսանս քո ածեր ՚ի վե-
րայ իմ:
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ,
և եդին զիս նշաւակ իւրեանց:
Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ
տկարացան յաղքատութենէ:
Աղաղակեցի առ տէր զօրհանապազ,
և համբարձի առ քեզ զձեռս իմ:
Միթէ մեռելոց առնիցես զսքանչե-
լիս քո, կամ բժիշկք յարուցանիցեն

խոստովան առնիցին առ քեզ։
Մի՛թէ պատմեսցի՞ ոք ելբեւք ՚ի գե-
րեզմանի զողորմութիւնս քո, կամ
զճշմարտութիւնս քո ՚ի կորստեան։
Մի՛թէ ճանաչեցի՞ն ՚ի խաւարի սքան-
չելիք քո, կամ արդարութիւն քո
յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ տէր աղաղակեցի, առաւօ-
տու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։
Ընդէ՞ր տէր մերժես զանձն իմ, կամ
դարձուցանես զերեսս քո յինէն։
Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի ման-
կութենէ իմմէ. ՚ի բարձրութենէ
խոնարհեցայ և ապշեցայ։
Յիս հաստատեցաւ բարկութիւն
քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս։
Ելջեցան զինեւ որպէս ջուր, զօր ա-
մենայն պաշարեցին զիս ՚ի միասին։
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ
և զծանօթս իմ վասն թշուառու-
թեան իմոյ։

Տունք ի։ Գոլգոթա խբ։

ՍԱՂՄՈՍ ՁԸ·

Ի հաստատութիւն Եկեղեցւոյ Հայաշխարհիս։

Ձողորմութիւնս քո տէր յաւիտեան
օրհնեցից, ազգէ յազգ պատմեցից զճ-
շմարտութիւնս քո բերանով իմով։
Ասացեր՝ թէ աշխարհս ողորմու-
թեամբ շինեսցի, յերկինս պատրաստ
եղիցի ճշմարտութիւն քո։
Եդի ուխտ ընտրելոյ իմոց, երդուայ
դաւթի ծառայի իմոյ։
Յաւիտեան հաստատեցից զզաւակ
քո, և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո։
Խոստովան եղիցին երկինք սքանչել
եացդ քոց տէր, և ճշմարտութիւն քո
յեկեղեցիս սրբոց։
Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ, կամ
նմանեսցի տեառն յորդիս աստուծոյ։
Աստուած փառաւորեալ է ՚ի խոր-
հուրդս սրբոց իւրոց, մեծ և ահաւոր
՚ի վերայ այնոցիք որք շուրջ զնովաւ։
Տէր աստուած զօրութեանց, ո՞ նման
քեզ· հզօր ես դու տէր, և ճշմար-
տութիւն քո շուրջ զքեզ։

Դու տիրես զօրութեանց ծովու, և
զխռովութիւն ալեաց նորա դու ցա-
ծուցանես։
Դու խոնարհեցուցանես որպէս վիրա-
ւորս զամբարտաւանս, ՚ի զօրութիւն
բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո։
Քո են երկինք և քո է երկիր, զաշ-
խարհս լրիւ իւրով դու հաստատե-
ցեր, զհիւսիս և զհարաւ դու ա-
րարեր, Թաբիւր և Հերմոն յանուն
քո ցնծասցեն։
Քո է բազուկ և քո է զօրութիւն, զօ-
րասցի ձեռ քո, և բարձր եղիցի ձեռն քո։
Յարդարութիւն և յիրաւունս հաս-
տատեալ է աթոռ քո, ողորմութիւն
և ճշմարտութիւն դնասցեն առաջի
երեսաց քոց։
Երանի ժողովրդեան, որ գիտեն զօրհ-
նութիւնս քո տէր. ՚ի լոյս երեսաց
քոց գնասցեն, և յանուն քո ցնծաս-
ցեն զօրհանապազ, և յարդարու-
թեան քումմ բարձր եղիցին։
Պարծանք զօրութեանց մերոց դու
ես տէր, և ՚ի կամս քո բարձր ե-

ղիցի եղջիւր մեր։
Ի տեառնէ է օգնութիւն սրբոյն Իս-
րայէլի Թագաւորին մերոյ։
Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ
որդիս քո և ասացեր. եդիւ զօգնու-
թիւն իմ ՚ի վերայ հզօրին, և բարձր
արարից զընտրեալն ՚ի ժողովրդենէ
իմմէ։
Գտի զդաւիթ ծառայ իմ, և իւղով
սրբով իմով օծի զնա։
Զեռն իմ ընկալցի զնա, և բազուկ
իմ զօրացուսցէ զնա։
Մի՛ մեզիցէ նմա թշնամի, և որդի
անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա։
Հարից առաջի նորա զթշնամիս նո-
ցա, և զատելիս նորա ՚ի պարսպու-
թիւն մատանեցից։
Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն
իմ ընդ նմա, և յանուն իմ բարձր ե-
ղիցի եղջիւր նորա։
Եդիւ ՚ի ծովս զձեռն նորա, և ՚ի
վերայ գետոց զաջ նորա։
Նա կարդասցէ առիս՝ Հայր իմ ես
դու, աստուած ընդունող փրկու-

Թեան իմոյ։

Եւ անդրանիկ արարից զնա, և բարձր քան զամենայն թագաւորս երկրի։

Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա։

Հաստատեցից յաւիտեանս սերմունկ զգաւակ նորա, և զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից։

Թէ թողցեն որդիք նոցա զօրէնս իմ, և յիրաւունս իմ ոչ կամեսցին դնալ։

Թէ զարդարութիւնս իմ անարգեսցեն, և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն։

Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա, և տանջանօք զանիրաւութիւնս նոցա։

Բայց ողորմութիւն իմ ոչ արգելից ի նոցանէ, և ոչ նենգեցից ճշմարտութեան իմոմ, և ոչ անարգեցից զուխտ իմ. և ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ, զայն ոչ արհամարհեցից։

Միանգամ երդուայ ի սրբութիւն իմ, թէ գաւթի ես ոչ ստեցից։

Զաւակ նորա յաւիտեան կացցէ. և աթոռ նորա որպէս զարեգական առաջի իմ, և որպէս զլուսին զի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս։

Իսկ արդ դու մերժեցեր և անարգեցեր, և ընդ վայր հարեր զօծեալ քո։

Դարձուցեր զուխտ ի ծառայ քումմէ. պղծեցեր յերկրի զսրբութիւն նորա։

Քակեցեր զամենայն պարիսպս նորա, և եդեր զամուրս նորա ի դողութիւն։

Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի. և եղեւ նա նախատ դրացեաց իւրոց։

Բարձր արարեր զձախ նեղչաց նորա. և ուրախ արարեր զամենայն թշնամիս նորա։

Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ նորա, և ոչ ընկալար զնա ի պատերազմի։

Անարգեցեր զսրբութիւն նորա, և զաթոռ նորա յերկիր կործանեցեր։

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա, և հեղեր զնովաւ զամօթ։

Մինչեւ յերբ դարձուցանես զերեսս քո ի մեզ. բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո։

Իսկ արդ յիշեա և տես՝ թէ ով է իմ հանգիստ. միթէ՝ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան։

Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց։

Ո՞ւր են ողորմութիւնք քո տէր առաջինք, զոր երդուար դաւթի ճշմարտութեամբ քով։

Յիշեա զնախատինս ծառայից քոց, զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց։

Զոր նախատեցին թշնամիք քո տէր. նախատեցին փոխանակ օծելոյ քոյ։

Օրհնեալ տէր աստուած յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի։

Տունք խը։

Կանոնս Գաբրիէլ է։ Սաղմոս ժգ։ Տունք չխը։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՆՍԱՅԵԱՑ ՈՐԴՒՈՅՆ ԱՄՈՎՍԱՅ

Նսայեա իզ։

Ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ աստուած։

Վասն զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի. ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի։

Կարկեսցի ամբարիշտն, և այլ ոչ եւս ուսցի առնել յերկրի զարդարութիւն ճշմարտութեան։

Բարձցի ամբարիշտն յերկրէ, և մի՛ տեսցէ զփառս աստուծոյ։

Տէր բարձր ես և բազուկ քո հզօր, և նոքա ոչ գիտացին։

Ծանիցեն՝ ամաչեսցեն, և նախանձ անկցի անխրատ ժողովրդեան. և արդ հուր զթշնամիս քո կերիցէ։

Տէր աստուած մեր՝ տուր մեզ զխաղաղութիւն քո. զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցաս մեզ։

Տէր աստուած մեր՝ ստացիր զմեզ, զի բաց՝ ի քէն զայլ ոք ոչ գիտեմք, և զա-

նուն քո անուանեմբ զօրհանապազ։
Իսկ արդ մեռեալք զկենդանութիւն
այլ ոչ տեսանիցեն. և ոչ բժիշկք
յարուցանիցեն։
Ա՛ան այսորիկ ածեր հարեր սատա-
կեցեր և ջնջեցեր զամենայն արու-
մանուկ նոցա։
Յաւել տէր զչար ի վերայ չարի նո-
ցա. և ած զչար ի վերայ անօրինաց
երկրի։
Տէր ի՛ նեղութեան յիշեցաք զքեզ.
զի փոքր մի նեղութիւն է խրատ քո
ի վերայ մեր։
Որպէս երկունք յղւոյ՝ զի հասեալ
իցէ ժամանակ ծննդեան, և առ գա-
բաս իւր ձչիցէ։
Ա՛յնպէս եղաք սիրելւոյ քումմ տէր,
յահ և յերկիւղ քո յղացեալ երկնե-
ցաք, և ծնաք զՀոգի փրկութեան քո։
Ոչ եւս կործանեսցուք մեք, այլ կոր-
ծանեսցին անօրէնք երկրի։
Յարիցեն մեռեալք և կենդանասցին
ամենեքեան, որք եղեալ են ի գե-
բեզմանս։

Զարթիցեն ցնծասցեն, և ուրախ ե-
ղիցին դադարեալք յերկրի։
Վա՛ան զի ցօղդ որ ցօղէ ի՛ քէն, այդ
բժշկութիւն է նոցա. բայց երկիրն
ամբարշտեալ սատակեսցի։
Ւոյս տուր ժողովուրդ իմ. գնա մուտ
ի՛ շտեմարանս քո. և փակեա զդրուս
նոս քո առաջի երեսաց քոց։
Փախիր և թագիր առ ժամանակ մի,
մինչեւ անցցէ բարկութիւն տեառն։
Փառք Հօր և որդւոյ և։

ՄԱՂԹԱՆՔ

Խաղաղութեանց տուողդ քրիստոս,
զհաշտութիւն և զերկնային ողոր-
մութիւն քո պարգեւեա յարարած
ծոս քո։
Մարդասէր տէր, վասն սրբոյ հոգ-
անարատ մօր քոյ և կուսի, և վասն
խաչի քոյ պատուականի, ընկալ զա-
ղաչանս մեր, և կեցո զմեզ։

զՔարոզն և զաղօթս ի վերջն եբաթեալ կանոնին
դացես ի 41 երեսն։



Յարեաւ աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա։

ՍԱՂՄՈՍ ՁԹ.

Աղօթք Մովսէսի առն աստուծոյ։

Տէր ապաւէն եղեր մեր ազգէ մինչեւ յազգ. մինչեւ լերինք հաստատեալ էին, և մինչեւ ստեղծեալ էիր դերկիր և զամենայն տիեզերս։ Յաւիտենից մինչեւ յաւիտեան դու ես. մի դարձուցաներ զմարդ ի տառապանս. և ասացեր, դարձարուք առ իս որդիք մարդկան։

Հազար ամ յաչս տեառն որպէս օր երեկի՝ զի էանց. որպէս պահ մի գիշերոյ, և ամք նոցա անարգութեամբ եղիցին։

Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին, ընդ առաւօտս որպէս դալարի զուարճասցին և ծաղկեսցին. ընդ եւ երեկոյս թառշամեսցին՝ չորասցին և անկցին։

Նուաղեցաք մեք ի բարկութենէ

քումմէ, և ՚ի սրտմտութենէ քումմէ մի խռովեցաք։

Եդեր զմեզս մեր առաջի քո, և ըզկեանս մեր ՚ի լոյս երեսաց քոց։

Ամենայն աւուրք մեր նուաղեցան. և ՚ի բարկութենէ քումմէ խռովեցաք։ Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի. և թիւ աւուրց ամաց մերոց ՚ի նոսա եօթանասուն ամ։

Ապա թէ առաւել եւս՝ ուժգնութեամբ. և որ ինչ աւելի է քան զայն, ցաւօք և հեծութեամբ։

Եկն ՚ի վերայ մեր հեծութիւն, և խրատեցաք. իսկ արդ ո՞ գիտասցէ զզօրութիւն բարկութեան քո, և կամ յահէ քումմէ զսրտմտութիւն քո համարեսցի։

Այսպէս ցոյց ինձ զաջ քո. և որ խոնարհ են սրտիւք զիմաստութիւնս քո։

Դարձ տէր՝ մինչեւ յե՞րբ. միխիթարեաց ՚ի ծառայս քո։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։

Հայեա տէր ՚ի ծառայս քո և ՚ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս տեառն աստուծոյ ՚ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ՚ի մեզ տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

Տունք ժզ։

ՍԱՂՄՈՍ Ղ.

Օրհնութիւն գովութեան դաւթի։

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ աստուածոյ յերկինս հանգիցէ։

Ասացէ տեառն՝ ընդունող իմ ես, ապաւէն իմ աստուած, և ես յուսամ ՚ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ՚ի բանիցն ՚ի խռովութենէ։ Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ՚ի հովանի թեւոց նորա յուսասցիս։

Որպես զէն շուրջ եղեցի զքեւ ճըշմարտութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ։
Յերե որ շրջի ՚ի խաւարի, ՚ի պայճառ դատաստանէ դիւին ՚ի հասարակ աւուր։
Անկցին ՚ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ, և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։
Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես, զի դու տէր յոյս իմ ես։
Զբարձրեան արարեր քեզ ապաւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս քո։
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ՚ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։
Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո։
Ի վերայ իժից և քարբից դնասցես դու, և առնուն կոխեսցես զառիւծն և զվիշապն։
Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից

զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։
Կարդասցէ առիս, և ես լսեցից նմա. և առնեմ եղէց ՚ի նեղութեան։
Փրկեցից և փառաւորեցից զնա. երկայն աւուրբք լցուցից. և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Տունք ԺԶ։

ՍԱՂՄՈՍ ՂԱ.

Սաղմոս օրհնութեան առուր շաբաթուց ՚ի դարիք։

Բարի է խոստովան լինիլ տեառն, և սաղմոս ասել անուան քում բարձրեալ։
Պատմել առաւօտու զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս քո ՚ի գիշերի։
Տասնաղեաս սաղմոսարանաւ, ՚ի ձայն օրհնութեան գովել։
Ուրախ արարեր զիս տէր յարարածս քո, և ՚ի գործս ձեռաց քոց ցնծացայց։
Ո՛րպէս զի մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո։
Այր անզգամ զայս ոչ ծանիցէ, և անմիտն զայս ոչ առնու ՚ի միտ։
Ի բուսանիլ մեղաւորաց որպէս խոտ,

'ի ծաղկիլ այնոցիկ՝ որք գործեն զանօրէնութիւն։

Սատակեացին յաւիտեանս յաւիտենից. և դու բարձրեալ ես յաւիտեանս տէր։

Զի ահա թշնամիք քո տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն. ցրուեսցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութիւն։

Բարձր եղիցի որպէս միեղջերուի եղջիւր իմ, և ծերութիւն իմ 'ի ձէթ պարարտութեան։

Եւ տես ակն իմ 'ի թշնամիս իմ, որք յարուցեալ են 'ի վերայ իմ չարութեամբ, 'ի նոսա լուիցէ ունկն իմ։

Արդարն որպէս զարմանելիս ծաղկեսցին. որպէս զմայրան լիբանանու բազումք եղիցին։

Տնկեալք եղիցին 'ի տան տեառն, և 'ի գաւիթս աստուծոյ մերոյ ծաղկեսցին։

Եւս և բազումք եղիցին 'ի ծերութիւն պարարտութեան. գիրդք և վախուկք եղիցին 'ի պատմել. ուղիղ

է տէր աստուած մեր, և ոչ գոյ 'ի նմա անիրաւութիւն։

Տունք ժդ։ Գոբզայս խզ։

ՍԱՂՄՈՍ ՂԲ.

Յաւուրն առաջին շաբաթու, յոր հաստատեցաւ երկիր. օրհնութիւն գովութեան դաւթի։

Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ տէր զօրութիւն ընդ մեջ իւր էած։

Հաստատեաց զաշխարհ՝ զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո, 'ի սկզբանէ յաւիտեանս դու ես։

Ամբարձան գետք տէր, և ամբարձին գետք զձայն իւրեանց և յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց։

Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն զբօսանք ծովու։

Սքանչելի ես դու տէր 'ի բարձունս. վկայութիւնք քո մեք յոյժ հաստատացան։

Տան քում վայելէ սրբութիւն տէր ընդ երկայն աւուրս։

Տունք զ։

ՍԱՂՄՈՍ ՂԳ.

Սաղմոս դաւթի. չորեքշաբաթու։

Աստուած վրէժխնդիր, տէր աստուած վրէժխնդիր յայտնեցար։
Բարձր լեր որ դատես զերկիր. հատո զհպարտացումն ամբարտաւանից։
Մինչեւ յե՞րբ մեղաւորք տէր, մինչեւ չե՞ւ յե՞րբ մեղաւորք պարծեսցին։
Բարբառեալ խօսէին զանիրաւութիւն. խօսեսցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութիւն։
Զժողովուրդս քո տէր խոնարհ արարին, և զժառանգութիւն քո չարչարեցին։
Զայրին և զպանդուխտն սպանին, զորբան կոտորեցին և ասացին, ոչ տեսանէ զայս տէր, և ոչ՝ ի միտ առնու աստուած յակոբայ։
Իմացարուք անզգամք ժողովրդոց, և անմիտք՝ մինչեւ յե՞րբ ոչ առնուք՝ ի միտ։
Որպէս զի թէ որ տնկեաց զականն՝ ինքն ո՞չ լուիցէ, կամ որ ստեղծ զա-

կըն՝ ինքն ո՞չ տեսանիցէ։
Որ խրատէ զազինս, որպէս թէ ոչ յանդիմանեսցէ. որ ուսուցանէ մարդոյ գիտութիւն. տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան, զի են ընդունայնք։
Երանի մարդոյ՝ զոր խրատես դու տէր, և յօրինաց քոց ուսուցանես դու նմա։
Ցածուցանես դու նմա զաւուրս չարութեան, մինչեւ փորեսցի խորխորատ մեղաւորի։
Ոչ մերժէ տէր զժողովուրդ իւր, և զժառանգութիւն իւր ոչ առնէ անտես։
Մինչեւ դարձցին իրաւունք յարդարութիւն. ընկալցին զնա ամենեքեան որ ուղիղ են սրտիւք։
Ո՞վ յարիցէ ընդ իս ի վերայ չարաց. կամ ո՞վ հաւասարեսցի ինձ ի վերայ այնոցիկ՝ որ գործեն զանօրէնութիւն։
Եթէ ոչ տեառն օգնեալ էր ինձ, փոքր մի եւս բնակեալ էր անձն իմ ի դժոխս։

թէ ասէի՝ թէ ահա ասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո տէր օգնէր ինձ։

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մըխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ։

Մի՛ հաւասարեսցի քեզ աթոռ ազնուութեան, ո պատճառէ ըզվաստակս ընդդէմ հրամանի։

Որսացին զանձն արդարոյ, և զարիւն ամբիծ պարտաւոր առնէին։

Եղեւ տէր ապաւէն իմ. աստուած օգնական յուսոյ իմոյ։

Հատուսցէ նոցա տէր ըստ անօրէնութեան նոցա և ըստ չարութեան նոցա կործանեսցէ զնոսա տէր աստուած մեր։

Տունք իա։

ՍԱՂՄՈՍ ՂԴ.

Օրհնութիւն գովութեան Դաւթի։

Եկայք ցնծասցուք ի տէր. աղաղակեսցուք առ աստուած փրկիչ մեր։

Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ. և սաղմոսիւք աղաղակեսցուք առ նա։

Աստուած մեծ է, տէր թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի, և բարձրութիւնք լերանց նորա են։

Նորա է ծով՝ և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին։

Եկայք երկիրպագցուք նմա անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ։

Նա ինքն է տէր աստուած մեր. մեր մեք ժողովուրդք ձեռին նորա, և խաշն արօտի նորա։

Այսօր եթէ ձայնի նորա լսիցէք, մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր որպէս ի դառնութեան։

Յաւուրն փորձութեան յանապատին՝ ուր փորձեցին զիս հարքն ձեր, քննեցին զիս և տեսին զգործս իմ զքառասուն ամ։

Ջանացի ընդ ազգին ընդ այնմիկ և

ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք·
և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ։
Որպէս երդուայ ՚ի բարկութեան իւ-
մում թէ մտցեն ՚ի հանգիստ իմ։

Տունք ժա։ Գոբղայս լը։

ՍԱՂՄՈՍ ՂԵ·

Սաղմոս Դաւթի. ՚ի ժամանակի զի տաճարն
շինեցաւ։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր,
օրհնեցէք զտէր ամենայն երկիր։
Օրհնեցէք զտէր և օրհնեցէք զա-
նուն նորա, աւետարանեցէք օր ըստ
օրէ զփրկութիւն նորա։
Պատմեցէք ՚ի հեթանոսս զփառս նո-
րա, յամենայն ժողովուրդս զսքան-
չելիս նորա։
Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, ա-
հարկու է նա ՚ի վերայ ամենայն կռոց։
Ամենայն կռունք հեթանոսաց դեւք
են, այլ տէր զերկինս արար։
Խոստովանութիւն և վայելչութիւն
է առաջի նորա, սրբութիւն և մեծ-
վայելչութիւն ՚ի սրբութեան նորա։

Մատուցէք տեառն տոհմք ազանց,
մատուցէք տեառն զփառս և զպա-
տիւ, մատուցէք տեառն զփառս
անուան նորա։
Առէք պատարագս, և մտէք ՚ի սը-
րահս նորա, երկիրպագէք տեառն
՚ի գաւիթս սրբութեան նորա, և
խռովեսցի յերեսաց նորա ամենայն
երկիր։
Ասացէք ՚ի հեթանոսս՝ թէ տէր թա-
գաւորեաց, հաստատեաց զաշխարհ
զի մի սասանեսցի, և դատէ զժո-
ղովուրդս իւր ուղղութեամբ։
Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծասցէ
երկիր, զօսարձասցի ծով լըիս ի-
րով. ցնծասցեն դաշտք, և ամենայն
որ է ՚ի նոսա։
Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք
անտառի յերեսաց տեառն՝ զի գայ,
և գայ նա ՚ի դատել զերկիր։
Դատէ զտիեզերս իրաւամբք, և զը-
ժողովուրդս ամենայն ճշմարտու-
թեամբ իւրով։

Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ ՂԶ.

Սաղմոս Դաւթի. ՚ի ժամանակի զի երկիրն հաստատուեցաւ։

Տէր Թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր, ուրախ եղիցին կղզիք բազումք։

Ամպ և մէգ շուրջ են զնովաւ, յի բաւուն և յարդարութիւն ուղ ղեալ է աթոռ նորա։

Հուր առաջի նորա գնասցէ, և այ րեսցէ շուրջ զթշնամիս նորա։

Երեւեցան փայլատակունք նորա տիե զերաց, ետես և սասանեցաւ երկիր։

Լերինք որպէս մոմ հալեսցին յե րեսաց տեառն, յերեսաց տեառն ամենայն երկիր։

Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա, և տեսցեն ամենայն ժողո վուրդք զփառս նորա։

Ամաչեսցեն ամենեքեան որ երկիր պագանեն կռոց, և այք պարծին ՚ի դրօշեալս իւրեանց։

Երկիրպագեն նմա ամենայն հրեշ տակք նորա, զի լուաւ և ուրախ եղեւ սիօն, և ցնծացեն դստերք

յուդայ վասն իրաւանց քոց տէր։

Զի դու բարձրեալ ես ՚ի վերայ ա մենայն երկրի, յոյժ բարձրացար ՚ի վերայ ամենայն կռոց։

Որ՛ք սիրէք զտէր, ատեցէք զչարու թիւն. պահէ տէր զանձինս սրբոց իւրոց, ՚ի ձեռաց մեղաւորի փրկես ցէ զնոսա։

Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտից եղեւ ուրախութիւն։

Ուրախ եղերուք արդարք ՚ի տէր, և խոստովան եղերուք յիշատակի սրբու թեան նորա։

Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ ՂԷ.

Սաղմոս Դաւթի օրհներգական։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր, զի սքանչելիս արար։

Փրկեաց զնա աջ իւր, և բազուկ սուրբ իւր։

Եցոյց տէր զփրկութիւն իւր, ա ռաջի ազգաց յայտնեաց զարդարու թիւն իւր։

Յիշեաց ողորմութեամբ իւրով զե

յակոբ, ճշմարտութեամբ իւրով զտուն իսրայէլի, և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն աստուծոյ մերոյ:

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր, օրհնեցէք ցնծացէք և սաղմոս ասացէք:

Սաղմոս ասացէք աստուծոյ մերոյ օրհնութեամբ, օրհնութեամբ և ի ձայն սաղմոսաց:

Ի ձայն օրհնութեան կռածոյ փողոյ. օրհնութեամբ ցնծութեամբ և ի ձայն եղջեր փողոյ, աղաղակեցէք առաջի թագաւորին տեառն:

Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիեզերք և ամենայն բնակիչք նորա, և գետք ծափս հարցեն ի միասին ձեռամբ:

Լերինք ցնծասցեն առաջի տեառն զի գայ զի հասեալ է տէր ի դատել զերկիր:

Դատե զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ:

Տունք ժ. Գոբզայս լե:

ՍԱՂՄՈՍ ՂԸ:

Սաղմոս Դաւթի:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստիս ի քերովբէս, սասանեցաւ երկիր:

Տէր ի սիօն մեծ է և բարձր է ի վերայ ամենայն ժողովրդոց:

Խոստովան եղիցուք անուան քում մեծի, զի ահաւոր և սուրբ է, և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ:

Դու պատրաստեցեր զուղղութիւն, զիրաւունս և զարդարութիւն յակոբայ դու արարեր:

Բարձր արարէք զտէր աստուած մեր. երկրպագէք պատուանդանի ոտից նորա զի սուրբ է:

Մովսէս և ահարօն երիցունք նորա, սամուէլ ընդ այնոսիկ, որք կարդան զանուն նորա:

Կարդային առ տէր և նա լսէր նոցա, և ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա:

Պահէին զվկայութիւն նորա և զիրաւունս զոր ետ նոցա:

Տէր աստուած մեր՝ դու լսելիր նոցա, աստուած՝ դու քաւիչ լինէիր նոցա, և վրէժխնդիր ՚ի վերայ ամենայն գործոց նոցա։

Բարձր արարէք զտէր աստուած մեր. երկրպագէք ՚ի լեառն սուրբ նորա, զի սուրբ է տէր աստուած մեր։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՂԹ.

Սաղմոս խոստովանութեան Դաւթի։

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր, ծառայեցէք տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծաներուք զի նա է տէր աստուած մեր։

Նա արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք ժողովուրդ և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ՚ի յարկս նորա։

Խոստովան եղերուք տեառն, և օրհնեցէք զանուն նորա։

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ ԺԱ.

Սաղմոս Դաւթի։

Յողորմութիւն և յիրաւունս օրհնեցից զքեզ տէր սաղմոս ասացից և ՚ի միտ առից։

Ճանապարհ ամբիծ մինչեւ եկեսցէ առ իս. զի գնայի ես յամբծութեան սրտի իմոյ ՚ի մէջ տան իմոյ։

Ոչ եդի առաջի աչաց իմոց իրս անիրաւութեան, ոյք առնէին զանօրէնութիւն, ատեցի։

Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր սրտիւ. խոտորեալ չինէն անզգամին, և ես ինչ ոչ ճոյթ առնէի։

Որ խօսէր գաղտ զընկերն իւրմէ, զնա բացէ ՚ի բաց հալածէի։

Որ ամբարտաւան էր աչօք և ագահ սրտիւ, ընդ նմա և հաց ոչ ուտէի։

Աչք իմ ՚ի հաւատացեալս երկրի,

զի նատցին նոքա ընդ իս։
Որ գնայր ի ճանապարհ ամբիծ, նա պաշտէր զիս։
Ոչ բնակէր ի մէջ տան իմոյ՝ որ առնէր զամբարտաւանութիւն, որ խօսէր զանիրաւութիւն, չէր յաջողեալ նմա առաջի աչաց իմոց։
Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի. զի սատակեցից ի քաղաքի տեառն զամենեսեան՝ որք գործեն զանօրէնութիւն։

Տունք ժ։ Գոլզայս կզ։

ՍԱՂՄՈՍ ՃԱ։

Աղօթք Ուրկի. իբրեւ ձանձրացի՝ առաչի տեառն ախտացեալ զիանդրուածս իւր։

Տէր՝ լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։
Ցաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ, վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խուրձ չորացան։
Հարայ ես որպէս խոտ՝ և ցամաքեցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ. նմանեցայ ես հաւալասան անապատի։
Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ. և գովիչք իմ ինեւ երդնուին։
Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի զուս բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։
Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։
Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչեւ յազգ։
Դու յարուցեալ գթասցիս ի վերայ

սիօնի , ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա , և ի հողս նորա գթասցին։

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ , և ամենայն թագաւորք երկրի ի փառաց քոց։

Շինէ տէր զսիովն , և երեւեսցի փառօվք իւրովք ինձա։

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց , և ոչ արհամարհեաց զինդրուածս նոցա։

Գրեսցի այս յազգ յայլ , ժողովուրդ զոր ստացեալ է , օրհնեսցէ զտէր։

Հայեցաւ նա ի բարձանց ի սրբութենէ իւրմէ , տէր յերկինից յերկիր հայեցաւ։

Լսել զհեծութիւն կապելոց , և արձակել զորդիս մահապարտաց։

Պատմել ի սիօն զանուն տեառն , և զօրհնութիւնս նորա յերուսաղէմ։

Ժողովիլ ժողովրդոց ի միասին , և թագաւորաց ծառայել տեառն։

Պատասխանի եւ նմա ի ճանապարհ

հի զօրութեան իւրոյ . զնուազող թիւն աւուրց իմոց ասա ինձ , և մի՛ հաներ զիս ի կէս աւուրց իմոց .

զի ազգէ յազգ են ամք քո։

Ի սկզբանէ տէր զհիմունս երկրի հաստատեցեր , և գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն , և դու կաս և մնաս յաւիտեան։

Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին , և որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա , և փոխեսցին։

Բայց դու նոյն ինքն ես , և ամք քո ոչ անցանեն . որդիք ծառայից քոց բնակեսցին ի նմա , և վաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի։

Տունք իզ։

ՍԱՂՄՈՍ ՃԲ.

Ցաղմոս Դաւթի։

Օրհնեա անձն իմ զտէր , և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա։

Օրհնեա անձն իմ զտէր , և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա։

Ո քաւէ զմեզս քո, բժշկէ զամե-
նայն հիւանդութիւնս քո։
Ո փրկէ յապականութենէ զկեանս
քո, պսակէ զքեզ ողորմութեամբ
և գթութեամբ։
Ո լնու ի բարութենէ զցանկու-
թիւն քո, նորոգեսցի որպէս արծ-
ուոյ մանկութիւն քո։
Առնէ ողորմութիւնս տէր, և իրա-
ւունս ամենայն զրկելոց։
Եցոյց տէր զճանապարհս իւր մով-
սէսի և որդւոցն իսրայէլի զկամս
իւր։
Գթած ողորմած է տէր, երկայնա-
միտ և բազումողորմ։
Ոչ իսպառ բարկանայ մեզ տէր, և
ոչ յաւիտեան պահէ ոխս։
Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ
տէր, և ոչ ըստ անօրէնութեան
մերում հատոյց մեզ։
Ա՛յլ որպէս բարձր են երկինք յերկ-
րէ, այնպէս զօրացոյց տէր զողոր-
մութիւն իւր ի վերայ երկիւղա-
ծաց իւրոց։

Որչափ հեռի են արեւելք յարեւ-
մըտից, այնչափ հեռի արար ի մէնջ
զանօրէնութիւնս մեր։
Որպէս գթայ հայր ի վերայ որդ-
ւոց իւրոց, այնպէս գթացի տէր
յերկիւղածս իւր։
Զի նա գիտաց զստեղծուածս մեր,
և յիշեաց թէ հող եմք։
Ա՛րդեօք որպէս խոտոյ են աւուրք
իւր. որպէս ծաղիկ վայրի այնպէս
ծաղկի։
Շնչէ ի նմա հողմ, և ոչ է՝ և ոչ ե-
րբա երեւի տեղի նորա։
Բայց ողորմութիւն տեառն միայ
յաւիտեանս յաւիտենից ի վերայ
երկիւղածաց իւրոց, և արդարու-
թիւն նորա յորդւոց մինչեւ յոր-
դիս։
Որ պահեն զուխտս նորա, յիշեն
զպատուիրանս նորա և առնեն զնա։
Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ
իւր, և արքայութիւն նորա ամենե-
ցուն տիրէ։
Օրհնեցէք զտէր ամենայն հրեշտակք

նորա՝ հզօրք զօրութեամբ այք առ-
նէք զբան նորա ՚ի լսել ձայնի պատ-
գամաց նորա։

Օրհնեցէք զտէր ամենայն զօրու-
թիւնք նորա, պաշտօնեայք և ա-
րարողք կամաց նորա։

Օրհնեցէք զտէր ամենայն գործք
նորա, ի ընդ ամենայն տեղիս է
տէրութիւն նորա, օրհնեա անձն
իմ զտէր։

Տունք իբ։ Գոբզայս կը։

ՍԱՂՄՈՍ ՃԳ.

Սաղմոս Դաւթի. ՚ի վերայ աշխարհագործ արարածոց։

Օրհնեա անձն իմ զտէր, տէր աստ-
ուած իմ մեծ եղեր յոյժ։

Խոստովանութիւն և մեծվայելչու-
թիւն զգեցար, արկեալ զլոյս որ-
պէս զօթոց, ձգեցեր զերկինս որ-
պէս զխորան, և արկեր ՚ի վերայ
ջուրց գվերնայարկս նորա։

Ո դնէ յամպս զդնացս իւր, և շըր-
ջի նա ՚ի վերայ թեւոց հողմոց։

Ո արար զհրեշտակս իւր հոգիս, և
զպաշտօնեայս իւր ՚ի հուր կիզելոյ։
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ հաս-
տատութեան իւրոյ, զի մի սասա-
նեսցի յաւիտեան։

Խորք որպէս զգեստ վերարկու է
նորա. ՚ի վերայ լերանց կացցեն
ջուրք։

Ի սաստ քումմէ փախիցեն, և ՚ի
ձայնէ որոտալոյ քումմէ սարսիցեն։
Ելանեն լեռնանան՝ և իջանեն դաշ-
տանան, ՚ի տեղի յոր հաստատեցեր
զնոսա։

Սահման եդեր՝ և ոչ անցանեն, և
ոչ եւս դառնան ՚ի ծածկել զերկիր։
Առաքեցեր զաղբիւրս ընդ ձորձորս.
՚ի միջոյ լերանց գնասցեն ջուրք։
Արբուցանել զամենայն գազանս
վայրի. յագեսցին ցիւք ՚ի ծարաւս
իւրեանց։

Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն,
և ՚ի միջոյ վիմաց տացեն զձայնս
իւրեանց։

Արբուցանէ զվերինս ՚ի չոր մարս-

նաց իւրոց, ի պաղել գործոց իւրոց
լացի երկիր։
Բուսուցեր զևստ ի լերինս, զդա-
լարի ի ծառայութիւն մարդկան։
Հաներ զհաց յերկրէ. գինի ուրախ
առնէ՝ իւղ զուարթ, և հաց հաս-
տատէ զսիրտ մարդոյ։
Յագեացին ծառքն անտառի, և մայր-
քըն լիբանանու՝ զորս դու տընկ-
կեցեր։
Անդ թռչունք երկնից ճագս հան-
ցեն, և բոյն արագիլ ապաւէն է
նոցա։
Լերինք բարձունք են եղջերուաց,
և վէմք ապաւէնք նապաստակաց։
Արարեր զլուսին վասն ժամանակի.
արեգական ծանեաւ զժամ մտանելոյ
իւրոյ։
Արարեր զխաւար՝ և եղեւ գիշեր.
ի նմա գնան ամենայն գազանք ան-
տառի։
Կոբիւնք առիւծուց մռնչեն և յա-
վիշտակեն, և խնդրեն յաստուծոյ
զկերակուրս իւրեանց։

Ի ծագել արեւու ժողովին, և ի մու-
րիս իւրեանց դադարին։
Ելանէ մարդ ի գործս իւր, և ի
վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յե-
րեկոյ։
Ո՛րպէս զի մեծ են գործք քո տէր.
զամենայն ինչ իմաստութեամբ ա-
րարեր, և լցաւ երկիր ստեղծուա-
ծովք քովք։
Այս ծով մեծ և անդորր. ի սմա
են սողունք՝ որոց ոչ գոյ թիւ. գա-
զանք մեծամեծք և մանունք, ի սը-
մա և նաւք գնան. վիշապն զոր ըս-
տեղծեր խաղալ նովաւ։
Ամենեքեան քեզ սպասեն՝ և դու
տաս զկերակուր նոցա ի ժամու։
Տաս դու նոցա՝ և կերակրին, բա-
նաս զձեռն քո, և կերակրես զա-
մենեսեան կամօք քովք։
Դարձուցանես զերեսս քո ի նոցա-
նէ՝ և խռովին. հանես զոգի ի նո-
ցանէ, պակասին և ի հող դառնան։
Առաքես զոգի քո և ստանաս զնո-
սա, և նորոգես զերեսս երկրի։

Եղիցին փառք տեառն յաւիտեան,
և տէր ուրախ եղիցի յարարածս
իւր։

Ո հայի յերկիր, և տայ դողալ սմա.
մերձեսցի ի լերինս, և ծխեսցին։

Օրհնեցից զտէր ի կեանս իմ. սաղ-
մոս ասացից աստուծոյ իմոյ մինչեւ
եմ ես։

Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ,
և ես ուրախ եղեց ի տէր։

Պակասեսցին մեղաւորք յերկրէ, և
ամբարիշտք մի՛ եւս գոցին ի նմա.
օրհնեա անձն իմ զտէր։

Տունք լէ։

ՍԱՂՄՈՍ ՃԻ.

Ալէլուիա։

Խոստովան եղերուք տեառն և
կարդացէք զանուն նորա, և պատ-
մեցէք ի հեթանոսս զգործս նորա։

Օրհնեցէք և սաղմոս ասացէք նմա.
պատմեցէք զամենայն սքանչելիս նո-
րա և գովեցարուք յանուն սուրբ
նորա։

Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որ
խնդրեն զտէր. խնդրեցէք զտէր՝ և
հզօրք եղերուք. և խնդրեցէք զե-
րեսս նորա յամենայն ժամ։

Յիշեցէք զսքանչելիս նորա զորս ա-
րար, զարուեստս և զիրաւունս բե-
րանոյ նորա։

Զաւակք աբրահամեան ծառայք
նորա, որդիք յակոբայ ընտրեալք
նորա։

Նա ինքն է տէր աստուած մեր. յա-
մենայն երկրի են իրաւունք նորա։

Յիշեաց յաւիտենից զուխտ իւր, և
զբանն՝ զոր պատուիրեաց մինչ ի
հազար ամ։

Զուխտն զոր եդ ընդ աբրահամու
և զերդումն իւր ընդ սահակայ։

Հաստատեաց առ յակոբ զկրաման
իւր, և առ իսրայէլ զուխտ իւր
յաւիտենից։

Ասէ՝ ձեզ տացի զերկիրն քանանու,
գվիճակ ժառանգութեան ձերոյ։

Զի էին նոքա թուով սակաւք նը-
ւազք և պանդուխտք ի նմա։

Անկցին նոքա ազգէ յազգ, ի թագաւորս ամենայն երկրի յայլ։ Ոչ եթող մարդկան մեղանչել նոցա, և կշտամբեաց զթագաւորս վասն նոցա։

Մի՛ մերձենայք սաէ՝ յօծեալս իմ, և ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք։

Կոչեաց սով յերկիր նոցա, և զամենայն զօրութիւն հացի եբեկ։

Առաքեաց առաջի նոցա այր. ի ծառայութիւն վաճառեցաւ յովսէփ։

Խոնարհ արարին ի կապանս զոտս նորա, և երկաթ անձն նորա։

Մինչեւ եկեսցէ բան նորա, և բան տեառն փորձեաց զնա։

Առաքեաց թագաւորն և ելոյծ զնա, իշխան ժողովրդեան եթող զնա։

Կացոյց զնա տէր տան իւրոյ, իշխան ի վերայ ամենայն ստացուածոց իւրոց։

Խրատել զիշխանս նոցա որպէս զինքըն, և զծերս նոցա իմաստուն ածցէ։

Եմուտ Իսրայէլ յԵգիպտոս, և յակոբ պանդխտեցաւ յերկիր քամայ։

Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ, և զօրացոյց զնոսա քան զթշնամիս իւր։

Դարձոյց զսիրտս նոցա ատել զժողովուրդ իւր, և ի նենգել զծառայս իւր։

Առաքեաց զմովսէս ծառայ իւր, և զահարօն ընտրեալ իւր։

Եւ նոցա զբան նշանաց իւրոց, և զարուեստս իւր յերկիր քամայ։

Առաքեաց զխաւար և խաւարեցոյց զնոսա, զի դառնացուցին զբան նորա։

Դարձոյց յարիւն զգետս նոցա, և սպան զամենայն ձկունս նոցա։

Եհաս յերկիր նոցա գորտ, և ի շտեմարանս թագաւորաց նոցա։

Ասաց՝ և եկին շանաճանճ և մժեխ ընդ ամենայն սահմանս նոցա։

Դարձոյց զանձրեւս նոցա ի կարկուտ, և հուր յերկիր նոցա բոլբոքեցաւ։

Եհար զայգիս և զթզենիս նոցա, և

փչրեաց զամենայն ծառս սահմանացդ նոցա։

Ասաց՝ և եկն մարախ, և խառնիճ զի ոչ գոյր նոցա թիւ։

Եկեր զամենայն խոտ երկրի նոցա, և սպառեաց զամենայն պտուղ անդոյ նոցա։

Եհար զամենայն անդրանիկս եգիպտացւոց, զսկիզբն ամենայն վաստակոց նոցա։

Եհան զնոսա ոսկւով և արծաթով, և ոչ գոյր յազգի նոցա հիւանդ։

Ուրախ եղեւ եգիպտոս ընդ ելանել նոցա, զի անկաւ ահ տեառն ՚ի վերայ նոցա։

Սփռեաց ամպ՝ հովանի առնել նոցա ՚ի տուէ, և հրով լոյս տայր նոցա ՚ի գիշերի։

Խնդրեցին՝ և եկն լորամարգի, և հացիւ երկնից լցոյց զնոսա։

Եհար վէմն՝ և բղխեցին ջուրք, և գնացին գետք ընդ անջրդիս։

Յիշեաց զբան իւր սուրբ, որ ընդ աբրահամու ծառայի իւրոյ։

Եհան զժողովուրդ իւր ցնծութեամբ, և զընտրեալս իւր ուրախութեամբ։

Ետ նոցա զդաւառս հեթանոսաց՝ ՚ի վաստակս ժողովրդոց ժառանգեցոյց զնոսա։

Զի պահեսցեն զվկայութիւնս նորա, և զօրէնս նորա խնդրեսցեն։

Տունք խդ։ Գոբզայս հը։

ՍԱՂՄՈՍ ՃԵ.

Ալէլուիա։

Խոստովան եղերուք տեառն՝ զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ո՞ խօսեսցի զզօրութիւն տեառն. լսելի արասցէ զամենայն օրհնութիւն նորա։

Երանի այնք պահեն զիրաւունս, և առնեն զարդարութիւն յամենայն ժամ։

Յիշեա զմեզ տէր ընդ հաճոյս ժողովրդեան քոյ, և այց արա մեզ ՚ի փրկութեան քում։

Տեսցուք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց. ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քոյ, և գովեսցուք մեք ի ժառանգութեան քումմ:

Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք և յանցեաք:

Հարքն մեր յեգիպտոս ոչ իմացան զսքանչելիս քո, և ոչ յիշեցին ըզբազում ողորմութիւնս քո:

Բարկացուցին զքեզ յանձանեն իւրեանց ընդ ծով կարմիր. փրկեաց զնոսա վասն անուան իւրոյ, զի ծանիցեն զզօրութիւնս նորա:

Սաստեաց ի ծով կարմիր՝ և ցամաքեցաւ. առաջնորդեաց նոցա ընդ անդունդս որպէս ընդ անապատս:

Կեցոյց զնոսա ի ձեռաց ատելեաց նոցա, և փրկեաց զնոսա ի ձեռաց թշնամեաց նոցա:

Ծածկեաց ծով զնեղիչս նոցա, և մի ի նոցանէ ոչ ապրեցաւ:

Հաւատացին բանիւ նորա, և օրհնեցին զօրհնութիւնս նորա:

Վաղվաղեցին և մոռացան զգործս նորա, և ոչ անսացին խորհրդոց նորա:

Ցանկացան զցանկութիւն՝ յանապատի, և փորձեցին զաստուած յանջուրդ:

Եւ նոցա զխնդրուածս նոցա. աւրաբեաց զլիութիւն յանձինս նոցա:

Բարկացուցին զմովսէս ի բանակի, և զահարօն սուրբ տեառն:

Բացաւ երկիր և եկուլ զդաթան, և ծածկեաց զբանական զաբիրօնի:

Հուր վառեցաւ ի ժողովս նոցա, և բոց մաշեաց զմեղաւորս:

Արարին զորթն ի քորեբ, և երկիր պագին պատկերի, և փոխեցին ըզփառս իւրեանց ի նմանութիւն որթոյ խոտակերի:

Մոռացան զաստուած կենարարն իւրեանց, որ արար զմեծամեծս իւր յեգիպտոս, և զքսանչելիս իւր յերկիր քամայ, և զահ իւր ի վերայ կարմիր ծովուն:

Ասաց սատակել զնոսա, եթէ ոչ

մովսէս ընտրեալն կայր առաջի նոցա։
Դարձաւ առ տէր և անցոյց զբար-
կուԹիւն նորա, զի մի՛ սատակեսցին նոքա։
Անարգեցին զերկիրն ցանկալի, և
ոչ հաւատացին բանի նորա։
Տրտնջեցին ՚ի բանակս իւրեանց, և
ոչ լուան ձայնի տեառն։
Համբարձ զձեռն իւր ՚ի վերայ նո-
ցա, հարկանել զնոսա յանապատի։
Ցրուեսցի զաւակ նոցա ընդ հեթա-
նոսս, ցրուեսցի զաւակ նոցա ընդ
գաւառս։
Պղծեցան նոքա ՚ի փեղփեղովր, զի
կերին զզոհեալ և վմեռելոտի։
Բարկացուցին զնա ՚ի գործս իւր-
եանց, և յաճախեաց ՚ի վերայ նոցա
բեկումն։
Ապա եկաց ՚ի մէջ փենեհէս, քա-
հանայ և արգելաւ մահ. համարեցաւ
նմա յարդարուԹիւն ազգէ յազգ
մինչև յաւիտեան։
Բարկացուցին զնա ՚ի վերայ ջուրցն
հակառակուԹեան. չարչարեցաւ

մովսէս վասն նոցա, զի դառնացու-
ցին զոգի նորա։
Հրամայեաց շրթամբք իւրովք, և
ոչ սատակեցին զազգսն՝ զոր ասաց
նոցա տէր։
Խառնակեցան ընդ հեթանոսս, և
ուսան զգործս նոցա. ծառայեցին
կռոց նոցա, և եղեւ նոցա ՚ի գայ-
թակղուԹիւն։
Զոհեցին զուստերս և զդստերս
իւրեանց դիւաց, և հեղին զարիւն
ամբիծ։
Արիւն ուստերաց և դստերաց
իւրեանց՝ զոր զոհեցին կռոցն քա-
նաանու։
Շաղախեցաւ երկիր յարենէ նո-
ցա, և պղծեցաւ ՚ի գործոց նոցա.
զի պոռնկեցան ՚ի գնացս իւրեանց։
Բարկացաւ սրտմտուԹեամբ տէր ՚ի
վերայ ժողովրդեան իւրոյ, և գար-
շեցոյց զժառանգուԹիւն իւր յոյժ։
Մատնեաց զնոսա ՚ի ձեռս հեթա-
նոսաց. տիրեցին նոցա ատելիք իւր-
եանց, և Թշնամիք իւրեանց նեղեցին

զնոսա, և խոնարհ եղեն ի ներքոյ
ձեռաց նոցա։
Բազում անգամ փրկեաց զնոսա,
և նոքա դառնացուցին զնա ի խոր-
հուրդս իւրեանց, և կորացան յա-
նօրէնութեան իւրեանց։
Հայեցաւ տէր ի նեղութիւնս նո-
ցա, ի լսել ձայնի աղօթից նոցա։
Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ
ըստ բազում ողորմութեան իւ-
րում. և եհաս զնոսա ի գթութիւնս
առաջի ամենայն գերչաց նոցա։
Փրկեա զմեզ տէր աստուած մեր,
և ժողովեա զմեզ ի հեթանոսաց։
Խոստովան եղիցուք անուան քում
սրբոյ, և պարծեսցուք յօրհնու-
թիւնս քո։
Օրհնեալ տէր աստուած իսրայէլի,
յաւիտեանս յաւիտենից։
Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն,
եղիցի եղիցի։

Տունք խգ։

Կանոնս գօրղայս է։ Ողջոյս ժէ։ Տունք չժգ։

ԱՂՕԹՔ ԵԶԵԿԻԱՑԻ ԱՐՔԱՅԻ ՀՐԷԱՍՏԱՆԻ,
Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՑՕՐՈՒԻՄ ՀԻՒԱՆԴԱՑԱՒ,
ԵՒ ՅԱՐԵԱՒ Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆՆ ԻՒՐՄԷ։

Եաւակա լբ։

Ես ասացի ի վերանալ յինէն ա-
ւուրց իմոց, թէ գնացի ես ի գե-
րեզման գժոխոց։
Թողի զամենայն յետին իմ, և ասա-
ցի՝ թէ այլ ոչ եւս տեսից զփրկու-
թիւն տեառն յերկրին կենդան-
եաց, և ոչ եւս տեսից զմարդ բըն-
նակչօք իւրովք հանգերձ։
Պակասեցայ ես յազգատոհմէ իմ
մէ. այսուհետեւ թողի լքի զամե-
նայն զկեանս իմ։
Եւ գնաց մեկնեցաւ յինէն հոգի
իմ որպէս զայն՝ որ քակէ զտաղա-
ւար, և եղէ ես որպէս զոստայն
սատարաց մերձ ի հատանիլ։
Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յա-
ռաւօտէ որպէս ի ձեռս առիւծու.
այնպէս խորտակեաց մանրեաց զոս-

կերս իմ, զի յառաւօտէ մինչ ՚ի գիշեր մատնեցայ։

Որպես ծիծառն՝ այնպէս ճչեցի, որպէս զաղաւնի՝ այնպէս մնչեցի, զի նուաղեցան աչք իմ ՚ի տեսանելոյ։

Հայեցայ ՚ի բարձունս առ տէր ասելով ամբաստանեալ իմ՝ որ փրկեաց զիս, և վարատեցոյց յինէն զցաւս անձին իմոյ։

Տէր, վասն այսորիկ պատմեցաւ քեզ, զարհուցեր զանձն իմ. դարձուսցեր զհոդի իմ. մխիթարեցայ և կեցի։

Ահա ՚ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ. փրկեցեր զանձն իմ, զի մի՛ կորեայց, և ընկեցեր յետոյ զամենայն զմեղս իմ։

Զի ոչ թէ որք ՚ի դժոխս են՝ խոստովան առնին առ քեզ. և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ. և ոչ յուսացին ՚ի ճշմարտութիւնս քո ամենեքեան, որք իջանեն ՚ի դժոխս։

Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ

տէր. որպէս և ես այսու հետեւ մանկունս ծնայց, որք պատմեսցեն զարդարութիւնս քո՝ տէր փրկութեան իմոյ։

Ես ոչ եւս դադարեցայց օրհնել զքեզ յօրհնութիւն նոր զամենայն աւուրս կենաց իմոց յանդիման տաճարիդ աստուծոյ։

Փառք Հօր և որդւոյ և։

ՄԱՂԹԱՆՔ

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան տէր յիսուս փրկիչ, փրկեա և փարատեցո զցաւս անձին իմոյ։ Արդասէր տէր, վասն սրբոյ հոգւոյ անարատ մօր քոյ և կուսի, և վասն խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

զԳարեղն եւ զաղօթս ՚ի վերջն նչխէ պոռնկն կանոնին զոցես յ՚87 երեսն։



Եւ ՚ի քրովբէս եւ թռեաւ, սլացաւ
նա ՚ի թեւս հողմոց։

ՍԱՂՄՈՍ ԺԹ։

Ալէլուիա։

ԽՈՍՏՈՎԱՆ եղերուք տեառն զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասացեն փրկեալք տեառն, զորս փրկեաց ՚ի ձեռաց թշնամւոյն։

Յամենայն գաւառաց ժողովեաց զնոսա, յարեւելից և յարեւմտից, ՚ի հիւսիսոյ և ՚ի ծովէ։

Մոլորեցան նոքա յանապատի յանջուրդի ճանապարհի, և քաղաք բնակութեան ոչ գտին։

Քաղցեան և ծարաւեցան, և անձինք նոցա ՚ի նոսին նուաղեցան։

Աղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան իւրեանց՝ և ՚ի վշտաց նոցա փրկեաց զնոսա։

Առաջնորդեաց նոցա ՚ի ճանապարհ ուղիղ, զի երթիցեն ՚ի քաղաք բնակութեան իւրեանց։

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց նորա, և սքանչելեաց նորա որդիք մարդկան։

Զի յագեցոյց զանձինս քաղցեալս, և զանձինս կարօտեալս լի արար բարութեամբ։

Որ նստէին ի խաւարի և ի ստուերս մահու, կապեալ էին յաղքատութեան որպէս յերկաթս։

Զի դառնացուցին զբանն աստուծոյ, և զխորհուրդս բարձրելոյն բարկացուցին։

Խոնարհ եղեն ի ցաւոց սիրտք նոցա, տկարացան և ոչ ոք էր՝ որ օգնէր նոցա։

Աղաղակեցին առ տէր ի նեղութեան իւրեանց՝ ի վշտաց նոցա եհան զնոսա։

Փրկեաց զնոսա ի խաւարէ և ի ստուերաց մահու, և խզեաց զկապանս նոցա։

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց նորա, և սքանչելեաց նորա որդիք մարդկան։

Զի փշրեաց զդրունս պղնձիս, և զնիգս երկաթիս խորտակեաց։

Օգնեաց նոցա ի ճանապարհի անօրէնութեան իւրեանց՝ զի վասն մեղաց իւրեանց խոնարհ եղեն յոյժ։

Յամենայն կերակրոց գարշէին սիրտք նոցա մերձեցան մինչեւ ի դրունս մահու։

Աղաղակեցին առ տէր ի նեղութեան իւրեանց, ի վշտաց նոցա ապրեցոյց զնոսա։

Առաքեաց զբան իւր և բժշկեաց զնոսա, և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց։

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց նորա, և սքանչելեաց նորա որդիք մարդկան։

Մատուսցեն նմա պատարագ օրհնութեան, և պատմեսցեն զգործս նորա ցնծութեամբ։

Որ իջանէին ի ծով նաւուք, և առնէին զգործս ի ջուրս բազումս։

Նոքա տեսին զգործս տեառն և զքաջութիւս նորա ի խորս անդնդոց։

Ասաց՝ և յարեաւ հողմ և մրրիկ,
և բարձրացան ալիք նորա։
Ելանէին յերկինս և իջանէին յան-
դունդս. և անձինք նոցա յանձինս
իւրեանց մաշեցան։
Խռովեցան սասանեցան որպէս արբ-
բեալք, և ամենայն իմաստութիւն
նոցա բնկաւ։
Աղաղակեցին առ տէր ՚ի նեղու-
թիւն իւրեանց. ՚ի վշտաց նոցա
կեցոյց զնոսա։
Դարձոյց զմրրիկն յօդս՝ և դադա-
րեցան ալիք նորա. ուրախ եղեն զի
դադարեցան, և առաջնորդեաց
նոցա ՚ի նաւահանգիստ կամաց իւր-
եանց։
Խոստովան եղիցին տեառն ողոր-
մութեանց նորա, և սքանչելեաց
նորա որդիք մարդկան։
Բարձր արասցեն զնա ՚ի ժողովս ժո-
ղովրդոց, և յաթոռս ծերոց օրհ-
նեսցեն զնա։
Զի դարձոյց գգետն ՚ի ցամաք, և
գգնացս ջուրց յերկիր ծարաւուտ։

Աւրար զերկիրն պտղաբեր յաղտաղ
տուկս, վասն չարութեան բնակ-
չաց նոցա։
Աւրար զանապատն ՚ի ճահիճս ջուրց,
և զերկիրն ծարաւուտ ՚ի գնացս
ջուրց։
Բնակեցոյց ՚ի նմա քաղցեալս, և
շինեցին քաղաք բնակութեան իւր-
եանց։
Վարեցին արտս և տնկեցին այգիս,
և արարին պտուղ արմտեաց իւր-
եանց։
Օրհնեաց զնոսա՝ և բազմացան յոյժ.
և անասունք նոցա ոչ նուազեցան։
Նուազեցան նոքա և չարչարեցան,
՚ի նեղութենէ չարեաց և ՚ի վշտաց։
Եկն անարգութիւն ՚ի վերայ իշխա-
նաց նոցա. մոլորեցոյց զնոսա յա-
նապատի և ոչ ՚ի ճանապարհի։
Օգնեաց տնանկին յաղքատութեան,
և առաջնորդեաց որպէս խաշին
ազգի նոցա։
Տեսցեն ուղիղք և ուրախ եղիցին,
և ամենայն անօրէնն խցցէ զբերան
իւր։

Ո՞վ է խմաստուն՝ որ պահիցէ զայս, և ’ի միտ առցէ զողորմութիւնս տեառն։

Ցունք խբ։

ՍԱՂՄՈՍ ՃԾ։

Օրհնութիւն. Սաղմոսաց Դաւթի։

Պատրաստ է սիրտ իմ աստուած, պատրաստ է սիրտ իմ օրհնել և սաղմոս ասել քեզ փառօք իմովք։ Զարթիր փառք իմ, զարթիր սաղմոսիկ և օրհնութեամբ, և ես զարթեայց առաւօտուց։ Խոստովան եղէց քեզ ’ի ժողովուրդս տէր. և սաղմոս ասացից քեզ յազինս։ Մեծ եղեր մինչեւ յերկինս ողորմութիւն քո, մինչեւ յամպս ճշմարտութիւն քո։ Բարձրեալ ես դու յերկինս աստուած, և յամենայն երկրի են փառք քո։ Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աջով քով և լուր մեզ։

Աստուած խօսեցաւ ’ի սրբութենէ իւրմէ, բարձր եղէց՝ բաժանեցից զխնքեմ, և զհովիտսն յարկաց չափեցից։

Իմ է գաղաադ և իմ է մանասէ, եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։ Յուդա թագաւոր իմ, մովաբ աւազան յուսոյ իմոյ։ Յեդովմէ ուղեցից զգնացս իմ, և ինձ այլազգիք հնազանդ եղեն։ Ո՞տարցէ զիս ’ի քաղաք ամուր, կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչեւ յեդովմէ։

Եթէ ոչ դու աստուած, որ մեր ժեցեր զմեզ. և ոչ ելեր աստուած ընդ զօրս մեր։ Տուր մեզ օգնութիւն ’ի նեղութենէ, զի սուտ է փրկութիւն մարդոյ։ Աստուծով արասցուք զօրութիւն, և նա յամօթ արասցէ զթշնամիս մեր։

Ցունք ժդ։

ՍԱՂՄՈՍ ՃԸ.

ի կատարած Պաղոս Դաշբի։

Աստուած օրհնութեան իմոյ մի՛ լռեր, զի բերան մեղաւորի՝ բերան նենգաւորի բացաւ՝ ի վերայ իմ։ Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ, և բանիւ ատելութեան պատերեցին զիս։

Մարտեան ընդ իս՝ ի տարապարտուց. փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի։ Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ։

Կացո՝ ի վերայ նորա մեղաւոր. սատանայ կացցէ ընդ աջմէ նորա։ Ի դատաստանի իւրում ելցէ դատապարտեալ, և աղօթք նորա՝ ի մեղս դարձցին։

Եղիցին աւուրք նորա նուազ, և զայցելութիւն նորա զայն այլ տարցէ։

Եղիցին որդիք նորա որբ, և կին

նորա այրի. սահեսցին փոփոխեսցին. որդիք նորա մուրացք եղիցին և ելցեն՝ ի բնակութենէ իւրեանց։ Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նորա. և յափշտակեսցեն. օտարք զվաստակս նորա։

Մի՛ գոցի օգնական նմա, և մի՛ ոք ողորմեսցի՝ ի վերայ որբոց նորա։ Եղիցին որդիք նորա՝ ի սատակումն, և յաղգէ ջնջեսցի անուն նորա։ Յիշեսցին մեղք հօր նորա առաջի տեառն, և մեղք մօր նորա մի՛ ջընջեսցին, և եղիցին առաջի տեառն յամենայն ժամ։

Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա, փոխանակ զի ոչ յիշեաց առնել ողորմութիւն։

Հալածեաց զայր աղքատ և զտըժնանկ. սպանանել զայն՝ որ խոնարհ է սրտիւ։

Սիրեաց զանէծս՝ և ելցէ նմա. ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի՝ ի նմանէ։

Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ.

մոցէ որպէս ջուր ՚ի փոր նորա, և որպէս ձէթ ընդ ոսկերս նորա։
Եղիցի նմա որպէս հանդերձ՝ զի ա֊ գանի, որպէս գօտի՝ որ ածի հանա֊ պազ ընդ մէջ։
Այս գործ է այնոցիկ՝ որք չարախօս կային զինէն առ տէր, և որք խօ֊ սէին չար զանձնէ իմմէ։
Այլ դու տէր տէր՝ արա ընդ իս ըստ անուան քումմ, զի քաղցր է ո֊ ղորմութիւն քո, և փրկեա զիս, զի աղքատ և տնանկ եմ ես։
Սիրտ իմ խռովեցաւ ՚ի փորի իմում, և ես որպէս ստուեր ՚ի խուսափել իմում պակասեցայ, և թօթափե֊ ցայ որպէս մարախ։
Ծունկք իմ տկարացան ՚ի պահոց, և մարմին իմ այլագունեցաւ յիւղոյ։
Եղէ ես նախատ նոցա. տեսին զիս՝ և շարժեցին զգլուխս իւրեանց։
Օգնեա ինձ տէր աստուած իմ, և փրկեա զիս ըստ ողորմութեան քումմ։
Ծանիցեն զի ձեռն քո այս է, և

դու տէր արարեր զայս։
Նզքա անիծանեն և դու օրհնեա֊ ցես. յարուցեալ են ՚ի վերայ իմ, զամօթ կրեսցեն. այլ ծառայ քո ուրախ եղիցի ՚ի քեզ։
Զգեցցին զամօթ՝ որք չարախօս կային զանձնէ իմմէ. և արկցեն որ֊ պէս կրկնոց զամօթ իւրեանց զիւր֊ եամբք։
Այլ ես խոստովան եղէց առ տէր յոյժ բերանով իմով, և ՚ի մէջ բազ֊ մաց օրհնեցից զքեզ։
Զի եկաց նա ընդ աջմէ տնանկին, ՚ի փրկել զիս յայնցանէ՝ որք հալածեն զանձն իմ։
Տունք իբ։

ՍԱՂՄՈՍ ՃԹ.

Ի կատարած Սաղմոս Դաւթի։

Ասաց տէր տէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնա֊ միս քո պատուանդան ոտից քոց։
Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ տէր ՚ի սիօնէ, և տիրեսցես

դու ՚ի մէջ թշնամեաց քոց։
Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրուց
թեան. ՚ի վայելչութիւն սրբոց քոց
յարգանդէ յառաջ քան զարուսա-
եակ ծնայ զքեզ։
Երդուաւ տէր և ոչ եւս զղջասցի
թէ դու ես քահանայ յաւիտեան
ըստ կարգին մելքիսեդեկի, և տէր
ընդ աջմէ քումմէ։
Խորտակեսցէ յաւուր բարկութեան
զթագաւորս, դատէ զհեթանոսս,
և բազում առնէ զհարուածս, և
խորտակեսցէ զգլուխս բազմաց
յերկրի։
Ջուղխս ՚ի ճանապարհի արբուսցէ.
վասն այսորիկ և բարձր արասցէ
զգլուխս։
Տունք ՁԻ. Գոբզայս կը։

ՍԱՂՄՈՍ ՃԺ.

Ալէլուիա։
Խոստովանեսցիմ քեզ տէր բոլորով
սրտիւ իմով, ՚ի խորհուրդս ուղղոց
՚ի ժողովուրդս մեծ են գործք տեա-

ռըն, և քննեալ են յամենայնի կամք
նորա։
Խոստովանութիւն և վայելչութիւն
են գործք նորա. արդարութիւն
նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։
Յիշատակ արար սքանչելեաց իւրոց
ողորմած և ողորմած է տէր,
կերակուր տայ երկիւղածաց իւրոց։
Յիշեսցէ յաւիտենից զուխտ իւր,
զգօրութիւն գործոց իւրոց պատ-
ուիրեաց ժողովրդեան իւրում։
Տալ նոցա զժառանգութիւն հե-
թանոսաց. և գործք ձեռաց նորա
արդարութիւն և իրաւունք են։
Հաւատարիմ են յամենայնի պատ-
ուիրանք նորա. հաստատեալ են
յաւիտեանս յաւիտենից. արար-
եալ են ճշմարտութեամբ և ուղ-
ղութեամբ։
Փրկութիւն առաքեաց տէր ժողո-
վըրդեան իւրում. պատուիրեաց
յաւիտենից զուխտ իւր. սուրբ և
ահեղ է անուն նորա։
Սկիզբն զգօնութեան երկիւղ տեա-

ուքն. խմաստութիւն բարի ամենեցուն՝ որ առնեն զնա, և օրհնութիւն նորա միայ յաւիտենից յաւիտենից։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԺԱ.

Ալէլուիա. 'ի վերայ ապաշխարութեան և Անցեալ եւ Ջաքարիայ։

Երանեալ է այր՝ որ երկնչի 'ի տեառնէ, զպատուիրանս նորա նա կամի յոյժ։

Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա, և ազգ ուղղոց օրհնեսցի։

Փառք և մեծութիւն են 'ի տան նորա. արդարութիւն նորա միայ յաւիտեանս յաւիտենից։

Ծագեաց 'ի խաւարի լոյս ուղղոց, ողորմած գիմած և արդար է տէր։

Քաղցր այր ողորմի և տայ փոխ. յօրինէ զբան իւր 'ի դատաստանի, զի յաւիտեան նա մի՛ սասանեսցի։

Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն. 'ի համբաւէ չարէ նա մի՛ երկնչիցէ։

Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ աստուած։

Հաստատեալ է սիրտ նորա, և նա մի՛ երկնչիցէ՝ մինչեւ տեսցէ 'ի թշնամիս իւր։

Սփռեաց՝ և ետ աղքատաց. արդարութիւն նորա միայ յաւիտեանս յաւիտենից, և եղջիւր նորա բարձրը եղիցի փառօք։

Մեղաւորն տեսցէ և բարկասցի. զատամունս իւր կրճտեսցէ և հալեսցի. և ցանկութիւն մեղաւորացն կորիցէ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՃԺԲ.

Ալէլուիա։

Օրհնեցէք մանկունք զտէր, և օրհնեցէք զանուն տեառն։

Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Յարեւելից մինչեւ 'ի մուտս արեւու, օրհնեալ է անուն տեառն։

Բարձր է 'ի վերայ ամենայն ազգաց տէր, և յերկինս են փառք նորա։

Ո՞վ է որպէս տէր աստուած մեր
՝ի բարձունս բնակեալ, և զխոնար-
հս տեսանէ յերկինս և յերկրի:
Յարուցանէ զաղքատս յերկրէ, և
բարձր առնէ զտառապեալս յաղ-
բեւաց:
Նստուցանէ զնոսա իշխանս ընդ
իշխանս ժողովրդեան իւրոյ:
Բնակեցուցանէ զամուլն ՝ի տան ու-
րախասիրտ որպէս մայր որդւովք
բերկրեալ:

Տունք ը:

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ.

Ալէլուիա:

Յելանելն իսրայելի յեգիպտոսէ.
տանն յակովբայ ՝ի ժողովրդենէ
այլազգեաց:
Եղեւ հրեաստան սրբութիւն նո-
ա, և իսրայէլ իշխանութիւն նորա:
Ծով եռես և փախեաւ, և յորդա-
նան անդրէն դարձաւ:
Լերինք ցնծացեն որպէս խոյք, և
բլուրք որպէս գառինք մաքեաց:
Զի՞ ե՛ք քեզ ծով, զո՞ տեսեր և փա-

խեար. կամ դու յորդանան՝ զի՞ դար-
ձար անդրէն:
Լերինք՝ ցնծացէք որպէս խոյք, և
բլուրք որպէս գառինք մաքեաց:
Յերեսաց տեառն սասանեցաւ եր-
կիր, յերեսաց աստուծոյ յակովբայ:
Ո դարձոյց զվէմն ՝ի վտակս ջրոց,
և զապառաժն յաղբերակունս:
Մի մեզ տէր՝ մի մեզ, այլ անուան
քում տուր զփառս վասն ողորմու-
թեան և ճշմարտութեան քոյ:
Մի երբէք ասասցեն ՝ի հեթանոսս.
թէ ո՛ւր է աստուած նոցա:
Աստուած մեր յերկինս և յերկրի,
զամենայն զոր ինչ կամեցաւ՝ և
արար:
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ
են, ձեռագործ են որդւոց մարդ-
կան:
Բերան ունին, և ոչ խօսին. աչս
ունին, և ոչ տեսանեն:
Ականջս ունին, և ոչ լսեն. ունչս
ունին, և ոչ հոտոտեն:
Ձեռս ունին, և ոչ շօշափեն. ոտս

ուն[ին], և ոչ գնան, և ոչ գոյ բար-
բառ ՚ի կոկորդս նոցա։
Եմ[ան] նոցա եղիցին՝ ոյք արարին
զնոսա, ամենեքեան ոյք յուսացեալ են ՚ի նոսա։
Տուն[ն] իսրայէլի յուսացաւ ՚ի տէր.
օգնական և ընդունող է նոցա։
Տուն[ն] ահարոնի յուսացաւ ՚ի տէր.
օգնական և ընկերող է նոցա։
Երկիւղածք տեառն յուսացան ՚ի
տէր, օգնական և փրկիչ է նոցա։
Յիշեաց զմեզ տէր և օրհնեաց զմեզ.
օրհնեաց տէր զտուն[ն] իսրա-
յէլի. օրհնեաց տէր զտուն[ն] ահա-
րոնի։
Օրհնեաց տէր զերկիւղածս իւր,
զփոքրկունս և զմեծամեծս։
Յաւելցէ ՚ի ձեզ տէր, ՚ի ձեզ և
յորդիս ձեր։
Օրհնեալ էք դուք ՚ի տեառնէ, որ
արար զերկինս և զերկիր։
Երկինք երկնից տեառն են. և զեր-
կիր ետ որդւոց մարդկան։
Ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ

տէր, և ոչ ամենեքեան՝ ոյք իջա-
նեն ՚ի դժոխս։
Այլ կենդանիքս օրհնեսցուք զք-
եզ տէր, յայսմհետէ մինչեւ յա-
ւիտեան։

Տուն[ք իշ։ Գորգայս ծբ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ.

Ալէլուիա։

Սիրեցի զի լսիցէ տէր զձայն աղո-
թից իմոց. զի խոնարհեցոյց զուն[ն]
իւր առ իս, և ես յաւուրս իմ
կարդացի առ նա։
Շրջեցան զինեւ երկունք մահու,
և վիշտք դժոխոց գտին զիս։
Զնեղութիւն և զանձկութիւն գը-
տի, և զանուն տեառն կարդացի։
Ո՛ տէր՝ փրկեա զանձն իմ. ողորմած
աստուած մեր ողորմի, և պահէ
զտղայս տէր։
Ես խոնարհ եղէ՝ և տէր կեցոյց
զիս. դարձ անձն իմ ՚ի հանգիստ
քո, զի տէր օգնեաց քեզ։

փրկեաց զանձն իմ ’ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց և զոտս իմ ’ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց:

Տունք ԺԵ:

ՍԱՂՄՈՍ ՃԺԵ.

Ալէլուիա:

Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ:

Ես ասացի ’ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է:

Զի՞նչ տացու տիրոջս տեառն ընդ ամենայնի զոր և ետ ինձ:

Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տեառն կարդացից:

Զաղօթս իմ տեառն տացու առաջի ամենայն ժողովրդեան նորա:

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց, ո՛ տէր, ես ծառայ քո եմ. ծառայ և որդի աղախնոյ քո:

Հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն տեառն կարդացից:

Զաղօթս իմ տեառն տացու առաջի ամենայն ժողովրդեան նորա, ’ի գաւիթս տան տեառն, և ’ի մէջ քո, Երուսաղէմ:

Տունք Ը:

ՍԱՂՄՈՍ ՃԺԶ.

Ալէլուիա:

Օրհնեցէք զտէր ամենայն ազինք, գովեցէք զնա ամենայն ժողովուրդք:

Զօրացաւ ողորմութիւն նորա ’ի վերայ մեր, և ճշմարտութիւն տեառն յաւիտեան:

Տունք Բ:

ՍԱՂՄՈՍ ՃԺԷ.

Ալէլուիա:

Խոստովան եղերուք տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցէ տունն իսրայէլ՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցէ տունն ահարոնի՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասացեն երկիւղածք տեառն՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի, և լուաւ ինձ յանդորը։
Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։
Տէր է իմ օգնական, և ես տեսից ՚ի թշնամիս իմ։
Բարի է յուսալ ՚ի տէր քան յուսալ ՚ի մարդիկ, բարի է յուսալ ՚ի տէր քան յուսալ ՚ի իշխանս։
Ամենայն ազինք շրջեցան զինեւ, և անուամբ տեառն յաղթեցի նոցա։
Շրջելով շրջեցան զինեւ, և պաշարեցին զիս ՚ի միասին, և անուամբ տեառն վանեցի զնոսա։
Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ՚ի հուր, և անուամբ տեառն մերժեցի զնոսա։
Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ ՚ի գլորել, և տէր ընկալաւ զիս։
Զօրութիւն իմ և օգնութիւն իմ տէր, և եղեւ ինձ ՚ի փրկութիւն։

Ձայն ցնծութեան փրկութեան ՚ի յարկս արդարոց։
Աչ տեառն արար զօրութիւն, աչ տեառն բարձր արար զիս, և աչ տեառն արար զօրութիւն։
Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս տեառն։
Խրատեալով խրատեաց զիս տէր, և ՚ի մահ ոչ մատնեաց։
Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն, և խոստովան եղէց տեառն։
Այս դուռն տեառն է, և արդարք մտանեն ընդ սա։
Խոստովան եղէց քեզ, տէր, զի լուար ինձ, և եղեր ինձ ՚ի փրկութիւն։
Վէմն զոր անարգեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան։
Ի տեառնէ եղեւ այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց։
Այսօր է զոր արար տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ՚ի սմա։

Ո՛ տէր, վրկեա, ո՛ տէր, առաջնոր-
դեա. օրհնեալ որ գալոց ես յա-
նուն տեառն, և օրհնեցաք զքեզ
՚ի տանէ տեառն:

Տէր աստուած մեր երեւեցաւ մեզ,
արարէք տօնս ուրախութեան կանգ-
խաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Աստուած իմ ես դու՝ և խոստո-
վան եղէց քեզ. աստուած իմ ես
դու՝ և բարձր արարից զքեզ:

Խոստովան եղէց քեզ, տէր, զի լը-
սար ինձ, և եղեր ինձ ՚ի փրկու-
թիւն:

Խոստովան եղերուք տեառն զի բա-
րի է, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա:

Տունք իբ: Գորգայս խդ:

ՍԱՂՄՈՍ ՃԺԵ.

Ալէլուիա:

Երանեալ են ամբիծք ՚ի ճանապար-
հի, և որք գնան յօրէնս տեառն:
Երանի որք քննեն վկայութիւնս

նորա, բոլորով սրտիւ խուզեանց
խնդրեսցեն զնա:

Ոչ թէ որք գործեն զանօրէնու-
թիւն, ՚ի ճանապարհս նորա գնաց-
դեն:

Դու պատուիրեցեր զպատուիրանս
քո ՚ի պահել ինձ յոյժ:

Երանի թէ յաջողեալ էին ինձ ճա-
նապարհք իմ ՚ի պահել ինձ զարդա-
րութիւնս քո:

Յայնժամ ես ոչ ամաչէի ՚ի դիւշա-
նալ ինձ ՚ի պատուիրանս քո:

Խոստովան եղէց քեզ, տէր, յուղղու-
թիւն սրտի իմոյ, որպէս ուսայց
զիրաւունս արդարութեան քո:

Զիրաւունս քո պահեցի, մի՛ թող-
ուր զիս մինչ իսպառ:

Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճա-
նապարհս իւր, այլ ՚ի պահել ըզ-
բանս քո:

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի ըզ-
քեզ, մի՛ մերժեր զիս ՚ի պատուի-
րանաց քոց:

Ի սրտի իմում թագուցի զբանս

քո, որպէս զի մի՛ մեղայց քեզ։
Օրհնեալ ես դու, տէր, ուսո՛ զիս
զարդարութիւնս քո։
Շրթամբք իմովք պատմեցից զամե-
նայն իրաւունս բերանոյ քո։
Ի ճանապարհս վկայութեանց քոց
զուարճացայ, որպէս յամենայն՛ ի
մեծութեան։
Ի պատուիրանս քո հոգացայ, և
դիտուշացայ՛ ի ճանապարհս քո։
Զիրաւունս քո խոսեցայ, և ոչ մո-
ռացայ զբանս քո։
Հատո ծառայի քում, զի կեցից և
պահեցից զբանս քո։
Զարթո զաչս իմ, և նայեցայց՛ ի
սքանչելիս օրինաց քոց։
Պանդուխտ եմ ես երկրի, մի՛ թա-
դուցաներ յինէն զպատուիրանս քո։
Փափաքեաց անձն իմ՛ ի ցանկալ
ինձ յիրաւունս քո յամենայն ժամ։
Սաստեցեր ամբարտաւանից, անի-
ծեալ՝ որք խոտորեցան՛ ի պատուի-
րանաց քոց։
Ի քաց արա յինէն զնախատինս և

զարհամարհանս, զի զվկայութիւնս
քո խնդրեցի։
Գանգի նստան իշխանք և չարախո-
սեին զինէն, այլ ծառայ քո խորհէր
յիրաւունս քո։
Զի վկայութիւնք քո խոսք իմ էին,
և խորհուրդք իմ արդարութիւն քո։
Մերձեցաւ անձն իմ՛ ի հող. տէր,
կեցո զիս ըստ բանի քում։
Զճանապարհս իմ պատմեցի քեզ,
և լուար ինձ. ուսո՛ զիս զարդա-
րութիւնս քո։
Ի ճանապարհս արդարութեանց
քոց իմաստուն արա զիս, և քննե-
ցից զսքանչելիս քո։
Տքնեցաւ անձն իմ առ՛ ի ձանձրա-
նալ. հաստատեա զիս՛ ի բանս քո։
Զճանապարհս մեղաց՛ ի բաց արա
յինէն, և յօրէնս քո ողորմեա ինձ։
Զճանապարհս ճշմարտութեան քո
ընտրեցի, և զիրաւունս քո ես ոչ
մոռացայ։
Մերձեցայ ես՛ ի վկայութիւնս քո.
տէր, մի՛ յամօթ առներ զիս։

Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորը արարեր սրտի իմոյ։

Օրէնսդէտ արա, զիս տէր, ի ճանապարհս իրաւանց քոց, և խնդրեցից զնա յամենայն ժամ։

Իմաստուն արա զիս. և քննեցից զօրէնս քո, և պահեցից զնա բոլոր սրտիւ իմով։

Առաջնորդեա ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ։

Խոնարհեցո զսիրտ իմ ի վկայութիւնս քո, և մի՛ յագահութիւն։

Դարձո զաչս իմ, զի մի՛ տեսից ընդ նանրութիւն. ի ճանապարհս քո կեցո զիս։

Հաստատեա ծառայի քում զբան քո յերկիւղ քո։

Հան յինէն զնախատինս, զոր և կարծեցի. զի դատաստանք քո քաղցր են։

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութեան քում կեցո զիս։

Եկեսցէ՛ ի վերայ իմ ողորմութիւնդ քո տէր, և փրկութիւնդ քո ըստ բանի քում։

Տացե պատասխանի ոչ նախատեն զիս բանիւք, զի յես ի բանս քո յուսացայ։

Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրութ, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ի պատուիրանս քո, զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո զոր սիրեցի, և խորհէի յարդարութեան քում։

Ցիշեա զբան ծառայի քո, յորմէ՛ և յուսացուցեր զիս։

Սա միսիթարեսցէ զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս։

Սքաղաքացիք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զերկրաւունս քո յաւիտենից տէր, և միսիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց, և զայք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո ՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տէր, և պահեցի զօրէնս քո։

Սա եղեւ ինձ ճանապարհ ՚ի կեանս, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Ցունք ծգ։

Ալէփ։

Բաժին իմ ես դու տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։

Աղաչեցի զերեսս քո բովանդով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում։

Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ, և դարձուցի զոտս իմ ՚ի վկայութիւնս քո։

Պատրաստեցայ և ոչ խոտորեցայ, զի պահեցի զպատուիրանս քո։

Տուունք մեզաց պատեցան զինեւ, այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Ի՝մէջ գիշերի յառնէի խոստովանել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո։

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց, որոց պահէին զպատուիրանս քո։

Ողորմութեամբ տեառն լի եղեւ երկիր, զարդարութիւնս քո ուսո ինձ։

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայ քում տէր ըստ բանի քում։

Զքաղցրութիւն, զիմաստ և զգիտութիւն ուսո ինձ, զի ՚ի պատուիրանս քո ես հաւատացի։

Մինչեւ խոնարհեալ էի ես՝ մեղայ. վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։

Քաղցր ես դու, տէր, և քաղցրու-
թեամբ քով ուսո ինձ զարդարու-
թիւնս քո։
Բազմացան յիս անիրաւութիւնք
ամբարտաւանից. այլ ես բոլորով
սրտիւ իմով քննեցի զպատուիրա-
նս քո։
Մածան որպէս կաթն սիրտք նոցա.
այլ ես զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ զի խոնարհ արարեր
զիս, որպէս ուսայց զարդարու-
թիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո,
քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին և ստեղծին զիս.
իմաստուն արա զիս, և ուսայց ըզ-
պատուիրանս քո։
Երկիւղածք քո տեսցեն զիս և ու-
րախ եղիցին, զի ես ի բանս քո
յուսացայ։
Ծանեայ տէր զի արդարութեամբ
են դատաստանք քո. յիրաւի խո-
նարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւնք քո ի մխիթարել

զիս, ըստ բանի քում ծառայիս քո։
Եկեսցեն յիս ողորմութիւնք քո՝ և
կեցից, զի օրէնք քո խօսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք ի
տարապարտուց անիրաւեցան յիս.
այլ ես հոգացայ ի պատուիրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և
որք ճանաչեն զվկայութիւնս քո։
Եղիցի սիրտ իմ ամբիծ յարդարու-
թեան քում, զի մի՛ ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ ի փրկու-
թիւնդ քո, զի ես ի բանս քո յուսացայ։
Սպասեցին աչք իմ բանի քում. ա-
սացի՝ ե՞րբ մխիթարեսցէ զիս։
Եղէ ես որպէս տիկ ի պարզի, զի
զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո.
ե՞րբ արասցես ինձ իրաւունս ի հա-
լածչաց իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխորհուր-
դս, այլ ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ
են. ի նանիր հալածեցին զիս, օգ-
նեա ինձ։

փոքր մի եւս և կորուսանէին զիս յերկրի, այլ ես ոչ թողի զպատուհասանս քո։

Ըստ ողորմութեան քում կեցո զիս, և պահեցից զվկայութիւնս բերանոյ քոյ։

Յաւիտեան տէր բան քոյ կայ յերկինս, ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն քո։

Հաստատեցեր զերկիր՝ և կայ։

Հրամանի քում մնայ տիւ, զի ամենեքեան ծառայք քո են։

Եթէ ոչ օրէնք քո խոսք իմ էին, կանխաւ եւս արդեօք կորուսեալ էի՛ ի խոնարհութեան իմում։

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո, զի նոքօք կեցուցեր զիս։

Քո եմ ես և կեցո զիս, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Ինձ սպասեցին մեղաւորք՝ ի կորուսանել, զի զվկայութիւնս քո ես՛ ի միտ առի։

Յամենայն կատարածի տեսի զվախ-

ճան. յոյժ անզօրը էին լինձ պատուիրանք քո։

Ոսկեա սիրեցի զօրէնս քո, զօրհնատազ խոսք իմ էին։

Քան զձեռնամիս իմ իմաստուն արարեր զիս՛ ի պատուիրանս քո, զի յաւիտեան իմ էին։

Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն եղէ, զի վկայութիւնք քո խոսք իմ էին։

Քան զծերսն իմաստուն եղէ, զի ըզպատուիրանս քո քննեցի։

Յամենայն ճանապարհս չարաց արգելի զոտս իմ, որպէս զի պահեցից զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի դու օրէնագէտ արարեր զիս։

Որպէս զի քաղցր են՛ ի բերան իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ։

Ի պատուիրանաց քոց իմացեալ ատեցի զամենայն ճանապարհս չարաց, զի դու օրէնագէտ արարեր զիս։

Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս տան շաւղաց իմոց։

Երդուայ և հաստատեցի, զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո։

Խոնարհ եղէ մինչեւ յոյժ. տէր կեաց զիս ըստ բանի քում։

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեաց տէր, և զիրաւունս քո ուսոյ ինձ։

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ, և զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Եդին ինձ մեղաւորք որոգայթ. ի պատուիրանաց քոց ես ոչ մոռացայ։

Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան, զի ցնծութիւնք սրտի իմոյ։

Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան վասն հատուցման։

Ջանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և վրկիչ իմ ես դու, և ես ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք ինէն չարք, և քննեցից պատուիրանս աստուծոյ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում և կեաց զիս, և մի յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ և ապրեցո զիս, և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ի դատաստանաց քոց եբկեայց յոյժ։

Տունք կդ։

Ալէփ։

Արարի իրաւունս և արդարութիւն. մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց։

Ընկալ զծառայս քո ի բարի. զի մի ամբարտաւանք զզուեսցեն զիս։

Սպասեցին աչք իմ. փրկութեան քում սէր, և բանից արդարութեան քո։

Արա ընդ ծառայի քում ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո ինձ։

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո։

Ժամ է պաշտել զտէր, խափանեցին զօրէնս քո։

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո քան զամենայն ոսկի և զտպազիօն։

Ամենայն պատուիրանք քո յաջողեցան ինձ, զի ատեցի ես զՀանապարհս չարաց։

Սքանչելի են վկայութիւնք քո, վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։

Ցայտնութիւն բանից քոց լուսաւորէ և իմաստուն առնէ զտղայս։

Զբերան իմ բացի, և առի զհոգի. ՚ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ։

Նայեա առ իս և ողորմեա ինձ. ըստ

իրաւունս սիրողաց անուան քո։

ԶՀանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում, և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք։

Փրկեա զիս ՚ի զրպարտութենէ մարդկան, և պահեցից զպատուիրանս քո։

Երեւեցո զերեսս քո ՚ի ծառայս քո, և ուսո ինձ զարդարութիւնս քո։

Վտակք ջուրց իջին յաչաց իմոց, զի ոչ պահեցին զօրէնս քո։

Արդար ես դու տէր, և ուղիղ են դատաստանք քո։

Պատուիրեցեր զարդարութի՛ վկայութեանց քոց, և ճշմարիտ են յոյժ։

Մաշեաց զիս նախանձ քո. զի մոռացան զբանս քո թշնամիք իմ։

Ընտրեալ է բան քո յոյժ, և ծառայ քո սիրեաց զսա։

Մանուկ եմ ես և արհամարհեալ, և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։

Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից, և օրէնք քո ճշմարիտ են։

Ներումթիւնք և վիշտք գոին զիս, և պատուիրանք քո խօսք իմ էին։
Արդարութեամբ են վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն արա և կեցո զիս։
Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով. լուր ինձ, տէր, զի զարդարութիւնս քո խնդրեցի։
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա զիս, և պահեցից զվկայութիւնս քո։
Կանխեցի տարաժամու, աղաղակեցի, և ես՝ ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու՝ ի խօսիլ ինձ զբանս քո։
Ձայնի իմում լուր տէր ըստ ողորմութեան քում. և յիրաւունս քո կեցո զիս։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութիւն, զի յօրինաց քոց հեռի եղեն։
Մերձ ես դու, տէր, և ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են։
Ի սկզբանէ ծանեայ՝ ի վկայութեց քոց, զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։

Տես զխոնարհութիւն իմ և փրկեա զիս, զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Դատեա զդատաստանս իմ և փրկեա զիս, և ըստ բանի քում կեցո զիս։
Հեռի է՝ ի մեղաւորաց փրկութիւն, զի զիրաւունս քո ոչ պահեցին։
Գթութիւնք քո բազում են, տէր, և ըստ իրաւանց քոց կեցո զիս։
Բազում են, որք հալածեն և նեղեն զիս. ՚ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ։
Հայեի յանագորոյնս և մաշէի, զի զպատուիրանս քո ոչ պահեցին։
Տես՝ զի զպատուիրանս քո սիրեցի, տէր՝ ողորմութեամբ քո կեցո զիս։
Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է. յաւիտեան են ամենայն իրաւունք արդարութեան քո։
Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր, և ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։
Ցնծացայ ես ՚ի բանս քո որպէս այն՝ որ գտանէ աւար բազում։
Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի։

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ վասն իրաւանց և արդարութեան քո։

Խաղաղութիւն բազում է այնոցիկ՝ որք սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ ՚ի նոսա գայթակղութիւն։

Սպասեցի փրկութեան քում տէր, և զպատուիրանս քո սիրեցի։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ։

Պահեցից զպատուիրանս և զվկայութիւնս քո, զի ամենայն ճանապարհք իմ առաջի քո են։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քով փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Յանկացայ փրկութեան քում տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ՝ և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո՝ զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Տունք ԺԶ։

կանոնս Գոբզայս է։ Սաղմոս ԺԶ։ Տունք յկբ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՑ ԿԱՑՈՒԱԿՆԱՄԱՓՈՒՐ ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷԻՆ

Եսայեայ խբ.

Օրհնեցէք զաստուած յօրհնութիւն նոր. զի իշխանութիւն նորա ՚ի բարձունս փառաւորի։

Եւ անուն նորա փառաւորեալ է ՚ի ծագս ծիւնչեւ ՚ի ծագս երկրի։

Ոյք իջանէին ՚ի ծով նաւուք, կըղզիք և ամենայն բնակիչք նոցա ընդ նոսա։

Ուրախ եղիցի անապատն և ամենայն բնակիչք իւր, ուրախ եղիցին բանակք և բակք կեդարուս, և ուրախ եղիցին բնակիչք վիմին։

Ի գլխոց լերանց գոչեսցեն, տացեն զփառս աստուծոյ, և զքաջութիւն նորա կզկիք պատմեսցեն։

Տէր աստուած զօրութեանց դիմ եալ գայ զարմուցանել զպատերազմ, յարուցանել զնախանձ, վառ հարկանել և գոչել ի վերայ թըշնամեաց իւրոց զօրութեամբ բազմաւ։

Ուրախ եղիցին երկինք ի վերուստ, և ամպք ցօղեսցեն զարդարութիւն։ Բղխեսցէ երկիր զողորմութիւն, և զարդարութիւն՝ առ հասարակ բղխեսցէ։

ԱՂՕԹՔ ՅՈՎՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի, լուաւ աստուած յանդընդոց դժոխոց աղաղակի իմում։

Լուր տէր ձայնի իմում, զի ընկեցեր զիս ի խորս ծովու, և շրջանք դետոց պաշարեցին զիս։

Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ, և ասացի թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Արդ՝ էցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո, զի հեղան զինեւ ջուրք մինչեւ յանձն իմ, և անդունդք անհնարինք պաշարեցին զիս։

Եմուտ գլուխ իմ ընդ փասպաս լերանց. ի վեր ես ի խորս երկրի, և տեսի զնոսա, զի էին որպէս աղիք յաւխտենից, և ելցեն յատականուածեն կեանք իմ։

Ո՛ քեզ տէր աստուած իմ՝ ի նուաղիլ անձին իմոյ կարդացի, և գքեզ տէր յիշեցի, և մտցեն աղօթք իմ՝ ի տաճար սուրբ քո։

Զի պահէին զունայնութիւն և զսուտութիւն, ողորմութենէ իւրեանց մերժեցան։

Ես ի ձայն օրհնութեան խոս-


տուան եղեց քեզ, մատուցից պա-
տարագս տեառն, և կատարեցից
զուխտս իմ ՚ի փրկութեան։
Փառք Հօր և որդւոյ և։



ՄԱՂԹԱՆՔ

Եկեսցեն աղօթք մեր ՚ի տաճար
սուրբ քո. խոնարհեացի ունկն քո
՚ի խնդրուածս մեր։
Մարդասէր տէր, վասն սրբուհւոյ
անարատի մօր քո և կուսի, և վա-
սըն խաչի քո պատուականի, ընկալ
զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

զՓարոյն եւ զաղօթս ՚ի վերջն Մ՚ի Նախոնէից կանոնին
գտցես ՚ի 157 երեսն։



Առաքեա զոգի քո եւ ստեղծցին զնոսա.
եւ նորոգես զերեսս երկրի։

ՍԱՂՄՈՍ ԾԺԹ.

Օրհնութիւնք առաքեալաց։

Ի նեղութեան իմում եկա առ տէր
կարդացի, և լուաւ ինձ տէր. փրկեաց զանձն իմ ի շրթանց նենգաւոր
և ի լեզուէ չարէ։
Զի՞ տացի քեզ կամ զի՞նչ յաւելցի քեզ, լեզու նենգաւոր։
Որպէս նետք հզօրի, զի սրեալ են կայծակամբք կաղնւոյ։
Վա՛յ ինձ զի ընդ երկար եղեւ պանդխտութիւն իմ. և բնակեցայ ես
ի վրանս կեդարու։
Բազում անգամ բնակեաց անձն իմ ընդ այնոսիկ, որք ատէին զողջոյն։
Ես էի խաղաղարար. յորժամ խօսէի, մարտնչէին ընդ իս։

ՍԱՂՄՈՍ ՃԻ.

Օրհնութիւնք ատենաւանաց։

Համբարձի զաչս իմ ի լերինս, ուս-
տի եկեսցէ ինձ օգնութիւն։
Օգնութիւն ինձ ի տեառնէ եկես-
ցէ, որ արար զերկինս և զերկիր։
Մի՛ տար ի սասանութիւն զոտն քո,
և մի՛ ննջեսցէ պահապան քո։
Որպէս ոչ ննջէ և ոչ ի քուն երթ-
թայ, պահապանն իսրայէլի։
Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալ-
դի աջոյ ձեռամբն իւրով։
Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղեսցէ,
և մի՛ լուսին ի գիշերի։
Տէր պահեսցէ զքեզ յամենայն չա-
րէ, պահեսցէ տէր զանձն քո։
Տէր պահեսցէ զմուտ և զել քո՝
յայսմհետէ մինչեւ յաւիտեան։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ.

Օրհնութիւնք ատենաւանաց։

Որպես եղէ ես՝ այգ ասէին ցիս, ի
տուն տեառն երթիցուք մեք։

Հաստատ կային ոտք մեր առ դրունս
քո երուսաղէմ։
Շէրուսաղէմ շինեալ որպէս քաղաք,
և բնակութիւն իւր շուրջ զնովաւ։
Անդ ելանէին ազգք ազգք տեառն,
ի վկայութիւն իսրայէլի խոստովան
լինիլ անուան տեառն։
Անդ արկեալ են աթոռք դատաս-
տանի. աթոռս արկեալ են ի տան
դաւթի։
Հարցէք զողջոյնս երուսաղէմի, և
շինութիւնն՝ այգ սիրէք զտէր։
Եղիցի խաղաղութիւն ի զօրու-
թեան քում, և հինութիւն յաշտա-
րակս յամուրս քո։
Վասն եղբարց և ընկերաց իմոց խօ-
սեցայ զխաղաղութիւն. վասն քո
և վասն տեառն աստուծոյ մերոյ
խնդրեցաք զբարութիւն ի քէն։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

Օրհնութիւնք ատենաւանաց։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ,
որ բնակեալդ ես ի յերկինս։

Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն տեառն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր աստուած մեր, մինչեւ ողորմեսցիս ՚ի վերայ մեր։

Ողորմեա մեզ տէր ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ արհամարհանօք ամբարտաւանից։

Տունք ե։

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ։

Օրհնութիւնք աստիճանաց։

Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասասցէ Իսրայէլ, եթէ ոչ տէր էր առ մեզ։

Ընդ յառնել մարդկան ՚ի վերայ մեր, կենդանեօն կամեցան կլանել զմեզ։

Ի բարկանալ սրտմտութեամբ նոցա ՚ի վերայ մեր, ապա և զմեզ ուրեմն ընկղմեսցին զմեզ։

Ընդ ուղիս անցին անձինք մեր, անցին անձինք մեր ընդ ուղիս անդադար։

Օրհնեալ է տէր, որ ոչ ետ զմեզ յոտս առամանց նոցա։

Անձինք մեր ապրեցան որպէս ճնճղուկ՝ ՚ի վերոգայթէ որսողաց։

Որոգայթք նոցա խզեցան, և մեք ապրեցաք։

Օգնութիւն է մեզ յանուանէ տեառն, որ արար զերկինս և զերկիր։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ։

Օրհնութիւնք աստիճանաց։

Որ յուսայ ՚ի տէր որպէս լեառն սիօն, մի սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն է յերուսաղէմ։

Լերինք շուրջ են զնովաւ, տէր շուրջ է զժողովրդեամբ իւրով յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Ոչ թողու տէր զգաւազան մեղաւորաց ՚ի վիճակս արդարոց. և արդարք մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն։

Բարի առնէ տէր բարեաց, և այնոցիկ որ ուղիղ են սրտիւք։

Իսկ զԹիւրեալսն ՚ի յափշտակու-
Թիւն, տանի զնոսա տէր ընդ այնո-
սիկ որք գործեն զանօրէնուԹիւն,
խաղաղուԹիւն ՚ի վերայ Իսրայէլի։

Տունք ԺԲ։ Գոլղայս Խ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ։

Օրհնուրիւնք ատուիձանաց։

Ի դարձուցանել տեառն զդերու-
Թիւն սիովնի, և եղաք մեք ՚մխի-
Թարեալք։
Յայնժամ լցան բերանք մեր խնդու-
Թեամբ և լեզուք մեր ցնծուԹեամբ։
Յայնժամ ասասցեն ՚ի հեթանոս,
մեծ արար տէր զառնելն իւր ընդ
նոսա. մեծ արար տէր զառնելն իւր
ընդ մեզ. և մեք եղաք բերկրեալք։
Դարձո տէր զդերուԹիւնս մեր
որպէս զուգիս ՚ի հարաւոյ. որք
վարեին արտասուօք, ցնծուԹեամբ
հնձեսցեն։
Երթալով երթային և լային, որք

բարձեալ տանէին զսերմանիս իւր-
եանց։
Գալով եկեսցեն և ցնծասցեն, որք
առեալ բերիցեն զորայս իւրեանց։

Տունք Զ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ։

Օրհնուրիւնք ատուիձանաց։

Եթէ ոչ տէր շինէ զտունն, ՚ի նա-
նիր վաստակին շինողք նորա։
Եթէ ոչ տէր պահէ զքաղաքն, ըն-
դունայն աչխին պահապանք նորա։
Ինանիր է ձեզ յառնելն կանխաւ.
արդ արիք՝ մինչեւ էք ննջեցեալք,
որ ուտէք զհաց ցաւոց։
Ի ժամանակի որպէս տացի քուն
սիրելեաց իւրոց. ժառանգուԹիւն
առն որդիք են. որոյ վարձք իւր
են, այն է պտուղ որովայնի իւրոյ։
Որպէս նետք ՚ի ձեռս հզօրի, այն-
պէս են և որդիքն Թօթափելոց։
Երանի որ եղից զգանկուԹիւն իւր
՚ի նոցանէ. մի՛ ամաչեսցեն յորժամ
խօսեսցին Թշնամիքն նոցա ընդ նոսա
առ դրանն։

Տունք Զ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

Օրհնութիւնք աստիճանացս։

Երանի ամենեցուն՝ որք երկնչին ի տեառնէ, և գնան ի ճանապարհս նորա։

Ջվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, և բարի եղիցի։

Կին քո որպէս այդի վայելուչ յանկիւնս տան քո, որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քո։

Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ, որ երկնչի ի տեառնէ. օրհնեսցէ զքեզ տէր ի սիովնէ։

Եւ տեսցես դու զբարութիւն երուսաղէմի զամենայն աւուրս կենաց քոց։

Տեսցես դու զորդիս որդւոց քոց, խաղաղութիւն ի վերայ իսրայէլի։

Տունք պ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԸ.

Օրհնութիւնք աստիճանացս։

Բազում անգամ մարտեան ընդիս ի

մանկութենէ իմմէ, ասասցէ իսրայէլ։

Բազում անգամ մարտեան ընդիս ի մանկութենէ իմմէ, և ինձ ոչ յաղթեցին։

Զթիկունս իմ հարին մեղաւորք, ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց։

Տէր արդար է, և խորտակէ զուրն մեղաւորաց։

Ամաչեսցեն և յետս դարձցին ամենեքեան՝ որք ատեն զսիօն։

Եղիցին նոքա որպէս խոտ տանեաց, որ մինչչեւ ի բուռն եկեալ չորացաւ։

Ոչ ասաց ոչ ելից զբուռն իւր հնձողն, և ոչ զդիրկս իւր՝ որ զորայն ժողովէր։

Ոչ ասացին ամենեքեան՝ որք անցանէին առ նոքօք, թէ օրհնութիւն տեառն ընդ ձեզ, և օրհնեցաք զձեզ յանուանէ տեառն։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ.

Օրհնութիւնք առտիւանց։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր,
տէր լսեր ձայնի իմում։
Եղիցին ականջք քո ի լսել ղձայն
աղօթից իմոց։
Թէ զանօրէնութիւնս իմ քննես
տէր տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի
քո, զի ի քէն է քաւութիւն։
Վասն անուան քո համբերի տէր,
համբեր անձն իմ բանի քում. յու-
սացաւ անձն իմ ի տէր։
Ի պահէ առաւօտու մինչեւ յերե-
կոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ
իսրայէլ ի տէր։
Ի տեառնէ է ողորմութիւն բա-
զում, ի նմանէ է փրկութիւն, և
նա փրկեաց զիսրայէլ յամենայն նե-
ղութեանց նորա։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ ՃԼ.

Օրհնութիւնք առտիւանց։

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, և
ոչ զբօսան աչք իմ։

Ոչ գնացի ես ընդ մեծամեծս, և
ոչ ընդ այնոսիկ ոյք սքանչելի եղեն
քան զիս։
Բայց թէ խոնարհեցայ ես որպէս
մանուկ սարտուցեալ ի տանէնէ մօր
իւրոյ, և դարձ նորա անդրէն ի նոյն։
Սպասէ թէ հպարտացուսցի արդեօք
զանձն իմ, այսպէս եղիցի հատու-
ցումն անձին իմոյ, յուսացաւ իս-
րայէլ ի տէր յայսմհետէ մինչեւ
յաւիտեան։

Տունք դ։ Գոլգոթայս խդ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԱ.

Երգ ղուկայ։

Յիշեա տէր զդաւիթ, և զամենայն
հեզութիւն նորա։
Որպէս երդուաւ տեառն, և ուխ-
տեաց եղ աստուծոյ յակոբայ։
Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ, թէ
ելից յանկողինս մահճաց իմոց։
Թէ տացի քուն աչաց իմոց, կամ
նինջ արտեւանանց իմոց, կամ հան-

գիտա իրանաց լմոց. մինչեւ գտից զտեղի յարկի տեառն աստուծոյ յակոբայ:

Ա՛հա լուաք զնմանէ յեփրաթայ, և գտաք զնա ի դաշտս մայրեաց:

Մտցուք ի յարկս նորա, երկիր պագցուք ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նորա:

Ա՛րի տէր ի հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քո:

Քահանայք քո զգեցցին զարդա՛ րութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն դաւթի սիրելւոյ քո, մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ՝ և ոչ ստեսցէ նմա. ի պտղոց որովայնի նորա նստուցանեմ յաթոռ նորա:

Թէ պահեսցեն որդիք քո զօրինա՛ մ, և վկայութիւնս իմ զոր ու՛ սուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յաթոռ յաթոռենից յաւիտեան քո:

Հաճեցաւ տէր ընդ սիօն, և ընտրեաց բնակիլ ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա:

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, և զաղքատս սորա լցուցից հացիւ:

Երիցանց սորա զգեցուցից փրկութիւն, և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն:

Անդ ծագեցից զեղջիւր ի դաւիթ. պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ:

Տունք ժէ:

ՍԱՂՄՈՍ ՃԼԲ.

Երգ ղուտց:

Զի՛ բարւոյ կամ զի՛ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին:

Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ և ի մօրուսն ահարօնի, և ի մօրուացն

լջանէ ՚ի պրապանս զգեստու նորա։
Որպէս ցօղ զի ցօղէ ՚ի հերմոնէ ՚ի վերայ լերին սիօնի։
Տէր անդ պատուիրեաց զօրհնու-
թիւն և զկեանս յաւիտենից։

Տունք դ։

ՍԱՂՄՈՍ ՃԺԴ։

Երգ ՀՌոց։

Ասա օրհնեցէք ամենայն ծառայք տեառն զտէր. ո կայք ՚ի տուն տեառն և ՚ի գաւիթս աստուծոյ մերոյ։
Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ՚ի սրբութիւն, և օրհնեցէք զտէր։
Օրհնեսցէ զմեզ տէր ՚ի սիօնէ, որ արար զերկինս և զերկիր։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԺԴ։

Ալէլուիա։

Օրհնեցէք զանուն տեառն, օրհնեցէք ծառայք տեառն զտէր. ո կայք ՚ի տուն տեառն. և ՚ի գաւիթս աստուծոյ մերոյ։
Օրհնեցէք զտէր զի բարի է. սաղ-

մոս ասացէք անուան նորա, զի քաղցր է։
Զյակոբ ընտրեաց իւր տէր, և զիսրայէլ ժառանգութիւն իւր։
Ես ծանեայ՝ զի մեծ է տէր, և տէր մեծ է քան զամենայն կուռս։
Զամենայն զոր ինչ կամեցաւ և արար տէր, յերկինս և յերկրի, ՚ի ծով և յամենայն խորս։
Հանէ զամպս ՚ի ծագաց երկրի, ըզփայլատակունս իւր յանձրեւս արար, և հանէ զհողմս ՚ի շտեմարանաց իւրոց։
Եհար զամենայն անդրանիկս եգիպտացւոց, ՚ի մարդոյ մինչեւ յանասունս։
Առաքեաց զնշանս և զարուեստս իւր ՚ի մէջ քո եգիպտոս, ՚ի փարաւոն և յամենայն զօրս իւր։
Եհար զազգս բազումս, և սպան զթագաւորս հզօրս։
Զսեհոն թագաւոր ամուրհացւոց, զոգ թագաւոր բասանու, և զամենայն թագաւորութիւնս քանանացւոց։

Եւ զերկիր նոցա ՚ի ժառանգու-
թիւն, ժառանգութիւն իսրայէլի
ժողովրդեան իւրոյ:
Տէր անուն քո յաւիտեան. տէր յի-
շատակ քո ազգէ մինչեւ յազգ:
Դատէ տէր զժողովուրդս իւր, և
՚ի ծառայս իւր մխիթարի:
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ
են, ձեռագործք են որդւոց մարդ-
կան:
Բերան գոյ՝ և ոչ խօսին, աչք են՝
և ոչ տեսանեն:
Ականջք են՝ և ոչ լսեն, և ոչ գոյ
հունչ ՚ի բերանս նոցա:
Նման նոցա եղիցին որ արարին զը-
նոսա, ամենեքեան որ յուսացեալ
են ՚ի նոսա:
Տունն իսրայէլի օրհնեցէք զտէր.
տուն ահարոնի օրհնեցէք զտէր:
Տուն վեւեայ օրհնեցէք զտէր. ե-
կիւզածք տեառն օրհնեցէք զտէր:
Օրհնեալ է տէր ՚ի սիովն, որ բնա-
կեալն է յերուսաղէմ:

Տունք է: Գոբզայս կէտ:

ՍԱՂՄՈՍ ՃԺԵ.

Ալէլուիա:

Խոստովան եղերուք տեառն, զի
բարի է զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա:
Խոստովան եղերուք աստուծոյն աս-
տուծոց, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա:
Խոստովան եղերուք տեառն տե-
րանց, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա:
Արար սքանչելիս մեծամեծս միայն,
զի յաւիտեան է ողորմութիւն
նորա:
Ջերկինս արար իմաստութեամբ
իւրով, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա:
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա:
Արար զլուսաւորս մեծամեծս մի-
այն, զի յաւիտեան է ողորմութիւն
նորա:
Զարեգական արար իշխանական տու-

ընչեան, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա։

Զլուսին և զաստեղս իշխանական
գիշերոյ, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա։

Եհար զերկիրն եգիպտացւոց անդ-
րանիկօք իւրովք հանդերձ, զի յա-
ւիտեան է ողորմութիւն նորա։

Եւ եհան զիսրայէլ 'ի միջոյ նորա,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ի ձեռն բարձր և 'ի բազուկ հզօր,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եհերձ զծովն մեծ, և բաժանեաց
յերկուս մասունս, զի յաւիտեան
է ողորմութիւն նորա։

Եւ անցոյց զիսրայէլ ընդ մէջ նո-
ա, զի յաւիտեան է ողորմութիւն
նորա։

Ընկղմեաց զփարաւօն և զզօրս իւր
'ի ծով կարմիր, զի յաւիտեան է ո-
ղորմութիւն նորա։

Եւ եհան զժողովուրդ իւր յանա-
պատ, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա։

Եհար զազգս մեծամեծս միայն, զի
յաւիտեան է ողորմութիւն նորա։
Եւ սպան զիշխապետս հզօրս, զի
յաւիտեան է ողորմութիւն նորա։
Զսեհօն թագաւոր ամուրհացւոց,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
Զովգ թագաւոր բասանու, զի
յաւիտեան է ողորմութիւն նորա։
Եւ զերկիր նոցա 'ի ժառանգու-
թիւն, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա։
ժառանգութիւն իսրայէլի ծառայի
իւրոյ, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա։
Յիշեաց զմեզ տէր 'ի խոնարհու-
թեան մերում, զի յաւիտեան է ո-
ղորմութիւն նորա։
Եւ փրկեաց զմեզ 'ի ձեռաց թշնա-
մեաց մերոց, զի յաւիտեան է ո-
ղորմութիւն նորա։
Ո՛տ տայ կերակուր ամենայն կեն-
դանեաց, զի յաւիտեան է ողոր-
մութիւն նորա։
Խոստովան եղերուք աստուծոյն երկ-

նաւարի, զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա։

Տունք իզ.

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ.

Սաղմոս Դաւթի ՚ի ձեռն երեմիայի. աւնիչան յերթայելոց։

Առ գետս բաբելացւոց, անդ նըս-
տեաք և լայաք, որպէս յիշեցաք մեք
անդ զսիօն։
Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք ըզ-
կտակարանս մեր։
Անդ հարցանէին գերիչք մեր զնս
նըս օրհնութիւն. գերեվարք մեր
ասիպէին զմեզ և ասէին։
Օրհնեցէք զմեզ յօրհնութենէ սիո-
նի. իսկ զինքդ օրհնեացուք զօրհ-
նութիւնս տեառն յերկիր օտար։
Թէ մոռացայց զքեզ երուսաղէմ,
մոռացի զիս աջ իմ։
Կցեսցի լեզու իմ ՚ի քիմս իմ՝ թէ
ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուա-
գեցից զքեզ երուսաղէմ, սկիզբն
ուրախութեան իմոյ։

Յիշեա տէր զորդիսն եդովմայ յա-
ւուրսն երուսաղէմի։
Ոյք ասէին քակեցէք քակեցէք,
մինչեւ ՚ի հիմն հատուցէք։
Դուստր բաբելացւոց թշուառա-
կան, երանի որ հատցէ զհատու-
ցումն քո, զոր դու մեզ հատուցեր։
Երանի որ կալաւ զմանկունս քո, և
եհար զքարի։

Տունք ժ.

ՍԱՂՄՈՍ ՃԼԷ.

Սաղմոս Դաւթի։

Խոստովան եղէց քեզ տէր բոլորով
սրտիւ իմով, առաջի հրեշտակաց
սաղմոս ասացից քեզ։
Զի լուար զբանս բերանոյ իմոյ, ե-
կիրպագից ՚ի տաճար սուրբ քո, և
խոստովան եղէց անուան քումմ վա-
սն ողորմութեան և ճշմարտու-
թեան քո։
Մեծ արարեր յամենայնի զանուն
սուրբ քո, յորում աւուր կարդամ
առ քեզ վաղվաղակի լուր ինձ, և

բազում արասցես զօրութիւնս
յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի, զի լուան զբանս բերանոյ քո, և օրհնեսցեն զճանապարհս քո։

Մեծ են փառք տեառն, բարձր է տէր՝ զխոնարհս տեսանէ, և զբարձեալս ’ի հեռաստանէ ճանաչէ։

Թէ գնացից ես ’ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս ’ի բարկութենէ թշնամւոյն։

Զգեցեր զձեռն քո, և փրկեաց զիս աջ քո, և տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առնէր։

Տունք ը։ Գոբզայս կտ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ։

Ի կատարած Սաղմոս Դաւթի։

Տէր փորձեցեր զիս և ծանեար զիս, դու ծանեար զնստել իմ և զյառնել իմ։

Ի միտ առեր զխորհուրդս իմ ’ի հեռաստանէ, զշաւիղս իմ և զվիճակս իմ դու քննեցեր, և զամենայն ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն ’ի լեզուի իմում։

Ահա դու տէր՝ ծանեար զյետինն իմ և զառաջինն իմ. դու ստեղծեր զիս, և եդեր զձեռն քո ’ի վերայ իմ։

Սքանչելի եղեւ գիտութիւն քո յինէն, զօրացաւ և ոչ հանդարտեմ սմա։

Ցո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։

Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ ’ի գժոխս՝ և անդ մօտ ես։

Թէ առիւ զվիճեաս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեզերս ծովու։

Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ զինձ, և աջ քո ընկալցի զիս։

Սասցի՝ խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ։

Խաւարն ’ի քեզ ոչ խաւարեսցի, և

գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի, և խաւար նորա որպէս զլոյս նորա։

Դու ստացար զերիկամունս իմ, և ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ։ Խոստովան եղէց քեզ տէր, զի ա֊հեղ և սքանչելի ես. սքանչելի են գործք քո և անձն իմ սիրեաց յոյժ։ Ոչ թագեաւ ոսկր իմ ի քէն՝ զոր արարեր ի ծածուկ, և կար զօրու֊ թեան իմոյ ընդ ստորինս երկրի։ Ջանգործս իմ տեսին աչք քո, և ի գիրս քո ամենեքեան գրեցան։ Ի տուէ մոլորեցան, և ոչ ոք էր որ առաջնորդէր նոցա։

Ինձ յոյժ մեծարուս եղեն բարե֊ կամք քո աստուած, և յոյժ զօ֊ րացան իշխանք նոցա։

Թուեսցի զնոսա, և քան զաւազ բազմացան. զարթեայ, և արդ ընդ քեզ եմ։

Թէ սպանանես զմեղաւորս աստ֊ ուած, արք արեան ի բաց եղերուք յինէն։

Ի հակառակութիւն և ի նախանձ, առցեն ի նանիր զքաղաքս քո։ Ջատելիս քո տէր ատեցի, և ի վէ֊ րայ թշնամեաց քոց մաշեցայ։ Ցատելութիւն կատարեալ ատեցի զնոսա, և եղեն ինձ թշնամիք։ Փորձեա զիս աստուած և ծանիր զսիրտ իմ, քննեա զիս և ծանիր զ֊ շաւիղս իմ. և տես թէ իցէ՞ն անօ֊ րէնութիւնք ի ճանապարհս իմ, և առաջնորդեա ինձ ի ճանապարհս քո յաւիտենից։

Տունք իբ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԹ.

ի կատարած Սաղմոս Դաւթի։

Ապրեցո զիս տէր ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս։ Խորհեցան զանօրէնութիւն ի սիր֊ տս իւրեանց. զօր ամենայն պատ֊ րաստեցան ի պատերազմ։ Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի նեղքոյ շրթանց նոցա։

Պահեա զիս տէր ՚ի ձեռաց մեղաւորի, և ՚ի մարդոյ չարե փրկեա զիս։ Խորհեցան խափանել զընացս իմ. թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։

Լարա ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ զգայթակղութիւն։

Ասացի՝ տէր աստուած իմ ես դու, ունկնդիր տէր ձայնի աղօթից իմոց։ Տէր տէր զօրութիւն փրկութեան իմոց, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի՛ մատներ զիս տէր ՚ի ցանկութիւն մեղաւորաց, զոր խորհեցան ինձ. մի՛ ընդ վայր հարկանէր զիս։ Զի մի՛ երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին. վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։ Արկցես ՚ի վերայ նոցա զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնոսա. ՚ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ։ Մարդոյ լեզուանոյ մի՛ յաջողեսցի

՚ի վերայ երկրի. զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ՚ի կորուստ։

Ծանեայ զի առնեա տէր դատաստան աղքատի, և իրաւունս տըժանկի։

Արդարք դոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց։

Տունք ժդ։

ՍԱՂՄՈՍ ՃԽ.

Սաղմոս Դաւթի։

Տէր կարդացի առ քեզ՝ և լսեր ինձ, նայեա ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում առ քեզ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ եւրեկոյ։

Դիր տէր պահապան բերանոյ իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։

Ի պատճառել զպատճառս մեղաց

ընդ մարդս, զոր գործեն զանօրէնութիւն. և ոչ եղեց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ և յանդիման արասցէ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա։

Այրեցան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց, և քաղցրասցին։

Որպէս թանձրութիւն հողոյ զի ափեալ է ի վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։

Առ քեզ տէր տէր են աչք իմ, ի քեզ յուսացայ, մի՛ հաներ զհոգի իմ։

Պահեա զիս յորոգայթէ որ թաղուցաւ ինձ, ի գայթակղութենէ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք, միայն եմ ես մինչեւ անցից։

ՍԱՂՄՈՍ ՃԽԱ։

Խնամատոհթիւն Դաւթի, Աղօթք ի ժամանակի՝ զի էր նա յայրի անդ։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի, ձայնիւ իմով զտէր աղաչեցի։ Սփռեցից առաջի տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու տէր ծանեար զշաւիղս իմ. ի ճանապարհ յոր և գնայի, թագուցին որոգայթ։

Հայեի յաջմէ՝ և տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գոյաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ տէր և ասացի դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա տէր յաղօթս իմ զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս։

Հեցայ յամենայն գործս քո. յարա-
տածս ձեռաց քոց խորհեցայ, և համ-
բարձի առ քեզ զձեռս իմ։
Անձն իմ որպէս երկիր ծարաւի է
առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր.
զի նուազեցաւ յինէն հոգի իմ։
Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն.
նմանիցիմ այնոցիկ՝ որք իջանեն ՚ի
գուբ։
Լսելի արա ինձ առաւօտու զողորմ-
մութիւնս քո, զի ես ՚ի քեզ տէր
յուսացայ։
Ցոյց ինձ ճանապարհ յոր և գնա-
ցից, զի առ քեզ տէր համբարձի
զանձն իմ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց տէր,
զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել կամս քո, զի դու
ես աստուած իմ։
Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ
՚ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տէր կեցուսցես
զիս արդարութեամբ քով, հանցես
՚ի նեղութենէ զանձն իմ։

Տէր հան ՚ի բանտէ զանձն իմ, դո-
հանալ զանուանէ քումմէ։
Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչեւ
հատուսցես։

Տունք ը։ Գոբզայս ծգ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԲ.

Սաղմոս Դաւթի. ՚ի ժամանակի՝ զի հալածէր
զնա Աբիսողոմ որդի նորա։

Տէր լուր աղօթից իմոց, ունկնդիր
խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ
քով։
Լուր ինձ արդարութեամբ քով, և
մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծա-
ռայի քում. զի ոչ արդարանայ առա-
ջի քո ամենայն կենդանի։
Հալածեաց թշնամին զանձն իմ, խո-
նարհ արար յերկիր զկեանս իմ. և
նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռե-
եալ յաւիտենից։
Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ
իմ խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրսն զառաջինս, խոր-

Ողորմութեամբ քով սատակեա ըզ թշնամիս իմ. և կորո զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

Տունք ժդ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ·

Սաղմոս դաւթի առ Գողիաթ:

Օրհնեալ տէր աստուած իմ, որ ուսոյց զձեռս իմ ի պատերազմ, և զմատունս իմ ի ճակատամարտ:

Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգնական իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ, և ես յուսամ ի նա. ո՛ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

Տէր՝ ո՞վ է մարդ զի յայտնեցար դու նմա, կամ որդի մարդոյ թէ համարիս ինչ զնա:

Մարդ նմանեցաւ, և աւուրք նորա որպէս հովանի անցին:

Տէր խոնարհեցո զերկինս և էջ, մերձեա ի լերինս և ծխեացին:

Փայլեա զփայլատակունս քո, և խըռովեա զնոսա, առաքեա զնետս քո, և ցրուեա զնոսա:

Առաքեա զձեռն քո ի բարձանց, և փրկեա զիս ի ջուրց բազմաց, և ի ձեռաց որդւոց օտարաց:

Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն, և աջ նոցա աջ է մեղաց:

Աստուած՝ յօրհնութիւն նոր օրհնեցից զքեզ, տաւնաղեաւ սաղմոսաբանաւ սաղմոս ասացից քեզ:

Ո՛ տացէ զփրկութիւն Թագաւորաց մերոց, որ փրկելոց իցէ զդաւիթ ծառայ իւր ի սրոյ չարէ:

Փրկեա զիս և ապրեցո զիս ի ձեռաց որդւոց օտարաց:

Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն, և աջ նոցա աջ է մեղաց:

Որոց ուստերք իւրեանց որպէս նորատունկ հաստատուն են ի մանկութենէ իւրեանց. դստերք նոցա զարդարեալ և պաճուճեալ ի նըմանութիւն տաճարի:

Շոեմարանք նոցա լի են և բղխեն
'ի միմեանց, խաչինք նոցա բազմա-
ծինք են, և բազմանան 'ի գնացս
իւրեանց. և անդեայք նոցա պա-
րարթ են:

Ոչ գոյ խրամատուածքն ցանկոյ նո-
ցա, և ոչ աղաղակ 'ի հրապարակս
նոցա:

Արդ երանելի՜ ժողովրդեան, որոյ
այս այսպէս է. նա՝ երանի ժողովուր-
դեան, որոյ տէր աստուած է նոցա:

Ցունք ԺԷ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԴ.

Օրհնութիւնք Սաղմոս Դաւթի:

Բարձր առնեմ զքեզ աստուած իմ
և թագաւոր իմ, և օրհնեմ զա-
նուն քո յաւիտեան և յաւիտե-
նից յաւիտենից:

Զօրհանապազ օրհնեցից զքեզ, և
գովեցից զանուն քո յաւիտեան և
յաւիտեանս յաւիտենից:

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, և
մեծութեան նորա ոչ գոյ չափ:

Ազգ և ազգ գովեսցեն զգործս
քո, և զզօրութիւնս քո պատմեսցեն:

Զմեծվայելչութիւն վառաց սրբու-
թեան քո խոսեսցին, և զքաջագործս
քո պատմեսցեն:

Զզօրութիւն ահի քո ասասցեն, և
զմեծութիւնս քո պատմեսցեն:

Զյիշատակ բազում քաղցրութեան
քո բղխեսցեն, և արդարութեամբ
քո ցնծասցեն:

Գթած ողորմած է տէր, երկայնա-
միտ և բազումողորմ:

Քաղցր է տէր առ ամենեսեան, և
գթութիւն նորա 'ի վերայ ամենայն
արարածոց իւրոց:

Խոստովան եղիցին առ քեզ տէր ա-
մենայն գործք քո, և սուրբք քո
օրհնեսցեն զքեզ:

Զփառս արքայութեան քո ասասց-
ցեն, և զզօրութիւնս քո պատ-
մեսցեն:

Ճանաչել որդւոց մարդկան զզօրու-
թիւնս քո, և զփառս մեծվայելչու-
թեան արքայութեան քո:

Ա.ըքայու.թիւն քո ալքայու.թիւն ա.
մենայն յաւիտենից, և տէրու.թիւն
քո ազգէ մինչեւ յազգ։
Հաւատարիմ է տէր յամենայն բա.
նս իւր, և արդար է յամենայն
գործս իւր։
Հաստատէ տէր զամենայն գայթակ.
ղեալս, և կանգնէ զամենայն գլոր.
եալս։
Ա.չք ամենեցուն ՚ի քեզ յուսան,
և դու տաս կերակուր նոցա ՚ի ժա.
մու։
Տաս դու նոցա և կերակրին. բա.
նաս զձեռն քո, և լցուցանես զա.
մենեսեան քաղցրու.թեամբ կամօք
քովք։
Ա.րդար է տէր յամենայն ճանա.
պարհս իւր, և սուրբ է յամենայն
գործս իւր։
Մերձ է տէր առ ամենեսեան ով
կարդան առ նա, առ ամենեսեան
ով կարդան առ նա ճշմարտու.
թեամբ։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ

տէր, աղօթից նոցա լսէ, և կեցու.
ցանէ զնոսա։
Պահէ տէր զամենեսեան ով սիրեն
զնա, և զամենայն մեղաւորս սա.
տակէ տէր։
Զօրհնու.թիւնս տեառն խօսեսցի
բերան իմ. օրհնեսցէ ամենայն կեն.
դանի զանուն սուրբ նորա յաւիտ.
եան՝ և յաւիտենից յաւիտենից։

Տունք իբ։ Գոբղայս ծբ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԵ·

Ալէլուիա, Ա.ւգեսայ եւ Զաքարիա։

Օրհնեա անձն իմ զտէր, օրհնեցից
զտէր ՚ի կեանս իմ, սաղմոս ասացից
աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես։
Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդ.
կան, զի ոչ գոյ փրկու.թիւն ՚ի նոսա։
Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին
անդրէն ՚ի հող, և յայնմ աւուր կո.
րիցեն ամենայն խորհուրդք նոցա։
Երանի ազգի՝ որոյ տէր աստուած

յակոբայ օգնական է նմա, և յոյս նորա ի տէր աստուած է։

Ո՛ր արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ի նոսա։

Ո պահէ զճշմարտութիւն յաւիտեան, և առնէ իրաւունս զրկելոց։

Տայ հաց քաղցելոց, և արձակէ կըռ կապեալս տէր։

Տէր բանայ զաչս կուրաց, և կանգնէ զգլորեալս տէր։

Տէր սիրէ զարդարս, տէր պահէ զպանդուխտս, զորբս և զայրիս ընդունի տէր, և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ։

Թագաւորեսցէ տէր յաւիտեան, աստուած քո սիօն ազգէ մինչեւ յազգ։

Ցունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԹ.

Ալէլուիա, Ալիգեայ և Զաքարիա։

Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղմոսք. աստուծոյ մերում քաղցր և ցիցի օրհնութիւն։

Շինէ զերուսաղէմ տէր, և զցրուեալսն խրայէլի ժողովէ։

Բժշկէ զբեկեալ սիրտս, և պատէ զվէրսն նոցա։

Ո թուէ զբազմութիւն աստեղաց, և զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ։

Մեծ է տէր և մեծ է զօրութիւն նորա, խմաստութեան նորա ոչ գոյ թիւ։

Ընդունի զհեզս տէր, և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր։

Օրհնեցէք զաստուած խոստովանութեամբ, սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ։

Ո զգեցոյց զերկինս ամպովք, և պատրաստ արար զանձրեւ իւր յերկիր։

Բուսոյց զխոտ ի լերինս, և զպալար ի ծառայութիւն մարդկան։

Ո տայ անասնոց կերակուր, ձագուց ագռաւուց՝ որք կարդան առ նա։

Ոչ թէ ընդ զօրութիւնն ձիոյ կա-

մեցաւ տէր, և ոչ ընդ իրանս առն հսկայի հաճեցաւ։

Ա.յլ հաճեցաւ տէր ընդ երկիւղածս իւր, և ընդ այնոսիկ՝ որք յուսան յողորմութիւն նորա։

Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԷ.

Ալէլուիա, Ալգեայ և Զաքարիա։

Գովեա երուսաղէմ զտէր։
Եւ օրհնեա զաստուածդ քո սիօն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ։
Ո՛ եղ զսահմանս քո ՚ի խաղաղութիւն պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր, վազվազ ընթանան պատգամք նորա։
Դնէ զձիւն որպէս զսար, և զմէգ որպէս փոշի ցանեալ։
Ածրկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
Առաքէ զբան իւր և հալէ զնոսա,

հնչեսցեն հողմք, և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամենայն ազգաց տէր, և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

Տունք ժ։ Գոբզայս լբ։

ԱՂՕԹՔ ԱՄԲԱԿՈՒՄԱՑ ՄԱՐԳԱՐԻՒ

Ամբակ գ։

Տէր, զլուր քո լուայ և երկեայ, տէր՝ նայեցայ ՚ի գործս քո և զարհուրեցայ։
Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս գոս, ՚ի մերձենալ ամացն յայտնեսցիս, և ՚ի հասանել ժամանակին երեւեսցիս։
Ի խառնվել անձին իմոյ ՚ի ժամանակի բարկութեան, զողորմութիւն յիշեսցես։
Աստուած ՚ի հարաւոյ եկեսցէ, և սուրբն ՚ի փառան լեռնէ։
Ծայրանեսցեն երկինք զվայելչութիւն

փառաց Նորա, և օրհնութեամբ
Նորա լցան տիեզերք։
Ձառագայթք որպէս ի լուսոյ հա-
տան ի նմանէ, և եղջիւրք ի ձեռին
Նորա գտան, և անդ հաստատեցաւ
զօրութիւն փառաց Նորա։
Յերեսաց Նորա եկեղն հարուածք,
և զհետ հաւզաց Նորա երթիցեն
մեծամեծք ի թռչնոց։
Եկաց և չափեաց զերկիր, հայեցաւ
և դիտեաց զհեթանոս։
Լերինք հալեցան և անտառք վաս-
նեցան. ճանապարհք՝ որք ի սկզբ
բանէն էին, կուրացան. և ի նմա-
նէ դողացի ամենայն երկիր։
Տեսի զբանակս քուշացւոց, խռովե-
ցան բնակիչք վրանացն մադիամու։
Միթէ ի վերայ գետոց բարկացիս
դու տէր, կամ սրտմտութիւն քո
ի վերայ գետոց, կամ բարկութիւն
քո ի վերայ ծովու։
Ելեր դու ի կառս քո, հեծելոյ-
թիւնդ քո փրկութիւն եղեւ յե-
լանելն քո։

Զարթեաւ աղեղն քո, զնետս կա-
պարճից քոց արբուցեր, զգետս
ցրուեցեր, զերկիր դողացուցեր ի
սաստկութենէ անձրեւի, որք ան-
ցանեն ընդ սա։
Անդունդք ապշակեցին մեծապէս,
լցա փայլման արեգականն արգելաւ
և ծագումն լուսնի դադարեցաւ։
Որպէս ի նշոյլ սլաքաց քոց գնաց-
ցես, և որպէս ի լոյս փայլատակման
սրոյ քո։
Բարկութեամբ զարթիցես ի վերայ
երկրի, և դողութեամբ կացցես
զհեթանոս։
Երեւեցար ի փրկութիւն ժողովրդե-
դեան քո, ի փրկել զընտրեալս քո։
Նետաձիգ եղեր ի գլուխս մարդ-
կան անբարեսանից, մինչեւ յան-
դունդս ծովու ընկղմեցան։
Խնդրեցեր զերկիժ զօրութեամբ քով
ի զօրագլխացն մեղաւորաց, որք յու-
սացեալ էին յանդգնութիւնս իւր-
եանց զի կերիցին զազգատն ի գաղտնիս։
Առաքեցեր ի վերայ ծովու զերկվա-

ըըս քո, և խոովեցան յաղթ ջուրք անդնդոց։

Կացի ես՝ և գեղան աղեաք իմ՚ի ձայն ձէ բերանոյ իմոյ, եմուտ դողուածն յոսկերս իմ, և ես յանձն իմ խոովեցայ։

Զայս պահեսցես յաւուր նեղութեան, ածել՚ի վերայ ազգի ամենայնի՝ որք մարանչին ընդ ժողովուրդ դեան քումմ։

Թզենի ոչ տացէ զպտուղ իւր, և յայգւոջ բեր մի՛ գտցի. ձիւթենիք սնասցին, և երկիր մի՛ բուսուսցէ զդալարի։

Պակասեսցին հօտք՚ի ձարակաց, և եզինք մի՛ գտցեն առ մսուրս։

Ես՚ի տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց յաստուած փրկչէ իմմ։

Տէր տէր ետ ինձ զօրութիւն, և կացոյց զոտս իմ՚ի հաստատութեան. ՚ի վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս, և հանդոյց զիս երագ երագ։

Փառք հօր և որդւոյ և։

ՄԱՂԹԱՆՔ

Լուր մեզ տէր լուր մեզ, աստուա՛ծային ողորմութեամբ և գթութեամբ քո խնայեա յարարածս քո։

Մարդասէր տէր վասն սրբուհւոյ։

[Քարոզն եւ զաղօթս՚ի վերջն Ողբոց կանոնին] գտցես՚ի 180 երեսն։

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ.

Ալէլուիա, Ալիգեայ և Զաքարիա։

Օրհնեցէք զտէր յերկնից, օրհնեցէք զնա՚ի բարձանց։

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա։

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին, օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյսք։

Օրհնեցէք զնա երկինք երկնից, և ջուրք որ՚ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զանուն տեառն։

Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։

Կացցէ զնոսա յաւիտեանս յաւիտենից, սահման եդ և ոչ անցանեն։

Օրհնեցէք զտէր յերկրէ վիշապք, և ամենայն խորք։

Հուր և կարկուտ, ձիւն և սառն, հոգի՛ և մրրիկ՝ որք առնէք զբան նորա։

Լերինք և ամենայն բարձունք, ծառք պտղաբերք և ամենայն մայրք։

Գազանք և ամենայն անասունք, սողունք և ամենայն թռչունք թեւաւորք։

Թագաւորք երկրի և ազգք իւրեանց, իշխանք և ամենայն դատաւորք երկրի։

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք՝ օրհնեցէք զանուն տեառն։

Բարձրացաւ անուն նորա միայն, խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի։

Բարձր առնէ տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ, օրհնութիւն նմա

յամենայն սրբոց նորա յորդւոցն իսրայէլի ժողովրդեան՝ որ մերձ է առ աեր։

Ցունք ժդ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԹ.

Ալէլուիա, Անգեայ և Զաքարիա։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն՝ ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Ուրախասցի իսրայէլ յարարիչ իւր, որդիք սիովնի ցնծասցեն՝ ի թագաւորն իւրեանց։

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ, սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմոս երգեսցեն նմա։

Հաճի տէր ընդ ժողովուրդ իւր սուրբ. և բարձր առնէ զհեզս՝ ի փրկութեան։

Պարծեսցին սուրբքն փառաք, և ցնծասցեն՝ ի հանդիստ իւրեանց, և բարձր արասցեն զաստուած բերանք իւրեանց։

Սուր երկայրի ետ՝ ի ձեռս նոցա,

առնուլ զհատուցումն ի հեթանոսաց, ի յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց։

Ի կապել զթագաւորս նոցա կապանաւք, զազնւաւորս նոցա ձեռնակապօք երկաթեօք։

Առնել նոցա դատաստանս բատ գրոց. և փառք այս են ամենայն սրբոց նորա։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԾ.

Ալէլուիա, Անգեայ եւ Զաքարիա։

Օրհնեցէք զաստուած ի սրբութեան նորա, օրհնեցէք զնա ի հաստատութեան ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա։

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գովեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր, գովեցէք զնա ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք օրհնեցէք զտէր։

Տունք ղ, Գորգայս խը։

Կանոնս յիսը։ Զօրք կանոնս Տունք ռխբ։

Միահամուռ սաղմոս՝ Գորգայս ծղ։ Սաղմոս ճծ։

Տունք ի սմա սնկբ։



Այս սաղմոս ինքնագիր դաւթի արտաքոյ թուոց։ ի ժամանակի զի եկն նահատակ ընդդէմ գողիադու առաջի սաւուղայ եւ ամենայն զօրացն իսրայէլի։


Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր ի տան հօր իմոյ, արածէի զխաշինս հօր իմոյ։

Ձեռք իմ արարին զսաղմոսարան, և մատունք իմ կազմեցին զգործի օրհնութեան։

Իսկ արդ ո պատմեսցէ զայս տեառն իմում, ինքնին տէր ամենայնի լուիցէ զամենայն։

Եւ առաքեաց տէր զհրեշտակ իւր, և համբարձ զիս ի հօտէ խաշանց

Հօր իմոյ, և էօծ զնս յօծումն իւղ
ղոյ իւրոյ։
Եղբարք իմ մեծամեծք և զեղեցիկք,
և ոչ հաճեցաւ ընդ նոսա տէր։
Եւ ես ընդդէմ այլազգւոյն, և նը-
զովեցի զկուռս նորա։
Հանի զառաջերն ի նեմանէ և հատի
զգլուխ նորին, և բարձի զնախատի-
նըս յորդւոցն իսրայէլի։
Փառք Հօր և որդւոյ և։



ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Դանիէլ գ։

Օրհնեալ ես տէր աստուած հարցն մերոց, օրհ-
նեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։
Ցիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ.
արդար ես դու տէր, և ամենայն գործք քո
ճշմարիտ են։
Ճանապարհք քո ուղիղ են, և ամենայն դա-
տաստանք քո արդար են։
Դատաստան արդարութեան ածեր ի վերայ մեր
ըստ ամենայնի, զոր ինչ ածեր ի վերայ մեր,
և քաղաքի սրբոյ հարցն մերոց երուսաղէմի։

Արդարութեամբ և յիրաւի ածեր զայս ամենայն
ի վերայ մեր վասն մեղաց մերոց։
Անօրինեցաք և յանցեաք առատամբ լինել ի
քէն, մեղաք յամենայնի և պատուիրանաց քոց
մեք ոչ անսացաք։
Ոչ պահեցաք և ոչ արարաք որպէս պատուիրե-
ցեր դու մեզ։ զի զբարիս գոյցուք մեք ի քէն։
Արդ՝ զամենայն զոր արարեր և զոր ինչ ածեր ի
վերայ մեր, արդար դատաստանաւ արարեր։
Մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց, ա-
նօրինաց, խստաց և ապստամբողաց։
Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան զա-
մենայն երկիր, մատնեցեր զմեզ։
Եւ արդ՝ ոչ քո մեզ ժամ բանալ զբերանս մեր,
զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց և
պաշտօնէից։
Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քո,
մի՛ ցրեր զուխտս քո, և մի՛ ի բացեայ առներ
զողորմութիւնս քո ի մէնջ։
Վասն աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ ծա-
ռայի քո, և իսրայէլի սրբոյ քոյ։
Խոստացար նոցա և ասացեր. բազմացուցից
զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմու-
թեամբ, և որպէս զաւազ առ եզր ծովու։
Եւ արդ տէր՝ նուազեցաք մեք քան զամենայն
ազգս, և եմք տառապեալ յամենայն երկրի
այսօր վասն մեղաց մերոց։
Ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան՝ մարգարէ
և առաջնորդ, ոչ ողջակիզք պատարագաց, ոչ

խունկք օրինաց , և ոչ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քո , և ղողորմութիւն գըտանել ի քէն ։

Այլ անձամբք խոնարհեալ և հոգւով տառապանաց ընդունելի լիցուք մեք որպէս ղողջակէզս խոյոց և ցուլարակաց , և որպէս բիւրաւորս գառանց պարարտաց ։

Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր առաջի քո , զի կատարեալ գացուք զկնի քո , և չիք ամօթ յուսացելոցս ի քեզ ։

Եւ արդ՝ գամք զհետ քո ամենայն սրտիւք մերովք , երկնչիմք ի քէն և խնդրեմք զերեսս քո , տէր մի յամօթ առներ զմեզ ։

Այլ արա առ մեզ ըստ հեզութեան քումմ , և ըստ բազում ողորմութեան քումմ , վրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց տէր , և փառաւորեսցի անուն քո յաւիտեան ։

Յամօթ լիցին ամենեքեան , որ չարչարեն զծառայս քո , ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա , և ամենայն զօրութիւնք նոցա խորտակեսցին ։ Եւ ծանիցեն զի դու ես տէր աստուած միայն , որ փառաւորիալդ ես ի վերայ ամենայն տիեզերաց ։

Օրհնեալ ես դու , տէր աստուած հարցն մերոց , գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։ Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց , գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քո , գովեալ և ։

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քո , գովեալ և ։

Օրհնեալ ես որ նստիս ի քրովբէս և հայիս յանդունդս , գովեալ և ։

Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից , գովեալ և ։

Օրհնեցէք ամենայն գործք տեառն զտէր . օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան ։

Օրհնեցէք երկինք զտէր . օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան ։

Օրհնեցէք հրեշտակք տեառն , և ջուրք որ ի վերոյ երկնից զտէր . օրհնե ։

Օրհնեցէք զօրութիւնք տեառն , արեգակն և լուսին զտէր . օրհնե ։

Օրհնեցէք աստեղք երկնից , անձրեւք և ցօղք զտէր . օրհնե ։

Օրհնեցէք ամենայն հողմք հուր և ջերմ զտէր . օրհնե ։

Օրհնեցէք ցուրտ և ոսկի , ցօղ և ձիւնաբեր զտէր . օրհնե ։

Օրհնեցէք սառն և պարզ , եղեամն և ձիւն զտէր . օրհնե ։

Օրհնեցէք տիւք և գիշերք , լոյս և խաւար զտէր . օրհնե ։

Օրհնեցէք ամպք և փայլատակունք և երկիր զտէր . օրհնե ։

Օրհնեցէք լերինք բլուրք , և ամենայն բոյս երկրի զտէր . օրհնե ։

Օրհնեցէք աղբիւրք ծովք և գետք զտէր . օրհնե ։

Օրհնեցի՛ք կէտք և ամենայն կայուտո՛ք՝ որ ՚ի ջուրս, և թռչուն՛ք երկնից զտէր. օրհնե՛ն:

Օրհնեցէ՛ք դազա՛նք և անասո՛ւնք, և որդի՛ք մարդկան զտէր. օրհնե՛ն:

Օրհնեացե՛ք Իսրայէլ զտէր. օրհնեացե՛ք և բարձր արասցե՛ զնա յաւիտեան:

Օրհնեցէ՛ք քահանայ՛ք զտէր. օրհնե՛ն:

Օրհնեցէ՛ք ծառայ՛ք տեառն զտէր. օրհնե՛ն:

Օրհնեցէ՛ք անձինք՛, և շունչ՛ք արդարոց զտէր. օրհնե՛ն:

Օրհնեցէ՛ք սուրբ՛ք և խոնարհ՛ք սրտիւ՛ք զտէր. օրհնե՛ն:

Օրհնեցէ՛ք անանիա ազարիա և միսայէլ զտէր. օրհնեցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտեան:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Ղուկ. ա:

Մեծացուսցէ անձն իմ զտէր, և ցնծացաւ հոգի իմ աստուածակ փրկչաւ իմով:

Այց արար ՚ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ, այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, արար զօրութիւն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս եղից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով ողորմութիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ աբրահամ և զաւակի նորա յաւիտեան:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԻԱՅԻ ՀՕՐՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ

Ղուկ. ա:

Օրհնեալ տէր աստուած իսրայէլի, որ յայց եղ և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ:

Յարոյց մեզ եղջիւր փրկութեան ՚ի տանէ դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանովք սրբոցն՝ որ յաւիտենից մարգարէքն էին:

Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամենայն առելեաց մերոց:

Առնել ողորմութիւն առ հարսն մեր, և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ:

Երդումն զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ, տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն ՚ի թշնամեաց մերոց:

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա, զամենայն աւուրս կենաց մերոց:

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն դոչեսջիր, գնասցես առաջի տեառն պատրաստել զճանապարհս նորա:

Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ, ՚ի թողութիւն ամենայն մեղաց մերոց:

վան գթոյ ողորմութեան տեառն աստուածոյ մերոյ, որով երեւեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր:

Ծագել լոյս 'ի վերայ այսոցիկ՝ որ նստեաք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան:

ԱՂՕԹՔ ՍԻՄԷՈՎՆԻ ԾԵՐՈՒՆԻՈՑՆ

Ղուկ. Բ.

Արդ արձակեայ զծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ ըզփրկութիւն քոյ, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց:

Լոյս յայտնեցեալ հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում իսրայէլի:

ԱՂՕԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Տէր ամենակալ աստուած աբրահամու, իսահակայ, յակոբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակալ տէր՝ թող զմեղս իմ:

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն զարդ նոցա. ամենակալ տէր:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո, փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ տէր:

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամենակալ տէր:

Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութեան քո, սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց 'ի վերայ մեղաւորաց, անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ տէր:

Դու տէր բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ, և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ տէր:

Դու աստուած՝ ոչ եդեր ապաշխարութիւն վասն արդարոցն՝ աբրահամու, իսահակայ և յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ամենակալ տէր:

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ տէր:

Զեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից՝ 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ տէր:

Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ տէր:

Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի քո արարի, կանդնեցի պատկեր և բազմացուցի զպղծութիւն. ամենակալ տէր:

Եւ արդ տէր՝ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ա:

Մեղայ տէր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ տէր:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թող ինձ տէր, թող ինձ, և մի՛ կորուսանես զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամենակալ տէր:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տէր, և մի՛ յիշես զչարիսն իմ, և մի՛ պարտաւորես զիս ընդ իջ-

եալսն ՚ի ներքոյ երկրի չարեօք . ամենակալ տէր :
Զի դու աստուած՝ աստուած ապաչխարողաց
ես , և յիս ցոյց դրախերարութիւնդ քո , որ
անարժան եմ . ամենակալ տէր :
կեցուացես զիս ըստ բազում ողորմութեան քումդ.
և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց
իմոց . ամենակալ տէր :
Զքեզ տէր օրհնեն ամենայն զուարթունք երկ-
նից . և քո են փառք յաւիտեանս . ամէն :
փառք հօր և որդւոյ և : Ա.յժմ և միշտ և :
Ա.ղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տէր , թող ինձ ըղ-
մեղս իմ :
Բաղումզղրամ տէր՝ ողորմեա ինձ :
Աստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս ՚ի մեղաց և
կեցո :
Արարիչ իմ և յոյս աստուած՝ դիմա ՚ի մեղուցեալ
ծառայս , և ողորմեա ինձ բազմամեղիս :
Ամենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս աստուածա-
ծին մարիամ , բարեխօսեա առ տէր վասն իմ
մեղաւորիս :
Ամենայն սուրբք աստուծոյ՝ բարեխօսեցէք առ
հայր ՚ի յերկինս վասն մեր մեղաւորացս :
Քրիստոս որդի աստուծոյ անոխակալ՝ ընկալ զա-
ղաչանս մեր , զի ՚ի քեզ են ապաւինեալ ան-
ձինք մեր :
Ճաղթող զօրութեամբ՝ սուրբ և կենդանարար
և պատուական խաչիւ քո տէր՝ պահպանեա
զմեզ :
Առաքեա տէր զՀրեշտակ խաղաղութեան քո ,

որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ՚ի տուէ և
՚ի գիշերի :
Եւ մարդասիրութեամբ քո յիշեա զմեզ տէր՝
յիշեա զմեզ յորժամ դաս արքայութեամբ քով ,
և ողորմեա մեզ :

Նախադրութիւնք խրատականք յաղագս աղօթիցն
զոր արարեալ է Տէառն ՚ի ներսէսի եղբօրն Գրիգորի-
սի Հայոց Կաթուղիկոսի :

Ա.ղօթք հասարակաց քրիստոնէից մեծաց և փո-
քունց , զոր պարտին ուսանիլ ամենեքեան՝ և
ուսուցանել զմիմեանս . քահանայք՝ ժողովուր-
դըս . հարք՝ զորդիս , մարք՝ զդստերս , և ընկերք՝
զընկերն իւր : Եւ աղօթեսցեն սովաւ յաւուրն
հինգ անգամ՝ երկոտասան ծնրադրութեամբ ՚ի
ժամուն . այսինքն՝ յառաւօտուն , ՚ի ճաշուն , ՚ի
հասարակ ատուրն , յերեկոյին , և ՚ի հանգստեան :
Ապա թէ պղերդ ոք լինիցի և ծուլանայ զհինգ
ժամ՝ աղօթս կատարել , աղօթեսցէ չորս ան-
գամ , կամ երեք անգամ , կամ երկու անգամ ,
կամ միանգամ յաւուրն . որ միայն ճանաչի թէ
քրիստոնեայ է , և զինքն ծանիցէ թէ արարած
եմ աստուծոյ և երկրպագու նորա : Եւ թէ զա-
մենայն բանս աղօթիցն հեղդայ ուսանիլ , (որք
և զսաղմոսարանեան երդս բազում փութով ու-
սանին) , ուսցի զկէս սորա , կամ այլ նուազ .
զի թէ տունս երիս ուսանիցին ՚ի մանկէ , և ա-
ղօթեսցեն երիս ծնրադրութեամբ ՚ի ժամուն ,

ընդունելի է առաջի աստուծոյ : Ապա թէ ոք
'ի քրիստոնէիցն անփոյթ առնէ զսա յուսանելոյ
և յաղօթելոյ , յանդիմանեսցի և 'ի մնալ ժո-
ղովոյն այլազգեաց . որք զաղօթան զոր ուսոյց
նոցա , 'ի պատերազմունս անգամ ոչ խափանեն՝
թող թէ 'ի խաղաղութեան : Իսկ մեր ժողո-
վուրդք արտաքոյ աղօթից տեղւոյ բնաւ ոչ յի-
շեն զանունն Աստուծոյ . զի ոչ ունին փոյթ 'ի
կարգս աղօթից որպէս զասաւածասաչս , այլ
սիրեն զդատարկաբանութիւն քան զաղօթս : Եւ
թէ երբեմն դան ոմանք յաղօթել առ քահա-
նայն , կամ վակեալ բերանով կանգնին , կամ
զրուցատրութիւնս առնեն ընդ միմեանս . զի
ոչ ինքեանք գիտեն բանս աղօթից , և ոչ քահա-
հանայից միտ դնեն սաղմոսաց և պաշտամանց :
վասն այսր պատճառի արարաք զաղօթս զայս
պարզ և յստակ բառիւ , վասն տխմարաց դիւրա-
հաս լինելոյ . որ է սակաւ ըստ բանից՝ տունս
քան և չորս , ըստ ժամուց տուընջեան և գիշե-
րոյ , և ըստ տառից սրբոց մարգարէիցն , և զօ-
րաւոր ըստ մտաց զի զհոգևաւորսն պէտս խընդ-
րուածոց մերոց որ յԱստուծոյ՝ ունի յինքեան ,
և տուաք ժողովրդեան մերում յուսումն . զի
ամենայն անձն քրիստոնէի ուսցի զսա , և ուր
հանդիպեսցին 'ի ժամ աղօթիցն՝ խօսեսցին սո-
վաւ ընդ աստուծոյ , թէ յերկեղեցի՝ թէ 'ի տան՝
թէ յանդի՝ թէ 'ի գործ ինչ՝ թէ 'ի ճանապար-
հի : Եւ որք ուսանին զսա և աղօթեսցեն մտա-
դրութեամբ՝ ջերմեռանդ սրտիւ և արտասուօք ,

ամենայն խնդրուածք որ գրեալ են 'ի սմա՝
կատարեսցին 'ի կենդանութեան և յետ մա-
հու : Իսկ որք արհամարհեն և ոչ ուսանին և
ոչ աղօթեսցեն , ինքեանք տեսցեն զինքեաս ան-
ձանց իւրեանց . մեք հատաք 'ի մէնջ զպատճա-
ռըն՝ առնելով զաղօթս զայս . զի մի այլ եւս
պատճառեսցեն թէ ոչ գիտեմք բանս աղօթից .
վասն այնորիկ ոչ կամք յաղօթս : Բայց ծանիցեն
այնպիսիքն , թէ սատանայ ոչ այնչափ ջանայ
զայլ բարեգործութիւնս մեր խափանել , որչափ
զաղօթս . զի գիտէ որ յաղօթիցն միայն ինքն
հալածի 'ի մէնջ , և աստուած բնակէ ի մեզ :
Արդ՝ մեք աղաչեսցուք զբարերարն աստուած
բանալ զաչս մտաց ձերոց , յօժարութեամբ ու-
սանիլ զսա և աղօթել , և աստուծոյ սիրելի լի-
նել : Եւ յաղօթելն՝ զդրիգորիս կաթուղիկոս հա-
յոց , և զեղբայրն նորին զներսէս զաղօթից յօ-
րինողն յիշեցէք 'ի քրիստոս : Եւ որք ընդօրի-
նակէք 'ի գիրս զաղօթս . գրեցէք և զկարատա-
կան բանս զայսոսիկ . և որք գրեն զսա՝ գրես-
ցին 'ի գպրութիւն կենացն յաւիտենից : Եւ որ
որք ուսանին և աղօթեսցեն , ողորմութիւն ըն-
կալցին 'ի քրիստոսէ . և որք ուսուցանիցեն զընկ-
կերս , վարձս առցեն յաստուծոյ : Եւ որք գրենն ,
մի՛ առաւել քան զօրինակս՝ բան կամ գիր խառ-
նեսցեն . և մի՛ նուազ գրեսցեն , զի մի՛ այլ և
այլ լինիցին բանքն , այլ հաւասար լիցին ամե-
նեքեան ուր և գրեսցին : Եւ տխմարքն 'ի գիրս՝
ուղիղ գրողացն տացեն գրել . և քրիստոսի
վառք յաւիտեանս , ամէն :

ԱՂՕԹՔ ԻԲՐԱՓԱՆՉԻԲ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏԱՑՅԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Զոր արարեալ է սրբոյ աւետն Ներսէսի Հայոց Կաթուղիկոսի։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ Հայր և որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ՚ի հաճոյս, և ընդունել ՚ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Հայր երկնաւոր աստուած ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո արարածոց և։

Որդի աստուածոյ աստուած ճշմարիտ՝ որ խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և աւետեր մարմին ՚ի

սրբոյ կուսէն մարիամայ վասն մերոյ փրկութեան խաչեցար, թաղեցար և յարեար ՚ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս ղաւազակն՝ յորժամ դաս արքայութեամբ քով. և ողորմեա քո։

Հոգի աստուածոյ աստուած ճշմարիտ՝ որ իջեր ՚ի յորդանան և ՚ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալն. և ողոր։

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով՝ մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քումդ սրբոյ. և ո։

Ցեսող ամենայնի՝ մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ, ՚ի դպրութեան կենաց. և ողորմեա։

Քննող դաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ, դիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն ընծայեա մեղաւորիս, զի ՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո զգայարանօք իմովք, և ամենայն անդամօք մարմնոյս. և ո։

Ամենախնամ տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ ոչ եւս հայիլ յարատ. և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն. և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն. և ձե-

ռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն. և ոտից
իմոց՝ ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութեան.
այլ ուղղեա զշարժուածս սոցա լինել միշտ ըստ
պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա։

Հուր կենդանի քրիստոս՝ զհուր սիրոյ քո՝ զոր
արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ՝ զի այ-
րեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զկիղճ
մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ,
և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում.
և ողորմեա։

Իմաստութիւն հօր յիսուս՝ տուր ինձ իմաստու-
թիւն, զբարիս խորհիլ և խօսիլ և գործել ա-
ռաջի քո յամենայն ժամ. ՚ի չար խորհրդոց՝ ՚ի
բանից և ՚ի գործոց փրկեա զիս. և ողորմեա։

Նամեծող բարեաց տէր կամարար՝ մի թողուր
զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնոր-
դեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսի-
րոց. և ողորմեա։

Աբբայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո.
զոր խոստացար սիրելեաց քոց՝ և զօրացո ըզ-
սիրտ իմ առնել զմեղս, և սիրել զքեզ միայն, և
առնել զկամս քո. և ողորմեա։

Թնամող արարածոց՝ պահեա նշանաւ խաչի քո
զհոգի և զմարմին իմ ՚ի պատրանաց մեղաց,
՚ի փորձութեանց դիւաց, և ՚ի մարդոց անի-
րաւաց. և յամենայն վտանգից հոգւոյ և մարմ-
նոյ. և ողորմեա։

Պահապան ամենայնի քրիստոս՝ աչք քո հովանի
լիցի ՚ի վերայ իմ ՚ի տուէ և ՚ի գիշերի, ՚ի նըս-
տիլ ՚ի տան, ՚ի գնալ ՚ի ճանապարհ, ՚ի ննջել

և ՚ի յառնել՝ զի մի երբէք սասանեցայց. և ո։
Աստուած իմ՝ որ բանաս զձեռն քո, և լնուս
զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ
յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատ-
րաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ
հետէ մինչեւ յաւիտեան. և ողորմեա։

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս ՚ի չար սովո-
րութենանց իմոց ՚ի բարի սովորութիւն. և բե-
ւեռեա ՚ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և
զերկիւղ դեհենին, և զսէր արքայութեանն,
զի զղջացայց ՚ի մեղաց՝ և գործեցից զարդարու-
թիւն. և ողորմեա։

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո ՚ի սրտի իմ
զարտասուս ապաշխարութեան որպէս պռա-
նըզկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ
քան զելանելն իմ յայսհարհէս. և ողորմեա։

Փարգեւիչ ողորմութեան՝ պարգեւեա ինձ ուղ-
ղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ
մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ
առ քեզ. և ողորմեա։

Բարերար տէր՝ հրեշտակի բարւոյ յանձն արաս-
ցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ,
և՝ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝
որ են ՚ի ներքոյ երկնից. և ողորմեա։

Լոյս ճշմարիտ քրիստոս՝ արժանաւորեա զհոգի
իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց
քոց ՚ի կոչման աւուրն, և հանդիսիլ յուսով բա-
րեաց յօթևեանս արդարոց մինչեւ յօր մեծի
գալստեան քո. և ողորմեա։

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մատներ ՚ի դատաստան ընդ ծառայի քումմ, այլ փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա։

Ամենողորմ տէր՝ ողորմեա ամենայն հաւատացելոց ՚ի քեզ, իմոց և օտարաց. ծանօթիւ և անծանօթիւ. կենդանեաց և մեռելոց. չնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն որ առ իս յանցանաց, և դարձո զնոսա ՚ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քումմ արժանի լինիցին. և ողորմեա։

Փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա ՚ի բարի զինդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին և յովհաննու մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սրբոյն դրիգորի մեծոյ լուսաւորչին, և սրբոց առաքելոց՝ մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրոսաց՝ հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ ՋՕՐԱՒՈՐՔ ԱՐՀԱՒՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ։
Բան ժբ։

Ընկալ քաղցրութեամբ, տէր աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս. մատիր գթութեամբ առ պատկառելս դիմօք, փարատեա ամենապարդև, զամօթիական տխրութիւնս. բարձ յինէն ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բացադրեա վերնային, զմոլեղն մառախուղ. կնքեա կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս. յրուեա ծածկատես, զբբռնողին չար դամունս. խորտակեա անքընին, զմարտողին դիմեցմունս։ Ցեառնապրեա քո անուամբդ, զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ, զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ, զմուտ սեմոյ սենեկիս. կերպացո զքո նշանդ, ի հետս երից մաղթողիս. ամրացո քո ակովդ, զհանգստեանս խըղճի. մաքրեացես ՚ի հալրից, զծածկարան անկողնոյս. պահեացես քո կամօքդ զառաւտեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես զքո չնորհեալ չունչ մարմնոյս. կացուսցես չրջավակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեացես ՚ի դիմի ընդդէմ դիւացն դասուս։ Ցուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան

գիշերիս . բարեխօսութեամբ հայցուածոց սըրբուհւոյ աստուածածնիդ և ամենայն ընտրելոց : Ամիսիսեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զդայարանացս իմոցմէ անզարհուրելի զերեզմամբ ի ծիսական խռովութենէն , կենցաղական զբաղմանց , անրջական երազոց , խոլականաց ցնորից , յիշատակաւ քո յուսոյդ անշնաւելի պաշտպանեալ : Եւ սիթափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ , հոգենորոգ զուարթութեամբ ի քեզ արձանացեալ զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ՝ ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել : Զի գու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՑԵԱՆ

Նորին սրբոյն գրիգորի :

Բան ղդ :

Աստուած յաւիտենական , բարերար և ամենակալ . ստեղծիչ լուսոյ . և յօրինիչ գիշերոյ . կեանք ի մահու , և լոյս ի խաւարի . յոյս ակն ունողաց , և երկայնմտութիւն տարակուսելոց : Որ ամենաբուխաս իմաստութեամբ քո՝ գարձուցանես յայդ զստուերս մահու , աննուազ ծագումն և անմուտ արեգական . քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ : Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց , և սանդարամետականաց . որ լսես զհեծութիւն կապելոց , և հայիս յաղօթս խոնարհաց , և ընդունիս զխնդրուածս նոցա . աստուած իմ և թագաւոր իմ . կեանք իմ և ապաւէն իմ . յոյս իմ և վստահութիւն իմ . յիսուս քրիստոս աստուածդ ամենայնի . սուրբդ հանդուցեալ ի հոգիս սրբոց , մխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մեղուցելոց , որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա . առաքեա զպահպանողական զօրութիւն այոյ քո , և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և ի դիւէ չարէ : Որպէս զի զյիշատակ սուկալի և սուրբ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեան շընչոյ , կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարգան զքեզ ի բոլոր սրտէ : Եւ ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ , զոր աստուածայինն արեամբդ քո ներկեալ նորոգեցեր , և ի նոյն չնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր , և ի փառս պատկերի քո նկարեալ՝ յօրինեցեր . այսու պարգեւօք աստուածականօք՝ ամաչեցոյ սատանայ . քակտեսցին մեքենայքն . բարձցին որոգայթքն . պարտեսցին մարտուցեալքն . պակասեսցին զէնքն սայրասուրք . մերժեսցի մէգն . փարատեսցի խաւարն . մեկնեսցի մառախուղն : Բազուկ քո հովանասցի , և աչ քո կնքեսցէ . վասն զի գիմած ես և ողորմած , և անուն քո կոչեցեալ է ի վերայ ծառայից քոց : Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԱՂՕԹՔ ՋՕՐԱՒՈՐ

Նորին սրբոյն Գրիգորի։

Բան խա։

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ ամենայնի. հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ արկարանայ առ ի քէն և ոչինչ. որ ի ծագիլ առնըստուեր նշուլից ողորմութեան քո փառաց, հալին մեղք, հալածին դեւք, չնջին յանցանք, խզին կապանք, խորտակին չղթայք, կենդանացածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի։ Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ, զի դու միայն ես յերկինի անճառ, և յերկրի անշնին, ի տարր գոյի, և յերկրս ծագած այխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս, և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Հրաժարիմք ի սատանայէ և ամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա, ի խորհրդոց նորա, ի գնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա, և յամենայն զօրութենէ նորա՝ հրաժարելով հրաժարիմք։

Զայս երիցս կրկնեա՝ երես ի յարեւմուտս և ձեռս ի կոր ունելով. և ապա դառնայ յարեւելս, և սկսանի զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, բացագլուխ և ձեռնամած կերպիւ, և ասէ։

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած՝ անեղ, անծին, և անսկիզբն. այլ և ծնող որդւոյ և բղխող Հոգւոյն սրբոյ։ Հաւատամք զբանն աստուած՝ անեղ, ծնեալ, և սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յեւոյ և ոչ կրտսեր, այլ որքան հայրն հայր՝ ընդ նմին և որդին՝ որդի։ Հաւատամք զսուրբ Հոգին աստուած անեղ, անժամանակ. ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ի Հօրէ. էակից Հօր և փառակից որդւոյ։ Հաւատամք զերրորդութիւնն սուրբ՝ մի բնութիւն, մի աստուածութիւն. ոչ երեք աստուածք, այլ մի աստուած. մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն. արարիչ երեւելեաց և աներեւութից։ Հաւատամք յեկեղեցի սուրբ՝ զթողութիւն մեղաց՝ հաղորդութեամբ սրբոց։ Հաւատամք զմին

յերից անձանց դրանն աստուած՝ ծնեալ ՚ի հօրէ նախ քան զյաւիտեանս. ՚ի ժամանակի իջեալ յաստուածածին կոյսն մարիամ, առեալ յարեւնէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն. իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին. և եղեւ աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ, հոգւով և մտօք և մարմնով. մի անձն, մի դէմ, և միաւորեալ մի բնութիւն: Աստուածն մարդացեալ առանց փոփոխման և առանց այլայլութեան. անսերմն յղութիւն և անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն աստուածութեան նորա՝ և ոչ վախճան մարդկութեան նորա: (Զի յիսուս քրիստոս եւրեկ և այսօր՝ նոյն և յաւիտեան): Հաւատամք զՏէրն մեր յիսուս քրիստոս չրչեալ ՚ի վերայ երկրի. յետ երեսուն ամաց եկեալ ՚ի մկրտութիւն: Հայր ՚ի վերուստ վկայեալ՝ դա է որդի իմ սիրելի. և Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ՚ի վերայ նորա, փորձեալ ՚ի սատանայէ և յաղթեալ նմա: Քարոզեալ մարդկան զփրկութիւն: Աշխատեալ մարմնով, վաստակեալ՝ քաղցեալ՝ և ծարաւեալ: Ցեղոյ եկեալ կամաւ ՚ի չարչարանս. խաչեալ և մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն: Մարմինն եդեալ ՚ի գերեզմանի՝ միաւորեալ աստուածութեամբն, և հոգւովն իջեալ ՚ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն: Քարոզեալ հոգւոցն՝ ուերեալ զդժոխս՝ և աղատեալ զհոգիս: Ցետ երից աւուրց յարուցեալ ՚ի մեռելոց և ե-

րեւեալ աշակերտացն: Հաւատամք զտէրն մեր յիսուս քրիստոս՝ նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ հօր: Այլ և գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս. որ և յարութիւն ամենայն մարդկան: Հաւատամք և ՚ի Հոգւոյն սուրբ, արդարոյն կեանք յաւիտենական, և մեղաւորացն տանջանք յաւիտենական:

ՋՂՋՈՒՄՆ

Մեղայ ամենասուրբ երրորդութեան՝ հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Մեղուցեալ եմ աստուածոյ: Խոստովանիմ առաջի աստուծոյ՝ և սրբոցուհւոյ աստուածածնին, և առաջի քո հայր սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով բանիւ և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայ աստուածոյ: Մեղայ հոգւովս և զօրութեամբ սորա, մտօքս և շարժմամբ սորա, մարմնովս և զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ հոգւոյս, խորամանկութեամբ, անըղդամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, չռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաճութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ, մեղայ աստուածոյ:

Մեղայ չար խորհրդով մտացս. նենգութեամբ, առելութեամբ, խեթիւ, մախանօք, յաչախանօք, թուլութեամբ, պառնկական խորհրդով,

արուեսական, իպական, անասնական, գրաստական, գազանական, ի գիշերի և ի տուընջեան, երազական գիճութեամբ, և անրջական գարշ աղտեղութեամբ, մեղայ աստուածոյ:

Մեղայ ցանկութեամբ մարմնոյս. հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս, զաղրագործութեամբ ի պէս պէս ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ունգացս, պագշոտութեամբ բերանոյս, անժուժկալութեամբ, շուայտութեամբ և արբեցութեամբ. մեղայ աստուածոյ:

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս. ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու, դատարկաբանութեամբ և ծաղու ղրախօսութեամբ, հերձախօսութեամբ և անիծաբանութեամբ, որոնցիւրով, դժգոհելով, բամբասելով, և հայհոյելով. մեղայ աստուածոյ:

Մեղայ գողութեամբ ձեռացս. ագահելով, ղրկելով, հարկանելով, սպանանելով, և ընդ գարշս ածելով. մեղայ աստուածոյ:

Մեղայ ամենայն յօդուածովք չինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս. հնգեակ զգայարանօքս, և վեցեկի շարժմամբս. վերամբարձ ոտնահարութեամբ, և վայրագարշ մեղկութեամբ, յայլ և յահեակ խոտորելով, զառաջնոցն մեղանչելով, և վերջնոցն չար նշաւակ գտնելով. մեղայ աստուածոյ:

Ա՛յլ և մեղայ ըօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք. հպարտութեամբ՝ և մասամբ նորին. նախանձու՝ և մասամբ նորին. բարկութեամբ՝ և մասամբ նորին. ծուլութեամբ՝ և մասամբ նորին. ագահութեամբ՝ և մասամբ նորին. որկրամոլութեամբ՝ և մասամբ նորին. բղջախոհութեամբ՝ և մասամբ նորին. մեղայ աստուածոյ:

Ա՛յլ և մեղայ ամենայն պատուիրանացն աստուածոյ, յանձնառելեացն և հրաժարելեացն, զի ոչ գյանձնառացեանն կատարեցի, և ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Ջօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ: Ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ, և գործովս անարժան գտայ, գիտելով զչարն կամաւ կորացայ, և ի բարեաց գործոյ ես ինձէն հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ:

Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ. անասելի են անօրէնութիւնք իմ. աննկարելի են ցաւք իմ. և անբժշկելի են վէրք իմ. մեղայ աստուածոյ:

Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին որդին աստուածոյ. զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ, արձակեացես զիս ի կապից մեղայ իմոյ, աղաչեմ զքեզ:

ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեացի քեզ մարդասէրն աստուած, և թողութիւն շնորհեացէ ամենայն յանցանաց քոց,

խոստովանացելոցդ և մոռացելոց։ Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան, ես հրամանաւն աստուածային՝ «Թէ՝ Զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»։ Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մանուածս մեղաց քոց. ի խորհրդոց՝ ի բանից՝ և ի գործոց. յանուն Հօր՝ և որդւոյ՝ և հոգւոյն սրբոյ։ Եւ դարձեալ՝ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն. ամէն։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս ամէն։
Հայր մեր որ յերկինս։

ՀԱՆԴԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք ի մի աստուած ի հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից։ Եւ ի մի տէր յիսուս քրիստոս որդին աստուծոյ՝ ծնեալն յաստուծոյ հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ հօր։ Աստուած յաստուծոյ, լոյս ի լուսոյ, աստուած ճշմարիտ, յաստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի, երեւելիք, և աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալապէս ի մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով։ Որով

հաւատովն զհոգի և զմիտս, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Զարդարեալ խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստեալ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ի սուրբ հոգին՝ յաստուածն և ի Հայտարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէսն և յաւետարանն։ Որ էջն ի յորդանան քարոզեաց զառաքելական, և բնակեաւ ի սուրբսն։ Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւնն մեռելոց և ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց։ Յարուցութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Մինչեւ ցաստ են հաւատոյ բանք։

Եթէ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ հոգի, կամ թէ՝ յոչէից եղեն. կամ յայլմէ էութենէ ասեն լինիլ զորդին աստուծոյ և կամ ըզսուրբ հոգին. և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի։

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փառք ի բարձունս աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս օրհնեալ ես տէր աստ-

ուած մեր. օրհնեմք զքեզ և դովեմք զ քեզ։
խոստովանիմք տէր զքեզ և երկիրպադանեմք
քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք տէր ըզ-
քէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր
սուրբդ երկնային. աստուած և հայր ամենա-
կալ։ Տէր և որդի հոր միածին յիսուս քրիստոս
և սուրբ որդի։ Տէր աստուած գառն աստուծո
և որդի հօր. որ առեր զմեղս ի կուսէն։ Ողոր-
մեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկա
զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ
հօր՝ ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու
միայն բարձրեալ ես՝ դու միայն տէր մեր Յի-
սուս քրիստոս։ Տէր և հոգիդ սուրբ որ ի փառս
աստուած ընդ հօր. ամէն։ Եւ յամենայն ժամ
օրհնեմք զքեզ. տէր և դովեմք զանուն սուրբ
քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Ար-
ժանի արա տէր զօրս զայս խաղաղութեամբ, և
առանց մեղաց պահեա զմեզ։ Օրհնեալ ես տէր
աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւոր-
եալ է անուն սուրբ քո յաւիտեանս ամէն։ Օրհ-
նեալ տէր՝ ուսո ինձ զարդարութիւնս քո։ Օրհ-
նեալ տէր՝ ուսո ինձ զարդարութիւնս քո։ Օրհ-
նեալ տէր՝ ուսո ինձ զարդարութիւնս քո։ Տէր
ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես ասացի
տէր ողորմեա ինձ, և բժշկեա զանձն իմ, և
մեղայ քեզ։ Ցոյց մեզ տէր զողորմութիւնս ք
և զփրկութիւնս քո տուր մեզ տէր ողորմութիւն
քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես
առներ։ Տէր իմ՝ զքեզ ապաւէն ինձ արարի,
ուսո ինձ առնել զկամս քո զի դու ես աստուած
իմ։ Ի քէն է տէր աղբիւր կենդանութեան, և
լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Ծագեա
զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ տէր։

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ZUUՈ-Арм. ССР
Ա. ՄՄ. Ա. Մ Յ Ա Ն Ի Ա Ն Ի
ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
Ա. ՄՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ ԸՆԴՄՕՍԱՑ

Ըստ կարգի այբուբենից։

Աղաղակեցէք առ աստուած ամենայն երկիր . . . կե։
Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր . . . . ղէ։
Ապրեցո զիս տէր, զի նուաղեաց սուրբ . . . ժա։
Ապրեցո զիս տէր ի մարդոյ չարէ . . . . ճլէ։
Առ դեռս բարելացւոց . անդ նստեաք . . . ճզ։
Առ քեզ տէր կարդացի աստուած իմ, մի . . լէ։
Առ քեզ տէր համբարձի զանձն իմ . . . . լդ։
Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ . . . . ճիբ։
Ասաց անզգամն ի սրտի իւրում . թէ ոչ . . . ժգ։
Ասաց անզգամն ի սրտի իւրում . թէ ոչ . . . ծբ։
Ասաց տէր ցաէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ . . ճթ։
Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ . . . . լը։
Աստ անօրէնն ի մեղանչել ընդ միաս . . . . լե։
Աստուած՝ ականջօք մերովք լուաք զոր հարքն . խդ։
Աստուած աստուած իմ, ես առ քեզ առաւօտ . . կբ։
Աստուած ապստուած իմ նայեաց առիս . . . . իա։
Աստուած աստուածոց տէր խօսեցաւ և կոչեաց . խթ։
Աստուած եկաց ի ժողովս աստուածոց . . . . ձա։
Աստուած զիրաւունս քո արքայի տուր . . . . հա։
Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն . . . . խե։
Աստուած մերժեցեր եւ աւերեցեր զմեզ . . . . ծթ։
Աստուած մարին հեթանոսք ի ժառանգութ . . . հը։
Աստուած յանուան քում կեցո զիս, եւ ի զօ . . ծգ։
Աստուած յօգնել ինձ նայեաց . եւ տէր . . . . կթ։
Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ . . . կզ։
Աստուած ո քեզ նմանիցի . մի լռեր եւ . . . ձբ։
Աստուած վրէժխնդիր . տէր աստուած . . . . զգ։
Աստուած օրհնութեան իմոյ մի լռեր . զի . . . ճբ։
Աստ օրհնեցէք ամենայն ծառայք տեառն . . . ճլգ։

Բազում անգամ մարտեան ընդխ . . . . . ճիը ։
Բայց միայն աստուծոյ հնազանդ լեր անձն . . . կա ։
Բանից իմոց ունկն դիր տէր , եւ 'ի միտ առ . . . ե ։
Բարի է խոստովան լինիլ տեառն , եւ սաղմոս . . զա ։
Բարձր առնեմ զքեզ աստուած իմ եւ թա . . . ճխդ ։
Բարձր առնեմ զքեզ տէր , զի ընկալար . . . . իխ ։
Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս քո բարի . . . . խդ ։
Գոհացայց զքէն տէր բոլորով սրտիւ . . . . . թ ։
Գովեա երուսաղէմ զտէր . . . . . ճխէ ։
Դատ արա ինձ աստուած , եւ իրաւ արա . . . խբ ։
Դայա արա ինձ տէր զի ես յանդգնութեան . . . իե ։
Դատեա տէր զայնոսիկ ոյք դատեն . . . . . լդ ։
Եթէ ոչ տէր էր առ մեզ , ասասցէ . . . . . ճիգ ։
Եթէ ոչ տէր չինէ զտունն , 'ի նանիր . . . . ճիզ ։
Եկայք ցնծասցուք 'ի տէր , աղաղակեսցուք . . . զդ ։
Երանեալ են անբիծք 'ի ճանապարհի . . . . ճժը ։
Երանեալ է այր որ երկնչի 'ի տեառնէ . . . ճժա ։
Երանեալ է այր որ ոչ գնաց 'ի խորհուրդս . . . ա ։
Երանի ամենեցուն՝ ոյք երկնչին 'ի տեառնէ . . ճիէ ։
Երանի որ խորհի զաղքատն եւ զանանկին . . . խ ։
Երանի , ում թողութիւն եղեւ մեղաց . . . . լա ։
Երկինք պատմեն զփառս աստուծոյ եւ . . . . ժը ։
Զի բարի կամ զի վայելուչ , զի քնաքին . . . . ճլբ ։
Զի պարծի 'ի չարութեան հզօր . . . . . ծա ։
Զողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհ . . . . ձը ։
Ընդէր խռովեցան հեթանոսք եւ ժողո . . . . . բ ։
Ընդէր մերժեցեր աստուած իսպառ . . . . . հդ ։
Թէ արդարեւ զարդարութիւն խօսէիք . . . . ծէ ,
Իբրեւ զի բարի է իսրայէլի աստուած . . . . հբ ։
Ի դարձուցանել տեառն զգերութիւն . . . . ճիե ։
Ի խորոց կարդացի առ քեզ տէր , տէր . . . . ճիթ ։
Ի կարդալ իմում լուար ինձ աստուած . . . . . պ ։

Ի նեղութեան իմում [illegible] քեզ տէր կարդացի . ճժթ ։
Ի [illegible] յուսացայ . որպէս [illegible] ցանձն . . . . ժ ։
Ի քեզ տէր յուսացայ , մի ամաչեցից յաւիտ . . . լ ։
Ի քեզ տէր յուսացայ . մի ամաչեցից յաւիտ . . . հ ։
Լսեարուք զայս ամենայն ազգք . [illegible]նդիր . . . խը ։
Լուիցէ քեզ տէր յաւուր անձկութեան . . . . ժթ ։
Լուր աստուած աղօթից իմոց յաղաչել [illegible] . . կդ ։
Լուր աստուած աղօթից իմոց , եւ նայեա տէր . . կ ։
Լուր տէր արդարութեան , եւ նայեա . . . . ժզ ։
Խոնարհեցո տէր զունկն քո՝ եւ լուր ինձ . . . ձե ։
Խոստովան եղերուք տեառն՝ եւ կարդա . . . ճդ ։
Խոստովան եղերուք տեառն՝ զի բարի է . . . ճժէ ։
Խոստովան եղերուք տեառն՝ զի բարի է . . . ճլե ։
Խոստովան եղերուք տեառն՝ զի քաղցր է . . . ճե ։
Խոստովան եղերուք տեառն՝ զի քաղցր է . . . ճզ ։
Խոստովան եղէց քեզ տէր՝ բոլորով սրտիւ . . . ճլէ ։
Խոստովան եղէց քեզ տէր՝ բոլորով սրտիւ . . . ճժ ։
Խոստովան եղիցուք առ քեզ աստուած . . . . . հզ ։
Ծափս հարէք ամենայն հեթանոսք . . . . . խզ ։
Կեցո զիս աստուած , զի հասին ջուրք . . . . . կը ։
Համեցար տէր ընդ երկիր քո , եւ դարձու . . . ձդ ։
Համբարձի զաչս իմ ի լերինս , ուստի եկեսց . . . ճի ։
Համբերելով համբերի տեառն , եւ նայեցաւ . . . լթ ։
Հաւատացի զոր եւ խօսեցայ , եւ ես խո . . . . ճժե ,
Հիմունք նորա 'ի լեռանն սուրբ նորա . . . . . ձզ ։
Զայնիւ իմով ես առ տէր կարդացի . . . . . հզ ։
Զայնիւ իմով ես առ տէր կարդացի . . . . . ճխա ։
Մատուցէք տեառն՝ որդիք աստուծոյ . . . . . իը ։
Մեծ է տէր . եւ օրհնեալ է յոյժ . . . . . խէ ։
Մի նախանձիր ընդ չարս , եւ մի ընդ ամս . . . լզ ։
Մինչեւ յերբ տէր՝ մոռանաս զիս . . . . . ժբ ։
Յայտնի է 'ի հրէաստանի աստուած եւ հե . . . հե ։

Ցարիցէ աստուած՝ եւ ցրուեսցին ոմանայն . . . .
Ցելանելն իսրայէլի յ'եգիպտոսէ . . . . . ճ ։
Ցիշեա տէր զդաւիթ , եւ զամենայն հեզու . . . ճլա ։
Ցողորմութիւն եւ յիրաւունս օրհնեմ . . . . . ճ ։
Նայեցարուք ժողովուրդք յօրէնս իմ . . . . . հէ ։
Ողորմեա ինձ աստուած՝ զի կոխեաց . . . . . ժհ ։
Ողորմեա ինձ պատուաճ՝ ողորմեա ինձ . . . . . ծզ ։
Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողոր . . . . . ծ ։
Ո յուսայ 'ի տէր , որպէս լեառն սիօն . . . . . ճիզ ։
Որ բնակեալն է յօգնութիւնն բարձ . . . . . ղ ։
Որ հովուեսդ իսրայէլի՝ նայեաց , որ . . . . . հթ ։
Որպէս սիրելիք են յարկք քո տէր զօրու . . . . . ճդ ։
Որպէս փափաքի եղջերու յաղբերս . . . . . խա ։
Ունկնդիր աստուած աղօթից իմոց , եւ . . . . . ծզ ։
Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս . . . . . ճիա ։
Պահեա զիս աստուած իմ , զի ես 'ի քեզ . . . . . ժե ։
Պատրաստ է սիրտ իմ աստուած , պատ . . . . . ճէ ։
Սիրեցի՝ զի լսիցէ տէր ձայն . . . . . ճժզ ։
Սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ . . . . . ժէ ։
Տեառն է երկիր լիս իւրով . . . . . իզ ։
Տէր ապաւէն եղեր մեր ազգէ . . . . . ճթ ։
Տէր աստուած իմ՝ 'ի քեզ յուսացայ . փրկ . . . է ։
Տէր աստուած փրկութեան իմոյ , 'ի տուէ . . . ճէ ։
Տէր զի բազում եղեն նեղիչք իմ . . . . . ճ ։
Տէր թագաւորեաց , բարկացան ժողո . . . . . ղը ։
Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ . . . . . ղբ ։
Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր . . . . . ղզ ։
Տէր 'ի զօրութեան քումմ ուրախ եղիցի . . . . . ի ։
Տէր լոյս իմ եւ կեանք իմ ես յումմէ . . . . . իզ ։
Տէր լուր աղօթից իմոց , ունկնդիր . . . . . ճխբ ։
Տէր լուր աղօթից իմոց , աղաղակ . . . . . ճա ։
Տէր կարդացի առ քեզ եւ լուր ինձ . . . . . ճխ ։

Տէր հովուեսցէ զիս եւ ինձ ինչ ոչ . . . . . իբ ։
[illegible] սրտմտութեամբ քով յանդիման . . . . . ղ ։
[illegible] սրտմտութեամբ քով յանդիման . . . . . լէ ։
[illegible] ոչ բարձրացաւ սիրտ իմ եւ ոչ . . . . . ճլ ։
Տէր ով կացցէ 'ի խորանի քումմ . . . . . ժզ ։
Տէր տէր մեր . զի սքանչելի է անուն . . . . . ը ։
Տէր փորձեսցէ զիս եւ ծանեայր . . . . . ճլը ։
Ցնծացէք առ աստուած օգնականն է . . . . . ճ ։
Ցնծացէք արդարք 'ի տէր . ուղղոց . . . . . լբ ։
Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց աստուած . . . . . ծը ։
Քեզ վայելէ օրհնութիւն աստուած 'ի սիօն . . . . կդ ։
Օրհնեա անձն իմ զտէր , տէր աստուած . . . . ճգ ։
Օրհնեա անձն իմ զտէր , եւ ամենայն . . . . . ճբ ։
Օրհնեա անձն իմ զտէր , օրհնեցից զտէր . . . . ճխե ։
Օրհնեալ տէր աստուած իմ , որ ուսոյց . . . . . ճխդ ։
Օրհնեցէք զանուն տեառն , օրհնե . . . . . ճլդ ։
Օրհնեցէք զաստուած 'ի սրբութեան նորա . . . ճճ ։
Օրհնեցէք զտէր ամենայն ազինք գովե . . . . ճժզ ։
Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղ . . . . . ճխզ ։
Օրհնեցէք զտէր յերկնից , օրհնե . . . . . ճխը ։
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր , զի . . . . . ղէ ։
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր , օրհ . . . . . ղե ։
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն 'ի նոր . . . . . ճխթ ։
Օրհնեցէք մանկունք զտէր՝ եւ . . . . . ճժբ ։
Օրհնեցից զտէր յամենայն ժամ , յամե . . . . . լզ ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ

Արդ՝ արձակեա զծառայս քո տէր 380
Ես ասացի 'ի վերանալ յինէն աւուրց 273
Զի հուր բորբոքեցաւ 'ի բարկութենէ 132
Ի դիչերաց կանխէ հոգի իմ՝ առաւօտ առ . . . 229
Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի . . . 320

Հաստատեցաւ սիրտ իմ ի տէր , եւ 177
Մեծացուսցէ անձն իմ զտէր 1
Նայեցարուք երկինք եւ խօսեցայց 83
Տէր զլուր քո լուայ եւ երկեայ 365
Տէր ամենակալ աստուած աբրահամու 380
Փոքր էի ես յեղբարս իմ . եւ կրտսեր 373
Օրհնեալ ես տէր աստուած հարցն մերոց 374
Օրհնեալ ես տէր աստուած իսրայէլի որ յայց . . 379
Օրհնեսցուք զտէր դի փառաւք է փառա 37
Օրհնեցէք զաստուած յօրհնութիւն նոր 319

ԵՕԹՆ Սաղմոսք ապաչխարութեան

Տէր մի սրտմտութեամբ քով յանդի . . . . . ղ ։
Երանի ում թողութիւն եղեւ մեղաց . . . . . լա ։
Տէր մի սրտմտութեամբ քով յանդի . . . . . լէ ։
Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողոր . . . . . ծ ։
Տէր լուր աղօթից իմոց , աղաղակ . . . . . ճա ։
Ի խորոց կարդացի առ քեզ տէր , տէր . . . . ճիթ ։
Տէր լուր աղօթից իմոց , ունկնդիր լերուդըր . . ճխբ ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0159325